Թողարկման 21-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2014

Սեպտեմբեր

թիվ 9 (193)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՎԻԷԼՎԻ Սենքր» ՍՊԸ-ի թիվ 2 մասնաճյուղին և «Արծագանք» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, որոշ ՓԲԸ-ների «Սիգ Մանի Տրանսֆեր» և «Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «ԲՈՆՈՒՍ առևտրի կենտրոն» ՍՊԸ-ի փոխանակման կետին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Իդրամ» դրամական փոխանցումներ իրականացնող ՓԲԸ-ի «Օվիր» մասնաճյուղը հաշվառելու, «Գոլդ Կրեդիտ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելու, ինչպես նաև որոշ ՓԲԸ-ների մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 ԱՓԲԸ-ի, 1 ԱՍՊԸ-ի, 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու և 8 արտարժույթի փոխանակման կետերի, 1 ՓԲԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 246Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 164-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 187-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 314-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 190-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

110 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 191-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

111 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 192-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 146-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

113 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 193-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

182 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 194-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

284 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 195-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

336 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 196-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

361 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 240-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 309-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

362 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 2 պաշտոնական պարզաբանումը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի վերաբերյալ

365 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՎԻԷԼՎԻ Սենթր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 2 մասնաճյուղին և «Արծագանք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշումներ թիվ 241Ա, 251Ա):
- ***«Սիգ Մանի Տրանսֆեր» և «Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» և «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 243Ա, 247Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԲՈՆՈՒՍ առևտրի կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխանակման կետին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 244Ա):
- ***Դադարեցվել է*** «Իդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերության «Օվիր» մասնաճյուղը (որոշում թիվ 245Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «Գոլդ Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 248Ա):
- ***Գրանցվել են*** «Հայբիզնեսբանկ», «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Սևան», «Կոմիտաս» և «Մեծամոր», ինչպես նաև «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Արտաշատ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/959Ա, 1/972Ա, 1/980Ա, 1/981Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության, 1 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 3130000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/955Ա, 1/956Ա, 1/971Ա, 1/986Ա) և 8 արտարժույթի փոխանակման կետերի, 1 փակ բաժնետիրական ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/930Ա, 1/933Ա, 1/934Ա, 1/952Ա, 1/970Ա, 1/984Ա, 1/985Ա, 1/987Ա, 1/997Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 246Ա որոշմամբ 2014 թ. սեպտեմբերի 23-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 8.75%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.75%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 164-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ Արթուր Ջավադյան

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար _____ Գագիկ Խաչատրյան

2 սեպտեմբերի 2014 թ.

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի «Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ը հաստատելու մասին» թիվ 62-Ն որոշման նախաբանում «29» թիվը փոխարինել «25» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 164-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.09.2014 թ. (ՀՀԳՏ N24 (503), 1.10.2014):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 314-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 187-Ն որոշմամբ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ Արթուր Ջավադյան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 566-Ն հրամանով

_____ Գագիկ Խաչատրյան

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2013 թ. դեկտեմբերի 27-ի «Կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի տեսքով վճարվելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը» կանոնակարգ 10/08-ը հաստատելու մասին» թիվ 314-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «60» թիվը փոխարինել «55» թվով:

2. Որոշմամբ հաստատված «Կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի տեսքով վճարվելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը» կանոնակարգ 10/08-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կանոնակարգով կարգավորվում է մասնակցի կողմից միանվագ վճարի տեսքով կենսաթոշակի ստացման դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը:»:

2) Կանոնակարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Մասնակիցն Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միանվագ վճար ստանալու իրավունք ձեռք է բերում, եթե՝

1) լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը և մասնակցի միջոցները, Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը
ա. փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան,
կամ
բ. գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը,
կամ
2) լրացել է մասնակցի 55 տարին և մասնակցի միջոցները, Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը:»:

3) Կանոնակարգի 5-րդ կետում «60» թիվը փոխարինել «55» թվով:

4) Կանոնակարգի 5-րդ կետում «տեսակի ընտրության» բառերը փոխարինել «տեսակ ընտրելու» բառերով:

5) Կանոնակարգի 6-րդ կետում «հաշվին» բառը փոխարինել «հաշվի հաշվին» բառերով:

6) Կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերում «տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինել «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

7) Կանոնակարգի 7-րդ կետում «52» թիվը փոխարինել «47» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2014 թ., N 187-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.09.2014 թ. (ՀՀՊՏ N24 (503), 1.10.2014):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով օպտիմալացնել բանկերի լիցենզավորման, գրանցման, համաձայնության տրամադրման հետ կապված գործընթացները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 22-րդ, 23-33.1-րդ և 41-րդ հոդվածները, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 1) հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 190-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 190-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 1
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
1) Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի լիցենզիա ստանալու նախնական հավանության, գրանցման և լիցենզավորման կարգը,

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.09.2014 թ. (ՀՀԳՏ N23 (502)[1], 16.09.2014):

2) Բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերի, բանկերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը,
3) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման համար Կենտրոնական բանկի կողմից համաձայնություն ստանալու կարգը,
4) Վարկային կազմակերպությունների գործունեության տեսակի փոփոխման, վարկային կազմակերպություններին գրանցման վկայականի և բանկային գործունեության լիցենզիայի տրամադրման կարգը,
5) Բանկերի մասնաճյուղերի, բանկերի և օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գործունեության ժամանակավոր դադարեցման կարգը,
6) Բանկերի մասնաճյուղերի, բանկերի և օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գործունեության դադարեցման կարգը,
7) Գրանցման վկայականի և բանկային գործունեության լիցենզիայի կորստի, ոչնչացման և օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքերում կրկնօրինակի ստացման կարգը,
8) Գրանցման վկայականը և բանկային գործունեության լիցենզիան Կենտրոնական բանկ վերադարձնելու կարգը,
9) Բանկի կանոնադրական կապիտալում իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, պետությունների և ֆիզիկական անձանց կողմից ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը,
10) Բանկի կանոնադրական կապիտալում իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, պետությունների և ֆիզիկական անձանց կողմից անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը,
11) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության հետ կապված այլ դրույթները,
12) Բանկի կանոնադրական կապիտալում այլ մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը,
13) Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները,
14) Ղեկավարների վերաբերյալ ընդհանուր դրույթները,
15) Ղեկավարներին տրվող որակավորումներին հավասարեցվող որակավորումները, դիպլոմները և հավաստագրերը,
16) Խորհրդի անդամների որակավորման ստուգման կարգը,
17) Բանկում որոշում կայացնող դիլերների որակավորման ստուգման կարգը,
18) Ղեկավարների (բացառությամբ՝ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի, խորհրդի անդամների և բանկում որոշում կայացնող դիլերների) որակավորման քննություններին մասնակցության և քննությունների անցկացման կարգը,
19) Ղեկավարների (բացառությամբ՝ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի, խորհրդի անդամների և բանկում որոշում կայացնող դիլերների) որակավորման թեստերը,
20) Որակավորման թեստերի գնահատումը և բողոքարկումը,
21) Որակավորման վկայականների տրամադրման կարգը,
22) Որակավորման վկայականներով տրվող լրացուցիչ լիազորությունների շրջանակը,
23) Ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշները,
24) Ղեկավարների (բացառությամբ՝ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի և բանկում որոշում կայացնող դիլերների) գրանցման կարգը,
25) Ղեկավարներին գրանցումից հանելու կարգը,
26) Ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման և պաշտոնավարման կարգը,
27) Գրանցման ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,
28) Գրանցման ոչ ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,
29) Ներդրումային գործունեության հետ կապված գործարքի կամ գործառնությունների իրականացման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու կարգը,
30) Բանկի տարածքից դուրս ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը,
31) Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի, բանկի տարածքային ստորաբաժանումների տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջները:

2. Սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով:

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ տեղեկանքների) Կենտրոնական բանկ են ներկայացվում հայերենով (բացառությամբ՝ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի), Յունիկոդ տառատեսակով և «Փի Դի էֆ» ֆորմատով, բացառությամբ՝ ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքի և տնտեսական ծրագրերին կից ներկայացվող հաշվետվությունների, որոնք ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի տնտեսական ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

4. Գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով՝ առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով, ընդ որում, ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ամրակցվում են համակարգում նշված դաշտում: Տվյալ համակարգ մուտք գործելու համար ղեկավարների տեղեկանքները հաստատելու իրավասություններ ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրվում են մուտքի տվյալներ (անուն և ծածկագիր):

5. Նոր ստեղծվող բանկերի, ինչպես նաև օտարերկրյա բանկերի նոր ստեղծվող մասնաճյուղերի ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

6. Գործող բանկերի և դրանց տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

7. Նոր ստեղծվող բանկերի, ինչպես նաև օտարերկրյա բանկերի նոր ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վրա սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից☐ Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք պարտավոր են նաև էլեկտրոնային-թվային ստորագրությամբ Կենտրոնական բանկ կրկին ներկայացնել նախկինում առանց էլեկտրոնային-թվային ստորագրության ներկայացված կանոնադրությունները՝ համապատասխան ստորագրությունը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները (դրանց փոփոխությունները, լրացումները) տրամադրվում են բանկին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցված կանոնադրությունների, ինչպես նաև դրանցում փոփոխությունների ու լրացումների էլեկտրոնային տարբերակները Կենտրոնական բանկի կողմից տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, նոր ստեղծվող բանկերի, ինչպես նաև օտարերկրյա բանկերի նոր ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար սույն կետով սահմանված հնգօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրությունների էլեկտրոնային-թվային ստորագրությամբ տարբերակները Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

9. Սույն կանոնակարգով սահմանված ոչ հայերեն փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ: Ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասություն կամ անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում առաջնահերթությունը տրվում է հայերեն տարբերակին:

10. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում) (բացառությամբ՝ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրի (դիմումի)) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ և ամբողջական են, ինչպես նաև գիտակցում է, որ որևէ փաստի սխալ ներկայացումը և (կամ) բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

11. Կենտրոնական բանկ էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

Բանկի անվանումը	գծիկ	փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ (օօաաատտ ֆորմատով)	կետ	ընդլայնում

Օրինակ. կանոնադրության փոփոխության վերաբերյալ միջնորդագիրը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադրական փոփ.	_	250914	.	pdf

12. Սույն կանոնակարգի համաձայն ներկայացված փաստաթղթերում թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումների) առկայության դեպքում Կենտրոնական բանկն այդ թերությունների մասին տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին: Համապատասխան դիմումը ներկայացված է համարվում ճշգրտված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, դիմումի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը:

13. Նախնական հավանության, գրանցման և լիցենզավորման, համաձայնության և թույլտվության տրամադրման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից□

14. Սույն կանոնակարգով սահմանված նախնական հավանության ստացման, գրանցման, լիցենզավորման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

15. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա բանկը Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացնի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

16. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և (կամ) մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և (կամ) վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և (կամ) պարզաբանումներ: Կենտրոնական բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դիմումի (միջնորդագրի) քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

17. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները կազմվում են.

1) հաշվապահական հաշվառման այն ստանդարտների համապատասխան, որոնք համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս և ներկայացնելիս կամ

2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

18. Սույն կանոնակարգով պահանջվող օտարերկրյա իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին կից անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացվում են դրանց առկայության դեպքում՝ բացառությամբ բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար իրավաբանական անձանցից պահանջվող ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող անկախ աուդիտորական եզրակացությունների:

19. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունների վերաբերյալ սույն կանոնակարգով պահանջվող հաշվետվությունները չեն ներկայացվում, եթե վերջիններս արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել կազմակերպության գրավոր համաձայնությունը այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով կիրառելու համար:

20. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշային գործակալությունների և Ա.Մ. Բեստ վարկանշային կազմակերպության (այսուհետ՝ սույն կետում վարկանշային կազմակերպություն) կողմից տրված վարկանիշները կիրառվում են հետևյալ սկզբունքով (եթե սույն կանոնակարգով այլ բան նախատեսված չէ).

1) Եթե կազմակերպությունն ունի միայն մեկ վարկանշային կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում տվյալ վարկանիշը:
2) Եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշներ՝ տրամադրված տարբեր վարկանշային կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը:
3) Եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշներ՝ տրամադրված տարբեր վարկանշային կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

21. Բանկի հիմնադիրները (բանկը) կանոնադրական կապիտալի համալրման, իսկ դրանից հետո կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացման նպատակով Կենտրոնական բանկ են ներկայաց-

նում կուտակային հաշվի բացման (ավելացման) դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով.

1) ***«Կենտրոնական բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
2) ***«Բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող կամ գործող բանկ:
3) ***«Օտարերկրյա բանկի մասնաճյուղ»***՝ օտարերկրյա բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող կամ գործող մասնաճյուղ:
4) ***«Ղեկավար»***՝ բանկի խորհրդի նախագահ, նրա տեղակալ, խորհրդի անդամներ, գործադիր տնօրեն (վարչության նախագահը), նրա տեղակալները, բանկի տնօրենության (վարչության) անդամներ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ, բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, նրա տեղակալ, ներքին աուդիտի ղեկավար և անդամներ, բանկում որոշում կայացնող դիլեր, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող աշխատակիցներ (այսուհետ՝ ներքին դիտարկումների մարմնի աշխատակից), բանկի մասնաճյուղի կառավարիչ և գլխավոր հաշվապահ:
5) ***«Ֆինանսական վիճակի վատթարացման առկայություն կամ հնարավորություն»***՝ այնպիսի իրավիճակ, երբ՝

ա. բանկը խախտել է կամ խախտելու է հիմնական տնտեսական նորմատիվներից առնվազն մեկը և (կամ)

բ. բանկի մոտ հավանական է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով սահմանված անվճարունակության հիմքերի առաջացումը:

6) ***«Ֆինանսական խումբ (միություն)»***՝ ՖՀՄՍ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ:
7) ***«Ֆինանսական հաշվետվություններ»***՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:
8) ***«Ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ներդրումային ֆոնդ, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն, վճարահաշվարկային կազմակերպություն:
9) ***«Միջազգային վարկանշային գործակալություններ»***՝ Մուդիզ Ինվեստորս Սերվիս, Ստանդարտ և Փուրզ, Ֆիտչ Ռեյտինգս վարկանշային կազմակերպություններ:
10) ***«Անձնագրի տվյալներ»***՝ անձնագրի սերիան և անձնագրի համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները:
11) ***«Հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը), հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը:
12) ***«Գյուղական համայնք»***՝ համաձայն ,Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:
13) ***««Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներին» բավարարում»***՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի շրջանակներում (ԷՖՍԱՓ) տրված գնահատականի համաձայն՝ երկրի բանկային վերահսկողության՝ Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից մշակված բոլոր հիմնարար սկզբունքներին՝ Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից սահմանված գնահատման սանդղակի առաջին (համապատասխանող) կամ երկրորդ (մեծամասամբ համապատասխանող) մակարդակով բավարարումը:
14) ***«Բարձրագույն կրթություն ունեցող անձ»***՝ անձ, որն ավարտել է Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ստացել է Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական:
15) ***«Ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար»***՝ անձ, ով առանց համապատասխան ղեկավարի պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները:

16) ***«Բանկում որոշում կայացնող դիլեր»***՝ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի աշխատակից, որը որոշում է արտարժույթի, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի առքի, վաճառքի կամ փոխանակման կամ ռեպո գործարքների կնքման պայմանները (այդ թվում՝ գին, ծավալ, քանակ, տոկոսադրույք, կնքման, կատարման, մարման և այլ ժամկետներ և/կամ այլ պայմաններ):

17) ***«Հանձնաժողով»***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով:

23. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԸ

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

24. Բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական հավանության համար նախաձեռնող անձանց կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. նախաձեռնող անձանց կամ օտարերկրյա բանկի միջնորդագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի կամ Հավելված 3-ի,

բ. ստեղծվող բանկի կամ ստեղծվող օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի,

գ. ստեղծվող բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ տեղեկություններն ու փաստաթղթերը ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի 14-րդ և 15-րդ գլուխների,

դ. այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնցում ստեղծվող բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը նույնպես հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ, պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի 15-րդ գլխի,

2) ստեղծվող բանկի հիմնադիր պայմանագիրը,

3) ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին իրավական այն ակտերը (դրանց նախագծերը), որոնց հողում է կատարվում ներկայացվող կանոնադրության նախագծում,

4) պատշաճ կարգով տրված լիազորագիրը, եթե նախաձեռնող անձինք կամ օտարերկրյա բանկը հանդես են գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով,

5) ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում) հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 5-ի կամ Հավելված 6-ի,

6) ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում) հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 5-ի և Հավելված 6-ի,

7) ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունները,

8) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում նաև՝

ա. օտարերկրյա բանկի երկրի վերահսկող մարմնի համաձայնությունը Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղ բացելու վերաբերյալ, եթե օտարերկրյա բանկի երկրի վերահսկող մարմնի կանոններով չի սահմանված, որ վերջինիս համաձայնությունը օտարերկրյա մասնաճյուղ բացելու համար տրվում է միայն այլ երկրում օտարերկրյա բանկի մասնաճյուղ ստեղծելու համար լիցենզիայի նախնական հավանությունը ստանալուց հետո,

բ. հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի՝ միջազգային վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման վարկանիշն առնվազն եղել է ԱԱ-(Աա3)՝ սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, եթե օտարերկրյա բանկն ունի երկու կամ երեք միջազգային վարկանշային գործակալությունների կողմից տրված վարկանիշներ, ապա հիմք է ընդունվում դրանցից խստագույնը (ամենացածրը),

գ. մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա բանկը չի խախտել տվյալ երկրի բանկային գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում,

դ. հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային վերահսկողությունը բավարարում է Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից մշակված «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներին»: Ընդ որում, երկրի բանկային վերահսկողությանը գնահատականը պետք է տրված լինի սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից ոչ շուտ, քան 5 տարվա ընթացքում,

ե. հայտարարություն այն մասին, որ օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկիրը համարվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր և տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի և/կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ չի հրապարակվել որևէ հայտարարություն,

զ. հայտարարություն այն մասին, որ Կենտրոնական բանկի և մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման երկրի բանկային վերահսկողությունն իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ,

է. մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորությունները օտարերկրյա բանկի կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

ը. օտարերկրյա բանկի կանոնադրական կապիտալում նշանակալիից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ սույն կանոնակարգի 14-րդ գլխով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները, բացառությամբ միջնորդագրի, որի փոխարեն ներկայացվում է նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:

25. Սույն կանոնակարգի 24-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում սույն կանոնակարգի 14-րդ և 19-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև՝ հետևյալ ենթակետերում նշված այն անձանց համար, որոնք

1) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից,
2) հանդիսանում են միջազգային կազմակերպություն,
3) հանդիսանում են միջազգային համբավ ունեցող և/կամ միջազգային վարկանշային գործակալությունների կողմից սահմանված «Ա-» և/կամ «Ա3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ, եթե առկա է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը:

26. Սույն կանոնակարգի 24-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները չեն ներկայացվում սույն կանոնակարգի 14-րդ և 19-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև այն անձանց համար, որոնք հանդիսանում են Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձինք, որոնք օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ են ներկայացնում իրենց Ֆինանսական վիճակի մասին և Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները:

27. Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում այն փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, ինչպես նաև այն փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, անձնագրի տվյալները և հանրային ծառայության համարանիշները ներառող ցուցակը, որոնց վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում՝ համաձայն սույն կանոնակարգի 25-րդ կետի (բացառությամբ՝ 2-րդ և 3-րդ ենթակետերի) և 26-րդ կետի:

28. Ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված են որևէ խմբի/միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 24-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները, այլ ներկայացվում են սույն կետում նշված հաշվետվությունները (տեղեկությունները), ընդ որում՝ միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետով պահանջվող հաշվետվությունները (տեղեկությունները) ներկայացվում են նրանցից որևէ մեկի կողմից.

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

29. Կենտրոնական բանկը կարող է բանկի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 24-րդ կետի 7-րդ ենթակետով, իսկ եթե բանկի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 28-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

30. Կենտրոնական բանկը լիցենզիա ստանալու նախնական հավանության տրամադրման միջնորդագիրը մերժելու՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքի առկայության վերաբերյալ կարծիքը հիմնավորելիս ղեկավարվում է հետևյալ չափանիշներով.

1) նոր հիմնադրվող բանկի կապիտալի մեծությունը համարժեք չէ գործունեության սկզբնական շրջանում ծագող բանկային ռիսկերին (այդ թվում՝ շուկայական, տոկոսային, վարկային և այլն) դիմակայելու համար, կամ հավանական է կորուստների, վնասների ի հայտ գալը կամ հիմնական տնտեսական նորմատիվների խախտումը: Սույն չափանիշը չի տարածվում այն հիմնադրվող բանկերի վրա, որոնց նախաձեռնող անձինք Կենտրոնական բանկ են ներկայացրել բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում լրացուցիչ ֆինանսական օժանդակություն տրամադրելու պատրաստակամության վերաբերյալ պարտավորագիրը,
2) տնտեսական ծրագրում առկա է ներկայացված տվյալների անհամապատասխանություն կամ անարժանահավատություն, կամ ծրագրում կատարված էական կանխատեսումներն անիրատեսական են,
3) բանկի առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը կամ գործառնական համակարգը բավարար չեն բանկի ռիսկերի կառավարման համար,
4) բանկի տնտեսական ծրագրով հստակ չեն տարանջատվում բանկի կառավարման մարմինների կամ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները և պարտականությունները,
5) բանկի առաջարկվող ներքին հսկողության համակարգը բավարար չէ բանկի տնտեսական ծրագրի պահանջների իրականացման և բանկի ռիսկերի կառավարման համար, ինչպես նաև չի բավարարում բանկերում ներքին հսկողության համակարգի նկատմամբ առկա Կենտրոնական բանկի պահանջները,
6) ծրագրում ճիշտ չեն գնահատված բանկի առջև ծառացող հնարավոր ռիսկերը, կամ տնտեսական ծրագրում չեն ներկայացված ռիսկերի վերլուծության և գնահատման իրականացման համար օգտագործվող տեղեկատվության աղբյուրները,
7) տնտեսական ծրագրում չեն ներկայացված նպատակային շուկաների վերլուծության և տարբեր տիպի կանխատեսումների և ենթադրությունների իրականացման համար օգտագործվող տեղեկատվության աղբյուրները,
8) պոտենցիալ հաճախորդներին ներկայացնելուց բանկը չի ներկայացրել բավարար հիմնավորումներ այդ անձանց կողմից բանկի հաճախորդը դառնալու մտադրության կամ շարժառիթների (շահագրգռվածության) վերաբերյալ,
9) ծրագրում սխալ կամ ոչ ամբողջական են ներկայացված բանկի հիմնական և պոտենցիալ մրցակիցները,
10) մարքեթինգային ծրագրով նախատեսված միջոցառումները բավարար չեն տնտեսական ծրագրի պահանջներն իրականացնելու համար,
11) իրատեսական չէ բանկի կապիտալիզացիայի ռազմավարությունը:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

31. Բանկի հիմնադիրները կամ օտարերկրյա բանկը (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում) Կենտրոնական բանկի կողմից բանկին կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղին գրանցելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերը, ընդ որում.

ա. Գրանցման դիմումը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի կամ Հավելված 9-ի:

բ. Ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավար գրանցելու վերաբերյալ միջնորդագիրը և ղեկավարի գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի

համապատասխանաբար Հավելված 10-ի և Հավելված 11-ի, ընդ որում, Հավելված 11-ում ներառվում է նաև ղեկավարի վավերացված ստորագրության նմուշը:

գ. Կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:

դ. Ստեղծվող բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության մասին հայտարարությունը ներառվում է սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված դիմումում:

ե. Ստեղծվող բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ տեղեկություններն ու փաստաթղթերը ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի 14-րդ և 15-րդ գլուխների:

զ. Այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնցում ստեղծվող բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը նույնպես հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ, պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի 15-րդ գլխի:

է. Ստեղծվող բանկի ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա բանկի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

2) Ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին իրավական այն ակտերը, որոնց ներկայացվող կանոնադրության մեջ հղումներ են կատարվել:
3) Ստեղծվող բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը:
4) Պատշաճ կարգով տրված լիազորագիրը, եթե նախաձեռնող անձինք կամ օտարերկրյա բանկը հանդես են գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով:

32. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 13-ի կամ Հավելված 14-ի:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

33. Բանկային գործունեության լիցենզիա ստանալու համար գրանցված բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը, բացի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմաններից, պետք է բավարարի նաև հետևյալ պայմանները.

1) Ներկայացվել են սույն կանոնակարգի 32-րդ գլխով նախատեսված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում ներկայացնել է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:
2) Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերը բավարար են բանկի տնտեսական ծրագրի պահանջների իրականացման և բանկի ռիսկերի կառավարման համար, ինչպես նաև բավարարում են բանկերում ներքին հսկողության համակարգի նկատմամբ առկա Կենտրոնական բանկի պահանջները:
3) Բավարարված են բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի տնտեսական ծրագրի բոլոր այլ պայմանները:
4) Վճարվել է լիցենզիա ստանալու պետական տուրքը:
5) Օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում նաև՝

ա. ներկայացվել է օտարերկրյա բանկի գրանցման կամ հիմնական գործունեության վայրի երկրում բանկային վերահսկողության պետական մարմնի համաձայնությունը Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեություն իրականացնելու համար, եթե նախնական հավանության փուլում այն չի ներկայացվել,

բ. Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի անունով ներդրվել է ավանդ՝ առնվազն 200 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 200 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթի

չափով, ընդ որում, ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկը ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում՝ սույն ենթակետով սահմանված պայմաններով:

34. Կենտրոնական բանկը բանկին կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ բանկային գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

35. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի:

ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

36. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղ գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում.

1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերը, ընդ որում.

ա. Բանկի միջնորդագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի, ընդ որում, միջնորդագրում ներառվում է բանկի մասնաճյուղի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը:

բ. Մասնաճյուղի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:

գ. Ստեղծվող մասնաճյուղի ղեկավարի գրանցման վերաբերյալ բանկի միջնորդագիրը և ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում են՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի և Հավելված 11-ի:

դ. Ստեղծվող մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:

ե. Որպես մասնաճյուղին տարածք տրամադրելու մասին փաստաթուղթ ներկայացվում է մասնաճյուղի՝ համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ բանկի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը (ենթավարձակալության պայմանագրի դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը):

զ. Որպես մասնաճյուղի տեխնիկական հագեցվածությունը Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթուղթ ներկայացվում է սույն կանոնակարգի 32-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, բացառությամբ, եթե սույն կետով սահմանված միջնորդագրում կատարվել է նշագրում՝ մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը միջնորդագրում նշված ժամկետում համապատասխանեցնելու մասին:

2) Մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը:

3) Բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին:

37. Կենտրոնական բանկի կողմից բանկի մասնաճյուղի գրանցման վկայականը բանկին տրամադրվում է գրանցման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

38. Կենտրոնական բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված հիմքերից բացի մասնաճյուղի գրանցման միջնորդագիրը կարող է մերժել նաև, եթե մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը չի համապատասխանում Կենտրոնական բանկի պահանջներին, մասնավորապես.

1) Տնտեսական ծրագրում առկա է ներկայացված տվյալների անհամապատասխանություն կամ անարժանահավատություն, կամ ծրագրում կատարված էական կանխատեսումներն անիրատեսական են:

2) Մասնաճյուղի առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը և գործառնական համակարգը բավարար չեն բանկի ռիսկերի կառավարման համար:

3) Մասնաճյուղի առաջարկվող ներքին հսկողության համակարգը բավարար չէ մասնաճյուղի տնտեսական ծրագրի պահանջների իրականացման և մասնաճյուղի ռիսկերի կառավարման համար,

ինչպես նաև չի բավարարում բանկերում ներքին հսկողության համակարգի նկատմամբ առկա՝ Կենտրոնական բանկի պահանջները:

4) Տնտեսական ծրագրում ճիշտ չեն գնահատված մասնաճյուղի առջև ծառացող հնարավոր ռիսկերը, կամ չեն ներկայացված ռիսկերի վերլուծության և գնահատման իրականացման համար օգտագործվող տեղեկատվության աղբյուրները:
5) Ծրագրում սխալ կամ ոչ ամբողջական են ներկայացված մասնաճյուղի հիմնական և պոտենցիալ մրցակիցները:
6) Տնտեսական ծրագրում չեն ներկայացված նպատակային շուկաների վերլուծության և տարբեր տիպի կանխատեսումների և ենթադրությունների իրականացման համար օգտագործվող տեղեկատվության աղբյուրները,
7) Պոտենցիալ հաճախորդներին ներկայացնելուց բանկը չի ներկայացրել բավարար հիմնավորումներ այդ անձանց կողմից բանկի հաճախորդը դառնալու մտադրության կամ շարժառիթների (շահագրգռվածության) վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

39. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և օտարերկրյա բանկերը Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչություն գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում.

1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. ներկայացուցչության գրանցման համար միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի, որում ներառվում է ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

բ. հիմնադիր բանկի կանոնադրության պատճենը ներկայացվում է, եթե որպես հիմնադիր հանդես է գալիս օտարերկրյա բանկը,

գ. ներկայացուցչության կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:

2) Բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին:
3) Բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչության ղեկավար նշանակելու մասին:
4) Ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:
5) Ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը, եթե օրենսդրությամբ նախատեսված է տուրքի վճարում:
6) Ներկայացուցչության տարածքի նկատմամբ բանկի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը (ենթավարձակալության պայմանագրի դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը):

40. Կենտրոնական բանկի կողմից բանկի ներկայացուցչության գրանցման վկայականը բանկին տրվում է գրանցման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի:

41. Կենտրոնական բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված հիմքերից բացի բանկի կամ օտարերկրյա բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչության գրանցման միջնորդագիրը կարող է մերժել նաև հետևյալ դեպքերում.

1) Կենտրոնական բանկի կարծիքով ներկայացուցչություն բացելու հիմնավորումները բավարար չեն,
2) միջնորդագրի տրման պահին, ինչպես նաև միջնորդագրի քննարկման ժամանակահատվածի ընթացքում բանկը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից առնվազն մեկը:

ԳԼՈՒԽ 8. ԲԱՆԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐԳԸ

42. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. Բանկի միջնորդագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 22-ի:

բ. Ստեղծվող մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:

2) Մասնաճյուղի կանոնադրությունը, ընդ որում, այն պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:
3) Բանկի միջնորդագիրը ստեղծվող մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ ու ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 10-ի և Հավելված 11-ի:
4) Բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածքը՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին:
5) Մասնաճյուղի տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է բանկի մասնաճյուղի գրանցման (և (կամ) լիցենզավորման) պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը (ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը):
6) Սույն կանոնակարգի 32-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ բացառությամբ, եթե սույն կետով սահմանված միջնորդագրում կատարվել է նշագրում՝ մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը միջնորդագրում նշված ժամկետում համապատասխանեցնելու մասին:

43. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 23-ի,
2) Ներկայացուցչության կանոնադրությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
3) Բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածքը՝ ներկայացուցչության ղեկավար ընտրելու կամ նշանակելու մասին,
4) Ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,
5) Ներկայացուցչության տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է բանկի ներկայացուցչության գրանցման (և (կամ) լիցենզավորման) պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը (ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը):

44. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը ներկայացվում է Կենտրոնական բանկ՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո տասնօրյա ժամկետում՝ կցելով մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:

45. Կենտրոնական բանկը կարող է համաձայնություն չտալ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի կամ ներկայացուցչության ստեղծմանը՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար 38-րդ և 41-րդ կետերով նախատեսված հիմքերի:

ԳԼՈՒԽ 9. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

46. Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխման մասին որոշման ընդունման դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը, ընդ որում.

1) Վարկային կազմակերպության գործունեության տեսակը փոփոխելու մասին միջնորդագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 24-ի:
2) Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից հաստատված գործունեության տեսակի փոփոխման ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 25-ի:

47. Սույն կանոնակարգի 46-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ծրագրի վերաբերյալ իր կարծիքը հիմնավորելիս Կենտրոնական բանկը ղեկավարվում է սույն կանոնակարգի 30-րդ կետով սահմանված չափանիշներով□

48. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի 46-րդ կետում նշված միջնորդագրին համաձայնություն տալու դեպքում վարկային կազմակերպությանը բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական հավանությունը համարվում է տրված: Սույն կետում նշված հավանությունը տրամադրելու հետ մեկտեղ Կենտրոնական բանկը տրամադրում է նաև նոր ստեղծվող բանկի մասնակիցների նշանակալից մասնակցությանը իր նախնական համաձայնությունը:

49. Բանկ գրանցվելու և բանկային գործունեության լիցենզիա ստանալու նպատակով դիմում ներկայացնելու պահին վարկային կազմակերպության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները (առկայության դեպքում) պետք է բավարարեն բանկի համապատասխանաբար մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բոլոր պահանջները (բացառությամբ դրանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի պահանջների), ընդ որում, համապատասխանության մասին վարկային կազմակերպության հայտարարությունը պետք է ներառվի դիմումի մեջ: Վարկային կազմակերպությունը դիմումին կից Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային կազմակերպության փոփոխված կանոնադրությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 26-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
2) ստեղծվող բանկի ներքին իրավական այն ակտերը, որոնց ներկայացվող կանոնադրության մեջ հղումներ են կատարվել,
3) ստեղծվող բանկի ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,
4) բանկի գրանցման և լիցենզիա ստանալու պետական տուրքի վճարման անդորրագիրը,
5) վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու դեպքում վարկային կազմակերպության բոլոր մասնաճյուղերը և ներկայացուցչությունները՝ որպես բանկի համապատասխանաբար մասնաճյուղ և ներկայացուցչություն գրանցելու վերաբերյալ,
6) յուրաքանչյուր մասնաճյուղի և ներկայացուցչության փոփոխված կանոնադրությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 26-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:
7) վարկային կազմակերպության միջնորդագիրը բանկի ղեկավարի գրանցման վերաբերյալ և ղեկավարի գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն համապատասխանաբար սույն կանոնակարգի Հավելված 10-ի և Հավելված 11-ի, և ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:
8) վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ բանկի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին:
9) սույն կանոնակարգի 32-րդ գլխով նախատեսված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ բանկի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը (ենթավարձակալության պայմանագրի դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը):

50. Նախնական հավանությունը ստացած վարկային կազմակերպությունը որպես բանկ գրանցվելու և բանկային գործունեության լիցենզիա ստանալու համար պետք է բավարարի սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված պահանջները:

51. Սույն կանոնակարգի 49-րդ կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս վարկային կազմակերպությունը կարող է Կենտրոնական բանկում բացված հաշվում չապահովել համապատասխան չափով միջոցների առկայությունը, եթե վարկային կազմակերպության համալրված կանոնադրական կապիտալը և ընդհանուր կապիտալը սույն կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվա դրությամբ բավարարում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ բանկի համար հաշվարկվող կանոնադրական կապիտալի նվազագույն չափի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի պահանջները:

52. Սույն կանոնակարգի 49-րդ կետում նշված փաստաթղթերի ուսումնասիրությունը և որոշման կայացումը Կենտրոնական բանկն իրականացնում է բանկային գործունեության լիցենզիայի տրամադրման նպատակով Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քննության՝ սույն կանոնակարգով սահմանված ժամկետներում և կարգով:

53. Վարկային կազմակերպության՝ որպես բանկ գրանցելու և բանկային գործունեության լիցենզիա տրամադրելու և վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու Կենտրոնական բանկի որոշումը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան և վարկային կազմակերպության և դրա մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների գրանցման վկայականները:

54. Վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխման հետ կապված՝ սույն գլխով չկանոնակարգված հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնակարգի համապատասխան դրույթներով:

ԳԼՈՒԽ 10. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ, ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

55. Բանկը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Ընդ որում, բանկի մասնաճյուղի, բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշման մեջ անհրաժեշտ է հստակ նշել այն ժամկետը, որի ավարտից հետո մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է վերսկսված կամ գործունեությունը վերսկսելուց առնվազն 20 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

56. Բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունը ստանալու համար բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցումը թույլատրելու մասին միջնորդագիր՝ բանկի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին,
3) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման հիմնավորումները,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ բանկի կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները,
5) բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

57. Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ բանկի մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր դադարեցնել, եթե.

1) փաստաթղթերում ներկայացվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ,
2) փաստաթղթերը ներկայացվել են թերի,
3) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ բանկի հաճախորդների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ,
4) տվյալ տարածաշրջանում բանկային ծառայությունների մատուցում չի իրականացվում որևէ բանկի կողմից,
5) մասնաճյուղերի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ բանկի կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և իրականացման ժամկետները անհրատեսական են:

58. Սույն կանոնակարգի 56-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլ տալ ժամանակավոր դադարեցնել բանկի մասնաճյուղի գործունեությունը կամ թույլ չտալ ժամանակավոր դադարեցնել բանկի մասնաճյուղի գործունեությունը՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով բանկին:

59. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

60. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժվելու կամ նշված ժամկետում կասեցվելու մասին բանկին չտեղեկացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունը համարվում է տրված:

61. Սույն կանոնակարգի 58-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 60-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

62. Կենտրոնական բանկի կողմից գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետներում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում բանկի մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը:

63. Սույն կանոնակարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետներում բանկի կողմից մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հավաստող փաստաթուղթը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում:

64. Բանկը կամ օտարերկրյա բանկը ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Բանկի կամ օտարերկրյա բանկի միջնորդագիրը ներկայացուցչության ժամանակավոր դադարեցումը թույլատրելու մասին՝ բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,

2) Բանկի կամ օտարերկրյա բանկի իրավասու մարմնի որոշումը՝ բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին:

65. Սույն կանոնակարգի 64-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը թույլ է տալիս ժամանակավոր դադարեցնել բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեությունը կամ թույլ չի տալիս, եթե ներկայացված փաստաթղթերը թերի, անարժանահավատ կամ կեղծ են՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով բանկին կամ օտարերկրյա բանկին:

66. Բանկի ներկայացուցչության գործունեության ժամանակավորապես դադարեցումը թույլատրելու որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկն այդ տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

ԳԼՈՒԽ 11. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ, ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

67. Բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման մասին միջնորդագիր՝ բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին բանկի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,
3) մասնաճյուղի գործունեության դադարեցման հիմնավորումները,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ բանկի կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները:
5) մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

68. Սույն կանոնակարգի 67-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլատրել բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցումը կամ որոշում է կայացնում թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով բանկին:

69. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

70. Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ դադարեցնել բանկի մասնաճյուղի գործունեությունը սույն կանոնակարգի 57-րդ կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

71. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին բանկին չտեղեկացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվությունը համարվում է տրված:

72. Սույն կանոնակարգի 68-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 71-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

73. Կենտրոնական բանկի կողմից գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 67-րդ կետի 4)-րդ ենթակետով նախատեսված ժամկետներում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) բանկի մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը,

2) բանկի մասնաճյուղի գրանցման վկայականը:

74. Կենտրոնական բանկի՝ բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման պահից սույն կանոնակարգի 67-րդ կետի 4)-րդ ենթակետով նախատեսված ժամկետներում բանկի կողմից սույն կանոնակարգի 73-րդ կետով սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

75. Կենտրոնական բանկը բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին որոշում է ընդունում, եթե մասնաճյուղը վեց ամսվա ընթացքում չի իրականացրել բանկային գործունեություն:

76. Բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցման դեպքում բանկը կամ օտարերկրյա բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչությունը գրանցումից հանելու մասին միջնորդագիր՝ բանկի կամ օտարերկրյա բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,
3) բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գրանցման վկայականը:

77. Սույն կանոնակարգի 76-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլ տալ բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցումը կամ թույլ չտալ գործունեության դադարեցումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի, անարժանահավատ կամ կեղծ են՝ հիմքերի մասին տեղեկացնելով բանկին կամ օտարերկրյա բանկին:

78. Բանկի ներկայացուցչության գործունեության դադարեցումը գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկն այդ տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է բանկի ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

79. Բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղին կամ ներկայացուցչությանը՝ այլ երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցումից հանելու փաստը վկայող փաստաթուղթը: Սույն կետով նշված փաստաթուղթը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից համապատասխան գրառում կատարելու համար:

ԳԼՈՒԽ 12. ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

80. Գրանցման վկայականը և (կամ) բանկային գործունեության լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում գրանցման վկայականի կամ բանկային գործունեության լիցենզիայի կրկնօրինակը ստանալու և կորստի մասին Կենտրոնական բանկի կայքում հրապարակելու համար: Դիմումին կից ներկայացվում են նաև լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը (բացառությամբ կորստի, ոչնչացման դեպքի), լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

81. Կենտրոնական բանկը բանկին կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղին տրամադրում է կորած, ոչ պիտանի դարձած կամ ոչնչացած գրանցման վկայականի և (կամ) բանկային գործունեության լիցենզիայի կրկնօրինակը՝ դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

82. Կորած գրանցման վկայականը և (կամ) բանկային գործունեության լիցենզիան գտնելու դեպքում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը գտնված գրանցման վկայականը և (կամ) բանկային գործունեության լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

83. Գրանցման վկայականի կամ բանկային գործունեության լիցենզիայի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

84. Գրանցման վկայականի և (կամ) բանկային գործունեության լիցենզիայի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում գրանցման վկայականի կամ բանկային գործունեության լիցենզիայի նոր կրկնօրինակը տրամադրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 13. ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱՄ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

85. Օտարերկրյա բանկի ներկայացուցչության, բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված տարածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում կից գրությամբ Կենտրոնական բանկ են վերադարձվում համապատասխան գրանցման վկայականները:

86. Օրենքով սահմանված հիմքերով բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը կից գրությամբ լիցենզիան, իսկ օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ նաև օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցման վկայականը վերադարձնում են Կենտրոնական բանկ:

87. Բանկի լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու մասին որոշումը կայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը կից գրությամբ բանկի, բանկի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև բանկի ֆիրմային անվանման գրանցման վկայականները վերադարձնում է Կենտրոնական բանկ:

88. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, բանկի լուծարային հաշվեկշիռը հաստատելու, տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարելու մասին Կենտրոնական բանկի որոշման բողոքարկումը հիմք չէ սահմանված ժամկետում համապատասխան լիցենզիան կամ գրանցման վկայականը չվերադարձնելու համար:

ԲԱԺԻՆ III. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԿԱՄ ԱՅԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 14. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

89. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Իր կողմից բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 27-ի:
2) Իր կանոնադրությունը (ոչ ռեզիդենտ ուղղակի նշանակալից մասնակցի դեպքում):
3) Իր իրավասու մարմնի որոշումը տվյալ բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:
4) Իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 15-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում:
5) Իր վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իր գործունեության ողջ ժամկետի համար) ու վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը:
6) Իր հետ փոխկապակցված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց մասին տեղեկանքներ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 28-ի և Հավելված 29-ի:

90. Եթե իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 89-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունը) (ընդ որում, տվյալ խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում դրանք ներկայացվում են նրանցից որևէ մեկի կողմից)՝

ա. խմբի (միության) կառուցվածքը,

բ. խմբի (միության) վերջին երեք ֆինանսական տարիների ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը:

91. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված իրավաբանական անձինք բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելուն (անկախ մասնակցության չափից) նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն կանոնակարգի 89-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

92. Միջազգային կազմակերպությունները, իսկ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև միջազգային համբավ և (կամ) միջազգային վարկանշային գործակալությունների կողմից «Ա-» («Ա3») կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունները բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն սույն կանոնակարգի 89-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 89-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունների:

93. Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպության՝ բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերման դեպքում Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 89-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 89-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող հաշվետվությունների, եթե բավարարված են սույն կանոնակարգի 19-րդ կետով սահմանված պահանջները:

94. Պետությունը նոր ստեղծվող կամ գործող բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 30-ի:
2) Իր կառավարման իրավասու մարմնի որոշումը տվյալ բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

95. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Իր կողմից բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 31-ի:
2) Իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 15-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում:
3) Իր հետ փոխկապակցված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց մասին տեղեկանքներ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 28-ի և Հավելված 29-ի:

96. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված ֆիզիկական անձը բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելու համար (անկախ մասնակցության չափից) մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը նախնական համաձայնություն ստանալու համար պետք է համապատասխան բանկի միջնորդությամբ դիմի Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 95-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 15. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

97. Իրավաբանական անձը նորաստեղծ կամ գործող բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Իր կողմից բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 27-ի:
2) Իր կանոնադրությունը (ոչ ռեզիդենտ անուղղակի նշանակալից մասնակցի դեպքում):
3) Իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով, սույն կանոնակարգի 98-րդ և (կամ) 100-րդ կետերով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ բանկում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ:
4) Իր վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իր գործունեության ողջ ժամկետի համար) ու վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը:
5) Իր հետ փոխկապակցված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց մասին տեղեկանքները՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 28-ի և Հավելված 29-ի:

98. Միջազգային կազմակերպությունները, իսկ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև միջազգային համբավ և (կամ) վարկանշային գործակալությունների կողմից «Ա-» («Ա3») կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունները բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ են դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 97-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը:

99. Պետությունը նորաստեղծ կամ գործող բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 94-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

100. Ֆիզիկական անձը նորաստեղծ կամ գործող բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Իր կողմից բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 31-ի:
2) Իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով, սույն կանոնակարգի 97-րդ և (կամ) 98-րդ կետերով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ բանկում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ:
3) Իր հետ փոխկապակցված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց մասին տեղեկանքները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 28-ի և Հավելված 29-ի:

ԳԼՈՒԽ 16. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

101. Եթե բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար ներկայացվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ այդ բանկում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով բանկում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

102. Եթե բանկը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող էր հանգեցնել բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա բանկը տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

103. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունը բանկի կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության դիմումը:

104. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է

եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ նախատեսված չէ տվյալ որոշմամբ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե սույն կետով սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, կամ գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ուժը կորցրած է ճանաչվում:

105. Այն դեպքում, երբ նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում միմյանց հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 15-րդ գլխում սահմանված փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

ԳԼՈՒԽ 17. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՅԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

106. Անձը բանկի կանոնադրական կապիտալում այլ մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան բանկի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Իր կողմից բանկի կանոնադրական կապիտալում այլ մասնակցություն ձեռք բերելու համար դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 32-ի:
2) Կանոնադրական կապիտալում այլ մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կամ պետության իրավասու մարմնի որոշումը:

107. Եթե բանկի կանոնադրական կապիտալում այլ մասնակցություն ձեռք բերելու հետևանքով անձը կհանդիսանա բանկի նշանակալից մասնակից, ապա պետք է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար ներկայացնի նշանակալից մասնակցություն ակնկալող մասնակիցների համար սույն կանոնակարգով նախատեսված փաստաթղթերը:

ԲԱԺԻՆ IV. ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 18. ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

108. Բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկի վիճակագրության վարչություն են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ռեզիդենտների համար, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ ոչ ռեզիդենտների համար.

1) Բանկի և օտարերկրյա բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար):
2) Բանկի և օտարերկրյա բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունները:
3) Բանկի և օտարերկրյա բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, ինչպես նաև բանկի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների անունը, ազգանունը և պաշտոնը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 25-րդ կետով սահմանված դեպքերի):
4) Բանկի և օտարերկրյա բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց, ինչպես նաև բանկի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց անունը, ազգանունը ներառող ցուցակը:

109. Սույն կանոնակարգի 108-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները), եթե բանկի և օտարերկրյա բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում.

ա. խմբի (միության) կառուցվածքը,

բ. խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայաց-

նում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և անկախ աուդիտորական եզրակացությունը:

110. Սույն կանոնակարգի 108-րդ 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունը), եթե բանկի և օտարերկրյա բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում.

ա. խմբի (միության) կառուցվածքը,

բ. խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և անկախ աուդիտորական եզրակացությունը:

111. Սույն կանոնակարգի 108-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե համապատասխանաբար բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը և բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձը հանդիսանում են Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձինք, որոնք օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ են ներկայացնում իրենց Ֆինանսական վիճակի մասին և Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները կամ բավարարում են սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված պահանջները: Տվյալ դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում սույն կետում նշված անձանց անվանումները ներառող ցուցակը:

112. Կենտրոնական բանկը կարող է պահանջել բանկից և օտարերկրյա բանկի մասնաճյուղից սույն կանոնակարգի 108-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) սահմանված պարբերականությամբ ներկայացնել Կենտրոնական բանկ նաև բանկի կամ օտարերկրյա բանկի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով:

113. Սույն գլխում սահմանված հաշվետվությունները և տեղեկությունները հայերենով, ռուսերենով կամ անգլերենով ինտերնետային կայքում տեղակայված լինելու դեպքում հաշվետվությունների կամ տեղեկությունների փոխարեն Կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ինտերնետային կայքի (տնային էջի) հասցեն մինչև տվյալ հաշվետվությունները կամ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը, ընդ որում, իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող հաշվետվությունների (տեղեկությունների) առկայությունը ինտերնետային կայքում առնվազն 1 տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ V. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ԳԼՈՒԽ 19. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

114. Ղեկավարները պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացած որակավորում, ինչպես նաև բավարարեն սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցվեն Կենտրոնական բանկում՝ բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

115. Բանկում որոշում կայացնող դիլերները Կենտրոնական բանկում չեն գրանցվում:

116. Ղեկավարի թեկնածուն կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ մեկից ավելի ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայականներ ստանալու համար:

117. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան որակավորումը ստացած են համարվում և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն սույն կանոնակարգի Հավելված 33-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 1 տարի աշխատած և գրանցման գործընթացում գտնվող այն ղեկավարների թեկնածուները, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և/կամ զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:

118. Սույն կանոնակարգով սահմանված որակավորումը պարտադիր չէ բանկերի այն մասնաճյուղերի ղեկավարների համար, որոնց մասով Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման եզրակացության համաձայն բավարարված են հետևյալ պահանջները.

1) Բանկն ունի կադրերի ընտրության, աշխատակիցների մասնագիտական որակի բարձրացման և ղեկավարների նոր սերնդի պատրաստման, ինչպես նաև մասնաճյուղերի ղեկավարների որակավորման գնահատման գործող համակարգեր,

2) Բանկի ներքին հսկողության համակարգը բավարարում է բանկերի ներքին հսկողության իրականացման՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները,
3) Տվյալ մասնաճյուղի և բանկի գլխամասի միջև առկա է կապ, որը հնարավորություն է տալիս գործունեությունը ծավալելու իրական ժամանակի ռեժիմով, այսինքն՝ ապահովում է մասնաճյուղում կատարվող գործարքների ակնթարթային արտացոլումն ընդհանուր տեղեկատվական բազայում և բանկի հաշվեկշռում:

119. Բանկի մասնաճյուղի՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի միայն «ե» և/կամ «ժ» ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնություններն իրականացնելու դեպքում՝ բանկի մասնաճյուղի կառավարիչը կարող է միաժամանակ հանդիսանալ նաև այլ մասնաճյուղերի կառավարիչ:

120. Եթե բանկի մասնաճյուղն իրականացնում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի «ե» և/կամ «ժ» ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնություններից բացի այլ գործառնություններ, ապա այդ մասնաճյուղի կառավարիչը չի կարող միաժամանակ հանդիսանալ նաև այլ մասնաճյուղերի կառավարիչ:

121. Բանկի գլխամասի և բանկի մասնաճյուղի միջև իրական ժամանակի ռեժիմով (մասնաճյուղում կատարվող գործարքներն ակնթարթային արտացոլվում են ընդհանուր տեղեկատվական բազայում և բանկի հաշվեկշռում) գործունեություն ծավալելու համար կապի առկայության դեպքում՝ բանկի մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ:

122. Սույն կանոնակարգով սահմանված բանկի գործադիր տնօրենի որակավորման պահանջները և ընթացակարգերը տարածվում են նաև բանկի լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների, ինչպես նաև բանկի ադմինիստրացիայի ղեկավարի և լուծարային կառավարչի վրա:

ԳԼՈՒԽ 20. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԴԻՊԼՈՄՆԵՐԸ ԿԱՄ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

123. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով որակավորման վկայական է տրամադրվում որոշակի պաշտոնում գրանցված այն ղեկավարին, ով ունի սույն կետի աղյուսակում նշված տվյալ պաշտոնին համապատասխան որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր.

ՊԱՇՏՈՆ	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ, ԴԻՊԼՈՄ ԿԱՄ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ
1. Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալի, տնօրենության (վարչության) անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի, բանկի մասնաճյուղի կառավարչի պաշտոնների համար	Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակը կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները
2. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի, բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի պաշտոնների համար	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակը
3. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի և ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները կամ Սի-Այ-էյ (CIA) կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակը
4. Բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնի համար	Համապատասխանության միջազգային ասոցիացիայի կողմից տրամադրված համապատասխանության դիպլոմ կամ հավաստագիր
5. Բանկի այն մասնաճյուղերի ղեկավարների (կառավարիչ և գլխավոր հաշվապահ) պաշտոնների համար, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, իրականացնելու են միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի «ե» և «ժ» ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնությունները	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F5 մակարդակները կամ (CFA) որակավորման առաջին մակարդակը

ԳԼՈՒԽ 21. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

124. Կենտրոնական բանկի խորհրդի նիստում հարցազրույցի միջոցով որակավորման ստուգում են անցնում բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի խորհրդի անդամի պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները:

125. Հարցազրույցն (բացառությամբ՝ լրացուցիչ հարցազրույցի) իրականացվում է խորհրդի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման գործընթացում, որին խորհրդի անդամի մասնակցության համար բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում միջնորդագիր ու ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 10-ի և Հավելված 11-ի:

126. Հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկը տեղեկացնում է թեկնածուին հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:

127. Հարցազրույցի ժամանակ ստուգվում են թեկնածուի գիտելիքները սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված՝ խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

128. Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված թեմաների շրջանակներում խորհրդի անդամի թեկնածուների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

129. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշում ընդունել նաև առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:

130. Խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում նշված անձը համարվում է խորհրդի անդամի որակավորում ստացած:

131. Խորհրդի անդամի որակավորումը տրվում է մինչև տվյալ բանկում կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղում նրա պաշտոնավարման ժամկետի ավարտը:

132. Որակավորում ստացած խորհրդի նախագահը, խորհրդի նախագահի տեղակալը և խորհրդի անդամները իրենց գործունեության հետագա տարիների ընթացքում Կենտրոնական բանկի կողմից կարող են հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի՝ Կենտրոնական բանկի խորհրդի նիստում որակավորման ստուգման նպատակով:

133. Լրացուցիչ հարցազրույցն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված՝ բանկի, օտարերկրյա բանկի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

134. Լրացուցիչ հարցազրույցը կարող է իրականացվել ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ, որի մասին բանկը տեղեկացվում է առնվազն 30 օր առաջ:

135. Լրացուցիչ հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված թեմաների շրջանակներում խորհրդի անդամի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

136. Խորհրդի անդամի գիտելիքների անհամապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում, ինչպես նաև սույն գլխով սահմանված կարգով լրացուցիչ հարցազրույցին անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում այդ անձինք համարվում են որակավորում չունեցող:

ԳԼՈՒԽ 22. ԲԱՆԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ԴԻԼԵՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

137. Բանկում որոշում կայացնող դիլերին որակավորման վկայական տրամադրելու համար բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

1) դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 35-ի,
2) ՍիէՖէյ որակավորված ֆինանսական վերլուծաբանի (CFA - Chartered Financial Analyst) քննության առնվազն առաջին մակարդակը հանձնած լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճենը կամ
3) էյՍիԱյ - Ֆինանսական շուկաների միության (ACI – The Financial Markets Association) էյՍիԱյ դիլինգի վկայականի (ACI Dealing Certificate) (այսուհետ՝ էյՍիԱյ վկայական) պատճենը:

138. էյՍիԱյ վկայականի ստացման համար կազմակերպվող քննության պայմանները սահմանվում են բացառապես Կենտրոնական բանկի կողմից:

139. Բանկում որոշում կայացնող դիլերի որակավորման վկայականը տրամադրվում է՝ համաձայն սույն կանոնակարգի 26-րդ գլխի:

140. Կենտրոնական բանկը կարող է մերժել դիլերի որակավորման վկայականի տրամադրումը, եթե դիլերի որակավորման վկայական ստանալու համար դիմած անձը նախորդ երեք տարիների ընթացքում զրկվել է որակավորման վկայականից, կամ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են թերի կամ ոչ ամբողջությամբ:

ԳԼՈՒԽ 23. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ԴԻԼԵՐՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

141. Ղեկավարի թեկնածուները, բացառությամբ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի, խորհրդի անդամների և բանկում որոշում կայացնող դիլերների, որակավորման ստուգումն անցնում են քննության միջոցով:

142. Քննությունն անցկացվում է Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կամ Կենտրոնական բանկի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից: Ընդ

որում, Կենտրոնական բանկի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից անցկացվելու դեպքում քննության թեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

143. Քննությանը հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակին նախորդող ամսվա 10-ը:

144. Քննությանը մասնակցելու համար թեկնածուները պետք է նախապես հերթագրվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում մուտքագրելով հետևյալ տվյալները՝

1) անուն, ազգանուն,
2) որակավորման տեսակ,
3) քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
4) հեռախոսահամար,
5) անձի անձնագրի տվյալները,
6) էլեկտրոնային փոստի հասցեն:

145. Թեկնածուները քննությանը մասնակցում են քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
3) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտը) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը:

146. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:

147. Թեկնածուն մուտք գործելով քննության անցկացման սենյակ՝ ըստ ցուցակի հրավիրվում է համապատասխան համակարգչի մոտ: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

148. Քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով:

149. Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

150. Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից միանշանակ ճիշտ) պատասխան:

151. Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:

152. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից. մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

ԳԼՈՒԽ 24. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ԴԻԼԵՐՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ

153. Թեկնածուները Կենտրոնական բանկում որակավորման ստուգումն անցնում են սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված թեմաների շրջանակներում, ընդ որում, «+» նշանը նշանակում է, որ տվյալ թեման վերաբերում է, իսկ «-» նշանը՝ չի վերաբերում:

154. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված թեմաների ցանկի հիման վրա:

155. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ և ենթակա են հրապարակման (բացառությամբ բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների որակավորման քննության թեստերի, որոնք ենթակա չեն հրապարակման): Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:

156. Թեստերը և դրանցում պարունակվող հարցերի քանակը տարբերակվում են ըստ որակավորման հետևյալ տեսակների՝

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿ	ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿ
1. Բանկի գործադիր տնօրեն, վարչության նախագահ, գործադիր տնօրենի տեղակալ, տնօրենության (վարչության) անդամ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ	100 հարց
2. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ	100 հարց
3. Բանկի ներքին աուդիտի ղեկավար, բանկի ներքին աուդիտի անդամ	100 հարց
4. Բանկի մասնաճյուղի կառավարիչ	80 հարց
5. Բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	80 հարց
6. Բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից	80 հարց

157. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար որակավորման ստուգում անցնելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

158. Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում՝ Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Հայոց լեզվին չտիրապետող ղեկավարների թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության պետի թույլտվությամբ:

159. Թեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է չորս պատասխան, որոնցից մեկն է միանշանակ ճիշտ:

160. Թեստի հարցի միանշանակ ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

ԳԼՈՒԽ 25. ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

161. Թեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ.

1) Թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված:
2) Թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված:

162. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

163. Թեկնածուի՝ թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

164. Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման քննության արդյունքները քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմումը, համաձայն սույն կանոնակարգի Հավելված 36-ի, ներկայացնելով Կենտրոնական բանկ, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 26. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

165. Որակավորման վկայականները տրվում են ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման՝

1) բանկի գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի տեղակալ, տնօրենության (վարչության) անդամ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ,
2) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ,
3) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար, բանկի ներքին աուդիտի անդամ,
4) բանկի մասնաճյուղի կառավարիչ,
5) բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ,
6) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից,
7) Բանկում որոշում կայացնող դիլեր:

166. Սույն կանոնակարգի Հավելված 37-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է թեկնածուին էլեկտրոնային եղանակով՝ ուղարկվելով թեկնածուի կողմից քննության մասնակցության հերթագրման ժամանակ ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին քննությունը հանձնելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

167. Սույն կանոնակարգի Հավելված 37-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 117-րդ կետի պահանջները բավարարող ղեկավարին, սույն կանոնակարգի 118-րդ կետի պահանջները բավարարող բանկի մասնաճյուղի ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

168. Սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է բանկում որոշում կայացնող դիլերին որակավորման վկայականի ստացման դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով դիմումում ներկայացված էլեկտրոնային փոստին:

169. Սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 123-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

170. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 166-րդ, 167-րդ, 168-րդ և 169-րդ կետերով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

171. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից, իսկ բանկում որոշում կայացնող դիլերի դեպքում՝ որակավորման վկայականի ստացման համար դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից) տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

172. Թեկնածուների որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 3 տարի ժամկետով, բացառությամբ սույն կանոնակարգի 117-րդ և 118-րդ կետերով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ, և սույն կանոնակարգի 123-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

ԳԼՈՒԽ 27. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

173. Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), գործադիր տնօրենի տեղակալի, տնօրենության (վարչության) անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև բանկի մասնաճյուղի կառավարիչ:

174. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի, բանկի ներքին աուդիտի ղեկավարի, ներքին աուդիտի անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև որպես բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ:

175. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի, ներքին աուդիտի աշխատակցի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև որպես բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:

176. Բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահը), գործադիր տնօրենի տեղակալը, տնօրենության (վարչության) անդամը, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչը ի պաշտոնե կարող են լինել բանկում որոշում կայացնող դիլեր՝ առանց համապատասխան որակավորման վկայական ստանալու:

177. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահն ի պաշտոնե կարող է լինել տվյալ բանկի տնօրենության (վարչության) անդամ՝ առանց տնօրենության (վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

ԳԼՈՒԽ 28. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

178. Բանկի ղեկավարը պետք է իրազեկ լինի ֆինանսական համակարգի, մասնավորապես՝ բանկերի գործունեությունը կարգավորող օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև բանկի (կամ բանկի մասնաճյուղի) տնտեսական ծրագրին և բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերին:

179. Անձը սույն կետում նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար սույն կանոնակարգի 178-րդ կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներից բացի պետք է բավարարի նաև հետևյալ մասնագիտական համապատասխանության չափանիշները.

ՊԱՇՏՈՆ	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ
1. Խորհրդի անդամ	1) բարձրագույն կրթության առկայության դեպքում՝ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, 2) բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ
2. Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալի, տնօրենության (վարչության) անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի պաշտոնների համար	բարձրագույն կրթություն և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ ղեկավար պաշտոնում
3. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնների համար	բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
4. Բանկի մասնաճյուղի կառավարչի պաշտոնի համար	բարձրագույն կրթություն և առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ
5. Բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի պաշտոնի համար	բարձրագույն կրթություն և առնվազն 1 տարվա մասնագիտական փորձ
6. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնի համար	բարձրագույն կրթություն և առնվազն 3 տարվա աուդիտի ոլորտում աշխատանքային փորձ
7. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամի պաշտոնի համար	բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ. ընդ որում՝ տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու ներքին աուդիտի անդամի համար՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
8. Բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնի համար	բարձրագույն կրթություն և առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ (ֆինանսական ոլորտում կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում)
9. Բանկի այն մասնաճյուղերի ղեկավարների (կառավարիչ և գլխավոր հաշվապահ) պաշտոնների համար, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, իրականացնելու են միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի «ե» և «ժ» ենթակետերով նախատեսված ֆինանսական գործառնությունները	սույն աղյուսակում մասնաճյուղի կառավարչի և մասնաճյուղի գլխավոր հաշվապահի համար նախատեսված մասնագիտական համապատասխանության չափանիշները
10. Բանկում որոշում կայացնող դիլերի պաշտոնի համար	բարձրագույն կրթություն

180. Սույն գլխում նշված աշխատանքային փորձը վերաբերում է ղեկավարների գրանցման պահին նախորդող 10 տարիներին՝ բացառությամբ խորհրդի անդամի համար նախատեսված աշխատանքային փորձի:

181. Եթե ղեկավարի թեկնածուն չունի 179-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և/կամ բարձրագույն կրթություն, ապա բանկն իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար ղեկավարի թեկնածուի մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովի դրական եզրակացությամբ ղեկավարի թեկնածուն համարվում է մասնագիտական համապատասխանության չափանիշները բավարարող:

182. Սույն կանոնակարգի 179-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպությունում աշխատանքային փորձ է համարվում տվյալ ֆինանսական կազմակերպությունում մասնագիտական գործունեության հետ կապված աշխատանքային փորձը:

ԳԼՈՒԽ 29. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ԲԱՆԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ԴԻԼԵՐՆԵՐԻ) ԳՐԱՆՑՈՒՄԸ

183. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների (բացառությամբ՝ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի և բանկում որոշում կայացնող դիլերի) գրանցումն իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ կամ բարդ: Ղեկավարների գրանցման ընթացակարգերի տեսակները, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված են սույն կանոնակարգի Հավելված 39-ով:

184. Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
2) թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 195-րդ կետով սահմանված դեպքերի:

185. Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով,
2) թեկնածուի որակավորման առկայության ստուգում:

186. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի միջնորդագիրը և ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 10-ի և Հավելված 11-ի,
2) բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

187. Բանկը և օտարերկրյա բանկի մասնաճյուղը պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

188. Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարները կամ ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ:

189. Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի համապատասխան որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 190-192-րդ կետերի առկայության հիմնավորմամբ բանկին գրավոր կամ բանավոր եղանակով չի ծանուցում անձին բարդ ընթացակարգով գրանցելու մասին, որի դեպքում գործում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

190. Եթե բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ բանկում կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղում, Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 187-րդ կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները, և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

191. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և/կամ այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր բանկի և/կամ ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

192. Եթե բանկի մասնաճյուղը, Կենտրոնական բանկի կարծիքով, հանդիսանում է բանկի գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, ապա տվյալ մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

193. Սույն կանոնակարգի 189-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի համապատասխան ղեկավարի գրանցումն իրականացվում է բարդ ընթացակարգով այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի համապատասխան ղեկավարին պարզ ընթացակարգով գրանցելու հնարավորության մասին:

194. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում, ղեկավարների գրանցման օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 204-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Ընդ որում, կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

195. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարներին բարդ ընթացակարգով գրանցելիս՝ ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

196. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 11-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը, և հետագայում բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը դիմում է Կենտրոնական բանկ՝ նույն անձին ղեկավար գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 11-ով սահմանված տեղեկանքը Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն միջնորդագրի 1-ին և 2-րդ կետերի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

197. Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

198. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 130-րդ կետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը:

199. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ որակավորման ստուգման և գրանցման ենթակա չէ, և բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկին տեղեկացնում են նրա՝ որպես խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունները տեղի ունենալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, կից ներկայացնելով համապատասխան գրություն, որտեղ նշվում են իրավասու մարմնի կողմից որոշման կայացման և փոփոխության իրականացման ամսաթվերը:

200. Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է եթե.

1) Առկա է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դեպքերից որևէ մեկը,
2) Անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցի» համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,
3) Անձի կողմից ներկայացվել են թերի, անարժանահավատ փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
4) Անձը փոխկապակցված է տվյալ բանկի ղեկավարների հետ (միայն ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների թեկնածուների համար):

ԳԼՈՒԽ 30. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

201. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից՝

1) եթե ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,
2) եթե բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի դիմել է համապատասխան միջնորդությամբ,
3) եթե բանկի մասնաճյուղի գործունեությունը դադարեցվել է (բանկի տվյալ մասնաճյուղի ղեկավարների համար),

4) եթե ի հայտ են եկել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դեպքերը,
5) բանկի լուծարային հանձնաժողովի նախագահի նշանակման պահից:

202. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը ղեկավարների կազմում փոփոխությունները տեղի ունենալուց հետո սույն կանոնակարգի 221-րդ կետով սահմանված ժամկետներում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) կառավարման իրավասու մարմնի որոշում կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու վերաբերյալ, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղն ունի ներքին դիտարկումների մարմնի մեկ աշխատակից, որին պաշտոնից հանելու մասին իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք ներկայացնելու հետ միաժամանակ Կենտրոնական բանկ է ներկայացվում ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածքը:

203. Եթե բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար:

ԳԼՈՒԽ 31. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

204. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների պաշտոնները կարող են զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարների կողմից և թափուր մնալ ոչ ավելի քան 3 ամիս՝ սկսած բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից ղեկավարին պաշտոնից փաստացի ազատելու պահից:

205. Սույն կետի աղյուսակի համապատասխան պաշտոնների համար նշված ժամանակավոր պաշտոնակատարների վրա սույն կանոնակարգի 204-րդ կետով նշված եռամսյա ժամկետը չի տարածվում: Ընդորում, եթե սույն կետում նշված դեպքերում ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պաշտոնավարում է երեք ամսից ավելի, ապա եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում բանկը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

ՊԱՇՏՈՆ	ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
1. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործադիր տնօրեն, վարչության նախագահ	Տվյալ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ
2. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	Տվյալ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցված գլխավոր հաշվապահի տեղակալ
3. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	Տվյալ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցված ներքին աուդիտի անդամ
4. Բանկի մասնաճյուղի կառավարիչ	Տվյալ բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ, բանկի մասնաճյուղի կառավարիչ

206. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը կարող է չունենալ համապատասխան ղեկավարի պաշտոնի համար նախատեսված որակավորում, բացառությամբ սույն կանոնակարգի 207-րդ և 208-րդ կետերով նախատեսված ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների:

207. Բանկի գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող են լինել միայն տվյալ բանկի գործադիր տնօրենի տեղակալը, վարչության նախագահի տեղակալը, վարչության (տնօրենության) անդամը:

208. Բանկի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել միայն տվյալ բանկի գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ունեցող բանկի այլ աշխատակիցը:

209. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել բանկում այլ պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ գրանցված ներքին աուդիտի անդամի), ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

210. Ներքին աուդիտի անդամի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի այլ պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

211. Սույն կանոնակարգի 204-րդ կետում նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

212. Բանկի խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի, խորհրդի անդամների և բանկում որոշում կայացնող դիլերների ժամանակավոր պաշտոնակատարներ չեն նախատեսվում:

ԲԱԺԻՆ VI. ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 32. ԲԱՆԿԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԲԱՆԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

213. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը և բանկի տարածքային ստորաբաժանումը պետք է ունենան բանկին սեփականության իրավունքով պատկանող, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրենց պատկանող առանձնացված տարածք:

214. Այն դեպքում, երբ բանկերը, Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա, կնքել են միացման պայմանագիր, ապա միացվող բանկերի գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև սույն կանոնակարգի 213-րդ կետով սահմանված տարածքների առանձնացվածության պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:

215. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը և բանկի մասնաճյուղը (բացառությամբ՝ մաքսատների, մաքսակետերի տարածքներում տեղակայված բանկի մասնաճյուղի) պետք է ունենան.

1) Կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ բանկի մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի և այլ արժեքների, գրավադրված և ի պահ ընդունված արժեքների պահպանության հիմնական վայրն է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները այլ բանկի, վարկային կազմակերպության կամ դրանց տարածքային ստորաբաժանումների պահպանման են հանձնվելու: Ընդ որում, բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը, բանկի մասնաճյուղը կանխիկ դրամը պահպանության կարող են հանձնել բացառապես բանկին, վարկային կազմակերպությանը կամ դրանց տարածքային ստորաբաժանումներին: Դրամապահոցի բացակայության պարագայում բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը, բանկի մասնաճյուղը կարող են չհրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին և (կամ) պատին: Եթե բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ բանկի մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված է, որ վերջինս «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, ապա դրամարկղային հանգույցի առկայությունը պարտադիր չէ:
2) Շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի և բանկի մասնաճյուղի ամբողջ տարածքում և բանկի գլխամասի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, իսկ բանկի մասնաճյուղի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը կամ այլ համապատասխան կազմակերպությանը, ինչպես նաև բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի և բանկի մասնաճյուղի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ ըստ տարածքի մակերեսի: Շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ

արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը և բանկի մասնաճյուղը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգ ունեցող տարածքներում, ապա բանկի տարածքի շուրջօրյա ահազանգման համակարգը պետք է միացված լինեի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգին հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

3) Բանկը և բանկի մասնաճյուղը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ: Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի գրանցվելուց հետո՝ մասնաճյուղի գրանցման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք, ըստ սույն կանոնակարգի 121-րդ կետի, կարող են չունենալ գլխավոր հաշվապահ, համակարգչային ցանցը պետք է միացվի մասնաճյուղին վերջինիս գրանցման փաստաթղթերի ներկայացման պահին:

216. Մաքսատների կամ մաքսակետերի տարածքներում տեղակայված բանկի մասնաճյուղը պետք է ունենա՝

1) բանկին սեփականության իրավունքով պատկանող, հավատարմագրային կառավարմամբ, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք, որը պետք է գտնվի մաքսատների և մաքսակետերի տարածքներում: Մասնաճյուղում պարտադիր պետք է տեղադրված լինի չհրկիզվող պահարան, որը պետք է ամրացված լինի հատակին և (կամ) պատին:
2) ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագիր նշված միջոցների տեղափոխման և հանձնման համար:

217. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը կարող են սույն կանոնակարգի 215-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն ունենալ Բանկերս Բլանկետ Բոնդ (Bankers-Blanket-Bond (այսուհետ՝ BBB)) պայմանագիր՝ առնվազն հետևյալ ռիսկերի գծով.

1) ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,
2) բանկի գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում՝ բանկի տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

218. Սույն կանոնակարգի 217-րդ կետում նշված ռիսկերի գծով ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել բանկի ակտիվների 1 տոկոսից:

219. «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա միջազգային վարկանշային գործակալություններից և Ա.Մ. Բեստ վարկանշային կազմակերպությունից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի «A-» («A3») վարկանիշից:

220. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ բանկի մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգի» պահանջներին:

ԲԱԺԻՆ VII. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 33. ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

221. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, օտարերկրյա բանկի մասնաճյուղերը և օտարերկրյա բանկի ներկայացուցչությունները, փոփոխությունները տեղի ունենալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում՝

1) բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի, օտարերկրյա բանկի ներկայացուցչության, բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), կանոնադրություններում կատարված փոփոխությունները,
2) սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի գրանցմանը ենթակա ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ բանկն ունի ներքին դիտարկումների մարմնի մեկ աշխատակից, որի վերաբերյալ փոփոխությունը ներկայացվում է այն տեղի ունենալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև «Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված առաջին հաշվետվության տրամադրումը:

222. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի և ներկայացուցչության, բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանումների կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար բանկերը, օտարերկրյա բանկի մասնաճյուղերը և օտարերկրյա բանկի ներկայացուցչությունները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի, օտարերկրյա բանկի ներկայացուցչության (օտարերկրյա բանկի) կառավարման իրավասու մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
2) բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի (օտարերկրյա բանկի) կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի (ներկայացուցչության), բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
3) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի (ներկայացուցչության) կամ բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանման կանոնադրության փոփոխությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 26-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
4) եթե կանոնադրության փոփոխությունը առաջացնում է լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև կից ներկայացվում են հին լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը և պետական տուրքի վճարման անդորրագիրը:

223. Եթե բանկի, բանկի տարածքային ստորաբաժանման կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի (ներկայացուցչության) կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա սույն կանոնակարգի 222-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև գործունեության նոր տարածքի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը (ենթավարձակալության պայմանագրի դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը), ընդ որում սույն կանոնակարգի 222-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջնորդագրում նշվում է բանկի հայտարարությունն այն մասին, որ տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգով սահմանված չափանիշներին, իսկ անհնարինության դեպքում՝ պարտավորագիր առ այն, որ գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կապահովվի դրանց համապատասխանությունը:

224. Բանկի կանոնադրության փոփոխությունը ֆիրմային անվանման փոփոխությամբ պայմանավորված լինելու դեպքում բացի սույն կանոնակարգի 222-րդ կետում նշված փաստաթղթերից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև բանկի ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա բանկի ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

225. Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի, բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղի ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կանոնակարգի 29-րդ գլխով սահմանված կարգով:

226. Փոփոխությունները գրանցվում են, կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

227. Գրանցման վկայականի և (կամ) լիցենզիայի նոր օրինակը բանկին տրամադրվում է կանոնադրության փոփոխությունը գրանցելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 34. ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

228. Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը լիցենզիա ստանալուց, իսկ օտարերկրյա բանկի ներկայացուցչությունը գրանցվելուց հետո սույն կետում նշված փոփոխությունները տեղի ունենալու դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փոփոխությունները.

1) Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեությունը կարգավորող նոր ներքին իրավական ակտերի ընդունման կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխության դեպքում՝ նոր ընդունված ներքին իրավական ակտերը կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխությու-

ները և այդ փոփոխությունները ներառող ներքին իրավական ակտերը (բանկի գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը):

2) Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի՝ սույն կանոնակարգի գլուխ 32-ով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ այդ փոփոխությունների վերաբերյալ գրություն, որը պարունակում է հայտարարություն առ այն, որ փոփոխված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 32-րդ գլխով սահմանված չափանիշներին:
3) Բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները:
4) Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի խորհրդի նախագահի և (կամ) խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնանկության դեպքում՝ համապատասխան գրություն, որտեղ նշվում են կառավարման իրավասու մարմնի կողմից որոշման կայացման և փոփոխության իրականացման ամսաթվերը:
5) Բանկի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության ղեկավարի փոփոխության դեպքում՝ ղեկավարի մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:
6) բանկում որոշում կայացնող դիլերների փոփոխության դեպքում՝ բանկում որոշում կայացնող դիլերների փոփոխության վերաբերյալ տեղեկությունները, որոնք առնվազն ներառում են՝

ա. բանկում որոշում կայացնող դիլերի որակավորման վկայականի համարը և տրման ամսաթիվը,

բ. բանկում որոշում կայացնող դիլերի տվյալ բանկում աշխատանքից ազատվելու կամ աշխատանքի անցնելու ժամկետները,

գ. հայտարարություն, որ բանկում որոշում կայացնող դիլերը չունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար, դատարանի կողմից ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված չէ, սնանկ ճանաչված չէ և չունի չմարված (չներված) պարտավորություններ, քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ (հայտարարությունը չի ներկայացվում բանկում որոշում կայացնող դիլերի պաշտոնից ազատվող անձի համար),

229. Բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը սույն կանոնակարգի Հավելված 11-ով սահմանված տեղեկանքի 2.3-րդ, 3.6-րդ, 3.8-3.9-րդ, 4.1-րդ ենթակետերով կամ 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխության դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է այդ փոփոխությունները:

ԲԱԺԻՆ VIII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 35. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

230. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքների կամ գործառնությունների իրականացման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու նպատակով բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ներդրումային գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու վերաբերյալ դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 40-ի,
2) բանկի կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ,
3) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ բանկի ծրագիրը, որը պետք է ներառի գործարքի կամ գործառնության իրականացման արդյունքում բանկի՝ հաջողության հասնելու հավանականության մասին տեղեկություններ, ծրագրում պետք է հիմնավորվի, որ նախատեսվող գործարքը համատեղելի է բանկի ֆինանսական վիճակի հետ, և այն կնպաստի ֆինանսական շուկայում բանկի գործունեության զարգացմանը: Ընդ որում, ծրագիրը պետք է լինի իրատեսական և ծրագրում ներառված բոլոր կանխատեսումները պետք է հիմնավորված լինեն կոնկրետ հաշվարկներով,
4) տվյալ անձի համաձայնությունը՝ իր ֆինանսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու նպատակով բանկին տրամադրելու վերաբերյալ,
5) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ազդագրի (առևտրի ազդագրի) բացակայության դեպքում այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց կանոնադրական կապիտալում բանկը ցանկանում է ձեռք բերել մասնակցություն, ինչպես նաև այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց կանոնադրական կապիտալում բանկը նախկինում

ձեռք է բերել մասնակցություն, որի արդյունքում ի հայտ են եկել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերը, ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը (տեղեկությունները).

ա. իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում, իսկ ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի համարը,

բ. իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ՝ ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձանց նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար), ընդ որում՝ վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են անկախ աուդիտորական եզրակացությամբ:

231. Սույն կանոնակարգի 230-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) չեն ներկայացվում, եթե տվյալ իրավաբանական անձը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում 230-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը:

232. Բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում նախատեսվող գործարքի վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը կարող է ստանալ, եթե.

1) ներկայացված փաստաթղթերում չեն արտացոլվել անարժանահավատ կամ կեղծ տվյալներ,
2) նախնական համաձայնություն ստանալու վերաբերյալ դիմում Կենտրոնական բանկ ներկայացնելու պահին նախորդող մեկ տարվա ընթացքում բանկը չի խախտել հիմնական տնտեսական նորմատիվները,
3) տվյալ գործարքը համատեղելի է բանկի ֆինանսական վիճակի հետ,
4) տվյալ գործարքը կնպաստի ֆինանսական շուկայում տվյալ բանկի զարգացմանը,
5) առկա չեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը:

233. Սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում գործարքը չիրականացնելու դեպքում այդ համաձայնությունը համարվում է չտրված:

ԳԼՈՒԽ 36. ԲԱՆԿԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

234. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերին թույլատրվում է իրենց գործունեության տարածքից դուրս իրականացնել վարկերի տրամադրման և/կամ վարկերի հավաքագրման գործընթացները՝ հետևյալ բոլոր պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

1) Վարկերի տրամադրումը և/կամ վարկերի հավաքագրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում:
2) Բանկից կամ բանկի մասնաճյուղից կանխիկ միջոցները գյուղական համայնքներ և գյուղական համայնքներից հետ տեղափոխումն իրականացվում է զինված ոստիկանի ուղեկցությամբ կամ ինկասատորի միջոցով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա:
3) Բանկը գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին գյուղական համայնքում սույն կետով նշված գործունեությունը սկսելու կամ դադարեցնելու որոշման մասին՝ համապատասխան որոշումն ընդունելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գյուղական համայնքում սույն կետով նշված գործունեությունը սկսելու մասին գրավոր ծանուցմանը կցվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ ինկասացիոն կազմակերպության հետ կնքված համապատասխան պայմանագրի պատճենները:
4) Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ ինկասացիոն ծառայության հետ կնքված սույն կետում նշված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո բանկն անմիջապես երկարաձգում է կնքված պայմանագրի ժամկետը կամ կնքում է նոր պայմանագիր, ընդ որում, բանկը 15 օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում պայմանագրի ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթուղթը կամ նոր պայմանագիրը:
5) Բանկի աշխատակիցներից, զինված ոստիկանից կամ ինկասատորից կազմված մեկ խմբի մոտ առկա գումարը օրվա ընթացքում չի գերազանցում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

ԳԼՈՒԽ 37. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

235. Սույն կանոնակարգի 4-րդ կետն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 7-ից, իսկ մինչ այդ բանկի ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և

տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի էֆ» ֆորմատով:

236. Սույն կանոնակարգի 179-րդ կետի աղյուսակի 7-րդ պարբերության պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գրանցված ներքին աուդիտի ղեկավարի և անդամների վրա:

237. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ գործող բանկը և բանկի մասնաճյուղը պարտավոր են բավարարել սույն կանոնակարգի 32-րդ գլխով սահմանված՝ գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ մինչ այդ պարտավոր են բավարարել հետևյալ պահանջները.

«1) Բանկը (բացառությամբ՝ մաքսատների, մաքսակետերի տարածքներում տեղակայված բանկի մասնաճյուղի) կամ բանկի տարածքային ստորաբաժանումը պետք է ունենա.

ա. բանկին սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք: Այն դեպքում, երբ բանկերը, Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա, կնքել են միացման պայմանագիր, ապա միացվող բանկերի գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:

բ. կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց՝ դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի և այլ արժեքների, գրավադրված և ի պահ ընդունված արժեքների պահպանության հիմնական դրամապահոց է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու այլ բանկ կամ այլ բանկի տարածքային ստորաբաժանում: Դրամապահոցի բացակայության պարագայում բանկը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի՝ տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին: Եթե բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ տարածքային ստորաբաժանման կանոնադրությամբ նախատեսված է, որ վերջինս «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, ապա դրամարկղային հանգույցի առկայությունը պարտադիր չէ:

գ. Շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր: Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի համապատասխան կազմակերպությանը, իսկ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե բանկերի մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգ ունեցող տարածքներում, ապա բանկի տարածքի շուրջօրյա ահազանգման համակարգը պետք է միացված լինեի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

դ. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը կամ բանկի տարածքային ստորաբաժանումը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ: Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի գրանցվելուց հետո՝ մասնաճյուղի գրանցման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք կարող են չունենալ գլխավոր հաշվապահ, համակարգչային ցանցը պետք է միացվի մասնաճյուղին վերջինիս գրանցման փաստաթղթերի ներկայացման պահին:

2) Մաքսատների կամ մաքսակետերի տարածքներում տեղակայված բանկի մասնաճյուղը պետք է ունենա՝

ա. բանկին սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք, որը պետք է գտնվի մաքսատների և մաքսակետերի տարածքներում: Մասնաճյուղում պարտադիր պետք է տեղադրված լինի չհրկիզվող պահարան, որը պետք է ամրացված լինի հատակին և պատին,

բ. ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների տեղափոխման և հանձնման համար:

3) Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը կարող են սույն կետի 1-ին ենթակետով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն ունենալ «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրության պայմանագիր հետևյալ ռիսկերի գծով.

ա. ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,

բ. բանկի գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում՝ բանկի տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

Նշված ռիսկերի գծով ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել բանկի ակտիվների 1 տոկոսից:

Ընդ որում, «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

Ստանդարտ և Փուրզ	«A-»
Մուդիզ	«A3»
Ա.Մ. Բեստ	«A-»
Ֆիտչ	«A-»:

4) Բանկի արտասահմանյան տարածքային ստորաբաժանման տարածքի և տեխնիկական հագեցվածությունը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի և արտասահմանյան վերահսկող մարմնի կողմից սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջներից ամենախիստին:

5) Բանկը, բանկի մասնաճյուղը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում են բանկի տարածքում: Բանկը, բանկի մասնաճյուղը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում են այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի: Բանկից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշվում են միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:»:

238. Բանկի այն աշխատակիցները, ովքեր ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պարտականություններ են իրականացրել Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 29-ի «Բանկի ղեկավար համարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 83-Ն որոշումն ուժի մեջ մտնելու պահին և շարունակում են իրականացնել նշված պարտականությունները մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահը, համարվում են Կենտրոնական բանկի կողմից գրանցված:

Հավելված 1

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԴԻՄՈՒՄ
ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) լրիվ անվանումը)

համար բացել կուտակային հաշիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնելու համար:

Վճարման հանձնարարական տալու իրավունք ունի (ունեն).

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

Խնդրում ենք Կենտրոնական բանկի կողմից բանկի գրանցման մերժման, լիցենզիայի տրամադրման կամ լիցենզիայի տրամադրման մերժման, կանոնադրության փոփոխության գրանցման կամ գրանցման մերժման դեպքում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին առկա միջոցները փոխանցել հետևյալ հաշվին՝

_____
(բանկի անվանումը, հաշվեհամարը)

_____
(իրավասու անձի (անձանց) հայեցողությամբ այլ նշումներ)

Իրավասու անձ (անձինք)՝

_____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ 20__ թ.

Հավելված 2
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Մենք (Ես)՝ ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել _____
_____
բանկի կազմակերպական-իրավական տեսակը և անվանումը
ստեղծելու մասին:

Խնդրում ենք (եմ) տրամադրել բանկային գործունեության լիցենզիա ստանալու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախնական հավանությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք (եմ) բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական հավանության համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից _____ էջ):

Ներկայացնում ենք (եմ) նաև ստեղծվող բանկի կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, փոստային հասցե, էլ. հասցե):

Մենք (Ես)՝ ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), հավաստիացնում ենք (եմ), որ մանրակրկիտ դիտարկել ենք (եմ) սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք (եմ), որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք (եմ), որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Բանկի ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀՎՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 3

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

Հարգելի _____

_____ բանկի _____
օտարերկրյա բանկի անվանումը *կառավարման իրավասու մարմնի անվան*

որոշում է ընդունել ՀՀ տարածքում մասնաճյուղ ստեղծելու վերաբերյալ:

Խնդրում ենք տրամադրել բանկային գործունեության լիցենզիա ստանալու՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախնական հավանությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական հավանության համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից _____ էջ):

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկվել է սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Օտարերկրյա բանկի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

«__» _____ 20__ թ.

Հավելված 4

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրի ձև

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ
Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումներ
Բաժին 3. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն
Բաժին 4. Միջոցների ներգրավման հիմնական գործիքներ
Բաժին 5. Մրցակցությանը դիմակայելու մեթոդներ
Բաժին 6. Բանկի ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ
Բաժին 7. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ
Բաժին 8. Հնարավոր ռիսկերի գնահատում
Բաժին 9. Խորհրդի կողմից տնտեսական ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում
Բաժին 10. Այլընտրանքային տնտեսական ծրագիր (պարտադիր չէ, ներկայացվում է Կենտրոնական բանկի պահանջով)
Բաժին 11. Այլ դրույթներ
Ենթահավելվածներ

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

1. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի (այսուհետև՝ բանկ) գործունեության տնտեսական ծրագիրը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, ծրագրի ներկայացման ընթացիկ տարվա և հաջորդող երկու լրիվ ֆինանսական տարիների համար կազմված՝ բանկի տնտեսական գործունեությունը և ներքին կազմակերպական կառուցվածքը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է:

2. Բանկի գործունեության տնտեսական ծրագրի ընդհանուր դրույթներում պետք է նշվեն՝

1) ստեղծվող բանկի անվանումը և գտնվելու վայրը,
2) նախաձեռնող անձանց կողմից նոր բանկի ստեղծման նախադրյալները,
3) բանկի առաքելությունը,
4) բանկի նպատակները,
5) բանկի կազմակերպաիրավական տեսակը (օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար հիմնադիր բանկի կազմակերպաիրավական տեսակը),
6) բանկի մասնակիցների կազմը և մասնակցության չափը,
7) բանկի առաջարկվող ղեկավարների ցանկը:

Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումներ

3. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) բանկի գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը և դրանց համառոտ նկարագիրը,
2) բանկի կողմից ֆինանսական շուկայում նոր տիպի ծառայությունների ներդրումը (առկայության դեպքում),
3) բանկի հնարավոր դուստր կազմակերպությունները, դրանց կողմից իրականացվող գործառնությունները,
4) բանկի շուկայում հնարավոր դերը, մասնաբաժինը, սպասարկման տարածքը,
5) բանկի պոտենցիալ հաճախորդների բնութագիրը և ենթադրվող թիվը, խոշոր հաճախորդների անունները,
6) բանկի նախատեսվող մասնաճյուղերի ցանցը, նրանց տեղակայվածությունը (միայն ՀՀ բանկերի համար),
7) բանկի զարգացման և ընդլայնման հեռանկարները, ներառյալ լրացուցիչ մասնաճյուղերի բացումը, այլ կազմակերպությունների հետ միացումը և/կամ դրանց ձեռքբերումը (միայն ՀՀ բանկերի համար),
8) բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց գործունեությունը, դրանց կազմակերպական կառուցվածքը, բանկի և նրա հետ փոխկապակցված իրավաբանական անձանց փոխհարաբերությունները,
9) բանկի և նրա հետ փոխկապակցված անձանց գործարքները (օրինակ, բանկի կողմից փոխկապակցված անձանց ֆինանսավորումը), եթե այդպիսիք նախատեսվում են,
10) միջոցների տեղաբաշխման նախատեսվող ուղիները, գործառնությունների տեսակները (ներդրումներ արժեթղթերում, տարբեր տեսակի վարկավորում և այլն), տալ դրանց բնութագիրը, միջոցների տեղաբաշխման պայմանները, գնահատել բանկի մրցունակությունը միջոցների տեղաբաշխման տեսանկյունից,
11) բանկի վարկավորման ծրագրերը (օրինակ, հիփոթեքային վարկավորման ծրագիր և այլն): Տեղեկացնել բանկի կողմից ռիսկային վարկավորում (անբարեխիղճ վարկառուներ, բլանկային վարկերի տրամադրում, այլ) իրականացնելու մտադրության մասին, առկայության դեպքում նկարագրել գործընթացը,
12) բանկային գործառույթների իրականացմանը միջնորդ կազմակերպությունների (օրինակ, խանութներ, ավտոդիլերներ և այլ) ներգրավված լինելու դեպքում՝ այդ տիպի գործարքների իրականացման գործընթացը, դրանց շրջանակները, նախատեսվող ծավալները՝ գումարային արտահայտությամբ, վարկավորման պայմանները, այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Բաժին 3. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն

4. Կանխատեսվող շուկաների վերլուծությունը պետք է հիմնված լինի թվային շարքերի և այլ փաստացի ցուցանիշների վրա: Տեղեկատվության աղբյուրները, տնտեսական, մրցակցային և այլ բնույթի ենթադրությունների և կանխատեսումների հիմքերը և նախապայմանները նույնպես պետք է նշվեն:

5. Սույն բաժնում նկարագրվում են՝

1) ֆինանսական այն շուկաները (նպատակային շուկաները), որոնցում բանկը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը, մասնավորապես.

ա. շուկաների տնտեսական բնութագիրը (նրա ծավալները, ոլորտի եկամտաբերությունը և այլն), հեռանկարային զարգացման միտումները,

բ. շուկաներում (օրինակ՝ փոխատվական կապիտալի, վարկավորման, արժեթղթերի) բանկի գործարար ակտիվության կանխատեսումը, դրա որակական և քանակական գնահատումը,

գ. շուկայի տարածքային ընդգրկվածությունը,

դ. բանկի կողմից շուկայում նոր տիպի գործիքների կիրառման, ծառայությունների ներդրման հնարավորությունները (եթե նախատեսվում է),

2) բանկի նպատակային շուկաների և կանխատեսվող հաճախորդների կախվածությունը տնտեսության այլ ճյուղերից, այդ ճյուղերի զարգացման միտումները,
3) երեք տարվա կտրվածքով տնտեսական միջավայրի փոփոխման կանխատեսումները, մասնավորապես՝ սղաճ, գործազրկություն, տոկոսադրույքների մակարդակը, ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունը:
4) տնտեսական միջավայրի փոփոխման առավել հավանական սցենարները և գնահատի հնարավոր տնտեսական անկումները, դրանց ազդեցությունը բանկի վրա,
5) թե ինչպես տնտեսության մեջ հնարավոր փոփոխությունները կարող են ազդել բանկի նպատակային շուկաների վրա, ինչպես նաև բանկի կողմից իրականացվող գործառույթների և մատուցվող ծառայությունների վրա:

Բաժին 4. Միջոցների ներգրավման հիմնական գործիքներ

6. Սույն բաժնում նկարագրվում են՝

1) միջոցների ներգրավման հիմնական գործիքները (ավանդներ, դեպոզիտներ և այլն), տալ դրանց բնութագիրը (հնարավորության դեպքում՝ ըստ միջին մեծության և ժամկետայնության), միջոցների ներգրավման պայմանները (տոկոսադրույքներ և այլն), գնահատել բանկի մրցունակությունը միջոցների ներգրավման տեսանկյունից,
2) փոխառությունների ներգրավման հիմնական աղբյուրները և մեթոդները, ներկայացնել փոխատվական կապիտալի շուկայում մրցակցության գնահատումը, դրան դիմակայելու մեթոդները,
3) ինտերնետի միջոցով ծառայությունների տրամադրման ծրագրերը,
4) բանկի գովազդային ռազմավարությունը (գովազդելու հաճախականությունը, տեսակները և այլն), որն ուղղված է նպատակային շուկան գրավելուն, ապրանքանիշի ստեղծմանը և այլն,
5) անհրաժեշտ մարքեթինգային ծախսերը նպատակային շուկան գրավելու համար:

Բաժին 5. Մրցակցությանը դիմակայելու մեթոդներ

7. Սույն բաժնում համեմատվում են նպատակային շուկայում(ներում) բանկին տրամադրվող ծառայությունները և մարքեթինգային ռազմավարությունը այդ շուկայում բանկի հիմնական մրցակիցների հետ, հիմնավորվում է բանկի մրցունակությունը, ինչպես նաև նկարագրվում են՝

1) բանկի հիմնական մրցակիցների նկատմամբ բանկի հարաբերական առավելությունը և թերությունները (օրինակ՝ գնային քաղաքականություն, համբավ, շուկայի մասնաբաժին և այլն),
2) մրցակցությանը դիմակայելու մեթոդները,
3) նպատակային շուկայում բանկի պոտենցիալ մրցակիցները:

Բաժին 6. Բանկի ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ

8. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները, բանկի ղեկավարների և աշխատակիցների քանակը, ընդ որում, պետք է հիմնավորել ներկայացված կազմակերպական կառուցվածքը բանկի կողմից սույն տնտեսական ծրագրի իրականացման տեսանկյունից,
2) բանկի կառավարման մարմինները (մասնակիցների ընդհանուր ժողովը, խորհուրդը, գործադիր մարմինը, վարչությունը), դրանց միջև փոխհարաբերությունները, կառավարման մարմինների իրավասությունները և պարտականությունները (միայն ՀՀ բանկերի համար),
3) կառավարման մարմինների մոտավոր կազմը,
4) բանկի խորհրդի կողմից ստեղծվող կոմիտեների (օրինակ՝ ներդրումային, վարկային և այլն) գործունեությունը, դրանց իրավասություններն ու պարտականությունները,
5) աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքները, էթիկական պահանջները,
6) բանկի խորհրդի անդամների փոխհատուցման նախատեսվող չափը և ձևը (միայն ՀՀ բանկերի համար),
7) բանկի գործադիր ղեկավարների և այլ աշխատակիցների աշխատավարձերը՝ ըստ հաստիքների,
8) բանկի կառավարման և անձնակազմի աշխատանքների որակի բարձրացմանն ուղղված ծրագրերը, մասնավորապես՝ անձնակազմի վերապատրաստման և այլ ծրագրերը,
9) բանկի ներքին՝ հսկողության համակարգը, հաշվապահական և վճարահաշվարկային համակարգերի՝ ներառյալ էլեկտրոնային-տեղեկատվական համակարգերի ներդրման ծրագրերը,
10) տեխնիկական վերազինման, բանկային տեխնոլոգիաների ներդրման միջոցառումների ծրագիրը,
11) բանկի ներսում տեղեկատվական հոսքերը՝ հաշվետվական համակարգը ներառյալ,
12) ներքին աուդիտի գործառույթները, ընդ որում՝ պետք է մանրամասն ներկայացվի այդ ստորաբաժանման անկախության ապահովման ուղիները, աուդիտի աշխատանքների շրջանակները և հաճախականությունը,
13) ներքին աուդիտի անձնակազմի նկատմամբ ներկայացվող պահանջները, կրթվածությունը և աշխատանքային փորձը,
14) բոլոր ընթացակարգերը և միջոցառումները, որոնք ուղղված են ապահովելու բանկի գործունեության համապատասխանեցումը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, ինչպես նաև բանկի գործունեությունը կարգավորող ներքին ակտերի (քաղաքականություն, կարգեր և այլ) պահանջներին,
15) բանկի հաճախորդների բողոքներին արձագանքելու միջոցառումները,
16) անկախ աուդիտորական կազմակերպության ընտրման սկզբունքները:

Բաժին 7. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ

9. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) բանկի կապիտալի նպատակային մեծությունը և կառուցվածքը, դրանց հասնելու ուղիները, ինչպես նաև նորմատիվային կապիտալի պահանջների բավարարման հետ կապված ծրագրերը,
2) բանկի կապիտալիզացիայի ռազմավարությունը (ներառյալ՝ ընդհանուր կապիտալի նախատեսվող մեծության ապահովումն արտաքին և ներքին աղբյուրների հաշվին, կապիտալի համարժեքության ապահովմանն ուղղվող հիմնական միջոցառումները),
3) եկամտաբերության նախանշված մակարդակը, ակտիվների եկամտաբերության, զուտ տոկոսային մարժայի կամ շահութաբերության այլ չափանիշներին հասնելու ռազմավարությունները,

4) եկամուտների և ծախսերի կանխատեսումներն առաջին երեք տարիների համար՝ հիմնված շուկայի վերլուծության արդյունքների վրա (Ենթահավելված 1),
5) ֆինանսական կանխատեսումներից ելնելով՝ գնահատել ներքին և արտաքին ռիսկերի ազդեցությունը կապիտալի համարժեքության վրա,
6) շահաբաժինների բաշխման վերաբերյալ քաղաքականությունը:

Բաժին 8. Հնարավոր ռիսկերի գնահատում

10. Վարկային ռիսկի գծով ներկայացվում են՝
1) բանկի վարկային պորտֆելի մոտավոր նկարագիրը (օրինակ՝ ճյուղային և ժամկետային կառուցվածքը, այլ), վարկային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
2) բանկի վարկերի գնահատման ծրագրերը, մասնավորապես՝ անձնակազմի անաչառության և հմտության ապահովման տեսանկյունից,
3) վարկային պորտֆելի որակի ստուգման գործընթացը, հաճախականությունը և շրջանակները,
4) վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման հիմնական սկզբունքները,
5) վարկառուի վարկունակության գնահատման մեթոդաբանությունը:
11. Իրացվելիության ռիսկի գծով ներկայացվում են՝
1) բանկի իրացվելիության (ակտիվների և պասիվների կառավարման) ռազմավարությունը,
2) բանկի իրացվելիության ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
3) բանկի կողմից բանկի հետ փոխկապակցված անձանցից (մասնակից չհանդիսացող) միջոցների ներգրավման նկատմամբ մոտեցումները՝ ներառյալ դրանց ծավալները, տոկոսադրույքների ընդունելի մակարդակը և այլ պայմանները,
4) նախատեսվող ակտիվների ու պարտավորությունների կառուցվածքն ըստ ժամկետայնության,
5) ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետայնության ճեղքվածքի կառավարման մեթոդները (GAP):
12. Շուկայական ռիսկի գծով ներկայացվում են՝
1) ներդրումային (ինվեստիցիոն) քաղաքականության հիմնական ուղղությունները (պետական և ոչ պետական արժեթղթերում, պարտատոմսերում և այլն), շուկայական ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
2) արտարժութային գործառնությունները, արտարժութային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
3) բանկի շուկայական ռիսկի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների պորտֆելը և գների հնարավոր փոփոխությունների ազդեցությունը եկամտաբերության, կապիտալի և պորտֆելի զուտ արժեքի վրա,
4) բանկի կողմից հեջավորման գործիքների կիրառումը (օրինակ՝ ֆյուչերս, օպցիոն, տոկոսադրույքի սվոպ և այլն):
13. Սույն բաժնում ներկայացվում են նաև բանկի համար կարևոր այլ ռիսկերը:

Բաժին 9. Խորհրդի կողմից տնտեսական ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում

14. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) բանկի խորհրդի կողմից տնտեսական ծրագրի իրագործմանը հետևելու գործընթացը,
2) բանկի խորհրդի կողմից տնտեսական ծրագրում փոփոխություններ կատարելու կարգը:

Բաժին 10. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը (պարտադիր չէ. ներկայացվում է Կենտրոնական բանկի պահանջով)

15. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը պետք է նկարագրի բանկի գործողությունները շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխության դեպքում: Այլընտրանքային տնտեսական ծրագիրը պետք է ընդգրկի ռիսկերի կառավարման առավել խիստ գործընթացներ: Ծրագիրը պետք է ներառի ապագայում անհրաժեշտության դեպքում բանկի կապիտալի մեծացման վերաբերյալ մոտեցումներ, ինչպես նաև բանկի արտակարգ իրավիճակների համար պահուստների ձևավորման և օգտագործման կարգը: Ծրագրում պետք է նկարագրված լինեն անսպասելի կորուստների առաջացման դեպքում բանկի ֆինանսական պաշտպանվածության ապահովման ուղիները:

Բաժին 11. Այլ դրույթներ

16. Բանկի տնտեսական ծրագիրը պետք է վերանայվի միջավայրի փոփոխություններին համարժեք:
17. Սույն հավելվածով պահանջվող այն տեղեկությունները, որոնց վերաբերյալ ձևեր սահմանված չեն, կարող են ներկայացվել ազատ ոճով:
18. Ֆինանսական ծրագրավորման ժամանակ հիմնական կանխատեսումներն իրականացնելիս սթրես- թեստերի կիրառումը խրախուսելի է:
19. Բանկի լիցենզավորման պահի դրությամբ բանկի գործունեության համար ձեռք բերված կամ վարձակալված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը անհրաժեշտ է նկարագրել:

20. Տնտեսական ծրագրին կցվում են՝

1) բանկի կապիտալի հաշվարկը առաջիկա երեք տարիների համար (Ենթահավելված 1),
2) հաշվեկշռի հաշվարկային նախագծերը գործունեության առաջին երեք տարիների համար (Ենթահավելված 2),
3) եկամուտների և ծախսերի կանխատեսումներն առաջին երեք տարիների համար (Ենթահավելված 3),
4) բանկի ապագա ղեկավարների ցուցակը, կրճատ կենսագրական տվյալներ,
5) հայտարարագրեր բանկի ապագա ղեկավարների և նրանց հետ փոխկապակցված անձանց ստանձնած բոլոր ֆինանսական և գույքային պարտավորությունների, այդ թվում՝ ժամկետանց և վերաձևակերպված պարտավորությունների վերաբերյալ:

21. Տնտեսական ծրագիրը կարող է պարունակել նաև այնպիսի տեղեկություն, որը չի պահանջվում սույն հավելվածով, սակայն կարևորվում է նախաձեռնող անձանց կողմից:

Հավելված 4-ի
Ենթահավելված 1

ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԸ
(կանխատեսումը)

(հզ. դրամ)

ԿԱՊԻՏԱԼ	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
Հիմնական կապիտալ			
Կանոնադրական հիմնադրամ			
Գլխավոր պահուստ			
Չբաշխված շահույթ			
Ընդամենը՝ հիմնական կապիտալ			
Լրացուցիչ կապիտալ			
Վերագնահատման պահուստներ			
Հաշվեկշռի կոնսոլիդացիայի ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ			
Այլ պահուստներ			
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ			
Ընդամենը՝ լրացուցիչ կապիտալ			
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ (հիմնական կապիտալ + լրացուցիչ կապիտալ)			
Որակական գնահատականներ			
1. Հարաբերակցությունը հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև (%)			
2. Հարաբերակցությունն ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև (%)			
3. Հարաբերակցությունը հիմնական կապիտալի և միջին ընդհանուր ակտիվների միջև			

Հավելված 4-ի
Ենթահավելված 2

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
Կանխիկ դրամական միջոցներ			
Մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում			
Թղթակցային հաշիվներ			
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակերպությունների նկատմամբ			
Ռեպո համաձայնագրեր			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ			
Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ, այդ թվում			
Ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ			
Ֆինանսական վարձակալություն			
Ստացվելիք շահաբաժիններ			
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			

Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում			
Հիմնական միջոցներ (հանած մաշվածքը)			
Ոչ նյութական ակտիվներ (հանած մաշվածքը)			
Այլ ակտիվներ			
Ընդամենը՝ ակտիվներ			
ՊԱՍԻՎՆԵՐ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ			
Բանկերից ներգրավված ավանդներ և ստացված վարկեր			
Թղթակցային հաշիվներ			
Պարտավորություններ այլ ավանդատուների նկատմամբ			
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր			
Կրեդիտորական պարտքեր և տարանցիկ հաշիվներ			
Պահուստներ			
Ստորադաս փոխառություններ			
Այլ պարտավորություններ			
Կապիտալ			
Կանոնադրական հիմնադրամ			
Հետ գնված և չվճարված կապիտալ			
Գլխավոր պահուստ			
Չբաշխված շահույթ			
Այլ համապարփակ եկամուտ			
Կապիտալի այլ հոդվածներ			
Ընդամենը՝ պասիվներ			

Հավելված 4-ի
Ենթահավելված 3

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿՆԵՐ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

		1-ին	2-րդ	3-րդ
1.	**Տոկոսային եկամուտներ**	**x**	**x**	**X**
1.1.	Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսներ			
1.2.	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներից			
1.3.	Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ			
1.4.	Տեղաբաշխված վարկերից ստացված տոկոսներ			
1.5.	Օվերդրաֆտից, օվերնայթից ստացված տոկոսներ			
1.6.	Վարկային քարտերից ստացված տոկոսներ			
1.7.	Բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված միջոցներից			
1.8.	Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ, այդ թվում՝ հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերից			
1.9.	Այլ արժեթղթերից ստացված տոկոսներ			
1.10.	Լիզինգից ստացված տոկոսներ			
1.11.	Այլ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը տոկոսային եկամուտներ				
2.	**Տոկոսային ծախսեր**	**x**	**x**	**x**
2.1.	Թղթակցային հաշիվների, ցպահանջ ավանդների և այլ ցպահանջ պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.2.	ՀՀ ԿԲ-ից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ			
2.3.	Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.4.	Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ			
2.5.	Ներգրավված ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ			
2.6.	Միջազգային ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ			
2.7.	Օվերդրաֆտի, օվերնայթի դիմաց վճարված տոկոսներ			
2.8.	Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով			
2.9.	Լիզինգի դիմաց վճարված տոկոսներ			

2.10.	Տոկոսային ծախսեր ավանդների ապահովագրության դիմաց			
2.11.	Ստորադաս փոխառությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.12.	Այլ տոկոսային ծախսեր			
Ընդամենը տոկոսային ծախս				
Զուտ տոկոսային եկամուտներ				
3.	**Ոչ տոկոսային եկամուտներ**	**x**	**x**	**x**
3.1.	Ստացված միջնորդավճարներ			
3.2.	Երաշխիքներից, ակրեդիտիվներից, հավատարմագրային կառավարումից ստացված եկամուտներ			
3.3.	Գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտներ			
3.4.	Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտներ			
3.5.	Ֆակտորինգից ստացված զուտ եկամուտներ			
3.6.	Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ			
3.7.	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.8.	Հետգնման պայմանագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.9.	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.10.	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն			
3.11.	Հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներ			
3.12.	Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			
3.13.	Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			
3.14.	Ստացված տույժեր, տուգանքներ			
3.15.	Այլ ոչ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ				
4.	**Ոչ տոկոսային ծախսեր**	**x**	**x**	**x**
4.1.	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ			
4.2.	Գործուղման ծախսեր			
4.3.	Հատկացումներ ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամին			
4.4.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ			
4.5.	Ամորտիզացիոն մասհանումներ			
4.6.	Բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար			
4.7.	Շենքերի տնտեսական պահպանության ծախսեր			
4.8.	Վարկերի տրամադրման և վերադարձման ծախսեր			
4.9.	Գովազդային, ներկայացուցչական ծախսեր			
4.10.	Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր			
4.11.	Համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր			
4.12.	Տրանսպորտային ծախսեր			
4.13.	Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր			
4.14.	Վճարված տույժեր, տուգանքներ			
4.15.	Ուսուցման ծախսեր			
4.16.	Այլ ոչ տոկոսային ծախսեր			
Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր				
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ				
5.	**Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին**	**x**	**x**	**x**
5.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին			
5.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին			
5.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին			
5.4.	Երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստին			
Ընդամենը հատկացումներ				
6.	**Պահուստներին կատարված մասհանումների վերադարձ**	**x**	**x**	**x**
6.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից			
6.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից			
6.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստից			
6.4.	Բանկային երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստներից			
Ընդամենը վերադարձ				
	Զուտ մասհանումներ			
Շահույթ՝ մինչև հարկվելը				
Շահութահարկ				
Զուտ շահույթ				
Հաշվարկված շահաբաժիններ				
այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով				
սովորական բաժնետոմսերի գծով				
Չբաշխված շահույթ (վնաս)				

Հավելված 5

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Փոխկապակցվածության հիմքը

(*Այստեղ նշվում են այն անձի մասին տվյալներ, որի միջոցով իրավաբանական անձը հանդիսանում է փոխկապակցված անձ)*

Անձի անվանումը,(անունը, ազգանունը, անձնագրի տվյալները) _____

2. Փոխկապակցված իրավաբանական անձի (կազմակերպության) տվյալներ *(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, ընդ որում՝ սույն տեղեկանքի լրացման ժամանակ միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները:)*

2.1. Անվանումը _____

2.2. Գտնվելու վայրը

2.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը_____ համարը_____

օր/ամիս/տարի

2.4. Փոխկապակցվածության տեսակ _____

3. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի նշանակալից մասնակիցների վերաբերյալ

(ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել 3.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները):

3.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք.

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

3.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք.

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

4. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահի և անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ *(ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև սույն կանոնակարգի հավելված 11-ը):*

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)
1.		
2.		

5. Այլ տեղեկատվություն

5.1. Արդյո՞ք փոխկապակցված իրավաբանական անձն ունի 30 օր և ավելի ժամկետանց (չմարված) պարտավորություններ:

☐ Այո

☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

5.2. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

6. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Բանկի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____

օր/ամիս/տարի

Հավելված 6

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Փոխկապակցվածության հիմքը (այստեղ նշվում է այն անձի մասին տվյալներ, որի միջոցով ֆիզիկական անձը հանդիսանում է փոխկապակցված անձ)

Անձի անվանումը (անունը, ազգանունը, անձնագրի տվյալները) _____

2. Փոխկապակցված ֆիզիկական անձի տվյալները *(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, ընդ որում՝ սույն տեղեկանքի լրացման ժամանակ միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները:)*

2.1. Անունը, ազգանունը _____

2.2. Բնակության վայրը _____

2.3. Անձնագրի տվյալները

2.4. Փոխկապակցվածության տեսակ _____

3. Այլ տեղեկատվություն

3.1. Արդյո՞ք փոխկապակցված ֆիզիկական անձն ունի 30 օր և ավելի ժամկետանց (չմարված) պարտավորություններ:

☐ Այո

☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

3.2. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն:

4. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Բանկի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____

օր/ամիս/տարի

Հավելված 7

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Օտարերկրյա բանկի կանոնադրական կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձանց, պետությունների և միջազգային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ

Կազմակերպության (պետության) անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

2. Օտարերկրյա բանկի կանոնադրական կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

3. Օտարերկրյա բանկի իրավաբանական անձ հանդիսացող անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ (Կենտրոնական բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ)

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Նշվում են այն անձի մասին հետևյալ տվյալները, որի միջոցով իրավաբանական անձը հանդիսանում է անուղղակի նշանակալից անձի անվանումը կամ անունը, ազգանունը և անձնագրի տվյալները)	Նշվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի այն պարբերությունը, որի հիմքով անձը հանդիսացել է անուղղակի նշանակալից

4. Օտարերկրյա բանկի ֆիզիկական անձ հանդիսացող անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ *(Կենտրոնական բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ)*

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Բնակության վայրը	Նշվում են այն անձի մասին հետևյալ տվյալներ, որի միջոցով ֆիզիկական անձը հանդիսանում է անուղղակի նշանակալից անձի անվանումը կամ անունը, ազգանունը և անձնագրի տվյալները)	Նշվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի այն պարբերությունը, որի հիմքով անձը հանդիսացել է անուղղակի նշանակալից

5. Արդյո՞ք սույն տեղեկանքում նշված անձինք ունեն 30 օր և ավելի ժամկետանց/չմարված պարտավորություններ: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

6. Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական:
Գիտակցում ենք, որ որևէ տեղեկատվություն կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:
Համաձայն ենք՝ մեր կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Օտարերկրյա բանկի իրավասու անձի անունը, ազգանունը_____

Ստորագրություն _____ _____
օր/ամիս/տարի

Հավելված 8

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

Հարգելի _____

Մենք (Ես)՝ _____

բանկի անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը

ստեղծումը նախաձեռնող ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), _____

օր/ամիս/տարի

ստացել ենք (եմ) բանկային գործունեության լիցենզիայի նախնական հավանությունը:

Խնդրում ենք (եմ) գրանցել բանկը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք (եմ) բանկի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ ____ էջ):

Ներկայացնում ենք (եմ) նաև գրանցվող բանկի կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. հասցե):

Փոստային հասցե

Մենք (Ես)՝ ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), հավաստիացնում ենք (եմ), որ մանրակրկիտ դիտարկել ենք (եմ) սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք (եմ), որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք (եմ), որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Բանկի ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀՎՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 9

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

Հարգելի _____

_____ _____

օտարերկրյա բանկի անվանումը *օր/ամիս/տարի*

ստացել է Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղ հիմնադրելու համար բանկային գործունեության լիցենզիայի նախնական հավանություն:

Խնդրում եմ գրանցել բանկի մասնաճյուղը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում եմ բանկի մասնաճյուղի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ _____ էջ):

Ներկայացնում եմ նաև բանկի գրանցվող մասնաճյուղի կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. հասցե) _____:

Փոստային հասցեն _____:

Հավաստիացնում եմ, որ _____գրանցման երկրի բանկային վերահսկողություն
(օտարերկրյա բանկի անվանումը)
իրականացնող մարմնի և Կենտրոնական բանկի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Հավաստիացնում եմ, որ մանրակրկիտ դիտարկել եմ սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

_____
(օտարերկրյա բանկի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ 20__ թ.

Հավելված 10
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____ գրանցել (խորհրդի անդամի
(ղեկավարի թեկնածուի անունը, ազգանունը)
համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____
(բանկի անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշված անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Բանկի (օտարերկրյա բանկի) կառավարման մարմնի իրավասու անձի անուն, ազգանուն, ստորագրություն
_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 11

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը
☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները**
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար Դուք պետք է հանդիսանաք)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում) *(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)*
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ ○ բանկ ○ օտարերկրյա բանկի մասնաճյուղ ○ վարկային կազմակերպություն ○ ապահովագրական ընկերություն ○ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ ○ ապահովագրական բրոքեր ○ ներդրումային ընկերություն ○ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ ○ կարգավորվող շուկայի օպերատոր ○ Կենտրոնական դեպոզիտարիա ○ ֆոնդի կառավարիչ ○ օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ ○ Բյուրո ○ վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 կետում նշված կազմակերպությունում ○ տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), ○ գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրենության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) ○ գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ ○ տնօրենության (վարչության, գործադիր մարմնի) անդամ ○ գլխավոր հաշվապահ ○ գլխավոր հաշվապահի տեղակալ ○ ներքին աուդիտի ղեկավար ○ ներքին աուդիտի անդամ ○ բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար) ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահի (ղեկավարի) տեղակալ ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի անդամ ○ մասնաճյուղի կառավարիչ (գործադիր տնօրեն) ○ մասնաճյուղի գլխավոր հաշվապահ ○ օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ ○ օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար ○ օպերատորի վերահսկող ծառայության անդամ ○ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ ○ պատասխանատու ակտուար ○ ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ ○ ֆոնդի պահառուի ղեկավար ○ ֆոնդի պահառուի աշխատակից ○ բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատող
2.2. Նշեք՝ ○ Բանկի ներքին դիտարկումների ստորաբաժանման և պաշտոնի անվանումը, եթե հանդիսանում եք այդ ստորաբաժանման աշխատակից ○ Կիրառելի չէ, եթե չեք հանդիսանում ներքին դիտարկումների մարմնի աշխատակից
2.3. Նկարագրեք Ձեր իրավասությունների և պատասխանատվությունների ոլորտները՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

2.4. Նշեք, եթե հանդիսանում եք
- o կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում,
- o կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում,
- o պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում,
- o պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում:

3. Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն, հայրանուն

3.2. Սեռ՝
- o արական
- o իգական

3.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4. Ծննդավայր

3.5. Քաղաքացիություն

3.6. Նշեք
- o Անձնագրի տվյալները
- o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
- o Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.7. Նշեք՝
- o Հանրային ծառայությունների համարանիշը
- o Կիրառելի չէ

3.8. Նշեք՝
- o Հաշվառման վայր
- o Փաստացի բնակության վայր

3.9. Նշեք հեռախոսահամար
- o բջջային
- o տնային

3.10. Էլեկտրոնային փոստի հասցե

3.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները և դրանք կրելու ժամանակաշրջանները:

Անուն, ազգանուն, հայրանուն — Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

_____ — _____

_____ — _____

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (____թ-ից մինչև _____թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

1.2. Ինչ լեզուների եք տիրապետում
հայերեն
անգլերեն
ռուսերեն
այլ (նշել լեզուն)

4.4. Նշեք՝
Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից, ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար,էլ. փոստի հասցե

Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:
- ○ Ոչ
- ○ Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.4. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ

5.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով:
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1. Նշեք՝
- ○ Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից
(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2. Նշեք՝

- Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձ չկա,
- Իրազեկ չէ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3. Նշեք՝

Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը)	Անձնագրի տվյալները	Փոխկա-պակցվա-ծության ձև	Աշխա-տանքի վայր	Պաշտոն	Հեռախոսա-համար (բջջային և այլ)

Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

7.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1. Նշեք՝
Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ 6.3 կետում նշված անձանցից):

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսահամար (բջջային և այլ)

Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2. Նշեք՝
Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջ. և այլ)

Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, *որոնք կցանկանայիք նշել*
- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասները

10. Այլ փաստաթղթեր

10.1. Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.
Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:
- ○ Այո
- ○ Ոչ

11. Հավաստիացնում եմ, որ՝
ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական,
բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

Հավելված 12

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՁԵՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____

(բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի) իրավասու մարմնի անվանումը)

__/__/____ թ. թիվ _____ որոշմամբ

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

Բանկի (բանկի մասնաճյուղի կամ ներկայացուցչության) օտարերկրյա բանկի մասնաճյուղի, օտարերկրյա բանկի ներկայացուցչության պետական գրանցման համարը _____

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Բանկի (բանկի մասնաճյուղի կամ ներկայացուցչության), օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության լրիվ անվանումը

Հավելված 13

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲԱՆԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ---

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է _____ բանկին:
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)

Բանկի գտնվելու վայրը _____

Գրանցման համարը _____

Գրանցման օրը, ամիսը, տարեթիվը_____

Հարկ վճարողի հաշվառման համարը_____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 14

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի
____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ —

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է
_____օտարերկրյա բանկի
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)
_____մասնաճյուղին:
(մասնաճյուղի անվանումը)

Օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության
վայրը _____

Գրանցման համարը _____

Գրանցման օրը, ամիսը, տարեթիվը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը_____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 15

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

«__» _____ 20__ թ.

Բանկային գործունեության լիցենզիա թիվ _____

Սույն լիցենզիան տրվում է _____

(բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի լրիվ ֆիրմային անվանումը)

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Գրանցման համարը _____

Հավելված 16

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(բանկի լրիվ անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ բացելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք բանկի մասնաճյուղի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ _____ էջ:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել բանկի մասնաճյուղը:

☐ Հավաստիացնում ենք, որ _____

(մասնաճյուղի անվանումը)

տարածքը և տեխնիկական հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 1-ի 32-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

□ Պարտավորվում ենք, որ _____

(մասնաճյուղի անվանումը)

տարածքը և տեխնիկական հագեցվածության չափանիշները գրանցվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 1-ի 32-րդ գլխով սահմանված պահանջներին, և Կենտրոնական բանկ կներկայացվեն մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

«____» _____ 20__ թ.

Հավելված 17

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

Բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրի ձև

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ
Բաժին 2. Նախատեսվող ֆինանսական գործառնությունները և գործունեության հիմնական ուղղությունները
Բաժին 3. Նպատակային շուկաների նկարագրություն, մրցունակություն
Բաժին 4. Մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածք
Բաժին 5. Բանկի կողմից տնտեսական ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում
Բաժին 6. Այլ դրույթներ

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

1. Բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, ծրագրի ներկայացման ընթացիկ տարվա և հաջորդող մեկ լրիվ ֆինանսական տարվա համար կազմված՝ տնտեսական գործունեությունը և ներքին կազմակերպական կառուցվածքը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է:

2. Բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը հաստատվում է հիմնադիր բանկի իրավասու մարմնի կողմից:

3. Բանկի մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրի ընդհանուր դրույթներում պետք է նշվեն՝

1) ստեղծվող մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը,
2) հիմնադիր բանկի կողմից նոր մասնաճյուղի ստեղծման նախադրյալները, նպատակները,
3) այն շուկաների նկարագիրը, որոնցում մասնաճյուղը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը,
4) տեղեկություններ մասնաճյուղին տարածք տրամադրելու և նրա տեխնիկական հագեցվածության մասին,
5) մասնաճյուղի առաջարկվող ղեկավարների ցանկը:

Բաժին 2.Նախատեսվող ֆինանսական գործառնությունները և գործունեության հիմնական ուղղությունները

4. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը և դրանց համառոտ նկարագիրը,
2) մասնաճյուղի կողմից ֆինանսական շուկայում նոր տիպի ծառայությունների ներդրումը,
3) մասնաճյուղի պոտենցիալ հաճախորդների բնութագիրը և ենթադրվող թիվը, խոշոր հաճախորդների անունները, սպասարկման տարածքը,
4) մասնաճյուղի զարգացման հեռանկարները:

Բաժին 3. Նպատակային շուկաների նկարագրությունը և մրցունակությունը

5. Կանխատեսվող շուկաների վերլուծությունը պետք է հիմնված լինի թվային շարքերի և այլ փաստացի ցուցանիշների վրա: Տեղեկատվության աղբյուրները, տնտեսական, մրցակցային և այլ բնույթի ենթադրությունների և կանխատեսումների հիմքերը և նախապայմանները նույնպես պետք է նշվեն ծրագրում:

6. Սույն բաժնում ներկայացվում են նաև՝

1) միջոցների ներգրավման հիմնական գործիքները (ավանդներ, դեպոզիտներ և այլն), դրանց բնութագիրը (հնարավորության դեպքում՝ ըստ միջին մեծության և ժամկետայնության), մասնաճյուղի մրցունակության գնահատումն իր սպասարկման տարածքում միջոցների ներգրավման տեսանկյունից,
2) միջոցների տեղաբաշխման նախատեսվող ուղիները, գործառնությունների տեսակները (ներդրումներ արժեթղթերում, տարբեր տեսակի վարկավորում և այլն), դրանց բնութագիրը, միջոցների տեղաբաշխման պայմանները, մասնաճյուղի մրցունակության գնահատումը միջոցների տեղաբաշխման տեսանկյունից,
3) մասնաճյուղի վարկավորման ծրագրերը,
4) ակտիվների ու պասիվների կազմը և կառուցվածքը առաջիկա երկու ֆինանսական տարվա կտրվածքով, հիմնական միջոցների, եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը,
5) մասնաճյուղը գովազդելուն ուղղված միջոցառումները (գովազդելու հաճախականությունը, տեսակները և այլն), անհրաժեշտ մարքեթինգային ծախսերը,
6) այն տարածքը/շուկաները, որոնցում մասնաճյուղը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը, մասնավորապես.

ա. սպասարկման տարածքում բնակչության խտությունը, նոր բնակելի, առևտրային կամ մշակութային օբյեկտների կառուցումը, մասնաճյուղի հասանելիություն,

բ. մասնաճյուղի գործարար ակտիվության կանխատեսումը, դրա որակական և քանակական գնահատումը,

գ. մասնաճյուղի կողմից շուկայում նոր տիպի գործիքների կիրառման, ծառայությունների ներդրման հնարավորությունները:

7) նպատակային շուկայում մասնաճյուղի ապրանքային ռազմավարությունն այդ շուկայում մասնաճյուղի հիմնական մրցակիցների հետ,
8) մասնաճյուղի հիմնական մրցակիցների նկատմամբ մասնաճյուղի հարաբերական առավելությունը և թերությունները (օրինակ՝ սպասարկման որակ, մատուցվող ծառայությունների ցանկ և այլն), մասնաճյուղի մրցունակությունը,
9) մրցակցությանը դիմակայելու մեթոդները,
10) նպատակային շուկայում մասնաճյուղի պոտենցիալ մրցակիցներին:

Բաժին 4. Մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածք

3. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները, մասնաճյուղի աշխատակիցների քանակը,
2) մասնաճյուղի ղեկավարների (կառավարիչ, գլխավոր հաշվապահ) իրավունքներն ու պարտականությունները,
3) մասնաճյուղի ղեկավարների և այլ աշխատակիցների աշխատավարձերը՝ ըստ հաստիքների,
4) մասնաճյուղի ներքին հսկողության համակարգը,
5) տեխնիկական վերազինման, բանկային տեխնոլոգիաների ներդրման միջոցառումների ծրագիրը,
6) բանկի գլխամասի և մասնաճյուղի միջև տեղեկատվական հոսքերը՝ հաշվետվական համակարգը ներառյալ,
7) մասնաճյուղերում ներքին աուդիտի իրականացման հաճախականությունը և շրջանակները,
8) այն բոլոր ընթացակարգերը և միջոցառումները, որոնք ուղղված են ապահովելու մասնաճյուղի գործունեության համապատասխանեցումը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, ինչպես նաև բանկի (կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի) գործունեությունը կարգավորող ներքին ակտերի (քաղաքականություն, կարգեր և այլ) պահանջներին,
9) մասնաճյուղի հաճախորդների բողոքներին արձագանքելու միջոցառումները:

Բաժին 5. Բանկի կողմից տնտեսական ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում

4. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) բանկի կողմից տնտեսական ծրագրի իրագործմանը հետևելու գործընթացը,
2) խորհրդի կողմից տնտեսական ծրագրում փոփոխություններ կատարելու կարգը:

Բաժին 6. Այլ դրույթներ

9. Մասնաճյուղի տնտեսական ծրագիրը պետք է վերանայել միջավայրի փոփոխություններին համարժեք, ընդ որում, ծրագրի վերանայված տարբերակը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնել բանկի խորհրդի կողմից հաստատվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Սույն հավելվածով պահանջվող այն տեղեկությունները, որոնց վերաբերյալ ձևեր սահմանված չեն, կարող են ներկայացվել ազատ ոճով:

11. Ֆինանսական ծրագրավորման ժամանակ հիմնական կանխատեսումները իրականացնելիս բանկի կողմից սթրես թեստերի կիրառումը խրախուսելի է:

10. Մասնաճյուղի գրանցման պահի դրությամբ բանկի գործունեության համար անհրաժեշտ ձեռք բերված կամ վարձակալված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը պետք է նկարագրվի:

11. Տնտեսական ծրագրին կցվում են՝

1) հաշվեկշռի նախագիծը գործունեության առաջին երկու տարվա համար (Ենթահավելված 1),
2) եկամուտների և ծախսերի կանխատեսումներն առաջին երկու տարվա համար (Ենթահավելված 2),
3) մասնաճյուղի ղեկավարների առաջարկվող թեկնածուների ցուցակը, կրճատ կենսագրական տվյալներ,
4) հայտարարագրեր մասնաճյուղի ղեկավարների և նրանց հետ փոխկապակցված անձանց ստանձնած բոլոր ֆինանսական և գույքային պարտավորությունների, այդ թվում՝ ժամկետանց և վերաձևակերպված պարտավորությունների վերաբերյալ:

12. Տնտեսական ծրագիրը կարող է պարունակել նաև այնպիսի տեղեկություն, որը չի պահանջվում սույն հավելվածով, սակայն կարևորվում է նախաձեռնող անձանց կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ 17-ի
Ենթահավելված 1

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	1-ին տարի	2-րդ տարի
Կանխիկ դրամական միջոցներ		
Հաշվարկներ բանկի և իր մասնաճյուղերի միջև		
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ		
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակերպությունների նկատմամբ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ		
Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ, այդ թվում՝		
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
Հիմնական միջոցներ (հանած մաշվածքը)		
Ոչ նյութական ակտիվներ (հանած մաշվածքը)		
Այլ ակտիվներ		
Ընդամենը՝ ակտիվներ		
ՊԱՍԻՎՆԵՐ		
Բանկերից ներգրավված ավանդներ և ստացված վարկեր		
Հաշվարկներ բանկի և իր մասնաճյուղերի միջև		
Պարտավորություններ այլ ավանդատուների նկատմամբ		
Կրեդիտորական պարտքեր և տարանցիկ հաշիվներ		
Պահուստներ		
Այլ պարտավորություններ		
Եկամուտների պահուստներ		
Վերագնահատման պահուստներ		
Այլ պահուստներ		
Ընդամենը՝ պասիվներ		

ՀԱՎԵԼՎԱԾ 17-ի
Ենթահավելված 2

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿՆԵՐ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

		1-ին տարի	2-րդ տարի
1.	**Տոկոսային եկամուտներ**	**x**	**x**
1.1.	Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ		
1.2.	Տեղաբաշխված վարկերից ստացված տոկոսներ		
1.3.	Օվերդրաֆտից, օվերնայթից ստացված տոկոսներ		
1.4.	Վարկային քարտերից ստացված տոկոսներ		
1.5.	Բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված միջոցներից		
1.6.	Արժեթղթերից ստացված տոկոսներ		
1.7.	Այլ տոկոսային եկամուտներ		
Ընդամենը տոկոսային եկամուտներ			

2.	**Տոկոսային ծախսեր**	**x**	**x**
2.1.	Թղթակցային հաշիվների, ցպահանջ ավանդների և այլ ցպահանջ պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ		
2.2.	Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ		
2.3.	Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ		
2.4.	Ներգրավված ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ		
2.5.	Այլ տոկոսային ծախսեր		
	Ընդամենը տոկոսային ծախս		
	Զուտ տոկոսային եկամուտներ		
3.	**Ոչ տոկոսային եկամուտներ**	**x**	**x**
3.1.	Ստացված միջնորդավճարներ		
3.2.	Երաշխիքներից, ակրեդիտիվներից, հավատարմագրային կառավարումից ստացված եկամուտներ		
3.3.	Գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտներ		
3.4.	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ		
3.5.	Արտարժույթի առուվաճառքից ստացված զուտ եկամուտներ		
3.6.	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն		
3.7.	Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ		
3.8.	Այլ ոչ տոկոսային եկամուտներ		
	Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ		
4.	**Ոչ տոկոսային ծախսեր**	**x**	**x**
4.1.	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		
4.2.	Գործուղման ծախսեր		
4.3.	Ամորտիզացիոն մասհանումներ		
4.4.	Մասնաճյուղի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար		
4.5.	Շենքերի տնտեսական պահպանության ծախսեր		
4.6.	Վարկերի տրամադրման և վերադարձման ծախսեր		
4.7.	Տրանսպորտային ծախսեր		
4.8.	Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր		
4.9.	Ուսուցման ծախսեր		
4.10.	Այլ ոչ տոկոսային ծախսեր		
	Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր		
	Զուտ ոչ տոկոսային եկամուտներ		
5.	**Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին**	**x**	**x**
5.1	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին		
5.2	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին		
5.3	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին		
5.4	Երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստին		
	Ընդամենը հատկացումներ		
6.	Պահուստներին կատարված մասհանումների վերադարձ	x	x
6.1	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից		
6.2	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից		
6.3	Արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստից		
6.4	Բանկային երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստներից		
	Ընդամենը վերադարձ		
	Զուտ մասհանումներ		
	Շահույթ (վնաս)		

Հավելված 18

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ____

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է
_____ բանկի
(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)

_____ մասնաճյուղին:
(մասնաճյուղի անվանումը)

Մասնաճյուղի գործունեության վայրը _____

Գրանցման համարը _____

Գրանցման օրը, ամիսը, տարեթիվը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__»_____ 20__ թ.

Հավելված 19

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ (ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ) ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

Հարգելի _____

_____
(բանկի (օտարերկրյա բանկի) անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություն բացելու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել բանկի (օտարերկրյա բանկի) _____ ներկայացուցչությունը:

Ներկայացուցչություն բացելու հիմնավորումը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք բանկի (օտարերկրյա բանկի) ներկայացուցչության գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Առդիր՝ __ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:

Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Բանկի (օտարերկրյա բանկի) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____ _____

(հեռախոս)

«__»_____ 20__ թ.

Հավելված 20

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՏԵՂԵԿԱՆՔ

Ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը
☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները**
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ներկայացուցչության ղեկավար Դուք պետք է հանդիսանաք:)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ ○ բանկ ○ վարկային կազմակերպություն ○ ապահովագրական ընկերություն ○ ներդրումային ընկերություն ○ վճարահաշվարկային կազմակերպություն ○ ֆոնդի կառավարիչ
1.3. Նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:
2. Անձնական տվյալներ
2.1. Անուն, ազգանուն, հայրանուն
2.2. Սեռ՝ ○ արական ○ իգական
2.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
2.4. Ծննդավայր
2.5. Քաղաքացիություն

2.6. Նշեք՝
- Անձնագրի տվյալները _____
- Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում) _____
- Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում) _____

2.7. Նշեք՝
- Հանրային ծառայության համարանիշը _____
- Կիրառելի չէ

2.8. Նշեք՝
- Հաշվառման վայր _____
- Փաստացի բնակության վայր _____

2.9. Նշեք հեռախոսահամար
- բջջային _____
- տնային _____

2.10. Էլեկտրոնային փոստի հասցե _____

2.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանը:

Անուն, ազգանուն, հայրանուն — Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

_____ — _____

_____ — _____

3.Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

3.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (_____թ-ից մինչև_____թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

3.2. Նշեք վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից).

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը	Պաշտոն, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական, և վերոնշված անձի ստորագրությունը համապատասխանում է իսկականին:

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի անուն, ազգանուն _____

Ստորագրություն _____

Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն _____

(Անհրաժեշտության դեպքում)

_____

օր/ամիս/տարի

Հավելված 21

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
---- թվականի թիվ --- որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ ---

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)

բանկի ներկայացուցչությանը:

(ներկայացուցչության անվանումը)

Ներկայացուցչության գործունեության վայրը _____

Գրանցման համարը _____

Գրանցման օրը, ամիսը, տարեթիվը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__»_____ 20__ թ.

Հավելված 22

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(բանկի լրիվ անվանումը)

որոշում է կայացրել _____ մասնաճյուղ բացելու մասին:
(մասնաճյուղի բացման պետությունը)

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի բացման նախնական համաձայնությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք բանկի մասնաճյուղի բացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ ___ էջ:

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական
(մասնաճյուղի անվանումը)
հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 1-ի 32-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

☐ Պարտավորվում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական
(մասնաճյուղի անվանումը)
հագեցվածության չափանիշները գրանցվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 1-ի 32-րդ գլխով սահմանված պահանջներին, և Կենտրոնական բանկ կներկայացվեն մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) անունը, ազգանունը, ստորագրությունը
_____

«__»_____ 20__ թ.

Հավելված 23

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ԲԱՑԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____ որոշում է կայացրել
(բանկի լրիվ անվանումը)

_____ _____ անվանմամբ
(պետության անունը) *(ներկայացուցչության անվանումը)*

ներկայացուցչություն բացելու մասին:

Ներկայացուցչություն բացելու հիմնավորումը.

_____

_____

_____

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացուցչություն բացելու նախնական համաձայնությունը:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) անունը, ազգանունը, ստորագրությունը
_____

«__»_____ 20__ թ.

Հավելված 24

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի _____

_____ վարկային կազմակերպության կառավարման
(նշվում է վարկային կազմակերպության լրիվ անվանումը)
բարձրագույն մարմինը (նշվում է մարմնի անվանումը) __/__/_____թ. թիվ որոշմամբ որոշել է փոփոխել վարկային կազմակերպության գործունեության տեսակը և դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ որպես բանկ գրանցվելու և բանկային գործունեության լիցենզիա ստանալու նպատակով:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.2-րդ հոդվածը և ղեկավարվելով վերոնշյալ որոշմամբ՝ խնդրում եմ համաձայնություն տալ սույն միջնորդագրին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների՝ կից ներկայացնում եմ վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխման համաձայնությունը ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ ___էջ):

Ես՝ ներքոստորագրյալս, հավաստիացնում եմ, որ մանրակրկիտ դիտարկել եմ սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

_____ վարկային կազմակերպության
(վարկային կազմակերպության լրիվ անվանումը)

գործադիր մարմնի ղեկավար _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«__»_____ 20__ թ.

Հավելված 25

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

Ծրագիր
վարկային կազմակերպության գործունեության տեսակը փոփոխելու վերաբերյալ

Սույն ծրագիրը բաղկացած է 2 մասից: Առաջին մասում ներկայացվում է վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխման ընթացիկ տարվա և հաջորդող երկու տարիների համար բանկի գործունեության տնտեսական ծրագիրը, իսկ երկրորդ մասում՝ որպես բանկ գրանցվելու և լիցենզավորվելու համար ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումները, բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված գործընթացի իրականացման նկարագրությունը:

Մաս 1.
Բաժին 1. Ընդհանուր դրույթներ
Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումներ
Բաժին 3. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն
Բաժին 4. Միջոցների ներգրավման հիմնական գործիքներ
Բաժին 5. Մրցակցությանը դիմակայելու մեթոդներ
Բաժին 6. Ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ
Բաժին 7. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ
Բաժին 8. Հնարավոր ռիսկերի գնահատում
Բաժին 9. Բանկի մասնաճյուղերը
Բաժին 10. Ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում
Բաժին 11. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը (պարտադիր չէ. ներկայացվում է Կենտրոնական բանկի պահանջով)
Մաս 2.
Բաժին 1. Անհրաժեշտ միջոցառումների իրականացում
Բաժին 2. Անհրաժեշտ միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը
Բաժին 3. Այլ դրույթներ
Ենթահավելվածներ.

ՄԱՍ 1
Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ծրագրի 1-ին մասը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, վարկային կազմակերպության գործունեության տեսակը փոփոխվելու (որպես բանկ գրանցվելու և բանկային գործունեության լիցենզիա ստանալուն) ընթացիկ տարվա և հաջորդող երկու լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, բանկի տնտեսական գործունեությունը կազմակերպական կառուցվածքը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է:

2. Ծրագրի 1-ին մասի ընդհանուր դրույթներում նշվում են՝
1) վարկային կազմակերպության գործունեության տեսակը փոփոխելու պատճառները և նպատակները,
2) ստեղծվող բանկի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը,
3) բանկի առաքելությունը,
4) բանկի նպատակները,
5) վարկային կազմակերպության մասնակիցների կազմում և մասնակցության չափի ծրագրվող փոփոխությունները՝ առկայության դեպքում:

Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումներ

3. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) բանկի գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը և դրանց նկարագիրը,
2) բանկի կողմից ֆինանսական շուկայում նոր տիպի ծառայությունների ներդրումը (առկայության դեպքում),
3) բանկի հնարավոր դուստր կազմակերպությունները, դրանց կողմից իրականացվող գործառնությունները,
4) նշում այն մասին, թե վարկային կազմակերպության առկա մասնաճյուղերից որոնք են նախատեսվում դառնալ բանկի մասնաճյուղեր,
5) բանկի զարգացման և ընդլայնման հեռանկարները, ներառյալ լրացուցիչ մասնաճյուղերի բացումը և տեղակայվածությունը, այլ կազմակերպությունների հետ միացումը և/կամ դրանց ձեռքբերումը,
6) բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց գործունեությունը, դրանց կազմակերպական կառուցվածքը, բանկի և նրա հետ փոխկապակցված իրավաբանական անձանց փոխհարաբերությունները,
7) բանկի և նրա հետ փոխկապակցված անձանց գործարքները (բանկի կողմից փոխկապակցված անձանց ֆինանսավորումը), եթե այդպիսիք նախատեսվում են,

8) բանկի վարկավորման ծրագրերը (հիփոթեքային վարկավորման ծրագիր և այլն), ընդ որում, նշվում է բանկի կողմից ռիսկային վարկավորում (անբարեխիղճ վարկառուներ, բլանկային վարկերի տրամադրում, այլ) իրականացնելու մտադրության մասին, առկայության դեպքում նկարագրել գործընթացը,
9) բանկային գործառույթների իրականացմանը միջնորդ կազմակերպությունների (խանութներ, ավտո-դիլերներ և այլն) ներգրավված լինելու դեպքում՝ այդ տիպի գործարքների իրականացման գործընթացը, դրանց շրջանակները, նախատեսվող ծավալները՝ գումարային արտահայտությամբ, վարկավորման պայմանները, այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Բաժին 3. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն

4. Կանխատեսվող շուկաների վերլուծությունը պետք է հիմնված լինի թվային շարքերի և այլ փաստացի ցուցանիշների վրա: Տեղեկատվության աղբյուրները, տնտեսական, մրցակցային և այլ բնույթի ենթադրությունների և կանխատեսումների հիմքերը և նախապայմանները նույնպես նշվում են ծրագրում:

5. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) միջոցների տեղաբաշխման նախատեսվող ուղիները, գործառնությունների տեսակները (ներդրումներ արժեթղթերում, տարբեր տեսակի վարկավորում և այլն) բնութագիրը, միջոցների տեղաբաշխման պայմանները,
2) ֆինանսական այն շուկաները (նպատակային շուկաները), որոնցում բանկը պատրաստվում է ծավալել իր ակտիվային գործունեությունը (ըստ յուրաքանչյուր ֆինանսական ծառայության տեսակի), մասնավորապես՝
   ա. շուկաների տնտեսական բնութագիրը (նրա ծավալները, ոլորտի եկամտաբերությունը և այլն), հեռանկարային զարգացման միտումները,
   բ. շուկաներում (վարկավորման, արժեթղթերի և այլն) բանկի գործարար ակտիվության կանխատեսումը, դրա որակական և քանակական գնահատումը, շուկայում բանկի հնարավոր մասնաբաժինը
   գ. շուկայի տարածքային ընդգրկվածությունը,
   դ. բանկի պոտենցիալ հաճախորդների բնութագիրը և ենթադրվող թիվը, խոշոր հաճախորդների անունները,
3) երեք տարվա կտրվածքով տնտեսական միջավայրի փոփոխման կանխատեսումները, մասնավորապես՝ գնաճ, գործազրկություն, տոկոսադրույքների մակարդակը, ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունը: Ծրագիրը ներառում է տնտեսական միջավայրի փոփոխման առավել հավանական սցենարները և գնահատի հնարավոր տնտեսական անկումները, դրանց ազդեցությունը բանկի վրա,
4) ինչպես տնտեսության մեջ հնարավոր փոփոխությունները կարող են ազդել բանկի նպատակային շուկաների վրա, ինչպես նաև բանկի կողմից իրականացվող գործառույթների և մատուցվող ծառայությունների վրա:

Բաժին 4. Միջոցների ներգրավման հիմնական գործիքներ

6. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) միջոցների ներգրավման հիմնական գործիքները (ավանդներ, փոխառություններ և այլն), տալ դրանց բնութագիրը (հնարավորության դեպքում՝ ըստ միջին մեծության և ժամկետայնության), միջոցների ներգրավման պայմանները (տոկոսադրույքներ և այլն),
2) փոխառությունների ներգրավման հիմնական աղբյուրները և մեթոդները:

Բաժին 5. Մրցակցությանը դիմակայելու մեթոդներ

7. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) բանկի ակտիվային և պասիվային գործունեության նպատակային շուկաներում բանկի հիմնական մրցակիցներին,
2) բանկի ակտիվային և պասիվային գործունեության նպատակային շուկաներում բանկի տրամադրվող ծառայությունների վերաբերյալ մարքեթինգային ռազմավարությունը, և համեմատել այն բանկի հիմնական մրցակիցների հետ,
3) բանկի հիմնական մրցակիցների նկատմամբ բանկի հարաբերական առավելությունը և թերությունները (գնային քաղաքականություն, համբավ, շուկայի մասնաբաժին և այլն), բանկի մրցունակության հիմնավորումը, մրցակցությանը դիմակայելու մեթոդները,
4) անհրաժեշտ մարքեթինգային ծախսերը նպատակային շուկաները գրավելու համար,
5) ինտերնետի միջոցով ծառայությունների տրամադրման ծրագրերը,
6) բանկի գովազդային ռազմավարությունը (գովազդելու հաճախականությունը, տեսակները և այլն), որն ուղղված է նպատակային շուկան գրավելուն, ապրանքանիշի ստեղծմանը և այլն,
7) նպատակային շուկայում բանկի պոտենցիալ մրցակիցներին:

Բաժին 6. Ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ

8. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները, բանկի ղեկավարների և աշխատակիցների քանակը,
2) վերը նկարագրված կազմակերպական կառուցվածքի հիմնավորումը բանկի կողմից ծրագրվող գործունեության իրականացման տեսանկյունից,
3) բանկի կառավարման մարմինները (մասնակիցների ընդհանուր ժողովը, խորհուրդը, գործադիր մարմինը, վարչությունը), դրանց միջև փոխհարաբերությունները, կառավարման մարմինների իրավասությունները և պարտականությունները,

4) կառավարման մարմինների կազմը,
5) բանկի խորհրդի կողմից ստեղծվող կոմիտեների (ներդրումային, վարկային և այլն) գործունեությունը, դրանց իրավասություններն ու պարտականությունները,
6) աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքները, էթիկական պահանջները,
7) բանկի խորհրդի անդամների փոխհատուցման նախատեսվող չափը և ձևը,
8) բանկի ղեկավարների և այլ աշխատակիցների աշխատավարձերը՝ ըստ հաստիքների,
9) բանկի կառավարման և անձնակազմի աշխատանքների որակի բարձրացմանն ուղղված ծրագրերը, մասնավորապես անձնակազմի վերապատրաստման և այլ ծրագրերը,
10) բանկի ներքին հսկողության համակարգը, հաշվապահական և վճարահաշվարկային համակարգերի՝ ներառյալ էլեկտրոնային-տեղեկատվական համակարգերի ներդրման ծրագրերը,
11) տեխնիկական վերազինման, բանկային տեխնոլոգիաների ներդրման միջոցառումների ծրագիրը,
12) նկարագրել բանկի ներսում տեղեկատվական հոսքերը՝ հաշվետվական համակարգը ներառյալ,
13) ներքին աուդիտի գործառույթները, ընդ որում նկարագրությունում պետք է ամրագրված լինեն այդ ստորաբաժանման անկախության ապահովման ուղիները, աուդիտի աշխատանքների շրջանակները և հաճախականությունը,
14) ներքին աուդիտի անձնակազմի նկատմամբ ներկայացվող պահանջները, կրթվածությունը և աշխատանքային փորձը ներառյալ,
15) այն բոլոր ընթացակարգերը և միջոցառումները, որոնք ուղղված են ապահովելու բանկի գործունեության համապատասխանեցումը ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, ինչպես նաև բանկի գործունեությունը կարգավորող ներքին ակտերի (քաղաքականություն, կարգեր և այլ) պահանջներին,
16) բանկի հաճախորդների բողոքներին արձագանքելու միջոցառումները,
17) անկախ աուդիտորական կազմակերպության ընտրման սկզբունքները:

Բաժին 7. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ

9. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) բանկի կապիտալի նպատակային մեծությունը և կառուցվածքը, դրանց հասնելու ուղիները, ինչպես նաև նորմատիվային կապիտալի պահանջների բավարարման հետ կապված ծրագրերը,
2) բանկի կապիտալիզացիայի ռազմավարությունը (ներառյալ՝ ընդհանուր կապիտալի նախատեսվող մեծության ապահովումն արտաքին և ներքին աղբյուրների հաշվին, կապիտալի համարժեքության ապահովմանն ուղղվող հիմնական միջոցառումները),
3) եկամտաբերության նախանշված մակարդակը, ակտիվների եկամտաբերության, զուտ տոկոսային մարժայի կամ շահութաբերության այլ չափանիշներին հասնելու ռազմավարությունները,
4) ֆինանսական կանխատեսումներից ելնելով՝ ներքին և արտաքին ռիսկերի ազդեցության գնահատումը կապիտալի համարժեքության վրա,
5) շահաբաժինների բաշխման վերաբերյալ քաղաքականությունը:

Բաժին 8. Հնարավոր ռիսկերի գնահատում

10. Վարկային ռիսկի վերաբերյալ ներկայացվում են՝
1) բանկի վարկային պորտֆելի մոտավոր նկարագիրը (ճյուղային և ժամկետային կառուցվածքը, այլ), վարկային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելու մակարդակի գնահատումը,
2) բանկի վարկերի գնահատման ծրագրերը՝ մասնավորապես անձնակազմի անաչառության և հմտության ապահովման տեսանկյունից,
3) վարկային պորտֆելի որակի ստուգման գործընթացը, հաճախականությունը և շրջանակները,
4) վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման հիմնական սկզբունքները,
5) վարկառուների վարկունակության գնահատման մեթոդաբանությունը:

11. Իրացվելիության ռիսկի վերաբերյալ ներկայացվում են՝
1) բանկի իրացվելիության (ակտիվների և պասիվների կառավարման) ռազմավարությունը,
2) բանկի իրացվելիության ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
3) բանկի կողմից բանկի հետ փոխկապակցված անձանցից (մասնակից չհանդիսացող) միջոցների ներգրավման նկատմամբ մոտեցումները՝ ներառյալ դրանց ծավալների, տոկոսադրույքների ընդունելի մակարդակը և այլ պայմանները,
4) նախատեսվող ակտիվների ու պարտավորությունների կառուցվածքն ըստ ժամկետայնության,
5) ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետայնության ճեղքվածքի կառավարման մեթոդները (GAP):

12. Շուկայական ռիսկի վերաբերյալ ներկայացվում են՝
1) ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները (պետական և ոչ պետական արժեթղթերում, պարտատոմսերում և այլն), շուկայական ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
2) արտարժութային գործառնությունները, արտարժութային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, գնահատել ռիսկի ընդունելի մակարդակը,

3) բանկի շուկայական ռիսկի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների պորտֆելը և քննարկել գների հնարավոր փոփոխությունների ազդեցությունը եկամտաբերության, կապիտալի և պորտֆելի զուտ արժեքի վրա,
4) բանկի կողմից հեջավորման գործիքների կիրառումը (օրինակ՝ ֆյուչերս, օպցիոն, տոկոսադրույքի սվոպ և այլն):

13. Սույն բաժնում պետք է նկարագրել նաև վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխության դեպքում առաջացող հնարավոր իրավական ռիսկերը, դրանց կառավարումը, ինչպես նաև բանկի համար էական նշանակություն ունեցող այլ ռիսկերը:

Բաժին 9. Բանկի մասնաճյուղերը

14. Սույն բաժնում ներկայացվում են այն մասնաճյուղերի վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք պետք է գրանցվեն որպես բանկի մասնաճյուղեր վարկային գործունեության տեսակի փոփոխման լիցենզիան ստանալու դեպքում:

15. Սույն բաժնում նկարագրվում են.
1) մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը և դրանց համառոտ նկարագիրը,
2) մասնաճյուղի պոտենցիալ հաճախորդների բնութագիրը և ենթադրվող թիվը, խոշոր հաճախորդների անունները, սպասարկման տարածքը,
3) մասնաճյուղի վարկավորման ծրագրերը,
4) այն տարածքը/շուկաները, որոնցում մասնաճյուղը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը
5) մասնաճյուղի գործարար ակտիվության կանխատեսումը, դրա որակական և քանակական գնահատումը,
6) մասնաճյուղի հիմնական մրցակիցների նկատմամբ մասնաճյուղի հարաբերական առավելությունը և թերությունները (սպասարկման որակ, մատուցվող ծառայությունների ցանկ և այլն), մասնաճյուղի մրցունակության հիմնավորումը,
7) մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները, մասնաճյուղի աշխատակիցների քանակը,
8) մասնաճյուղի ղեկավարների և այլ աշխատակիցների աշխատավարձերը՝ ըստ հաստիքների:
9) մասնաճյուղի ներքին հսկողության համակարգը,
10) բանկի գլխամասի և մասնաճյուղի միջև տեղեկատվական հոսքերը՝ հաշվետվական համակարգը ներառյալ,
11) մասնաճյուղերում ներքին աուդիտի իրականացման հաճախականությունը և շրջանակները:

Բաժին 10. Ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում

16. Սույն բաժնում նկարագրվում է ծրագրի 1-ին մասով նախատեսված ծրագրում փոփոխություններ կատարելու կարգը և բանկի կառավարման բարձրագույն մարմնի կողմից ծրագրի 1-ին մասի իրագործման հսկողության գործընթացը, այդ թվում՝
1) ծրագրված միջոցառումների իրականացման պատասխանատու (կառավարող/համակարգող) անձը և/կամ ստորաբաժանումը,
2) պատասխանատու անձի կամ ստորաբաժանման կողմից բանկի գործադիր մարմնին և խորհրդին կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության տրամադրման պարբերականությունը (որն առնվազն պետք է ներառի վերլուծություն՝ բանկի ուժեղ/թույլ կողմերի, հնարավորությունների/սպառնալիքների, ընթացիկ տարվա առաջադրանքների կատարողականի, համակարգում բանկի դիրքի, ֆինանսական ցուցանիշների միտումների վերաբերյալ, համեմատական պլանային ցուցանիշների և փաստացի ցուցանիշների միջև),
3) բանկի գործադիր մարմնի և խորհրդի կողմից հաշվետվությունների (status reports (ստատուս ռեփորթս)) քննարկումը և հաստատումը, ժամկետները:

Բաժին 11. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը (պարտադիր չէ. ներկայացվում է Կենտրոնական բանկի պահանջով)

17. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը պետք է նկարագրի բանկի գործողությունները շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխության դեպքում: Այլընտրանքային տնտեսական ծրագիրը պետք է ընդգրկի ռիսկերի կառավարման առավել խիստ գործընթացներ: Ծրագիրը պետք է ներառի ապագայում անհրաժեշտության դեպքում բանկի կապիտալի մեծացման վերաբերյալ մոտեցումներ, ինչպես նաև բանկի արտակարգ իրավիճակների համար պահուստների ձևավորման և օգտագործման կարգը: Ծրագրում պետք է նկարագրված լինի անսպասելի կորուստների առաջացման դեպքում բանկի ֆինանսական պաշտպանվածության ապահովման ուղիները:

ՄԱՍ 2. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Բաժին 1. Անհրաժեշտ միջոցառումների իրականացում

18. Ծրագրի սույն բաժնում պետք է նկարագրվեն այն բոլոր միջոցառումների նկարագրությունը, որոնք անհրաժեշտ են վարկային կազմակերպության գործունեության տեսակը փոփոխելու, սույն ծրագրով սահմանված նպատակներին հասնելու և որպես բանկ գրանցվելու և բանկային գործունեության լիցենզիայի ստացման դիմումը ներկայաց-

նելու պահին «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով բանկերին ներկայացվող բոլոր պահանջներն ու պայմանները բավարարելու համար: Այդ միջոցառումներն ընդգրկում են՝

1) գլխամասի և մասնաճյուղերի տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջների ապահովումը,
2) ներքին կազմակերպական կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների իրականացումը,
3) գործառնական համակարգի ձևավորումը/կատարելագործումը (համապատասխան ծրագրերի ձեռքբերումը և տեղադրումը),
4) ներքին հսկողության համակարգի ներդրումը/կատարելագործումը,
5) աշխատակիցների վերապատրաստումը,
6) նոր ղեկավարների գրանցումը,
7) վճարահաշվարկային ծառայությունների լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը,
8) ներքին իրավական ակտերի մշակումը,
9) բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովմանն ուղղված գործընթացի իրականացման նկարագրությունը,
10) կապիտալի անհրաժեշտ և բավարար մակարդակի ապահովման համար իրականացվելիք միջոցառումները, դրանց աղբյուրները,
11) այլ անհրաժեշտ միջոցառումներ:

19. Միջոցառումների իրականացման ծրագրում յուրաքանչյուր միջոցառման (գործընթացի) մասով պետք է նշվեն՝

1) միջոցառման իրականացման վերջնական նպատակը,
2) միջոցառման սկիզբը, տևողությունը և վերջնաժամկետը,
3) միջոցառման իրականացման շրջանակները (որ մասնաճյուղերին, ստորաբաժանումներին է վերաբերում միջոցառումը),
4) միջոցառման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների նկարագրությունը,
9) Բանկի պատասխանատվությունը ավանդատուի առջև	+	-	+	+	-	-	-
14. «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների.							
1) Ընդհանուր դրույթներ	+	-	+	+	-	-	-
2) Կրեդիտավորման պայմանագրերը	+	-	+	+	-	-	-
3) Սպառողի իրավունքները	+	-	+	+	-	-	-
4) Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկումը	+	+	+	+	+	-	-
5) Գովազդը և հաղորդակցումը	+	-	+	+	-	-	-
6) Սպառողների իրավունքների պաշտպանությունը, վերահսկողությունը և օրենքը խախտելու համար պատասխանատվությունը	+	-	+	+	-	-	-
15. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների.							
1) Հիմնական դրույթներ	+	-	+	+	-	+	-
2) Պահանջները և դրանց քննության կարգը	+	-	+	+	-	-	-
3) Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար	+	-	+	+	-	-	-

Հավելված 35

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԴԻՄՈՒՄ
ԲԱՆԿԻ ԴԻԼԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում եմ _____ տրամադրել բանկի դիլերի որակավորման վկայական:
(բանկի դիլերի թեկնածուի անունը, ազգանունը)

Ստորև ներկայացվում են բանկի դիլերի թեկնածուի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.
1. Անձնագրի տվյալները _____ 2. Հանրային ծառայության համարանիշը _____ 3. Էլեկտրոնային փոստի հասցեն _____

Բանկի (օտարերկրյա բանկի)
կառավարման մարմնի իրավասու անձի անուն, ազգանուն, ստորագրություն _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 36

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

Դ Ի Մ Ու Մ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Ես _____ _____, _____ թվականին մասնակցել եմ
(անուն, ազգանուն (հանրային ծառայության համարանիշը և անձնագրի տվյալները)) *(քննության անցկացման օր/ամիս/ տարի)*

_____ պաշտոնի համար նախատեսված որակավորման ստուգման քննությանը:
(որակավորման տեսակը)

_____
_____
_____

(բողոքարկման պատճառ հանդիսացած խնդրահարույց հարցի նկարագրությունը)

Դիմող՝ _____

_____
(հեռախոսահամար, էլ. փոստի հասցե)

_____
(ստորագրություն)

«__» _____ 20__ թ.

Հավելված 37

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն Թ Ի Վ

Սույն վկայականը տրվում է

_____ -ին
(անուն, ազգանուն)

_____
(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)

բանկի _____ պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:
պաշտոնի կամ պաշտոնների անվանումը

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև «__» _____ 20__ թ.

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 38

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ԴԻՄԵՐԵՍ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն Թ Ի Վ

Սույն վկայականը տրվում է

_____ -ին _____
(անուն, ազգանուն) *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

բանկի _____
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող միջազգային որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում է վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտել է միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ միջազգային որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը այլևս վկայագրի տրման հիմք չէ:

Հավելված 39

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

Ղեկավարների գրանցման ընթացակարգի տեսակները

N	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
	ԲԱՆԿԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՂԵԿԱՎԱՐ, այդ թվում՝	
1.	Խորհրդի անդամներ	Բ
2.	Գործադիր տնօրեն	Բ
3.	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
4.	Տնօրենության (վարչության) նախագահ	Բ
5.	Տնօրենության (վարչության) նախագահի տեղակալ	Բ
6.	Տնօրենության անդամ	Բ
7.	Գլխավոր հաշվապահ	Բ
8.	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Բ
9.	Ներքին աուդիտի ղեկավար	Բ
10.	Ներքին աուդիտի անդամներ	Պ
11.	Մասնաճյուղի կառավարիչ	Պ
12.	Մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	Պ
13.	Ներքին դիտարկումների մարմին	Պ

Հավելված 40

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ԴԻՄՈՒՄ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք Ձեր նախնական համաձայնությունը _____ կողմից
(բանկի անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը)
_____ կազմակերպության կանոնադրական կապիտալում
(կազմակերպության լրիվ անվանումը)

_____ -ի չափով մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ,
(մասնակցության ընդհանուր գումարը)
որի արդյունքում՝

- բանկի մասնակցությունը_____կազմակերպության կանոնադրական
(կազմակերպության լրիվ անվանումը)
կապիտալում կկազմի _____ տոկոս,
- բանկի մասնակցությունը տվյալ կազմակերպության կանոնադրական կապիտալում կկազմի բանկի ընդհանուր կապիտալի _____ տոկոսը,
- այլ անձանց կանոնադրական կապիտալներում բանկի մասնակցությունը կկազմի բանկի ընդհանուր կապիտալի _____ տոկոսը:

Ձեզ ենք ներկայացնում նաև գործարքի և այն իրավաբանական անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները, որի կանոնադրական կապիտալում բանկը ցանկանում է ձեռք բերել մասնակցություն.

1. Իրավաբանական անձի տվյալները

1.1. Անվանումը _____

1.2. Գտնվելու վայրը

1.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ համարը _____
(օր/ամիս/տարի)

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսերը (փայերը)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ *հատ* _____ %

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ *հատ* _____ %

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) ձեռքբերման գինը _____

2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ շուկայական արժեքը _____

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ձեռքբերման եղանակը

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

3.2. Եթե մասնակցությունը ձեռք է բերվում կազմակերպության մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)
1.		
2.		

4. Տեղեկություններ կազմակերպության մասնակիցների վերաբերյալ

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար.

Կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Գտնվելու (բնակության) վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

Սույն կետում նշված անձանց համար կարող է պահանջվել լրացնել սույն կանոնակարգի Հավելված 27-ը կամ Հավելված 31-ը:

5. Տեղեկություններ կազմակերպության ղեկավարների (խորհրդի նախագահ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ

ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել կազմակերպության ղեկավարների վերաբերյալ Հավելված 11-ով սահմանված որոշ տեղեկություններ:

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)
1.		
2.		

6. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, անձնագրի տվյալները	Գտնվելու (բնակության) վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

7. Այլ տեղեկատվություն

7.1. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր ժամկետանց/չմարված պարտականություններ:

☐ Այո
☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

7.2. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

8. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*

Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____
օր/ամիս/տարի

Հավելված 41

«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց

1. Սույն ուղեցույցը սահմանում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գլուխ 2-ով և գլուխ 7-ով սահմանված՝ խորհրդի, խորհրդի անդամների և նրանց գործունեության նկատմամբ նվազագույն պահանջները:

2. Բանկի խորհուրդը իրականացնում է բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը: Բանկի խորհուրդը որոշում է բանկի գործունեության հիմնական ուղղությունները, հաստատում է բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը, վերահսկում է գործադիր մարմնի գործունեությունը և հաշվետու է բանկի բաժնետերերին:

1. Խորհրդի անդամների գործնական որակները և բիզնես վարքը

3. Յուրաքանչյուր խորհրդի անդամ պետք է հավասարակշռող դեր ստանձնի բանկի և բանկի բաժնետերերի միջև, լինի բարեխիղճ և լիովին իրազեկ, որոշումների ընդունման ժամանակ կիրառի անկախ և խելամիտ դատողություն:

1) Որոշումներ ընդունելիս խորհրդի անդամի կողմից անկախ դատողության կիրառումը նշանակում է, որ նա դրսևորում է անկողմնակալություն և անաչառ է խնդրահարույց ու շահերի բախում առաջացնող իրավիճակներում: Օրինակ՝ հաշվի է առնում բաժնետերերի փոքրամասնության շահերը, օբյեկտիվորեն է գնահատում խորհրդի և գործադիր մարմնի կատարողականները, ընդունում արդար որոշումներ գործադիրի և խորհրդի վարձատրության որոշման ժամանակ, բանկի վերակազմավորման և այլ դեպքերում:
2) Անկախ որոշումների ընդունման ապահովման նպատակով խորհրդի անդամը չպետք է որևէ տնտեսական, ընտանեկան կամ այլ կապերի միջոցով փոխկապակցված լինի մյուս խորհրդի անդամների և գործադիր մարմնի անդամների հետ: Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել բանկի այլ աշխատակից: Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից: Բացառություն է կազմում միայն այն դեպքը, երբ տվյալ բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը միմյանց հետ փոխկապակցված անձինք են:
3) Խորհրդի անդամը պետք է ամբողջովին տեղյակ լինի բանկի ընթացիկ գործունեությանը, բանկին հատուկ ռիսկերին, երկարաժամկետ զարգացման ծրագրերին և բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտին, մասնավորապես՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքին, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքին, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին, բանկի կազմակերպական-իրավական ձևը կարգավորող օրենսդրությանը, արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, հարկային օրենսդրությանը, բանկային գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտերին, բանկի կանոնադրությանը, բանկի ընդհանուր ժողովի և խորհրդի հաստատած քաղաքականություններին, կանոնակարգերին և ընթացակարգերին:

4. Յուրաքանչյուր խորհրդի անդամ պետք է հատկացնի բավարար ժամանակ իր պարտականությունների պատշաճ և արդյունավետ կատարման համար:

1) Բանկի խորհրդի անդամը պետք է գիտակցի, որ խորհրդի անդամի պաշտոնի համատեղումն այլ գործունեության հետ կարող է բացասաբար անդրադառնալ իր պարտականությունների պատշաճ կատարման, բանկի ընդհանուր կառավարման վրա:

5. Յուրաքանչյուր խորհրդի անդամ պետք է մշտապես կատարելագործի իր որակավորումը:

1) Պարտականությունները պատշաճ կատարելու, ինչպես նաև խորհրդի գործունեությունը և կատարողականը բարելավելու նպատակով խորհրդի անդամը պետք է մշտապես ընդլայնի և կատարելագործի իր գիտելիքները՝ մասնակցելով վերապատրաստման ծրագրերին, ինչպես նաև ինքնուսուցման միջոցով: Վերջինս վերաբերում է նաև նոր օրենսդրության և կարգավորման պահանջներին ու բանկի փոփոխվող իրավիճակին ու ընթացիկ ռիսկերին իրազեկ լինելուն:

2. Խորհրդի առաքելությունը և խորհրդի անդամների՝ օրենքով սահմանված իրավասությունները

6. Բանկի խորհրդի առաքելությունն է՝ բաժնետերերի ներդրումային արժեքի առավելագույն ավելացումը (բաժնետոմսերի շուկայական գնի ավելացումը) և բանկի այլ շահագրգիռ անձանց շահերի պաշտպանությունը: Դրանից ելնելով՝ խորհուրդն իր գործունեության ընթացքում ներկայացնում, պաշտպանում և ուղղորդվում է բաժնետերերի ու շահագրգիռ անձանց (բոլոր անձինք, որոնք իրենց ներդրումով՝ մարդկային, մասնագիտական, փողային, այլ, աջակցում են բանկի երկարաժամկետ առաջընթացին և մրցակցությանը, այդ թվում՝ բանկի ներդրողները, վարկատուները, աշխատակիցները և այլն) շահերով:

7. Խորհրդի բացառիկ իրավասությունները ներառում են՝

1) բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
2) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

3) բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
4) բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
5) բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
6) բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
7) բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդպիսի լիազորություն.
8) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակի կազմումը: Բացի այդ, միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշման ընդունումը.
9) բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.
10) ընդհանուր ժողովի հաստատմանը բանկի արտաքին աուդիտոն իրականացնող անձի ներկայացումը.
11) բանկի արտաքին աուդիտոն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.
12) բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
13) բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.
14) բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.
15) հետևյալ հարցերի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը.
ա. բանկի վերակազմակերպումը,
բ. դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
գ. դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
դ. առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,
ե. առևտրային կազմակերպությունների միություններին մասնակցությունը,
զ. խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
է. բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
16) բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
17) բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
18) բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
19) բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը:

8. Խորհրդի բացառիկ իրավասությունները չեն կարող փոխանցվել բանկի կառավարման այլ մարմիններին կամ այլ անձանց:

9. Խորհրդի բացառիկ իրավասություններ են նաև՝

1) Խոշոր գործարք (խոշոր գործարք են հանդիսանում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի «Բանկի գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքները» հոդված 39.1-ում սահմանված գործարքները) կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկան է գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը: Ընդ որում, տվյալ որոշումը պետք է խորհրդի կողմից ընդունվի միաձայն: Եթե գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցն ընդհանուր ժողովում քննարկելու մասին:
2) Բանկի և նրա հետ կապված անձանց (բանկի հետ կապված անձանց թվին են դասվում՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի հոդված 39-ում սահմանված անձինք) միջև ստորև նշված գործարքների (բանկի գործադիր տնօրենի ներկայացմամբ) հաստատումը՝
ա. ցպահանջ և ժամկետային ավանդների ընդունում,
բ. վարկերի տրամադրում,
գ. պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
դ. բանկային երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրում,
ե. արժեթղթերի թողարկում, առք ու վաճառք, նման այլ գործառնությունների կատարում,
զ. ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեության իրականացում,
է. ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայությունների մատուցում,
ը. այլ անձանց արժեթղթերի ու ներդրումների (հավատարմագրային) կառավարում,
թ. թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառք և կառավարում,
ժ. ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
ժա. ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվության մատուցում,
ժբ. պարտքերի հետստացման հատուկ գործընթացների իրականացում:

10. Խորհրդի իրավասություններն են նաև՝

1) Ընդհանուր ժողովին բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
2) Բանկի աշխատատեղերը հաստատելու իրավասությունը,
3) Բանկի կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ խորհրդին վերապահված լինելու դեպքում՝
   ա. դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
   բ. դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
   գ. առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,
   դ. առևտրային կազմակերպությունների միություններին մասնակցությունը,
   ե. խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
   զ. բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
   է. շահագրգռվածությամբ (շահագրգռվածության առկայությամբ գործարքներ են հանդիսանում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի «Բանկի գործարքներում շահագրգիռ անձինք» հոդված 39.3-ում սահմանված անձանց հետ կնքված գործարքները) գործարքը կնքելու մասին որոշման ընդունումը:

Ընդ որում, բանկի շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ որոշում ընդունելիս, այն խորհրդի անդամը, որը շահագրգիռ անձ է նշված գործարքում, պարտավոր է չմասնակցել քվեարկությանը: Եթե խորհրդի անդամը շահագրգիռ անձ է ճանաչվել, և նրա պատճառով բանկը վնասներ է կրել, ապա վերջինս բանկի առջև պատասխանատվություն է կրում բանկին պատճառած վնասների չափով: Անձն ազատվում է սույն մասով սահմանված պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ. չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ գործարքի կնքմամբ բանկը կկրի վնասներ:

11. Բանկի խորհուրդն ունի նաև հետևյալ պարտականությունները՝

1) եթե բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումները վերացնելու և հետագայում չկրկնելու նպատակով:
2) առնվազն տարին մեկ անգամ բանկի խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտոն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:
3) առնվազն եռամսյակը մեկ անգամ բանկի խորհուրդը պետք է քննարկի բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, գործադիր տնօրենի (տնօրենության) և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ խորհրդի սահմանած կարգով և ձևով:

3. Տեղեկատվության հասանելիությունը խորհրդի անդամներին: Խորհրդի անդամների կողմից տեղեկատվության բացահայտումը

12. Խորհրդի անդամն իր պարտականությունները պատշաճ կատարելու համար պահանջում է ճշգրիտ, ամբողջական և ժամանակին տեղեկատվություն բանկի գործունեության մասին՝ մասնավորապես հաստատելով բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը և պարբերականությունը: Նշված տեղեկատվությունը պետք է լինի բավարար՝ արդյունավետ որոշումների ընդունման շարունակական գործընթացն ապահովելու համար:

13. Խորհրդի անդամն իրազեկ է, որ իրեն վերաբերող հետևյալ տեղեկատվությունը հրապարակվելու է և հասանելի է հասարակությանը.

1) անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը,
2) նախորդող տարվա ընթացքում խորհրդի անդամի և նրա հետ փոխկապակցված անձանց («Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի «Փոխկապակցված անձինք» հոդված 8–ում սահմանված անձինք) կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ,
3) բանկի նկատմամբ խորհրդի անդամի ունեցած ընդհանուր պարտավորությունները՝ վարկերի և այլ փոխառությունների գծով:

14. Խորհրդի անդամն իրազեկ է, որ իր նախորդ տարվա ընթացքում բանկից ստացված ամբողջ վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է բանկի բոլոր մասնակիցներին:

4. Խորհրդի անդամի աշխատանքային գործընթացի կազմակերպումը, օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները

15. Խորհրդի անդամը մասնակցում է բանկի խորհրդի նիստերին: Բանկի խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է բանկի կանոնադրությամբ: Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք)՝ բանկի խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Ընդ որում, յուրաքանչյուր խորհրդի անդամ խորհրդի արտահերթ նիստ գումարելու իրավունք ունի:

16. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայն, ընդ որում, ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի, այդ թվում՝ այլ խորհրդի անդամի, չի թույլատրվում:

17. Խորհրդի անդամը, որը մասնակցել է նիստին, ստորագրում է նիստի արձանագրությունը և օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար: Արձանագրությունում մասնավորապես նշվում են՝ քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունք-

ներն ըստ նիստին մասնակցած խորհրդի յուրաքանչյուր անդամի, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները:

18. Բանկի խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև շուկայի մասնակիցներին՝ իրենց շահերի պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքով ապահովելու նպատակով կարող է ստեղծել խորհրդին կից հանձնաժողովներ: Օրինակ՝ «աուդիտ կոմիտե կամ հանձնաժողով», «ռիսկերի կառավարման հանձնաժողով», «վարձատրման և նշանակման կոմիտե» և այլն: Այդ հանձնաժողովներում կարող են ընդգրկվել ինչպես բանկի խորհրդի անդամները, այնպես էլ բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ:

5. Խորհրդի անդամի՝ օրենքով սահմանված պաշտոնավարման ժամկետը և լիազորությունների դադարեցումը

19. Բանկի խորհրդի անդամը վարձատրվում է բանկի կողմից: Բանկի խորհրդի անդամների վարձատրությունը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից, եթե այդ իրավասությունը չի փոխանցվել խորհրդին:

20. Բանկի խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է բանկի կանոնադրությամբ, սակայն, Օրենքի համաձայն, այն չի կարող մեկ տարուց պակաս լինել:

21. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Ընդհանուր ժողովի կողմից՝ իր դիմումի համաձայն: Լիազորությունները կարող են դադարեցվել նաև, եթե առկա են հետևյալ հիմքերը՝

1) խորհրդի անդամը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
2) խորհրդի անդամի պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով տվյալ անձին արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար),
3) խորհրդի անդամը մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից,
4) օրենքով սահմանված կարգով խորհրդի անդամը որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

22. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների կատարմանը մնացած ժամանակահատվածի (իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա՝ մեկ տարվա) համար սահմանված աշխատավարձը բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Բանկն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջել նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

6. Խորհրդի անդամի՝ օրենքով սահմանված պատասխանատվությունը

23. Խորհրդի անդամն իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի՝ ելնելով բանկի շահերից, իրականացնի իր իրավունքները և կատարի բանկի նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

24. Խորհրդի անդամը բանկի առջև պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով բանկին պատճառած իրական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են այն խորհրդի անդամները, որոնք բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն եղել:

25. Խորհրդի անդամների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ հնարավոր դեպքերը.

1) երբ մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ այլ կնքված գործարքների (որոնց կնքման համար օրենքով պահանջվում է խորհրդի որոշում) հետևանքով բանկը վնաս է կրում, բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար համապարտ պատասխանատվություն են կրում բանկի խորհրդի անդամները և գործադիր տնօրենը,
2) եթե բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար՝ բացառությամբ, եթե խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար և խելամիտ գործողություններ:

26. Խորհրդի անդամն ազատվում է բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են բանկի շահերից: Մասնավորապես՝

1) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ,
2) եթե խորհրդի անդամի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

27. Բանկի խորհրդի անդամի պաշտոնից ազատվելը չի ազատում նրան իր մեղքով բանկին պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

28. Բանկի խորհրդի անդամին Կենտրոնական բանկը հանում է գրանցումից, եթե վերջինս՝

1) ունի դատվածություն՝ դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար,
2) դատարանի կողմից զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
3) ճանաչվել է սնանկ և ունի չմարված (չներված) պարտավորություններ,
4) որակավորմամբ կամ մասնագիտական գիտելիքների առումով չի համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական չափանիշներին,
5) անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը,
6) քրեական գործով ներգրավված է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

7. Խորհրդի նախագահի՝ օրենքով սահմանված պարտականությունները

29. Բանկի խորհրդի նախագահը միաժամանակ չի կարող լինել բանկի գործադիր տնօրեն: Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների կազմից:

30. Բանկի խորհրդի նախագահը՝
1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,
2) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը,
3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
4) նախագահում է բանկի ընդհանուր ժողովում,
5) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

Խորհրդի նախագահը նաև ստորագրում է խորհրդի որոշումները և պատասխանատվություն կրում որոշումների մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերի միացման գործընթացը համապատասխանեցնել Կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ, 68-րդ, 69-րդ հոդվածները, «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը, «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.09.2014 թ. (ՀՀԳՏ N23 (502)[1], 16.09.2014):

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2011 թվականի հուլիսի 19-ի ««Բանկերի միացման կարգը» հաստատելու մասին» թիվ 190-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի միացման կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն Կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 1) գլուխ 1-ով սահմանված կարգի:»:

2) Կարգը 2-րդ կետից հետո լրացնել 2.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Նախկինում ղեկավարի վերաբերյալ Կանոնակարգ 1-ի Հավելված 11-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը Կենտրոնական բանկ ներկայացրած լինելու դեպքում ղեկավարի գրանցման համար կրկին ներկայացվում է Կանոնակարգ 1-ի Հավելված 11-ի միայն 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:»:

3) Կարգի 3-րդ կետի՝

ա. 4-րդ ենթակետում «գործարար» բառը փոխարինել «տնտեսական» բառով,

բ. 4-րդ ենթակետում «Կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 1) սահմանված ենթահավելված 3-ի» բառերը փոխարինել «Կանոնակարգ 1-ով սահմանված Հավելված 4-ի» բառերով,

գ. 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «11) Միացման արդյունքում պահպանվող բանկի ղեկավարների փոփոխության դեպքում նոր ղեկավարների մասին Կանոնակարգ 1-ի Հավելված 10-ով սահմանված դիմումը և Հավելված 11-ով սահմանված տեղեկանքը:»:

4) Կարգի 8-րդ կետի՝

ա. 3-րդ ենթակետի «՝ համաձայն Կանոնակարգ 1-ի գլուխ 12-րդով սահմանված փաստաթղթերի» բառերը փոխարինել «՝ և այլ փաստաթղթեր՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի» բառերով,

բ. 4-րդ ենթակետի 2-րդ նախադասությունը հանել:

5) Կարգի Հավելված 1-ից «և դրանց ցանկը» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 191-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 146-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով միասնականացնել ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման հետ կապված գործընթացները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.09.2014 թ. (ՀՀԳՏ N23 (502)[1], 16.09.2014):

բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և 70-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ բանկի գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում ազդեցություն ունեցող աշխատակիցներին բանկի ղեկավար համարելու ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 146-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված «Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ բանկի գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում ազդեցություն ունեցող աշխատակիցներին բանկի ղեկավար համարելու ուղեցույցը» հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» հաստատելու մասին»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 192-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 192-Ն որոշմամբ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի
թիվ 146-Ն որոշմամբ հաստատված

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՈՐԵՎԷ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտը սահմանում է այն չափանիշները, որոնց հիման վրա ֆինանսական կազմակերպության ղեկավար կարող է ճանաչվել նաև ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձը:

2. Սույն իրավական ակտի իմաստով ֆինանսական կազմակերպություն է համարվում բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը, ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը:

Գ Լ ՈՒ Խ 2
ՂԵԿԱՎԱՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3. Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար համարելու հարցերը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից քննարկվում են հետևյալ չափանիշներից առնվազն մեկի առկայության դեպքում՝

1) ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի որոշումները կամ որոշումների մի մասը ընդունվում են միայն այդ աշխատակցի համաձայնության պարագայում կամ ներկայացմամբ,

2) ֆինանսական կազմակերպությունում ստեղծված հանձնաժողովներում աշխատակիցը հանդիսանում է հանձնաժողովի նախագահ կամ հանձնաժողովի որոշումները կամ որոշումների մի մասը ընդունվում են միայն իր համաձայնությամբ կամ ներկայացմամբ,
3) ֆինանսական կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի կամ գլխավոր հաշվապահի բացակայության (ներառյալ՝ հիվանդություն, գործուղում կամ աշխատանքի վայրից այլ պատճառներով փաստացի բացակայություն) դեպքում աշխատակիցն ի պաշտոնե կամ փաստացի փոխարինում է նրանց,
4) ֆինանսական կազմակերպության կառավարման մարմիններից կամ ղեկավարներից մեկը լիազորել է ֆինանսական կազմակերպության աշխատակցին իրականացնելու իր իրավասությունները կամ դրանց մի մասը,
5) անձը կարող է ազդել ֆինանսական կազմակերպության գործունեության ուղղությունների վրա՝ տվյալ ֆինանսական կազմակերպության նկատմամբ իր ունեցած պահանջի ուժով,
6) անձը լիազորված է տիրապետելու ֆինանսական կազմակերպության այնպիսի սահմանաչափերով միջոցներ, որոնց կորուստը, փչացումը կամ վնասվածքը կարող են էապես ազդել ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակի վրա:

4. Սույն իրավական ակտի 3-րդ կետում նշված չափանիշները կարող են հիմք հանդիսանալ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ֆինանսական կազմակերպության աշխատակցին ֆինանսական կազմակերպության ղեկավար համարելու համար: Սույն կետով նախատեսված որոշմամբ սահմանվում են նաև տվյալ ղեկավարին ներկայացվող համապատասխան որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, ինչպես նաև գրանցման ընթացակարգը՝ պարզ կամ բարդ:

5. Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար համարելու հարցը քննարկվում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստում:

6. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ֆինանսական կազմակերպության աշխատակիցներին սույն իրավական ակտի իմաստով ֆինանսական կազմակերպության ղեկավար համարելու վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ընդունելուց հետո ֆինանսական կազմակերպությունը, օտարերկրյա ֆինանսական կազմակերպության մասնաճյուղը մեկամսյա ժամկետում ապահովում են տվյալ անձանց որակավորման և գրանցման գործընթացը:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել վարկային կազմակերպությունների լիցենզավորման, պետական գրանցման, համաձայնության տրամադրման հետ կապված գործընթացները,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 9.2-րդ, 10-րդ և 22.1-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցեն-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.09.2014 թ. (ՀՀԳՏ N23 (502)[1], 16.09.2014):

զավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 13) հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«««Վարկային կազմակերպութան գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 193-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 193-Ն որոշմամբ

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 13
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
1) Վարկային կազմակերպությունների պետական գրանցման ու լիցենզավորման կարգը,
2) Վարկային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը,
3) Վարկային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման համար Կենտրոնական բանկի կողմից համաձայնություն ստանալու կարգը,
4) Վարկային կազմակերպությունների տիպի (խմբի) փոփոխման գրանցումը,
5) Վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ժամանակավոր դադարեցման կարգը,
6) Վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության դադարեցման կարգը,
7) Գրանցման վկայականի և վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կորստի, ոչնչացման և օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքերում կրկնօրինակի ստացման կարգը,
8) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում լիցենզիան Կենտրոնական բանկ վերադարձնելու կարգը,
9) Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, պետության և ֆիզիկական անձանց կողմից նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու կարգը,
10) Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման հետ կապված այլ դրույթները,

11) Ղեկավարների վերաբերյալ ընդհանուր դրույթներ,
12) Կենտրոնական բանկի կողմից ղեկավարներին տրվող որակավորումներին հավասարեցվող որակավորումները, դիպլոմները և հավաստագրերը,
13) Խորհրդի անդամների որակավորման ստուգման կարգը,
14) Ղեկավարների (բացառությամբ՝ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի և խորհրդի անդամների) որակավորման քննություններին մասնակցության և քննությունների անցկացման կարգը,
15) Ղեկավարների (բացառությամբ՝ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի և խորհրդի անդամների) որակավորման թեստերը,
16) Որակավորման թեստերի գնահատումը և բողոքարկումը,
17) Որակավորման վկայականների տրամադրման կարգը,
18) Որակավորման վկայականներով տրվող լրացուցիչ լիազորությունների շրջանակը,
19) Ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշները,
20) Ղեկավարների (բացառությամբ՝ խորհրդի նախագահի և խորհրդի նախագահի տեղակալի) գրանցման կարգը,
21) Ղեկավարներին գրանցումից հանելու կարգը,
22) Ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման և պաշտոնավարման կարգը,
23) Գրանցման ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,
24) Գրանցման ոչ ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,
25) Վարկային կազմակերպության տարածքից դուրս ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը,
26) Վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմում փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով:

3. Սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքների) Կենտրոնական բանկ են ներկայացվում հայերենով, Յունիկոդ տառատեսակով և «Փի Դի էֆ» ֆորմատով՝ բացառությամբ վարկային կազմակերպության տնտեսական ծրագրերին կից ներկայացվող աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Վարկային կազմակերպության տնտեսական ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

4. Գործող վարկային կազմակերպության ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ տեղեկանքները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով՝ առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով, ընդ որում, տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերն ամրակցվում են համակարգում նշված դաշտում: Տվյալ համակարգ մուտք գործելու համար ղեկավարների տեղեկանքները հաստատելու իրավասություններ ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրվում են մուտքի տվյալներ (անուն և ծածկագիր):

5. Նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացնում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի էֆ» ֆորմատով:

6. Գործող վարկային կազմակերպությունների և դրանց տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

7. Նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների վրա սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք պարտավոր են նաև էլեկտրոնային-թվային ստորագրությամբ Կենտրոնական բանկ կրկին ներկայացնել նախկինում առանց էլեկտրոնային-թվային ստորագրության ներկայացված կանոնադրությունները՝ համապատասխան ստորագրությունը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները (դրանց փոփոխությունները, լրացումները) տրամադրվում են վարկային կազմակերպությանը էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Վարկային կազմակերպու-

թյունների գրանցված կանոնադրությունների, ինչպես նաև դրանցում փոփոխությունների ու լրացումների էլեկտրոնային տարբերակները Կենտրոնական բանկի կողմից տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների համար սույն կետով սահմանված հնգօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրությունների էլեկտրոնային-թվային ստորագրությամբ տարբերակները Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

9. Սույն կարգով սահմանված ոչ հայերեն փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ: Ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասություն կամ անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում առաջնահերթությունը տրվում է հայերեն տարբերակին:

10. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրերով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրերում (դիմումում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրի (դիմումի)) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական, ինչպես նաև գիտակցում է, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

11. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

վարկային կազմակերպության անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	Ընդլայնում

Օրինակ՝ «ԱԲԳ» վարկային կազմակերպության կողմից կանոնադրության փոփոխության վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու դեպքում ֆայլի անվանումը կունենա հետևյալ կառուցվածքը.

ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադրական փոփ.	-	250914	.	pdf

12. Սույն կանոնակարգի համաձայն ներկայացված փաստաթղթերում թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում Կենտրոնական բանկն այդ թերությունների մասին տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին: Համապատասխան դիմումը ներկայացված է համարվում ճշգրտված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, միջնորդագրի (դիմումի) մերժման համար հիմք կարող է հանդիսանալ փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը:

13. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշային գործակալությունների և Ա.Մ. Բեստ վարկանշային կազմակերպության (այսուհետ՝ սույն կետում վարկանշային կազմակերպություն) կողմից տրված վարկանիշները կիրառվում են հետևյալ սկզբունքով (եթե սույն կանոնակարգով այլ բան նախատեսված չէ).

1) Եթե կազմակերպությունն ունի միայն մեկ վարկանշային կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում տվյալ վարկանիշը:
2) եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշներ՝ տրամադրված տարբեր վարկանշային կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը:
3) Եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշներ՝ տրամադրված տարբեր վարկանշային կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշերից առավել ցածր վարկանիշը:

14. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները կազմվում են.

1) հաշվապահական հաշվառման այն ստանդարտների համապատասխան, որոնք «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս և ներկայացնելիս կամ
2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

15. Սույն կանոնակարգով պահանջվող օտարերկրյա իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին կից աուդիտորական եզրակացությունները ներկայացվում են դրանց առկայության դեպքում՝ բացառությամբ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մաս-

նակցության ձեռքբերման համար իրավաբանական անձանցից պահանջվող ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող աուդիտորական եզրակացությունների:

16. Գրանցման և լիցենզավորման, համաձայնության և թույլտվության տրամադրման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների կայացման համար «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսվում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

17. Սույն կանոնակարգով սահմանված պետական գրանցման և լիցենզավորման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

18. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունների վերաբերյալ սույն կանոնակարգով պահանջվող հաշվետվությունները չեն ներկայացվում, եթե վերջիններս արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել կազմակերպության գրավոր համաձայնությունը այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով կիրառելու համար:

19. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացնի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

20. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և/կամ վերահսկողական նպատակներից ելնելով՝ կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

21. Կենտրոնական բանկի կողմից «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դիմումի (միջնորդագրի) քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով.

1) ***«Կենտրոնական բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***«Վարկային կազմակերպություն»***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող կամ գործող վարկային կազմակերպություն,
3) ***«Ղեկավար»***՝ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարկային կազմակերպության ղեկավար,
4) ***«Ֆինանսական վիճակի վատթարացման առկայություն կամ հնարավորություն»***՝ այնպիսի իրավիճակ, երբ.

ա. վարկային կազմակերպությունը խախտել է կամ խախտելու է հիմնական տնտեսական նորմատիվներից առնվազն մեկը և/կամ

բ. վարկային կազմակերպության մոտ հավանական է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով սահմանված անվճարունակության հիմքերի առաջացումը,

5) ***«Ֆինանսական խումբ (միություն)»***՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,
6) ***«Ֆինանսական հաշվետվություններ»***՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ,
7) ***«Ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ներդրումային ֆոնդ, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն (այսուհետ՝ Բյուրո), վճարահաշվարկային կազմակերպություն,

8) ***«Միջազգային վարկանշային գործակալություններ»***՝ Մուդիզ Ինվեստորս Սերվիս, Ստանդարտ և Փուրզ, Ֆիտչ Ռեյտինգս վարկանշային կազմակերպություններ,
9) ***«Անձնագրի տվյալներ»***՝ անձնագրի սերիան և անձնագրի համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալներ,
10) ***«Հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունները համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը), հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը,
11) ***«Հանձնաժողով»***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
12) ***«Գյուղական համայնք»***՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
13) ***«Բարձրագույն կրթություն ունեցող անձ»***՝ անձ, ով ավարտել է Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ստացել է Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական,
14) ***«Վարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար»***՝ անձ, ով առանց համապատասխան ղեկավարի պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները:

ԲԱԺԻՆ II. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

23. Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրների կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. հիմնադիրների դիմումը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի, ընդ որում դիմումի մեջ ներառվում է վարկային կազմակերպության գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի հավելված 2-ով սահմանված տիտղոսաթերթ,

գ. ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են՝ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ1» կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

դ. ղեկավարներին գրանցելու մասին վարկային կազմակերպության միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի, իսկ հիմնադրվող վարկային կազմակերպության ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 4-ի, որում ներառվում է նաև ղեկավարի վավերացված ստորագրության նմուշը,

ե. ստեղծվող վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց համար «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի բացակայության մասին հայտարարագիրը ներառվում է սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված դիմումում,

զ. վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի (հիմնադիրների ժողով) կողմից հաստատված վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը և տնտեսական ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի հավելված 5-ի,

2) ստեղծվող վարկային կազմակերպության ներքին իրավական այն ակտերը (դրանց նախագծերը), որոնց հողում է կատարվում ներկայացվող կանոնադրության նախագծում,

3) եթե կանոնադրական կապիտալի համալրման (իսկ դրանից հետո՝ կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացման) նպատակով վարկային կազմակերպությունը նախատեսում է հաշիվ բացել Կենտրոնական բանկում, ապա Կենտրոնական բանկ է ներկայացվում կուտակային հաշվի բացման դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6-ի, իսկ եթե կանոնադրական կապիտալի համալրման նպատակով հաշիվ է բացվել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում, ապա ներկայացվում է կանոնադրական կապիտալը համալրած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ,

4) ստեղծվող վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ համաձայն սույն կանոնակարգի 11-րդ գլխի,
5) պատշաճ կարգով տրված լիազորագիրը, եթե նախաձեռնող անձինք հանդես են գալիս լիազոր ներկայացուցչի (ներկայացուցիչների) միջոցով,
6) սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորությունը հավաստող փաստաթուղթ տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ պետական մարմնում գրանցված սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

24. Կենտրոնական բանկը Հանձնաժողովի եզրակացության հիման վրա գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե պահպանվել են հետևյալ պահանջները և ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը.

1) Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այլ բանկում բացված հաշվին ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը,
2) Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների (այսուհետ՝ Կենտրոնական բանկի վերահսկողների) և պատասխանատու այլ աշխատակիցների կողմից տեղերում ստուգման արդյունքում հաստատվել է, որ վարկային կազմակերպության գործունեության համար նախատեսված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված պահանջներին,
3) Վարկային կազմակերպության ղեկավարների որակավորումը և մասնագիտական համապատասխանությունը բավարարում են սույն կանոնակարգի 4-րդ բաժնով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության պահանջները, և առկա չէ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը,
4) Վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք ստացել են Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված կարգով:

25. Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ վարկային կազմակերպության ղեկավարների թեկնածուները (բացառությամբ՝ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի և խորհրդի անդամների թեկնածուների) պետք է հերթագրվեն՝ ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը մասնակցելու համար (համաձայն սույն կանոնակարգի 91-րդ կետի)՝ բացառությամբ սույն կանոնակարգի 72-րդ և 74-րդ կետերով նախատեսված դեպքերի, իսկ որակավորված լինելու դեպքում ներկայացնեն սույն կանոնակարգի 132-րդ կետի 1-ին ենթակետով պահանջվող տեղեկանքը:

26. Վարկային կազմակերպության պետական գրանցման վկայականը տրվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի, իսկ լիցենզիան՝ սույն կանոնակարգի Հավելված 8-ի՝ մեկական օրինակով:

27. Կենտրոնական բանկը վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

28. Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝

1) Ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,
2) Ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ թվում՝

ա. չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը,

բ. առկա չէ պատշաճ կարգով տրված լիազորագիր այն դեպքում, երբ հիմնադիրները հանդես են գալիս լիազորված ներկայացուցչի (ներկայացուցիչների) միջոցով,

գ. վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին, գործունեության կանոնակարգում ներկայացված տվյալներն անարժանահավատ են, կանոնակարգում կատարված էական կանխատեսումները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով անիրատեսական են,

դ. Վարկային կազմակերպության առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը կամ ներքին հսկողության համակարգը բավարար չեն վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար,

3) Չեն պահպանվել սույն կանոնակարգի 24-րդ կետում նշված պահանջները՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղ գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի, ընդ որում, միջնորդագրում ներառվում է վարկային կազմակերպության մասնաճյուղի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը:
2) Վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ստեղծման մասին,
3) Մասնաճյուղի հաստատված կանոնադրությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
4) Տարածքի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,
5) Սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, եթե սույն կետով սահմանված միջնորդագրում նշում չի կատարվել, որ դրանք կներկայացվեն միջնորդագրում նշված ժամկետում,
6) Մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,
7) Մասնաճյուղ ստեղծելու հիմնավորումը:

30. Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման վկայականը վարկային կազմակերպությանը տրամադրվում է գրանցման մասին որոշումն ընդունվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի:

31. Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի գրանցման դիմումը, եթե.

1) Ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ,
2) Փաստաթղթերը ներկայացվել են թերի, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ թվում՝

ա. Հայաստանի Հանրապետության տարածքում բացվող մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը չեն համապատասխանում սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված պահանջներին,

բ. չի ներկայացվել մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,

գ. մասնաճյուղի բացումը կհանգեցնի վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը,

3) Մասնաճյուղի գրանցման փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահի դրությամբ, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը:

ԳԼՈՒԽ 5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչություն գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում.

1) Վարկային կազմակերպության ներկայացուցչության գրանցման միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի, որը ներառում է ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

2) Վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին,
3) Ներկայացուցչության կանոնադրությունը: Կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
4) Տարածքի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

33. Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության ներկայացուցչության գրանցման վկայականը տրվում է գրանցման որոշումն ընդունվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի:

34. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ մերժվում է վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչության գրանցման միջնորդագիրը, եթե.

1) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ թվում՝

ա. Կենտրոնական բանկի կարծիքով ներկայացուցչության բացումը կհանգեցնի վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը,

բ. Կենտրոնական բանկի կարծիքով ներկայացուցչություն բացելու հիմնավորումները բավարար չեն,

3) միջնորդագրի տրման պահին, ինչպես նաև միջնորդագրի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը:

ԳԼՈՒԽ 6. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐԳԸ

35. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետություններում մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծելիս պետք է ստանան Կենտրոնական բանկի համաձայնությունը:

36. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետություններում մասնաճյուղեր ստեղծելիս սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Վարկային կազմակերպության միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի,
2) Ստեղծվող մասնաճյուղի կանոնադրությունը,
3) Վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ստեղծման մասին,
4) Սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթը, որով նա պարտավորվել է վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման և (կամ) լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորությունը հավաստող փաստաթուղթ տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ պետական մարմնում գրանցված սեփականության կամ վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
5) Վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին:

37. Կենտրոնական բանկը կարող է համաձայնություն չտալ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպության՝ օտարերկրյա պետություններում մասնաճյուղի ստեղծմանը՝ համաձայն սույն կանոնակարգի 31-րդ կետով նախատեսված հիմքերի:

38. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետություններում ներկայացուցչություններ ստեղծելիս սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Վարկային կազմակերպության միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,
2) Ներկայացուցչության հաստատված կանոնադրությունը,

3) Տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթը, որով նա պարտավորվել է վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման և (կամ) լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորությունը հավաստող փաստաթուղթ տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ պետական մարմնում գրանցված սեփականության կամ վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

39. Կենտրոնական բանկը կարող է համաձայնություն չտալ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպության՝ օտարերկրյա պետություններում ներկայացուցչության ստեղծմանը՝ համաձայն սույն կանոնակարգի 34-րդ կետով նախատեսված հիմքերի:

40. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններն օտարերկրյա պետություններում մասնաճյուղեր (կամ ներկայացուցչություններ) բացելիս, այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տվյալ պետությունում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ են ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ կցելով մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:

ԳԼՈՒԽ 7. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԻ (ԽՄԲԻ) ՓՈՓՈԽՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

41. Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման մասին որոշման ընդունման դեպքում վարկային կազմակերպությունը որոշման ընդունման պահից մեկշաբաթյա ժամկետում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու մասին միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,
2) վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի որոշումը՝ վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու մասին,
3) վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագիրը՝ հաստատված վարկային կազմակերպության բարձրագույն կառավարման մարմնի կողմից, որում պետք է արտացոլված լինեն նաև ծրագրով նախատեսված միջոցառումների, գործողությունների և ժամկետների տնտեսագիտական և կառավարչական հիմնավորումները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի,
4) վարկային կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի և եկամուտների ու ծախսերի վերաբերյալ հաշվետվության կանխատեսումները՝ կազմված վարկային կազմակերպության հայեցողությամբ շաբաթական, ամսական, եռամսյակային կտրվածքով՝ ըստ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նախատեսված միջոցառումների, գործողությունների և ժամկետների, իսկ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նախատեսված չլինելու դեպքում՝ առնվազն Կենտրոնական բանկի կողմից սույն կետում նշված միջնորդագրի համաձայնության վերաբերյալ որոշման ընդունման դեպքում կանոնադրության փոփոխությունները և պահանջվող այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու՝ վարկային կազմակերպության կողմից նշված վերջնաժամկետի դրությամբ,
5) վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալու նպատակով սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերն այն դեպքում, երբ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով վարկային կազմակերպությունը նախատեսում է փոփոխություններ կատարել իր նշանակալից մասնակիցների կազմում և (կամ) կառուցվածքում,
6) տեղեկանք վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու վերաբերյալ վարկային կազմակերպության պարտատերերի և պարտապանների համաձայնության (դիրքորոշման) առկայության վերաբերյալ (օրենսդրությամբ կամ պայմանագրով պահանջվելու դեպքերում և առկայության դեպքում), իսկ վարկային կազմակերպության պահանջի զիջման կամ պարտքի փոխանցման գործարք նախատեսելու դեպքում՝ տեղեկանք վարկային կազմակերպության պարտատերերի (պարտապանների) պահանջը զիջելու (պարտքը փոխանցելու) վերաբերյալ վարկային կազմակերպության պարտատերերի և պարտապանների համաձայնության (դիրքորոշման) վերաբերյալ (օրենսդրությամբ կամ պայմանագրով պահանջվելու դեպքերում և առկայության դեպքում): Սույն ենթակետում նշված տեղեկանքներում նշվում են պարտատիրոջ կամ պարտապանի անունը, ազգանունը կամ անվանումը, դիրքորոշումը, պահանջի (պարտավորության) տեսակը (հաշվեկշռային հոդվածը), ինչպես նաև պահանջի (պարտավորության) մնացորդը վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման մասին որոշման ընդունման օրվա վերջի դրությամբ: Անհրաժեշտության

դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել վարկային կազմակերպությունից ներկայացնել սույն ենթակետում նշված համաձայնությունը (դիրքորոշումը) հիմնավորող փաստաթղթերը: Կենտրոնական բանկի կողմից պահանջվելու դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն ենթակետում նշված համաձայնությունը (դիրքորոշումը) հիմնավորող փաստաթղթերը՝ պահանջը ներկայացվելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում:

42. Սույն կանոնակարգի 41-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագիրը պետք է լինի արժանահավատ, հիմնավորված լինի կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով, ծրագրում կատարված կանխատեսումները պետք է լինեն իրատեսական, ծրագրում պետք է ճիշտ գնահատվեն վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման հետևանքով վարկային կազմակերպության առջև ծառացող ռիսկերը և դրանց կառավարումը, վարկային կազմակերպությունն առաջնորդվելով սույն կետում նշված ծրագրում պետք է ապահովի վարկային կազմակերպության տվյալ տիպի (խմբի) համար սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները:

43. Սույն կանոնակարգի 41-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագրի 1-ին բաժինը կարող է ներառել միայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությունը՝ վարկային կազմակերպությունների տիպի (խմբի) հետևյալ փոփոխությունների դեպքում.

1) ունիվերսալ վարկային կազմակերպությունները խնայողական միության, վարկային միության կամ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության փոփոխվելու դեպքում,
2) ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող վարկային կազմակերպությունները կամ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունները խնայողական միության փոփոխվելու դեպքում,
3) վարկային միությունները խնայողական միության փոփոխվելու դեպքում:

44. Խնայողական միությունները, վարկային միությունները, ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող վարկային կազմակերպությունները կամ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունները ունիվերսալ վարկային կազմակերպության փոփոխվելու դեպքում, խնայողական միությունները վարկային միության փոփոխվելու դեպքում, ունիվերսալ վարկային կազմակերպությունները ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպության, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող վարկային կազմակերպության կամ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության փոփոխվելու դեպքում կարող են Կենտրոնական բանկ չներկայացնել սույն կանոնակարգի 41-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները:

45. Սույն կանոնակարգի 41-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո Կենտրոնական բանկը մեկամսյա ժամկետում որոշում է կայացնում վարկային կազմակերպության կողմից ներկայացված միջնորդագրին համաձայնություն տալու կամ միջնորդագիրը մերժելու մասին, որի վերաբերյալ ծանուցում է վարկային կազմակերպությանը: Վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման համար նշանակություն ունեցող փաստեր պարզաբանելու նպատակով սույն կետում նշված մեկամսյա ժամկետը Կենտրոնական բանկի որոշմամբ կարող է կասեցվել, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ և առավելագույնը երեք ամիս ժամկետով: Սույն կետում նշված մեկամսյա ժամկետում վարկային կազմակերպության միջնորդագրին համաձայնություն տալու կամ միջնորդագիրը մերժելու կամ միջնորդագրի քննության ժամկետը կասեցնելու վերաբերյալ չծանուցելու դեպքում միջնորդագրին՝ Կենտրոնական բանկի համաձայնությունը համարվում է տրված: Ընդ որում, Կենտրոնական բանկի կողմից միջնորդագրին տրված համաձայնությունն ուժի մեջ է մինչև կանոնադրության փոփոխությունները և սույն կանոնակարգով պահանջվող այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու՝ վարկային կազմակերպության կողմից նշված վերջնաժամկետը, և մինչև այդ վերջնաժամկետը վարկային կազմակերպության կողմից սույն կանոնակարգով պահանջվող այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկի համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

46. Այն դեպքում, երբ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով վարկային կազմակերպությունը նախատեսում է նոր նշանակալից մասնակիցների ներգրավում, ապա Կենտրոնական բանկի կողմից միջնորդագրին համաձայնություն տալը ենթադրում է նաև նշանակալից մասնակցությանը նախնական համաձայնության տրամադրում: Առանձին դեպքերում Կենտրոնական բանկը կարող է որոշել անձին և նրա հետ փոխկապակցված անձանց՝ վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնություն տալ, նույնիսկ, եթե Կենտրոնական բանկը մերժում է սույն կանոնակարգի 41-րդ կետով նշված վարկային կազմակերպության կողմից ներկայացված վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու միջնորդագիրը:

47. Սույն կանոնակարգի 45-րդ կետով սահմանված համաձայնությունը ստանալու դեպքում վարկային կազմակերպությունն իրականացնում է ներկայացված վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով սահմանված միջոցառումները և վարկային կազմակերպության տիպի (խմբի) լիցենզի-

այի վերածնակերպման նպատակով ոչ ուշ, քան սույն կանոնակարգի 41-րդ կետի 4-րդ ենթակետում նշված վերջնաժամկետը, Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման նպատակով լիցենզիայի վերածնակերպման դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի,
2) սույն կանոնակարգի 41-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նշված միջոցառումների իրականացումը հիմնավորող փաստաթղթերը՝ առկայության դեպքում (ակտիվների և/կամ պարտավորությունների փոխանցման պայմանագրերը կամ մարումը հիմնավորող փաստաթղթերը, վարկային կազմակերպության նոր կառուցվածքը և այլն),
3) ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ1» կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,
4) վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածքը՝ վարկային կազմակերպության կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
5) վարկային կազմակերպության փոփոխված կանոնադրությունը: Եթե փոփոխությունը վերաբերում է վարկային կազմակերպության այն ներքին իրավական ակտերին, որոնց հղում է կատարված կանոնադրության մեջ, ապա կից ներկայացվում են նաև համապատասխան ակտերը:
6) վարկային կազմակերպության նոր ղեկավարներ կամ ղեկավարների կազմում փոփոխություններ գրանցելու նպատակով (առկայության դեպքում) սույն կանոնակարգի 132-րդ կետով պահանջվող փաստաթղթերը,
7) տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին միջոցների առկայության վերաբերյալ (բացառությամբ այն դեպքի, երբ կանոնադրական կապիտալը համալրվում է միևչև կանոնադրական կապիտալի համալրման մասին վարկային կազմակերպության իրավասու մարմնի համապատասխան որոշում ընդունելու պահը վարկային կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին), ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման հայտարարագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության համար)՝ առկայության դեպքում: Ընդ որում, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը վարկային կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին կարող է համալրվել միայն Կենտրոնական բանկի ֆինանսական կազմակերպություններին վերահսկող ստորաբաժանման (այսուհետ՝ Ֆինանսական վերահսկողության վարչություն) դրա վերաբերյալ առարկության բացակայության դեպքում: Կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին կապիտալի համալրման վերաբերյալ Ֆինանսական վերահսկողության վարչության կարծիքը ստանալու համար վարկային կազմակերպությունը միևչև սույն կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը, Կենտրոնական բանկ է ներկայացնում կազմակերպության պասիվներում առկա այդ միջոցների առկայությունը հավաստող հիմնավոր փաստաթղթեր և համապատասխան այլ տեղեկություններ: Ֆինանսական վերահսկողության վարչությունը սույն մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ժամկետում, ուսումնասիրում է դրանք: Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարծիք տալու տասնհինգօրյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կասեցվել: Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից տասնհինգօրյա ժամկետում չառարկելու կամ այդ ժամկետը կասեցնելու մասին վարկային կազմակերպությանը չտեղեկացնելու դեպքում կազմակերպությունը կարող է պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին կանոնադրական կապիտալը համալրելու համար Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կետով սահմանված այլ փաստաթղթերը:
8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը (անդորրագրերը):

48. Վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման նպատակով լիցենզիայի վերածնակերպումն իրականացվում է Կենտրոնական բանկի որոշմամբ՝ վարկային կազմակերպության սույն կանոնակարգի 47-րդ կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում: Կենտրոնական բանկը կարող է մերժել վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման լիցենզիայի տրամադրումը, եթե.

1) ներկայացվել են թերի, ակնհայտ կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,
2) ներկայացված փաստաթղթերը հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին,
3) մերժվել է վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումն օրենքով սահմանված հիմքերով,

4) չեն կատարվել կամ թերի են կատարվել սույն կանոնակարգի 41-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նշված միջոցառումները,
5) չեն պահպանվել սույն կանոնակարգի 24-րդ կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետերով սահմանված պահանջները, իսկ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև 1-ին ենթակետով սահմանված պահանջը:

ԳԼՈՒԽ 8. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու (այդ թվում՝ ժամանակավորապես դադարեցնելու) դեպքում վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշման պատճենը՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու (այդ թվում՝ ժամանակավորապես դադարեցնելու) վերաբերյալ, ընդունման օրվանից հետո եռօրյա ժամկետում պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ:

50. Վարկային կազմակերպության մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցումից հանվում է մեկշաբաթյա ժամկետում:

ԳԼՈՒԽ 9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

51. Գրանցման վկայականը կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կրկնօրինակը ստանալու, ինչպես նաև գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կորստի մասին Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակելու համար: Գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար դիմումին կից ներկայացվում է գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում), գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը, եթե օրենսդրությամբ նախատեսված է պետական տուրքի վճարում:

52. Կենտրոնական բանկը վարկային կազմակերպությանը տրամադրում է կորած, ոչ պիտանի դարձած կամ ոչնչացված գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կրկնօրինակը՝ դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

53. Կորած գրանցման վկայականը կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան գտնելու դեպքում վարկային կազմակերպությունը գտնված գրանցման վկայականը կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

54. Գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կրկնօրինակի վերևի աջ անկողնում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

55. Գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում գրանցման վկայականի կամ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի նոր կրկնօրինակը տրամադրվում է սույն գլխով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 10. ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱՄ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

56. Վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված տարածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում կից գրությամբ Կենտրոնական բանկ են վերադարձվում համապատասխան գրանցման վկայականները:

57. Օրենքով սահմանված հիմքերով վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը կայացնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում վարկային կազմակերպությունը կից գրությամբ վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

58. Վարկային կազմակերպության լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում վարկային կազմակերպությունը կից գրությամբ վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության՝ Հայաստանի

Հանրապետության տարածքում գործող բոլոր տարածքային ստորաբաժանումների գրանցման, ինչպես նաև վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման վկայականները վերադարձնում է Կենտրոնական բանկ:

59. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, վարկային կազմակերպության լուծարային հաշվեկշիռը հաստատելու, տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարելու մասին Կենտրոնական բանկի որոշման բողոքարկումը հիմք չէ սահմանված ժամկետում համապատասխան լիցենզիան կամ գրանցման վկայականը չվերադարձնելու համար:

ԲԱԺԻՆ III. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 11. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

60. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան վարկային կազմակերպության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) իր կողմից վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի,
2) իր կանոնադրությունը (ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում),
3) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը տվյալ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,
4) իր վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իր գործունեության ողջ ժամկետի համար) ու վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 19-ի և Հավելված 20-ի:

61. Եթե իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 60-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունները) (ընդ որում, տվյալ խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում դրանք ներկայացվում են նրանցից որևէ մեկի կողմից)՝

ա. խմբի (միության) կառուցվածքը,

բ. խմբի (միության) վերջին երեք ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը:

62. Միջազգային կազմակերպությունները, իսկ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև միջազգային համբավ և (կամ) Միջազգային վարկանշային գործակալությունների կողմից «Ա-» («Ա3») կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունները վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն սույն կանոնակարգի 60-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 60-րդ կետի 5-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների):

63. Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպության՝ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման դեպքում Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 60-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 60-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող հաշվետվությունների, եթե բավարարված են սույն կանոնակարգի 18-րդ կետով սահմանված պահանջները:

64. Պետությունը նոր ստեղծվող կամ գործող վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան վարկային կազմակերպության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի,

2) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

65. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան վարկային կազմակերպության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) իր կողմից վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 22-ի,
2) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի, համապատասխանաբար, Հավելված 19-ի և Հավելված 20-ի:

ԳԼՈՒԽ 12. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

66. Եթե վարկային կազմակերպությունը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող էր հանգեցնել վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա վարկային կազմակերպությունը տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

67. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ նախատեսված չէ տվյալ որոշմամբ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում, կամ գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ուժը կորցրած է համարվում:

68. Այն դեպքում, երբ նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում միմյանց հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 11-րդ գլխում սահմանված փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

ԲԱԺԻՆ IV. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ԳԼՈՒԽ 13. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

69. Ղեկավարները պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացած որակավորում, ինչպես նաև բավարարեն սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցվեն Կենտրոնական բանկում:

70. Ղեկավարի թեկնածուն կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ մեկից ավելի ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայականներ ստանալու համար:

71. Սույն կանոնակարգով նախատեսված որակավորման վկայականներին հավասարեցվում են սույն կանոնակարգի 14-րդ գլխով նախատեսված որակավորումները, դիպլոմները կամ հավաստագրերը:

72. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան որակավորումը ստացած են համարվում և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն նաև սույն կանոնակարգի Հավելված 23-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 1 տարի աշխատած և գրանցման գործընթացում գտնվող այն ղեկավարների թեկնածուները, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և/կամ զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:

73. Սույն կանոնակարգով սահմանված վարկային կազմակերպության գործադիր տնօրենի որակավորման պահանջները և ընթացակարգերը տարածվում են նաև վարկային կազմակերպության լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների, ինչպես նաև վարկային կազմակերպության ադմինիստրացիայի ղեկավարի և լուծարային կառավարչի վրա:

ԳԼՈՒԽ 14. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԴԻՊԼՈՄՆԵՐԸ ԿԱՄ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

74. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով որակավորման վկայական է տրամադրվում որոշակի պաշտոնում գրանցված այն ղեկավարին, ով ունի սույն կետի աղյուսակում նշված տվյալ պաշտոնին համապատասխան որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր.

ՊԱՇՏՈՆ	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ, ԴԻՊԼՈՄ ԿԱՄ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ
1. Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, վարչության նախագահ, գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ	Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էֆ-Առ-էմ (FRM) կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ
3. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ

ԳԼՈՒԽ 15. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

75. Կենտրոնական բանկի խորհրդի նիստում հարցազրույցի միջոցով որակավորման ստուգումն անցնում են վարկային կազմակերպության խորհրդի անդամի պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները:

76. Հարցազրույցը (բացառությամբ՝ լրացուցիչ հարցազրույցի) իրականացվում է խորհրդի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման գործընթացում, որին խորհրդի անդամի մասնակցության համար վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի, և ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի:

77. Հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկը տեղեկացնում է թեկնածուին հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:

78. Հարցազրույցի ժամանակ ստուգվում են թեկնածուի գիտելիքները սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված՝ խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

79. Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված թեմաների շրջանակներում խորհրդի անդամի թեկնածուների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

80. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է վարկային կազմակերպության խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշում ընդունել նաև առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:

81. Խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում նշված անձը համարվում է խորհրդի անդամի որակավորում ստացած:

82. Խորհրդի անդամի որակավորումը տրվում է մինչև տվյալ վարկային կազմակերպությունում նրա պաշտոնավարման ժամկետի ավարտը:

83. Որակավորում ստացած խորհրդի նախագահը, խորհրդի նախագահի տեղակալը և խորհրդի անդամները իրենց գործունեության հետագա տարիների ընթացքում Կենտրոնական բանկի կողմից կարող են հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի Կենտրոնական բանկի խորհրդում՝ որակավորման ստուգման նպատակով:

84. Լրացուցիչ հարցազրույցն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված՝ վարկային կազմակերպության խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

85. Լրացուցիչ հարցազրույցը կարող է իրականացվել ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ, որի մասին վարկային կազմակերպությունը տեղեկացվում է առնվազն 30 օր առաջ:

86. Լրացուցիչ հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված թեմաների շրջանակներում խորհրդի անդամի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

87. Խորհրդի անդամի գիտելիքների անհամապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում, ինչպես նաև սույն գլխով սահմանված կարգով լրացուցիչ հարցազրույցին անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում այդ անձինք համարվում են որակավորում չունեցող:

ԳԼՈՒԽ 16. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

88. Ղեկավարի թեկնածուները՝ բացառությամբ խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի և խորհրդի անդամների, որակավորման ստուգումն անցնում են քննության միջոցով:

89. Քննությունն անցկացվում է Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կամ Կենտրոնական բանկի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից: Ընդ որում, Կենտրոնական բանկի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից անցկացվելու դեպքում քննության թեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

90. Քննությանը հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակին նախորդող ամսվա 10-ը:

91. Քննությանը մասնակցելու համար թեկնածուները պետք է նախապես հերթագրվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում մուտքագրելով հետևյալ տվյալները.

1) անուն, ազգանուն,
2) որակավորման տեսակ,
3) քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
4) հեռախոսահամար,
5) անձնագրի տվյալները,
6) էլեկտրոնային փոստի հասցեն:

92. Թեկնածուները քննությանը մասնակցում են՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) Պետական տուրքի վճարման անդորրագիրը,
3) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտը) կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք:

93. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:

94. Թեկնածուն մուտք գործելով քննության անցկացման սենյակ՝ ըստ ցուցակի հրավիրվում է համապատասխան համակարգչի մոտ: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

95. Քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով:

96. Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

97. Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից միանշանակ ճիշտ) պատասխան:

98. Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:

99. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից. մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

ԳԼՈՒԽ 17. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ

100. Թեկնածուները Կենտրոնական բանկում որակավորման ստուգումն անցնում են սույն կանոնակարգի Հավելված 24-ում ներկայացված աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում, «+» նշանը նշանակում է, որ տվյալ թեման վերաբերում է, իսկ «-» նշանը՝ չի վերաբերում:

101. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի Հավելված 24-ով սահմանված թեմաների ցանկի հիման վրա:

102. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումներն ու փոփոխությունները, հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ և ենթակա են հրապարակման: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:

103. Թեստերը տարբերակվում են ըստ որակավորման հետևյալ տեսակների.

Որակավորման տեսակ	Հարցերի քանակ
1. Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, վարչության նախագահ, գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ	100 հարց
2. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ	100 հարց
3. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ	100 հարց

104. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

105. Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում, Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Հայոց լեզվին չտիրապետող ղեկավարների թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել՝ Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության պետի թույլտվությամբ:

106. Թեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է չորս պատասխան, որոնցից մեկն է միանշանակ ճիշտ:

107. Թեստի հարցի միանշանակ ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

ԳԼՈՒԽ 18. ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

108. Թեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ.

1) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված,
2) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված:

109. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

110. Թեկնածուի՝ թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Հանձնաժողովը, որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

111. Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 25-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 19. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

112. Որակավորման վկայականները տրվում են ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, վարչության նախագահ, գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ
2) վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ,
3) վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

113. Սույն կանոնակարգի Հավելված 26-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է թեկնածուին՝ էլեկտրոնային եղանակով՝ ուղարկվելով թեկնածուի կողմից քննության մասնակցության հերթագրման ժամանակ ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին քննությունը հանձնելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

114. Սույն կանոնակարգի Հավելված 26-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 72-րդ կետի պահանջները բավարարող ղեկավարին՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

115. Սույն կանոնակարգի Հավելված 27-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 74-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

116. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 113-րդ, 114-րդ և 115-րդ կետերով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով անձը ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

117. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից) տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

118. Թեկնածուների որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 3 տարի ժամկետով, բացառությամբ սույն կանոնակարգի 72-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ, և սույն կանոնակարգի 74-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

ԳԼՈՒԽ 20. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

119. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահն ի պաշտոնե կարող է լինել տվյալ վարկային կազմակերպության տնօրենության (վարչության) անդամ՝ առանց տնօրենության (վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

120. Բանկի գործադիր տնօրենի, վարչության նախագահի, գործադիր տնօրենի տեղակալի, վարչության նախագահի տեղակալի, տնօրենության անդամի, վարչության անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, վարչության նախագահ, գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ:

121. Բանկի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ:

122. Բանկի ներքին աուդիտի ղեկավարի, ներքին աուդիտի անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

123. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ չեն կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից:

ԳԼՈՒԽ 21. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

124. Վարկային կազմակերպության ղեկավարը պետք է իրազեկ լինի ֆինանսական համակարգի՝ մասնավորապես վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև վարկային կազմակերպության տնտեսական ծրագրին և վարկային կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերին:

125. Անձը սույն կետում նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար պետք է բացի սույն կանոնակարգի 124-րդ կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չա-

փանիշներից, բավարարի նաև հետևյալ մասնագիտական համապատասխանության չափանիշները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 127-րդ կետով սահմանված դեպքերի.

ՊԱՇՏՈՆ	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ
1. Խորհրդի անդամ	1) Բարձրագույն կրթության առկայության դեպքում՝ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, 2) Բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 4 տարվա աշխատանքային փորձ:
2. Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, վարչության նախագահ, գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ	Բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 1 տարին՝ ղեկավար պաշտոնում:
3. Վարկային կազմակերպության, գլխավոր հաշվապահ գլխավոր հաշվապահի տեղակալ	Բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
4. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ	Բարձրագույն կրթություն և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
5. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամ	Բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ընդ որում, տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու վերստուգիչի համար՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում

126. Սույն գլխում նշված աշխատանքային փորձը վերաբերում է ղեկավարների գրանցման պահին նախորդող 10 տարիներին, բացառությամբ վարկային կազմակերպության խորհրդի անդամի համար նախատեսված աշխատանքային փորձի:

127. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 125-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և (կամ) բարձրագույն կրթություն, ապա վարկային կազմակերպությունն իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար ղեկավարի թեկնածուի մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովի դրական եզրակացությամբ ղեկավարի թեկնածուն համարվում է մասնագիտական համապատասխանության չափանիշները բավարարող:

128. Սույն կանոնակարգի 125-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպությունում աշխատանքային փորձ է համարվում տվյալ ֆինանսական կազմակերպությունում մասնագիտական գործունեության հետ կապված աշխատանքային փորձը:

ԳԼՈՒԽ 22. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

129. Վարկային կազմակերպության ղեկավարների գրանցումն իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ կամ բարդ: Ղեկավարների գրանցման ընթացակարգերի տեսակները, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 28-ով:

130. Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,

2) թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 140-րդ կետով սահմանված դեպքերի:

131. Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով,
2) թեկնածուի որակավորման առկայության ստուգում:

132. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին վարկային կազմակերպության միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի, և

ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի,

2) վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

133. Վարկային կազմակերպությունները պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

134. Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարները կամ ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ:

135. Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի համապատասխան որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 136-137-րդ կետերի առկայության հիմնավորմամբ վարկային կազմակերպությանը գրավոր կամ բանավոր եղանակով չի ծանուցում անձին բարդ ընթացակարգով գրանցելու մասին, որի դեպքում գործում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

136. Եթե վարկային կազմակերպության մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ վարկային կազմակերպությունում, Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 133-րդ կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում վարկային կազմակերպության բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

137. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և/կամ այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր վարկային կազմակերպության և/կամ ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

138. Սույն կանոնակարգի 135-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո վարկային կազմակերպության համապատասխան ղեկավարի գրանցումն իրականացվում է բարդ ընթացակարգով այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել վարկային կազմակերպության համապատասխան ղեկավարին պարզ ընթացակարգով գրանցելու հնարավորության մասին:

139. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում, ղեկավարների գրանցման օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 149-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Ընդ որում, կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

140. Վարկային կազմակերպության ղեկավարներին բարդ ընթացակարգով գրանցելիս՝ ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

141. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 4-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում վարկային կազմակերպությունը դիմում է Կենտրոնական բանկ՝ նույն անձին ղեկավար գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված տեղեկանքը Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն տեղեկանքի 1-ին և 2-րդ կետերի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

142. Վարկային կազմակերպությունը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

143. Վարկային կազմակերպության խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 81-րդ կետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը:

144. Վարկային կազմակերպության խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ որակավորման ստուգման և գրանցման ենթակա չէ, և վարկային

կազմակերպությունը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրվելու մասին համապատասխան փոփոխությունները տեղի ունենալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով համապատասխան գրություն, որտեղ նշվում են իրավասու մարմնի կողմից որոշման կայացման և փոփոխության իրականացման ամսաթվերը:

145. Անձի՝ որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե.

1) Առկա է «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերից որևէ մեկը,
2) Անձի կողմից ներկայացվել են թերի, անարժանահավատ փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 23. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

146. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից.

1) եթե ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,
2) եթե վարկային կազմակերպությունը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
3) եթե ի հայտ են եկել «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերը,
4) վարկային կազմակերպության լուծարային հանձնաժողովի նախագահի նշանակման պահից:

147. Վարկային կազմակերպության միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար վարկային կազմակերպությունը ղեկավարների կազմում փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

148. Եթե վարկային կազմակերպության ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար:

ԳԼՈՒԽ 24. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

149. Վարկային կազմակերպության ղեկավարների պաշտոնները կարող են զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարների կողմից և թափուր մնալ ոչ ավելի, քան 3 ամիս՝ սկսած վարկային կազմակերպության կողմից ղեկավարին պաշտոնից փաստացի ազատելու պահից:

150. Սույն կետի աղյուսակի համապատասխան պաշտոնների համար նշված ժամանակավոր պաշտոնակատարների վրա սույն կանոնակարգի 149-րդ կետով նշված եռամսյա ժամկետը չի տարածվում: Ընդ որում, եթե սույն կետում նշված դեպքերում ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պաշտոնավարում է երեք ամսից ավելի, ապա եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում բանկը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

ՊԱՇՏՈՆ	ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
1. Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, վարչության նախագահ	Տվյալ վարկային կազմակերպության գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, վարչության նախագահի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ
2. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ	Տվյալ վարկային կազմակերպության գրանցված գլխավոր հաշվապահի տեղակալ
3. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ	Տվյալ վարկային կազմակերպության գրանցված վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ

151. Վարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը կարող է չունենալ համապատասխան պաշտոնի համար նախատեսված որակավորում՝ բացառությամբ սույն կանոնակարգի 152-րդ և 153-րդ կետերով նախատեսված ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների:

152. Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող են լինել միայն տվյալ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալը, վարչության նախագահի տեղակալը, վարչության անդամը, տնօրենության անդամը:

153. Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել միայն տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ունեցող տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակիցը:

154. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել վարկային կազմակերպությունում այլ պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ վարկային կազմակերպության գրանցված վերստուգիչ հանձնաժողովի անդամների), ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

155. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել վարկային կազմակերպությունում այլ պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

156. Սույն կանոնակարգի 149-րդ կետում նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

157. Վարկային կազմակերպության խորհրդի նախագահի, խորհրդի նախագահի տեղակալի (տեղակալների) և խորհրդի անդամների ժամանակավոր պաշտոնակատարներ չեն նախատեսվում:

ԲԱԺԻՆ V. ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 25. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

158. Վարկային կազմակերպությունը և վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանումը պետք է ունենա վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, վարձակալության (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք:

159. Վարկային կազմակերպությունը և վարկային կազմակերպության մասնաճյուղը պետք է ունենա.

1) կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի և այլ արժեքների, գրավադրված և ի պահ ընդունված արժեքների պահպանության հիմնական վայրն է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու բանկ, վարկային կազմակերպություն կամ դրանց տարածքային ստորաբաժանում: Ընդ որում, վարկային կազմակերպությունը և (կամ) վարկային կազմակերպության մասնաճյուղը կանխիկ դրամը պահպանության կարող են հանձնել բացառապես բանկին, վարկային կազմակերպությանը կամ դրանց տարածքային ստորաբաժանումներին: Դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի հնկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը, և վարկային կազմակերպությունում կամ վարկային կազմակերպության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին և (կամ) պատին: Եթե վարկային կազմակերպության կամ վարկային կազմակերպության մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված է, որ վերջինս «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, ապա դրամարկղային հանգույցի առկայությունը պարտադիր չէ:

2) շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը

պետք է տեղադրված լինի ընկերության ամբողջ տարածքում և վարկային կազմակերպության գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, իսկ վարկային կազմակերպության մասնաճյուղերի համար՝ միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը կամ այլ համապատասխան կազմակերպությանը, ինչպես նաև վարկային կազմակերպության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ ըստ տարածքի մակերեսի: Շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին և պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե վարկային կազմակերպությունը կամ վարկային կազմակերպության մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգ ունեցող տարածքներում, ապա վարկային կազմակերպության կամ վարկային կազմակերպության մասնաճյուղի տարածքի շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

3) վարկային կազմակերպությունը և դրա մասնաճյուղերը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ: Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի գրանցվելուց հետո՝ մասնաճյուղի գրանցման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք չունեն գլխավոր հաշվապահ, համակարգչային ցանցը պետք է միացվի մասնաճյուղին վերջինիս գրանցման փաստաթղթերի ներկայացման պահին:

160. Նոր ստեղծվող վարկային կազմակերպությունը համարվում է սույն կանոնակարգի 158-րդ կետով սահմանված պահանջը բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, վարկային կազմակերպությունը սահմանված կարգով գրանցվելուց և լիցենզավորվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կենտրոնական բանկ է ներկայացնում տվյալ տարածքի նկատմամբ իր սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

161. Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղերը կարող են սույն կանոնակարգի 159-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն ունենալ Բանկերս Բլանկետ Բոնդ (Bankers-Blanket-Bond (այսուհետ՝ BBB)) ապահովագրության պայմանագիր առնվազն հետևյալ ռիսկերի գծով.

1) ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,
2) վարկային կազմակերպության գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում վարկային կազմակերպության տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

162. Սույն կանոնակարգի 161-րդ կետում նշված ռիսկերի գծով ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել վարկային կազմակերպության ակտիվների 1 տոկոսից:

163. «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա միջազգային վարկանշային կազմակերպություններից և Ա.Մ. Բեստ վարկանշային կազմակերպությունից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի «A-» («A3») վարկանիշներից:

164. Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է վարկային կազմակերպության տարածքում: Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում են այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի: Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղն իր տարածքից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշում է միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:

ԲԱԺԻՆ VI. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 26. ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

165. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում.

1) վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) կանոնադրություններում կատարված փոփոխությունները,
2) սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները:

166. Վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանումների կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար վարկային կազմակերպությունները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
2) վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
3) վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանման կանոնադրության փոփոխությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի հավելված 29-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
4) եթե կանոնադրության փոփոխությունն առաջացնում է լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև կից ներկայացվում է հին լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը և պետական տուրքի վճարման անդորրագիրը:

167. Եթե վարկային կազմակերպության կամ վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանման կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա սույն կանոնակարգի 166-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև գործունեության նոր տարածքի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը (ենթավարձակալության պայմանագրի դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը), ընդ որում, սույն կանոնակարգի 166-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջնորդագրում նշվում է վարկային կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված չափանիշներին, իսկ անհնարինության դեպքում՝ պարտավորագիր առ այն, որ գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կապահովվի դրանց համապատասխանությունը:

168. Վարկային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը ֆիրմային անվանման փոփոխությամբ պայմանավորված լինելու դեպքում, բացի սույն կանոնակարգի 166-րդ կետում նշված փաստաթղթերից, Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթեր՝ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ1» կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

169. Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում վարկային կազմակերպության փոփոխված կանոնադրության գրանցման համար վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 166-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի համալրման հաշվին միջոցների առկայության վերաբերյալ (բացառությամբ այն դեպքի, երբ կանոնադրական կապիտալը համալրվում է մինչև կանոնադրական կապիտալի համալրման մասին վարկային կազմակերպության իրավասու մարմնի համապատասխան որոշում ընդունելու պահը վարկային կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին), ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման հայտարարագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության համար): Ընդ որում, վարկային կազմակերպության կա-

նոնադրական կապիտալը վարկային կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին կարող է համալրվել միայն Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության՝ դրա վերաբերյալ առարկության բացակայության դեպքում: Վարկային կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին կապիտալի համալրման վերաբերյալ Ֆինանսական վերահսկողության վարչության կարծիքը ստանալու համար վարկային կազմակերպությունը մինչև սույն կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը, Կենտրոնական բանկ է ներկայացնում վարկային կազմակերպության պասիվներում առկա այդ միջոցների առկայությունը հավաստող հիմնավոր փաստաթղթեր և համապատասխան այլ տեղեկություններ: Ֆինանսական վերահսկողության վարչությունը սույն մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դրանք: Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարծիք տալու տասնհինգօրյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կասեցվել: Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից տասնհինգօրյա ժամկետում չառարկելու կամ այդ ժամկետը կասեցնելու մասին վարկային կազմակերպությանը չտեղեկացնելու դեպքում վարկային կազմակերպությունը կարող է պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին կանոնադրական կապիտալը համալրելու համար Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կետով սահմանված այլ փաստաթղթերը:

170. Վարկային կազմակերպության ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կանոնակարգի 22-րդ գլխով սահմանված կարգով:

171. Փոփոխությունները գրանցվում են, կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

172. Գրանցման վկայականի և (կամ) լիցենզիայի նոր օրինակը վարկային կազմակերպությանը տրամադրվում է կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 27. ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

173. Վարկային կազմակերպությունը լիցենզիա ստանալուց հետո սույն կետում նշված փոփոխությունները տեղի ունենալու դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փոփոխությունները.

1) վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող նոր ներքին իրավական ակտերի ընդունման կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխության դեպքում՝ նոր ընդունված ներքին իրավական ակտերը կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող ներքին իրավական ակտերը (վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը),
2) վարկային կազմակերպության՝ սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ այդ փոփոխությունների վերաբերյալ գրություն, որը պարունակում է հայտարարություն առ այն, որ փոփոխված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված չափանիշներին,
3) վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները,
4) վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կամ խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնանկության դեպքում՝ համապատասխան գրություն, որտեղ նշվում են կառավարման իրավասու մարմնի կողմից որոշման կայացման և փոփոխության իրականացման ամսաթվերը:

174. Վարկային կազմակերպությունը սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված տեղեկանքի 2.3-րդ, 3.6-րդ, 3.8-3.9-րդ, 4.1-րդ ենթակետերով կամ 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխության դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է այդ փոփոխությունները:

175. Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը Կենտրոնական բանկ են ներկայացնում տնտեսական ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել վարկային կազմակերպության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը: Ընդ որում, ծրագրին կից աղյուսակներում փոփոխություն կարող է կատարվել միայն մինչև հունիս ամսվա վերջին օրը: Նշված ժամանակահատվածից հետո փոփոխություն կարող է կատարվել միայն մակրոտնտեսական միջավայրի էական տատանումների (օրինակ՝ համախառն ներքին արդյունքի, գների, փոխարժեքի էական տատանումներ) դեպքում:

ԲԱԺԻՆ VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 28. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

176. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություններին թույլատրվում է իրենց գործունեության տարածքից դուրս իրականացնել վարկերի տրամադրման և (կամ) վարկերի հավաքագրման գործընթացներ՝ հետևյալ բոլոր պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

1) վարկերի տրամադրումը և (կամ) վարկերի հավաքագրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում,
2) վարկային կազմակերպությունից, վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանումից, այլ վարկային կազմակերպությունից կամ բանկից կանխիկ միջոցները գյուղական համայնքներ և գյուղական համայնքներից հետ տեղափոխումն իրականացվում է զինված ոստիկանի ուղեկցությամբ կամ ինկասատորի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա:
3) վարկային կազմակերպությունը գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին գյուղական համայնքում սույն կետով նշված գործունեությունը սկսելու կամ դադարեցնելու որոշման մասին՝ համապատասխան որոշումն ընդունելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, գյուղական համայնքում սույն կետով նշված գործունեությունը սկսելու մասին գրավոր ծանուցմանը կցվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ ինկասացիոն կազմակերպության հետ կնքված համապատասխան պայմանագրի պատճենները:
4) Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ ինկասացիոն կազմակերպության հետ կնքված սույն կետում նշված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո վարկային կազմակերպությունն անմիջապես երկարաձգում է կնքված պայմանագրի ժամկետը կամ կնքում է նոր պայմանագիր, ընդ որում վարկային կազմակերպությունը 15 օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում պայմանագրի ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթուղթը կամ նոր պայմանագիրը:
5) վարկային կազմակերպության աշխատակիցներից, զինված ոստիկանից կամ ինկասատորից կազմված մեկ խմբի մոտ առկա գումարն օրվա ընթացքում չի գերազանցում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

ԳԼՈՒԽ 29. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

177. Սույն կանոնակարգի 4-րդ կետն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 7-ին, իսկ մինչ այդ վարկային կազմակերպության ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի էֆ» ֆորմատով:

178. Սույն կանոնակարգի 125-րդ կետի աղյուսակի 5-րդ պարբերության պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գրանցված վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների վրա:

179. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ գործող վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը պարտավոր են բավարարել սույն կանոնակարգի 25-րդ գլխով սահմանված՝ գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջներին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ մինչ այդ պարտավոր են բավարարել հետևյալ պահանջներին.

1) Վարկային կազմակերպությունը կամ դրա տարածքային ստորաբաժանումը պետք է ունենա.

ա. վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք,

բ. կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված վարկային կազմակերպության մյուս տարածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի և այլ արժեքների, գրավադրված և ի պահ ընդունված արժեքների պահպանության հիմնական դրամապահոցն է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկա-

սացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ այլ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու այլ բանկ, վարկային կազմակերպություն կամ այլ բանկի, վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանում: Դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի հնկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը, և վարկային կազմակերպությունում կամ վարկային կազմակերպության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին կամ պատին: Եթե վարկային կազմակերպության կամ դրա մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված է, որ վերջինս «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, ապա դրամարկղային հանգույցի առկայությունը պարտադիր չէ:

գ. կանխիկ դրամով և (կամ) այլ արժեքներով գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունը և դրա մասնաճյուղը պետք է ունենան շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր: Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի համապատասխան կազմակերպությանը, իսկ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե վարկային կազմակերպությունը կամ վարկային կազմակերպության մասնաճյուղը գտնվում է ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգ ունեցող տարածքներում, ապա տարածքի շուրջօրյա ահազանգման համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

դ. վարկային կազմակերպությունը և դրա տարածքային ստորաբաժանումը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ: Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի հաշվառումից հետո՝ մասնաճյուղի հաշվառման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք չեն ունենա գլխավոր հաշվապահ՝ համակարգչային ցանցը պետք է միացված լինի մասնաճյուղին՝ վերջինիս հաշվառման փաստաթղթերի ներկայացման պահին:

2) Վարկային կազմակերպությունը կարող է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն ունենալ «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրության պայմանագիր հետևյալ ռիսկերի գծով.

ա. ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,

բ. վարկային կազմակերպության գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում՝ վարկային կազմակերպության տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

Նշված ռիսկերի գծով ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել վարկային կազմակերպության ակտիվների 1 տոկոսից:

Ընդ որում, «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝	ԲԲԲ-
Մուդիզի «Բաա» խմբի՝	Բաա3
Ա.Մ. Բեստի «Բ» խմբի՝	Բ+
Դաֆֆ և Ֆելփզի «ԲԲԲ» խմբի՝	ԲԲԲ-
Վեիսսի «Բ» խմբի՝	Բ-
Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝	ԲԲԲ-

3) Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է միայն իր դրամարկղում: Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը դրամարկղի ներսում փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի: Վարկային կազմակերպությունը, վարկային կազմակերպության մասնաճյուղը դրամարկղից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշում է միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:

Հավելված 1

«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպության գրանցման և լիցենզիա ստանալու դիմում

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Մենք (Ես)՝ _____

վարկային կազմակերպության անվանումը, տիպը (խումբը) և կազմակերպաիրավական ձևը

ստեղծումը նախաձեռնող ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել վարկային կազմակերպության պետական գրանցման և վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու մասին:

Խնդրում ենք (եմ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել վարկային կազմակերպությունը և տրամադրել վարկային կազմակերպության գործունեության իրականացման լիցենզիա:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք (եմ) վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝_____ էջ):

Ներկայացնում ենք ստեղծվող վարկային կազմակերպության կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. փոստի հասցե _____):

Փոստային հասցե _____

Հավաստիացնում ենք (եմ), որ _____ տարածքը

(կազմակերպության անվանումը)

և տեխնիկական հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

Պարտավորվում ենք, որ _____ տարածքը

(կազմակերպության անվանումը)

և տեխնիկական հագեցվածության չափանիշները լիցենզավորվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին և Կենտրոնական բանկ կներկայացվեն համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում կներկայացվի նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

Մենք (Ես)՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Վարկային կազմակերպության ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 2
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպության կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____
(վարկային կազմակերպության)
իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____թ. թիվ _____որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

Վարկային կազմակերպության (վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) պետական գրանցման համարը _____

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Վարկային կազմակերպության (վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

Հավելված 3
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____ գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____ :
(կազմակերպության անվանումը և ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշված անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Վարկային կազմակերպության կառավարման մարմնի իրավասու անձ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 4
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարի (պատասխանատու անձի) և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը

□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները

1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները
(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար Դուք պետք է հանդիսանաք)

1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)

1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ
- o բանկ
- o օտարերկրյա բանկի մասնաճյուղ
- o վարկային կազմակերպություն
- o ապահովագրական ընկերություն
- o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ
- o ապահովագրական բրոքեր
- o ներդրումային ընկերություն
- o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ
- o կարգավորվող շուկայի օպերատոր
- o Կենտրոնական դեպոզիտարիա
- o ֆոնդի կառավարիչ
- o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ
- o Բյուրո
- o վճարահաշվարկային կազմակերպություն

2. Ղեկավար պաշտոն

2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 կետում նշված կազմակերպությունում
- o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ),
- o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրենության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար)
- o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ
- o տնօրենության (վարչության, գործադիր մարմնի) անդամ
- o գլխավոր հաշվապահ
- o գլխավոր հաշվապահի տեղակալ
- o ներքին աուդիտի ղեկավար
- o ներքին աուդիտի անդամ
- o բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար
- o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
- o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահի (ղեկավարի) տեղակալ
- o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի անդամ
- o մասնաճյուղի կառավարիչ (գործադիր տնօրեն)
- o մասնաճյուղի գլխավոր հաշվապահ
- o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
- o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
- o օպերատորի վերահսկող ծառայության անդամ
- o ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ
- o պատասխանատու ակտուար
- o ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ
- o ֆոնդի պահառուի ղեկավար
- o ֆոնդի պահառուի աշխատակից
- o բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատող

2.2. Նշեք՝
- ○ Բանկի ներքին դիտարկումների ստորաբաժանման և պաշտոնի անվանումը, եթե հանդիսանում եք այդ ստորաբաժանման աշխատակից, կամ
- ○ Կիրառելի չէ, եթե չեք հանդիսանում ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:

2.3. Նկարագրեք Ձեր իրավասությունները ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

2.4. Նշեք, եթե հանդիսանում եք՝
- o կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում,

- o կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում,
- o պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում և իրականացում,
- o պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում:

3. Անձնական տվյալներ

3.1. Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝

- o արական
- o իգական

3.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4. Ծննդավայր

3.5. Քաղաքացիություն

3.6. Նշեք՝

- o Անձնագրի տվյալները
- o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
- o Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.7. Նշեք՝

- o Հանրային ծառայությունների համարանիշը
- o Կիրառելի չէ

3.8. Նշեք՝

- o Հաշվառման վայր
- o Փաստացի բնակության վայր

3.9. Նշեք հեռախոսահամար՝

3.10. Էլեկտրոնային փոստի հասցե

3.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները և դրանք կրելու ժամանակաշրջանները՝

Անուն, ազգանուն, հայրանուն	Կրելու ժամանակաշրջանի սկիզբ (օր/ամիս/տարի)	Կրելու ժամանակաշրջանի ավարտ (օր/ամիս/տարի)
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (____թ-ից մինչև ____թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

4.2. Ինչ լեզուների եք տիրապետում

- o հայերեն
- o անգլերեն
- o ռուսերեն
- o այլ (նշել լեզուն)

4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից. վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե

- Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:
ο Ոչ
ο Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.4. Արդյոք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ

5.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով:
ο Ոչ
ο Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1. Նշեք՝
- այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից:)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2. Նշեք՝

- այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն.

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝
«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,
- Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3. Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝
«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Անձնագրի տվյալները	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսահամար (բջջային և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

7.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1. Նշեք՝
Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց).

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսահամար (բջջային և այլն)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2. Նշեք՝
Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակց-վածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել.
- o Ոչ
- o Այո, ներկայացնել մանրամասները

10. Այլ փաստաթղթեր

10.1. Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.
Ծանոթացել եմ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթին
- o Այո
- o Ոչ

11.
Հավաստիացնում եմ, որ
1) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական,
2) բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը,

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

Հավելված 5
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը և տնտեսական ծրագիրը

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ
Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումները
Բաժին 3. Վարկային կազմակերպության ներքին կազմակերպական կառուցվածքը և կառավարման սկզբունքները
Բաժին 4. Վարկային կազմակերպության կողմից միջոցների ներգրավման և տեղաբաշխման գործիքները, մեթոդներն ու ընթացակարգերը
Բաժին 5. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն
Բաժին 6. Մրցակցության դիմակայելու մեթոդներ
Բաժին 7. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ
Բաժին 8. Հնարավոր ռիսկերի գնահատում
Բաժին 9. Խորհրդի կողմից կանոնակարգի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում
Բաժին 10. Այլընտրանքային կանոնակարգը (պարտադիր չէ. ներկայացվում է Կենտրոնական բանկի պահանջով)
Բաժին 11. Այլ դրույթներ
Ենթահավելվածներ և անհրաժեշտ կից տեղեկատվություն:

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

1. Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգի ընդհանուր դրույթներում նշվում են.
1) ստեղծվող վարկային կազմակերպության անվանումը, տիպը (խումբը) և գտնվելու վայրը,
2) հիմնադիրների (նախաձեռնող անձանց) կողմից վարկային կազմակերպության ստեղծման նախադրյալները,
3) վարկային կազմակերպության առաքելությունը,
4) վարկային կազմակերպության նպատակները,
5) վարկային կազմակերպության կազմակերպաիրավական տեսակը,
6) վարկային կազմակերպության մասնակիցների կազմը և մասնակցության չափը,
7) վարկային կազմակերպությունների ղեկավարների ցանկը:

Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումները

2. Այս բաժնում ներկայացվում են.
1) վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը և դրանց համառոտ նկարագիրը,
2) վարկային կազմակերպության շուկայում հնարավոր դերը, մասնաբաժինը, սպասարկման տարածքը,
3) վարկային կազմակերպության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց գործունեությունը, դրանց կազմակերպական կառուցվածքը, փոխկապվածության բնույթը, վարկային կազմակերպության և նրա հետ փոխկապակցված իրավաբանական անձանց հետագա փոխհարաբերությունները,
4) վարկային կազմակերպության և նրա փոխկապակցված անձանց գործարքները, եթե այդպիսիք նախատեսվում են,
5) վարկային կազմակերպության պոտենցիալ հաճախորդների բնութագիրը (օրինակ՝ վարկային կազմակերպության մասնակիցները, ֆերմերային տնտեսությունները, այլ) և ենթադրվող թիվը, խոշոր հաճախորդների անունները,
6) վարկային կազմակերպության նախատեսվող մասնաճյուղերի ցանցը, նրանց տեղակայվածությունը (միայն ՀՀ վարկային կազմակերպությունների համար),
7) միջոցների տեղաբաշխման նախատեսվող ուղիները, գործառնությունների տեսակները (ներդրումներ արժեթղթերում, տարբեր տեսակի վարկավորում և այլն), տալ դրանց բնութագիրը, միջոցների տեղաբաշխման պայմանները, գնահատել վարկային կազմակերպության մրցունակությունը միջոցների տեղաբաշխման տեսանկյունից,
8) վարկային կազմակերպության վարկավորման ծրագրերը (օրինակ՝ հիփոթեքային վարկավորման ծրագիր և այլն): Տեղեկացնել վարկային կազմակերպության ռիսկային վարկավորում (անբարեխիղճ վարկառուներ, բլանկային վարկերի տրամադրում, այլ) իրականացնելու մտադրության մասին, առկայության դեպքում նկարագրել գործընթացը:

Բաժին 3. Վարկային կազմակերպության ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ

3. Այս բաժնում.
1) ներկայացվում են վարկային կազմակերպության ներքին կազմակերպական կառուցվածքը (եթե այն նշված չէ վարկային կազմակերպության կանոնադրությունում), գործառնական համակարգը, կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, իրավասությունները, պարտականությունները, և դրանց միջև փոխհարաբերությունները, վարկային կազմակերպության ղեկավարների և աշխատակիցների քանակը,

2) հիմնավորվում է վերը նկարագրված կազմակերպական կառուցվածքը վարկային կազմակերպության կողմից սույն կանոնակարգի իրականացման տեսանկյունից,
3) ներկայացվում են վարկային կազմակերպության կառավարման մարմինները (մասնակիցների ընդհանուր ժողովը, խորհուրդը, գործադիր մարմինը, վարչությունը), դրանց միջև փոխհարաբերությունները, կառավարման մարմինների իրավասությունները և պարտականությունները (միայն ՀՀ վարկային կազմակերպությունների համար),
4) նշվում է կառավարման մարմինների մոտավոր կազմը,
5) նկարագրվում են վարկային կազմակերպության խորհրդի կողմից ստեղծվող կոմիտեների (օրինակ՝ ներդրումային, վարկային և այլն) գործունեությունը, դրանց իրավասությունները և պարտականությունները,
6) նկարագրվում են աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքները, էթիկական պահանջները,
7) նշվում են վարկային կազմակերպության գործադիր ղեկավարների և այլ աշխատակիցների աշխատավարձերը՝ ըստ հաստիքների,
8) նկարագրվում են վարկային կազմակերպության կառավարման և անձնակազմի աշխատանքների որակի բարձրացմանն ուղղված ծրագրերը, մասնավորապես՝ անձնակազմի վերապատրաստման և այլ ծրագրերը,
9) նկարագրվում է վարկային կազմակերպության ներքին հսկողության համակարգը (այդ թվում վարկային կազմակերպության ներսում տեղեկատվական հոսքերը՝ հաշվետվական համակարգը), կիրառվելիք հաշվապահական և վճարահաշվարկային համակարգերը,
10) Ներկայացվում է տեխնիկական վերազինման, վարկային տեխնոլոգիաների ներդրման միջոցառումների ծրագիրը,
11) նկարագրվում են ներքին աուդիտի գործառույթները. նկարագրությունում պետք է ամրագրված լինի այդ ստորաբաժանման անկախության ապահովման ուղիները, աուդիտի աշխատանքների շրջանակները և հաճախականությունը,
12) նկարագրվում են ներքին աուդիտի անձնակազմի նկատմամբ ներկայացվող պահանջները, կրթվածությունը և աշխատանքային փորձը,
13) նկարագրվում են այն բոլոր ընթացակարգերը և միջոցառումները, որոնք ուղղված են ապահովելու վարկային կազմակերպության գործունեության համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, ինչպես նաև վարկային կազմակերպության գործունեության կարգավորող ներքին ակտերի (քաղաքականություն, կարգեր և այլ) պահանջներին
14) նկարագրվում են վարկային կազմակերպության հաճախորդների բողոքներին արձանագրելու միջոցառումները,
15) նկարագրվում են անկախ աուդիտորական կազմակերպության ընտրման սկզբունքները:

Բաժին 4. Վարկային կազմակերպության կողմից միջոցների ներգրավման և տեղաբաշխման գործիքները, մեթոդներն ու ընթացակարգերը

4. Այս բաժնում ներկայացվում են.
1) փոխառությունների ներգրավման հիմնական աղբյուրները և մեթոդները, ներկայացնել փոխատվական կապիտալի շուկայում մրցակցության գնահատումը, դրան դիմակայելու մեթոդները,
2) միջոցների տեղաբաշխման նախատեսվող ուղիները, գործառնությունների տեսակները (ներդրումներ արժեթղթերում, տարբեր տեսակի վարկավորում և այլն), դրանց բնութագիրը, միջոցների տեղաբաշխման պայմանները,
3) վարկային կազմակերպության վարկավորման ծրագրերը (օրինակ՝ հիփոթեքային վարկավորման ծրագիր և այլն),
4) վարկային կազմակերպության կողմից միջոցների ներգրավման և տեղաբաշխման ընթացակարգերը, որոնք պետք է ներառեն՝
   ա. պարտապանի (փոխառուի, վարկառուի, լիզինգառուի, ֆակտորինգի պայմանագրով հաճախորդի, այլ) վարկարժանության գնահատման, պարտքի տրամադրման, սպասարկման, մոնիտորինգի, վերահսկման և մարման կարգն ու պայմանները,
   բ. ֆինանսական գործառնությունների համար անհրաժեշտ հայտերի, պայմանագրերի և գործունեության ընթացքում պարբերաբար օգտագործվող այլ փաստաթղթերի օրինակելի ձևեր,
5) վարկային կազմակերպության գովազդային ռազմավարությունը (գովազդելու հաճախականությունը, տեսակները և այլն), որն ուղղված է նպատակային շուկան գրավելուն, ապրանքանիշի ստեղծմանը և այլն,
6) անհրաժեշտ մարկետինգային ծախսերը նպատակային շուկան գրավելու համար:

Բաժին 5. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն

5. Կանխատեսվող շուկաների վերլուծությունը պետք է հիմնված լինի թվային շարքերի և այլ փաստացի ցուցանիշների վրա: Տեղեկատվության աղբյուրները, տնտեսական, մրցակցային և այլ բնույթի ենթադրությունների և կանխատեսումների հիմքերը և նախապայմանները նույնպես պետք է նշվեն ծրագրում: Այս բաժնում նկարագրվում են.
1) ֆինանսական այն շուկաները (նպատակային շուկաները), որոնցում վարկային կազմակերպությունը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը, մասնավորապես.
   ա. շուկաների տնտեսական բնութագիրը (նրա ծավալները, ոլորտի եկամտաբերությունը և այլն), հեռանկարային զարգացման միտումները,
   բ. շուկաներում վարկային կազմակերպության գործարար ակտիվության կանխատեսումը, դրա որակական և քանակական գնահատումը,

գ. շուկայի տարածքային ընդգրկվածությունը,
դ. վարկային կազմակերպության կողմից շուկայում նոր տիպի գործիքների կիրառման, ծառայությունների ներդրման հնարավորությունները (եթե նախատեսվում է):

2) վարկային կազմակերպության նպատակային շուկաների և կանխատեսվող հաճախորդների կախվածությունը տնտեսության այլ ճյուղերից, այդ ճյուղերի զարգացման միտումները,
3) երեք տարվա կտրվածքով տնտեսական միջավայրի փոփոխման կանխատեսումները, մասնավորապես՝ սղաճ, գործազրկություն, տոկոսադրույքների մակարդակը, ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունը: Կանոնակարգը պետք է ներառի տնտեսական միջավայրի փոփոխման առավել հավանական սցենարները և գնահատի հնարավոր տնտեսական անկումները, դրանց ազդեցությունը վարկային կազմակերպության վրա,
4) տնտեսության մեջ հնարավոր փոփոխությունները ինչպես կարող են ազդել վարկային կազմակերպության նպատակային շուկաների վրա, ինչպես նաև վարկային կազմակերպության կողմից իրականացվող գործառույթների և մատուցվող ծառայությունների վրա:

Բաժին 6. Մրցակցությանը դիմակայելու մեթոդներ

6. Այս բաժնում.
1) համեմատվում են նպատակային շուկայում(-ներում) վարկային կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունները և մարքեթինգային ռազմավարությունը այդ շուկայում վարկային կազմակերպության հիմնական մրցակիցների հետ,
2) նկարագրվում են վարկային կազմակերպության հիմնական մրցակիցների նկատմամբ վարկային կազմակերպության հարաբերական առավելությունները և թերությունները (օրինակ՝ գնային քաղաքականություն, համբավ, շուկայի մասնաբաժին և այլն), հիմնավորել վարկային կազմակերպության մրցունակությունը,
3) նկարագրվում են մրցակցությանը դիմակայելու մեթոդները,
4) ներկայացվում են նպատակային շուկայում վարկային կազմակերպության պոտենցիալ մրցակիցները:

Բաժին 7. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ

7. Այս բաժնում.
1) նկարագրվում են վարկային կազմակերպության կապիտալի նպատակային մեծությունը և կառուցվածքը, դրանց հասնելու ուղիները, ինչպես նաև նորմատիվային կապիտալի պահանջների բավարարման հետ կապված ծրագրերը,
2) նկարագրվում է վարկային կազմակերպության կապիտալիզացիայի ռազմավարությունը (ներառյալ՝ ընդհանուր կապիտալի նախատեսվող մեծության ապահովումը արտաքին և ներքին աղբյուրների հաշվին, կապիտալի համարժեքության ապահովմանն ուղղվող հիմնական միջոցառումները),
3) նկարագրվում են եկամտաբերության նախանշված մակարդակը, ակտիվների եկամտաբերության, զուտ տոկոսային մարժայի կամ շահութաբերության այլ չափանիշներին հասնելու ռազմավարությունները,
4) ներկայացվում են եկամուտների և ծախսերի կանխատեսումներն առաջին երեք տարիների համար՝ հիմնված շուկայի վերլուծության արդյունքների վրա (Կանոնակարգ 13-ի Հավելված 5, ձև 3),
5) ֆինանսական կանխատեսումներից ելնելով՝ գնահատվում է ներքին և արտաքին ռիսկերի ազդեցությունը կապիտալի համարժեքության վրա,
6) նկարագրվում է շահաբաժինների բաշխման վերաբերյալ քաղաքականությունը:

Բաժին 8. Հնարավոր ռիսկերի գնահատում

8. Վարկային ռիսկ
1) ներկայացնել վարկային կազմակերպության վարկային պորտֆելի մոտավոր նկարագիրը (օրինակ՝ ճյուղային և ժամկետային կառուցվածքը, այլ), վարկային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, գնահատել ռիսկի ընդունելու մակարդակը,
2) նկարագրել վարկային կազմակերպության վարկերի գնահատման ծրագրերը, մասնավորապես անձնակազմի անաչառության և հմտության ապահովման տեսանկյունից,
3) նկարագրել վարկային պորտֆելի որակի ստուգման գործընթացը, հաճախականությունը և շրջանակները,
4) նկարագրել վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման հիմնական սկզբունքները,
5) նկարագրել վարկառուի վարկունակության գնահատման մեթոդաբանությունը:

9. Իրացվելիության ռիսկ
1) նկարագրել վարկային կազմակերպության իրացվելիության (ակտիվների և պասիվների կառավարման) ռազմավարությունը,
2) նկարագրել վարկային կազմակերպության իրացվելիության ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, գնահատել ռիսկի ընդունելի մակարդակը,
3) նկարագրել նախատեսվող ակտիվների ու պարտավորությունների կառուցվածքը՝ ըստ ժամկետայնության,
4) ներկայացնել ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետայնության ճեղքվածքի կառավարման մեթոդները:

10. Շուկայական ռիսկ
1) նկարագրել ներդրումային (ինվեստիցիոն) քաղաքականության հիմնական ուղղությունները (պետական և ոչ պետական արժեթղթերում, պարտատոմսերում և այլն), շուկայական ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, գնահատել ռիսկի ընդունելի մակարդակը,

2) նկարագրել արտարժութային գործառնությունները, արտարժութային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, գնահատել ռիսկի ընդունելի մակարդակը,
3) նկարագրել վարկային կազմակերպության շուկայական ռիսկի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների պորտֆելը և քննարկել գների հնարավոր փոփոխությունների ազդեցությունը եկամտաբերության, կապիտալի և պորտֆելի զուտ արժեքի վրա,
4) նկարագրել վարկային կազմակերպության կողմից հեջավորման գործիքների կիրառումը (օրինակ՝ ֆյուչերս, օպցիոն, տոկոսադրույքի սվոպ և այլն):
11. Սույն բաժնում նկարագրվում են նաև բանկի համար կարևոր այլ ռիսկերը:

Բաժին 9. Խորհրդի կողմից տնտեսական ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում

12. Այս բաժնում նկարագրվում է.
1) վարկային կազմակերպության խորհրդի կողմից կանոնակարգի իրագործմանը հետևելու գործընթացը,
2) վարկային կազմակերպության խորհրդի կողմից կանոնակարգում փոփոխություններ կատարելու կարգը:

Բաժին 10. Այլընտրանքային կանոնակարգը (պարտադիր չէ. ներկայացվում է Կենտրոնական բանկի պահանջով)

13. Այլընտրանքային կանոնակարգը պետք է նկարագրի վարկային կազմակերպության գործողությունները շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխության դեպքում: Այլընտրանքային կանոնակարգը պետք է ընդգրկի ռիսկերի կառավարման առավել խիստ գործընթացներ: Կանոնակարգը պետք է ներառի ապագայում անհրաժեշտության դեպքում վարկային կազմակերպության կապիտալի մեծացման վերաբերյալ մոտեցումներ, ինչպես նաև վարկային կազմակերպության արտակարգ իրավիճակների համար պահուստների ձևավորման և օգտագործման կարգը: Կանոնակարգում պետք է նկարագրված լինի անսպասելի կորուստների առաջացման դեպքում վարկային կազմակերպության ֆինանսական պաշտպանվածության ապահովման ուղիները:

Բաժին 11. Այլ դրույթներ

14. Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը պետք է վերանայվի միջավայրի փոփոխություններին համարժեք,

15. Տեղեկությունները, որոնց վերաբերյալ սույն կանոնակարգով պահանջվող ձևեր սահմանված չեն, կարող են ներկայացվել ազատ ոճով,

16. Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը կարող է պարունակել նաև այնպիսի տեղեկություն, որը չի պահանջվում սույն կանոնակարգով, սակայն կարևորվում է նախաձեռնող անձանց կողմից (օրինակ՝ հնարավոր ռիսկերի վերլուծություն և գնահատում, այլ):

Ենթահավելվածներ և անհրաժեշտ կից տեղեկատվություն (այդ թվում՝ ձև 1, ձև 2, ձև 3):

17. Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգին կցվում են.
1) վարկային կազմակերպության կապիտալի հաշվարկը առաջիկա երեք ֆինանսական տարվա համար (Կանոնակարգ 13-ի Հավելված 5, ձև 1),
2) հաշվեկշռի հաշվարկային նախագծերը գործունեության առաջին երեք ֆինանսական տարիների համար (Կանոնակարգ 13-ի Հավելված 5, ձև 2),
3) եկամուտների և ծախսերի կանխատեսումներն առաջին երեք տարիների համար (Կանոնակարգ 13-ի Հավելված 5, ձև 3),
4) վարկային կազմակերպության առաջարկվող ղեկավարների (այդ թվում տարածքային ստորաբաժանումների և վարչությունների պետերի) ցուցակը, կրճատ կենսագրական տվյալներ,
5) հայտարարագիր վարկային կազմակերպության ապագա ղեկավարների և նրանց հետ փոխկապակցված անձանց ստանձնած բոլոր ֆինանսական և գույքային պարտավորությունների, այդ թվում՝ ժամկետանց և վերածևակերպված պարտավորությունների վերաբերյալ:

Կանոնակարգ 13-ի
Հավելված 5
Ձև 1

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԸ
(կանխատեսումը)

(հզ. դրամ)

ԿԱՊԻՏԱԼ	Առաջիկա տարիներ		
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
Հիմնական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ			
Գլխավոր պահուստ			
Չբաշխված շահույթ			
Ընդամենը՝ հիմնական կապիտալ			
Լրացուցիչ կապիտալ			
Վերագնահատման պահուստներ			
Հաշվեկշռի կոնսոլիդացիայի ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ			
Այլ պահուստներ			
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ			
Ընդամենը՝ լրացուցիչ կապիտալ			
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ (հիմնական կապիտալ + լրացուցիչ կապիտալ)			
Որակական գնահատականներ			
1. Հարաբերակցությունն ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև (%)			
2. Հարաբերակցությունն ընդհանուր կապիտալի և ներգրավված միջոցների միջև			

Կանոնակարգ 13-ի
Հավելված 5
Ձև 2

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	Առաջիկա տարիներ		
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր			
Բանկային հաշիվներ			
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակերպությունների նկատմամբ			
Ռեպո համաձայնագրեր և արժութային սվոպ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
Հաճախորդներին տրված վարկեր (փոխատվություններ)			
Այլ գործառնություններ և դրանց գծով ստացվելիք գումարներ, այդ թվում՝			
երաշխիքներ			
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ			
ստացվելիք շահաբաժիններ			
հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ			
հետաձգված ածանցյալ գործիքներ			
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ			
Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում			
Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում			
Ոչ նյութական ակտիվներ (հանած մաշվածքը և արժեզրկումը)			
Հիմնական միջոցներ (հանած մաշվածքը և արժեզրկումը)			
Այլ ակտիվներ			
Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ			
Ընդամենը՝ ակտիվներ			
ՊԱՍԻՎՆԵՐ			
Պարտավորություններ			
Բանկերից ներգրավված փոխառություններ և ստացված վարկեր			
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառություններ և ստացված վարկեր			
Պարտավորություններ այլ փոխատուների նկատմամբ			
Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ պետությունների կառավարությունների նկատմամբ			
Այլ վճարվելիք գումարներ			

Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով			
Կրեդիտորական պարտքեր			
Ակտիվներին վերաբերող շնորհներ			
Պահուստներ			
Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր			
Այլ պարտավորություններ			
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ			
Գլխավոր պահուստ			
Վերագնահատման պահուստներ			
Հետ գնված կապիտալ			
Չբաշխված շահույթ			
Ընդամենը՝ պասիվներ			

Կանոնակարգ 13-ի
Հավելված 5
Չև 3

Եկամուտների և ծախսերի նախահաշվարկներ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

		Առաջիկա տարիներ		
		1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
1.	**Տոկոսային եկամուտներ**	x	x	x
1.1.	Բանկային հաշիվներից			
1.2.	Առևտրային բանկերում տեղաբաշխված միջոցներից			
1.3.	Այլ Ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից			
1.4.	Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրված վարկերից (փոխատվություններից)			
1.5.	Իրավաբանական անձանց և հիմնարկներին տրված վարկերից (փոխատվություններից)			
1.6.	Վարկային քարտերից			
1.7.	Վարկային կազմակերպության աշխատակիցներին տրամադրված միջոցներից			
1.8.	Վարկային կազմակերպության հետ կապված անձանց մոտ տեղաբաշխված միջոցներից՝ բանկային հաշիվներից, ավանդներից, վարկերից և այլ փոխառություններից			
1.9.	Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ, այդ թվում՝ հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերից			
1.10.	Արժութային սվոպից և ռեպո համաձայնագրերից			
1.11.	Ֆինանսական վարձակալությունից			
1.12.	Ֆակտորինգից			
1.13.	Այլ արժեթղթերից			
1.14.	Այլ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը տոկոսային եկամուտներ				
2.	**Տոկոսային ծախսեր**	x	x	x
2.1.	Առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերի և փոխառությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.2.	Արժութային սվոպի և ռեպո համաձայնագրերի դիմաց			
2.3.	Հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց			
2.4.	Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ պետությունների կառավարությունների նկատմամբ պարտավորությունների դիմաց			
2.5.	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց			
2.6.	Օվերդրաֆտների դիմաց			
2.7.	Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի գծով			
2.8.	ֆինանսական վարձակալության դիմաց			
2.9.	Ստորադաս փոխառությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.10.	Այլ պարտավորությունների դիմաց			
Ընդամենը տոկոսային ծախս				
Զուտ տոկոսային եկամուտներ				
3.	**Ոչ տոկոսային եկամուտներ**	x	x	x
3.1.	Ստացված միջնորդավճարներ			
3.2.	Երաշխիքներից, հոժարագրերով, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ			
3.3.	Սծանցյալ գործիքներից զուտ եկամուտներ			
3.4.	Ֆակտորինգից ստացված զուտ եկամուտներ			
3.5.	Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ			
3.6.	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.7.	Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից զուտ եկամուտներ			
3.8.	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.9.	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն			
3.10.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ			

3.11.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			
3.12.	Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			
3.13.	Արտասովոր եկամուտներ			
3.14.	Ստացված տույժեր, տուգանքներ			
3.15.	Այլ ոչ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ				
4.	**Ոչ տոկոսային ծախսեր**	x	x	x
4.1.	Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ			
4.2.	Գործուղման ծախսեր			
4.3.	Հատկացումներ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության հիմնադրամին			
4.4.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ			
4.5.	Ամորտիզացիոն մասհանումներ			
4.6.	Շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար			
4.7.	Շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության ապահովման ծախսեր			
4.8.	Վարկերի տրամադրման և վերադարձման ծախսեր			
4.9.	Գովազդային, ներկայացուցչական ծախսեր			
4.10.	Գրասենյակային և տպագրական ծախսեր			
4.11.	Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր			
4.12.	Համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր			
4.13.	Տրանսպորտային ծախսեր			
4.14.	Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր			
4.15	Վճարված տույժեր, տուգանքներ			
4.16.	Ուսուցման, վերապատրաստման ծախսեր			
4.17.	Ապահովագրության գծով ծախսեր			
4.18.	Այլ ոչ տոկոսային ծախսեր			
Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր				
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ				
5.	**Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին**	x	x	x
5.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին			
5.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին			
5.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին			
5.4.	Երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստին			
Ընդամենը հատկացումներ				
6.	**Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների վերադարձ**			
6.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից	x	x	x
6.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից			
6.3.	Երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստից			
6.4.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստից			
Զուտ մասհանումներ				
Շահույթ՝ մինչև հարկվելը				
Շահութահարկ				
Զուտ շահույթ				
Հաշվարկված շահաբաժիններ				
այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով				
	սովորական բաժնետոմսերի գծով			
Չբաշխված շահույթ				

Հավելված 6
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ԴԻՄՈՒՄ
ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) լրիվ անվանումը)
համար բացել կուտակային հաշիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնելու համար:

Վճարման հանձնարարական տալու իրավունք ունի (ունեն).

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

Խնդրում ենք Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման կամ գրանցման և լիցենզավորման մերժման, կանոնադրության փոփոխության գրանցման կամ գրանցման մերժման դեպքում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին առկա միջոցները փոխանցել հետևյալ հաշվին

_____
(բանկի անվանում, հաշվեհամար)

_____
(դիմումատուի հայեցողությամբ այլ նշումներ)

Իրավասու անձ (անձինք).

_____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ 20__ թ.

Հավելված 7
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը»
կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի
_____ թվականի թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____
(անվանումը, տիպը (խումբը, կազմակերպաիրավական ձևը)

_____ վարկային կազմակերպությանը

Գտնվելու վայրը _____

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 8
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը»
կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

«__» _____ 20__ թ.

Վարկային կազմակերպության լիցենզիա թիվ _____

Սույն լիցենզիան տրվում է _____
(վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումը)

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Պետական գրանցման համարը _____

Հավելված 9
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

Հարգելի _____

_____
(վարկային կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում _____
(մասնաճյուղի անվանում)

անվանմամբ մասնաճյուղ բացելու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել վարկային կազմակերպության _____ մասնաճյուղը:
(մասնաճյուղի անվանումը)

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ _____ էջ:

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը
(մասնաճյուղի անվանումը)

և տեխնիկական հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

☐ Պարտավորվում ենք, որ _____ տարածքը
(մասնաճյուղի անվանումը)

և տեխնիկական հագեցվածության չափանիշները գրանցվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին, և Կենտրոնական բանկ կներկայացվեն համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը
_____

«____» _____ 20___ թ.

Հավելված 10
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
---- թվականի թիվ --- որոշմամբ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ ---

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է _____ վարկային կազմակերպության
(վարկային կազմակերպության անվանումը)
_____ մասնաճյուղին:
(մասնաճյուղի անվանումը)

Գործունեության վայրը _____

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____ _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

Ք. ԵՐԵՎԱՆ

«__» _____ 20__ թ.

Հավելված 11
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

Հարգելի _____

_____
(վարկային կազմակերպության լրիվ անվանումը)
որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում _____
(ներկայացուցչության անվանումը)
անվանմամբ ներկայացուցչություն բացելու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել վարկային կազմակերպության _____ ներկայացուցչությունը:
(ներկայացուցչության անվանումը)

Ներկայացուցչություն բացելու հիմնավորումները
_____
_____
_____

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք վարկային կազմակերպության ներկայացուցչության գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ —- էջ:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 12
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
---- թվականի թիվ --- որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ ---

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է
_____ վարկային կազմակերպության

_____ ներկայացուցչությանը:

Գործունեության վայրը _____
(վարկային կազմակերպության ներկայացուցչության հասցեն)

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

«__» _____ 20__ թ.

Հավելված 13
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(վարկային կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել _____ _____
(պետության անունը) *(մասնաճյուղի անվանումը)*

անվանմամբ մասնաճյուղ բացելու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վարկային կազմակերպության _____
(մասնաճյուղի անվանումը)

մասնաճյուղը բացելու համաձայնություն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք վարկային կազմակերպության մասնաճյուղի բացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ —- էջ:

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը
(մասնաճյուղի անվանումը)

և տեխնիկական հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

☐ Պարտավորվում ենք, որ _____ տարածքը
(մասնաճյուղի անվանումը)

և տեխնիկական հագեցվածության չափանիշները գրանցվելուց (լիցենզավորվելուց) հետո __ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին, և Կենտրոնական բանկ կներկայացվեն համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Վարկային կազմակերպության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 14
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(վարկային կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել _____ _____
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

Դ Ի Մ Ու Մ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Ես _____,
(անուն, ազգանուն (հանրային ծառայությունների համարանիշը և անձնագրի տվյալները)
_____ թվականին մասնակցել եմ _____
(քննության անցկացման օր/ամիս/տարի) *(որակավորման տեսակը)*

պաշտոնի համար նախատեսված որակավորման ստուգման քննությանը:

_____
_____
_____
(բողոքարկման պատճառ հանդիսացած խնդրահարույց հարցի նկարագրությունը)

Դիմող _____

_____
(հեռախոսահամար, էլ. փոստի հասցե)

_____
(ստորագրություն)

«__» _____ 20__ թ.

Հավելված 26
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____-ին _____
Անուն, ազգանուն *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

վարկային կազմակերպության _____
պաշտոնի կամ պաշտոնների անվանումը

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև՝

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ՝ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 27
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ԴԻՄԵՐԵՍ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____-ին _____
(անուն, ազգանուն) *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

վարկային կազմակերպության _____
պաշտոնի կամ պաշտոնների անվանումը
պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ՝ _____

«__» _____ 20__ թ.

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող միջազգային որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում են վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտել է միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ միջազգային որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը այլևս վկայագրի տրման հիմք չեն:

Հավելված 28
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը»
կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցման ընթացակարգի տեսակները	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
1.	*Վարկային կազմակերպության ղեկավար, այդ թվում՝*	
1.	Խորհրդի նախագահ	Բ
2.	Խորհրդի անդամներ	Բ
3.	Խորհրդի նախագահիի տեղակալ	Բ
4.	Գործադիր տնօրեն	Բ
5.	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
6.	Տնօրենության (վարչության) նախագահ	Բ
7.	Տնօրենության (վարչության) նախագահիի տեղակալ	Բ
8.	Տնօրենության (վարչության) անդամ	Բ
9.	Գլխավոր հաշվապահ	Բ
10.	Գլխավոր հաշվապահիի տեղակալ	Բ
11.	Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ	Բ
12.	Վերստուգիչ հանձնաժողովի նախագահիի տեղակալ	Պ
13.	Վերստուգիչ հանձնաժողովի անդամ	Պ

Հավելված 29
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը»
կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպության կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
_____
(վարկային կազմակերպության իրավասու մարմնի անվանումը)

__/__/ ___թ. թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

__/__/ ___թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է _____ __/__/___ թ. թիվ __ որոշմամբ
(իրավասու մարմնի անվանում)

Փոփոխության հերթական համարը _____

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Վարկային կազմակերպության (վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) պետական գրանցման համարը

_____

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Վարկային կազմակերպության (վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով օպտիմալացնել ապահովագրական ընկերությունների լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման հետ կապված գործընթացները,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, 4-րդ մասը, 22-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 38-րդ հոդվածի 4-րդ մասը, 8-րդ մասը, 40-րդ հոդվածի 6-րդ մասը, 44-րդ հոդվածի 3-րդ մասը, 46-րդ հոդվածի 4-րդ մասը, 5-րդ մասի 4-րդ կետը, 10-րդ մասը, 47-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերը, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 88-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը, 90-րդ հոդվածի 4-րդ մասը, 5-րդ մասի 2-րդ կետը, 97-րդ հոդվածի 2-րդ մասը, 100-րդ հոդվածը, 103-րդ հոդվածի 1-ին մասը, 107-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 194-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 194-Ն որոշմամբ

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/01

Բ Ա Ժ Ի Ն Ⅰ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.

1) Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման և լիցենզավորման կարգը,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.09.2014 թ. (ՀՀԳՏ N23 (502)[1], 16.09.2014):

2) օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցման կարգը,
3) ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելու համաձայնություն ստանալու կարգը,
4) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող կանոնադրություններում, ղեկավարների կազմում կատարված փոփոխությունների գրանցման կարգը,
5) ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության դադարեցման (ներառյալ՝ ժամանակավոր դադարեցման) կարգը և պայմանները,
6) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,
7) ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքերը,
8) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ապահովագրական բրոքերային կազմակերպության գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները,
9) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության, ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործարար ծրագրի ձևը, ինչպես նաև գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,
10) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները և տեղեկությունները,
11) ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորման կարգը, ապահովագրական բրոքերային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելու թույլտվություն ստանալու կարգը,
12) ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից փոփոխությունների ներկայացման կարգը և ձևը,
13) ապահովագրական գործակալների հաշվառման կարգը, ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելու թույլտվություն ստանալու կարգը,
14) ապահովագրական միջնորդի ապահովագրական պատասխանատվության չափը, ապահովագրական գործակալ համարվելու համար տարեկան ապահովագրավճարների գումարը,
15) ղեկավարներին, պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ղեկավարների ու պատասխանատու անձանց գրանցման, ղեկավարների ու պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը,
16) ներդրումային գործունեության հետ կապված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու կարգը:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրման միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի էֆ» ֆորմատով, բացառությամբ՝ ապահովագրական գործակալների հաշվառման վերաբերյալ տեղեկանքի, ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկանքի և ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործարար ծրագրին կից աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել ֆորմատով: Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործարար ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

3. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերային կազմակերպության ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով, առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերային կազմակերպության ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքի տվյալների (անվան և ծածկագրի) միջոցով:

4. Նոր ստեղծվող ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերային կազմակերպության ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

5. Գործող ապահովագրական ընկերությունների և դրանց տարածքային ստորաբաժանումների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

6. Նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունների, ինչպես նաև օտարերկրյա ապահովագրական ընկերությունների նոր ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վրա սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք, երբ արդեն միացված են Սի-Բի-էյ-նեթ համակարգին և ստացել են անվտանգության համապատասխան հավաստագրերը, Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները կրկին ներկայացնում են Կենտրոնական բանկ՝ ՍԻ-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, «Փի Դի էֆ» ֆորմատով՝ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ համապատասխան ստորագրությունը ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7. Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները (դրանց փոփոխությունները, լրացումները) տրամադրվում են համապատասխան անձին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ դրանք Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունների, ինչպես նաև օտարերկրյա ապահովագրական ընկերությունների նոր ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար սույն կետով սահմանված հինգօրյա ժամկետը հաշվարկվում է կանոնադրությունների էլեկտրոնային-թվային ստորագրությամբ տարբերակները Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից:

8. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրերի ձևերի) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

9. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Ապահովագրական ընկերության անվանումը	գծիկ	փաստաթղթի տեսակը	գծիկ	փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ընդլայնումը
Օրինակ. ԱԲԳ	_	դիմում	_	Կանոնադր. փոփ.	-	250914	.	pdf

10. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

11. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, հաշվառման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաս-

տաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:

12. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման, հաշվառման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետների հաշվարկը սկսվում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

13. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, հաշվառման, համաձայնության ստացման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

14. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացվի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

15. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշերը կիրառվում են հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) Եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,
2) Եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշներ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,
3) Եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշներ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

16. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն.

1) հաշվապահական հաշվառման այն ստանդարտների համապատասխան, որոնք «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետք է կիրառվեն տվյալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս և ներկայացնելիս, կամ
2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

17. Սույն կանոնակարգով պահանջվող օտարերկրյա իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվություններին կից աուդիտորական եզրակացությունները ներկայացվում են դրանց առկայության դեպքում՝ բացառությամբ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման համար իրավաբանական անձանցից պահանջվող ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող աուդիտորական եզրակացությունների:

18. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և (կամ) վերահսկողական նպատակներից ելնելով՝ կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

19. Կենտրոնական բանկի կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դիմումի, միջնորդագրի կամ ցանկացած այլ միջնորդության քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

20. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի համալրումը (կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր ավելացումը) Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում ապահովագրական ընկերության հիմնադիրները (ապահովագրական ընկերությունը) Կենտրոնական բանկ են ներկայացնում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

21. Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ ապահովագրական գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

ԳԼՈՒԽ 2
ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝

1) ***«ապահովագրական ընկերություն»***՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն ապահովագրական և վերաապահովագրական ընկերություն,
2) ***«ղեկավար»***՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված ապահովագրական ընկերության ղեկավարը և 90-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ապահովագրական միջնորդի պատասխանատու անձը, օրենքով նախատեսված դեպքերում այդ անձանց գործառույթների պատվիրակման դեպքում այն անձը կամ անձինք, որոնք պատասխանատու են պատվիրակված գործառույթների համար, բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտի, վարչության, բաժնի, խմբի կամ այլ միավորի) ղեկավարների, մասնաճյուղի տնօրենի տեղակալի, մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալի, ապահովագրական ընկերության ներկայացուցչության տնօրենի և գլխավոր հաշվապահի, ապահովագրական գործակալի խորհրդի այն անդամի և գործադիր մարմնի կամ դրան համարժեք այլ մարմնի անդամի, որոնք պատասխանատու են ապահովագրական գործակալի գործառույթների համար, ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձի,
3) ***«ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար»***՝ անձ, ով առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները,
4) ***«հանձնաժողով»***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
5) ***«Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ»***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ այլ օրենքների համաձայն՝ Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
6) ***«ֆինանսական խումբ (միություն)»***՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,
7) ***«ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, կորպորատիվ ներդրումային ֆոնդ, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն (այսուհետ՝ Բյուրո), վճարահաշվարկային կազմակերպություն,
8) ***«ֆինանսական հաշվետվություններ»***՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ,
9) ***«հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
10) ***«անձնագրի տվյալներ»***՝անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
11) ***«բարձրագույն կրթություն ունեցող անձ»***՝ անձ, ով ավարտել է Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ստացել է Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական:

23. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ

24. Սույն կանոնակարգի իմաստով՝ ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի առկա կամ հնարավոր վատթարացում են համարվում հետևյալ դեպքերը, երբ.

1) ապահովագրական ընկերությունը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվը (նորմատիվները), կամ հավանական է հիմնական տնտեսական նորմատիվի (նորմատիվների) խախտումը, և (կամ)
2) ապահովագրական ընկերության մոտ հավանական է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում սահմանված անվճարունակության հիմքերի առաջացումը:

ԲԱԺԻՆ II
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 4
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

25. Ապահովագրական ընկերության պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, ընդ որում, դիմումի մեջ ներառվում է ապահովագրական ընկերության գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. ստեղծվող ապահովագրական ընկերության ստեղծման մասին հիմնադիր պայմանագիրը (որոշումը),

գ. ապահովագրական ընկերության ղեկավարների գրանցելու վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի, իսկ ղեկավարի և նրա գործունեության մասին տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի, ընդ որում՝ սույն կանոնակարգի Հավելված 17-ում ներառվում են ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները,

դ. գործարար ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 39-ի,

ե. ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման գրանցման հայտը (օտարերկրյա ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման գրանցման վկայականի պատճենը, ինչպես նաև դրա՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը) և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետի հիման վրա սահմանված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

զ. որպես «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված ապահովագրական ընկերության գործունեության կանոնակարգերի նախագծեր ներկայացվում են առնվազն ապահովագրական ընկերության գործունեությունը կարգավորող այն բոլոր ներքին իրավական ակտերը (այդ թվում՝ ապահովագրության պայմանները), որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է գործող ապահովագրական ընկերության համար՝ լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ,

է. ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց նշանակալից մասնակցության նախնական համաձայնություն ստանալու համար ներկայացվում են սույն կանոնակարգի բաժին 3-ով սահմանված փաստաթղթերը,

ը. ապահովագրական ընկերության հիմնադիրների ժողովի հաստատած կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 35-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա նաև նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

3) սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

4) ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 27-ի և Հավելված 28-ի,

5) ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 27-ի և Հավելված 28-ի,

6) ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրա-

կանացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

26. Սույն կանոնակարգի 25-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որի համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող տեղեկությունները,
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
3) միջազգային կազմակերպություն, կամ
4) միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ. Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ (Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում):

27. Սույն կանոնակարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

28. Ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 27-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, պետական գրանցման համարները և գտնվելու վայրերը, ինչպես նաև փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, հանրային ծառայությունների համարանիշը, ոչ ռեզիդենտ անձանց դեպքում՝ անձնագրի տվյալները:

29. Ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները), փոխարենը ներկայացվում են սույն կետի 1-2 ենթակետերում նշված հաշվետվությունը (տեղեկությունները), ընդ որում, միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետի 1-ին, 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից.

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

30. Կենտրոնական բանկը կարող է ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետով, իսկ եթե ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 29-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

31. Եթե սույն կանոնակարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետով կամ 29-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են համապատասխանաբար իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա դրանց փոխարեն Կենտրոնական բանկ կարող են ներկայացվել համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

32. Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերության գրանցման վկայականը տրվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 29-ի:

33. Ապահովագրական ընկերության լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 3-ի: Ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 1-ում և Հավելված 2-ում «Ապահովագրության դասը» տողում լրացվում են ապահովա-

գրության այն դասերը, որոնց իրականացման համար ապահովագրական ընկերությունը ստացել է լիցենզիա, իսկ Հավելված 3-ում «Վերաապահովագրության դասը» տողում լրացվում են վերաապահովագրության այն դասերը, որոնց իրականացման համար ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունը ստացել է լիցենզիա:

ԳԼՈՒԽ 5
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

34. Օտարերկրյա ապահովագրական ընկերությունը մասնաճյուղի պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. գրանցման և լիցենզավորման մասին դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի,

բ. գործարար ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 39-ի,

գ. օտարերկրյա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 24-ի,

դ. օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավարների գրանցելու վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի, իսկ ղեկավարների գործունեության մասին տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի, ընդ որում, մասնաճյուղի ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ներկայացվում են սույն պարբերությամբ նախատեսված տեղեկանքում,

ե. որպես «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված ապահովագրական գործունեության կանոնակարգերի նախագծեր՝ ներկայացվում են առնվազն օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեությունը կարգավորող այն բոլոր ներքին իրավական ակտերը (այդ թվում՝ ապահովագրության պայմանները), որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է օտարերկրյա ապահովագրական ընկերության գործող մասնաճյուղի համար՝ լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ,

զ. օտարերկրյա ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 35-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) մասնաճյուղի տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

3) սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր,

4) օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 26-ի և Հավելված 27-ի,

5) օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 26-ի և Հավելված 27-ի,

6) օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,

7) օտարերկրյա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց համար սույն կանոնակարգի 90-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը,

8) հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության վարկանիշը, ըստ Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների, առնվազն եղել է «AA-», կամ ըստ Մուդիզ վարկանշային

գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների, առնվազն եղել է «Aa3», կամ ըստ Ա.Մ. Բեստ վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշների, առնվազն եղել է «A+»՝ սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերությունն ունի երկու և ավելի վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշներ, ապա սույն ենթակետի իմաստով հիմք է ընդունվում դրանցից խստագույնը (ամենացածրը),

9) հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման վայրի երկրի ապահովագրության ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը բավարարում է Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից մշակված «Ապահովագրության հիմնարար սկզբունքները»: Երկրի ապահովագրության ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը համարվում է «Ապահովագրության հիմնարար սկզբունքները» բավարարող, եթե այն, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի շրջանակներում (ԷՖՍԱՓ) տրված գնահատականի համաձայն, բավարարում է բոլոր հիմնարար սկզբունքները՝ Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի կողմից սահմանված գնահատման սանդղակի առաջին (բավարարված) կամ երկրորդ (մեծամասամբ բավարարված) մակարդակով: Ընդ որում, սույն ենթակետում նշված գնահատականը պետք է տրված լինի սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից ոչ շուտ, քան 5 տարվա ընթացքում,

10) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորություններն օտարերկրյա ապահովագրական ընկերության կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

11) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման վայրի երկրի ապահովագրության ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա ապահովագրական ընկերությունը չի խախտել տվյալ երկրի ապահովագրական գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունը իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները՝ սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում,

12) Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության անունով ավանդի ներդրումը հավաստող փաստաթղթեր: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված ավանդը պետք է առնվազն կազմի.

ա. 40000000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 40000000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ապահովագրական ընկերությունը դիմել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «1-9»-րդ, «16-18»-րդ կետերով սահմանված ոչ կյանքի ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար,

բ. 60000000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 60000000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա ապահովագրական ընկերությունը դիմել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «10-15»-րդ կետերով, նույն հոդվածի 4-րդ մասի «1-6»-րդ կետերով, 5-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար,

գ. միաժամանակ մի քանի դասերով ապահովագրություն իրականացնելու համար դիմած օտարերկրյա ապահովագրական ընկերության կողմից ներդրված ավանդի մեծությունը պետք է բավարարի սույն ենթակետով տվյալ դասերի համար սահմանված չափերից առավելագույնին,

դ. սույն ենթակետով սահմանված ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերությունը ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում՝ սույն ենթակետով սահմանված պայմաններով,

13) հայտարարություն այն մասին, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման վայրի երկիրը համարվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր և/կամ տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ որևէ հայտարարություն չի հրապարակվել,

14) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը:

35. Սույն կանոնակարգի 34-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են՝

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ,
2) միջազգային կազմակերպություն, կամ
3) միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ. Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ (Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում):

36. Սույն կանոնակարգի 34-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում ստորև նշված այն անձանց համար, որոնք հանդիսանում են՝

1) օտարերկրյա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կամ
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 34-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

37. Օտարերկրյա ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 36-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, գրանցման համարները և գտնվելու վայրերը, ինչպես նաև փոխկապակցված ֆիզիկական անձանց անունները, ազգանունները, հանրային ծառայության համարանիշը, ոչ ռեզիդենտ անձանց դեպքում՝ անձնագրի տվյալները:

38. Օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց համար, որոնք ընդգրկված են որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, չեն ներկայացվում սույն կանոնակարգի 34-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները, փոխարենը ներկայացվում է սույն կետի 1-2 ենթակետերում նշված հաշվետվությունը (տեղեկությունները), ընդ որում՝ միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կետի 1-ին, 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

39. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման և լիցենզավորման գործընթացի ժամանակ օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 34-րդ կետի 6-րդ ենթակետով, իսկ եթե օտարերկրյա ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 38-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

40. Եթե սույն կանոնակարգի 34-րդ կետի 5-րդ ենթակետով կամ 38-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են համապատասխանաբար իրավաբանական անձի կամ խմբի (միության) ինտերնետային կայքում, ապա դրանց փոխարեն Կենտրոնական բանկ կարող են ներկայացվել համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

41. Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին տրամադրվում է լիցենզիա, եթե Կենտրոնական բանկի և մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման երկրի ապահովագրության ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունը իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) ապահովագրության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

42. Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 30-ի:

43. Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 3-ի: Ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 1-ում և Հավելված 2-ում «Ապահովագրության դասը» տողում լրացվում են ապահովագրության այն դասերը, որոնց իրականացման համար ապահովագրական ընկերությունը ստացել է լիցենզիա, իսկ Հավելված 3-ում «Վերաապահովագրության դասը» տողում լրացվում են վերաապահովագրության այն դասերը, որոնց իրականացման համար ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունը ստացել է լիցենզիա:

Գ Լ ՈՒ Խ 6
ՆՈՐ ԴԱՍԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

44. Գործող ապահովագրական ընկերությունը նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 159-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը,
2) ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդպիսիք առկա են և այդ պայմանագրերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում,
3) ապահովագրական ընկերության գործունեության կանոնակարգերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդ կանոնակարգերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում, ինչպես նաև նոր ընդունված կանոնակարգերը (այդ թվում՝ նոր դասի ապահովագրության պայմանները),
4) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
5) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալը Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության հետ չփոխկապակցված որևէ բանկում բացված կուտակային հաշվին մուծումը հավաստող փաստաթուղթը, եթե ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն չափի պահպանման համար անհրաժեշտ է կանոնադրական կապիտալի համալրում,
6) ապահովագրական ընկերության կանոնադրության փոփոխության գրանցման համար սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը:

45. Օտարերկրյա ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղը նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 159-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթերը,
2) նոր դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու վերաբերյալ օտարերկրյա ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը,
3) ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդպիսիք առկա են և այդ պայմանագրերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում, ինչպես նաև նոր ընդունված կանոնակարգերը (այդ թվում՝ նոր դասի ապահովագրության պայմանները),
4) մասնաճյուղի գործունեության կանոնակարգերում կատարված փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերը, եթե այդ կանոնակարգերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարման անհրաժեշտություն է առաջանում նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու դեպքում,
5) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
6) սույն կանոնակարգի 34-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն ներդրված ավանդի համալրումը հավաստող փաստաթղթեր, եթե սույն կանոնակարգի 34-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված ավանդի նվազագույն չափի բավարարման համար անհրաժեշտ է ավանդի համալրում,
7) օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կանոնադրության փոփոխության գրանցման համար սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 7
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

46. Օտարերկրյա ապահովագրական ընկերությունը ներկայացուցչության գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում.

ա. գրանցման համար դիմումը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված իրավասու կառավարման մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, ընդ որում՝ դիմումում ներկայացվում է նաև ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

բ. օտարերկրյա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 24-ի,

2) օտարերկրյա ապահովագրական ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,

3) ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,

4) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

5) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:

47. Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով՝ համաձայն Հավելված 30-ի:

ԳԼՈՒԽ 8
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

48. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղը գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝

ա. ապահովագրական ընկերության միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի, ընդ որում, միջնորդագրում ներառվում է ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի սահմանած չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարությունը,

բ. մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի, իսկ ղեկավարի և նրա գործունեության մասին տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի, ընդ որում, սույն կանոնակարգի Հավելված 17-ում ներառվում են մասնաճյուղի ղեկավարների ստորագրությունների նմուշները,

գ. գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 39-ի,

դ. մասնաճյուղի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 35-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

2) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,

3) մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,

4) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից նրան պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

5) առանձնացված տարածքի նկատմամբ ապահովագրական ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

6) սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, բացառու-

թյամբ, եթե սույն կետով սահմանված միջնորդագրում կատարվել է նշագրում՝ մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը միջնորդագրում նշված ժամկետում համապատասխանեցնելու մասին:

49. Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղի գրանցման վկայականը տրվում է մեկ օրինակով, գրանցման մասին որոշումն ընդունելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Հավելված 31-ի:

50. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչությունը գրանցելու համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով ներկայացված փաստաթղթերը: Ընդ որում, ապահովագրական ընկերության ներկայացուցչության գրանցման համար միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, որը ներառում է ներկայացուցչություն բացելու հիմնավորումը, իսկ կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 35-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
2) ներկայացուցչության տարածքի նկատմամբ ապահովագրական ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը, ընդ որում ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
3) ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը,
4) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,
5) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչության ղեկավար նշանակելու մասին,
6) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև պատշաճ կարգով տրված լիազորագիրը:

51. Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչության գրանցման վկայականը տրվում է գրանցման մասին որոշումն ընդունելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Հավելված 31-ի:

ԳԼՈՒԽ 9
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

52. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝ միջնորդագիրը ներկայացվում է համաձայն Հավելված 8-ի, իսկ գործարար ծրագիրը՝ համաձայն Հավելված 39-ի,
2) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ բացելու մասին,
3) մասնաճյուղի կանոնադրությունը,
4) մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 16-ի, մասնաճյուղի ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանք համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի, ընդ որում, Հավելված 17-ում ներառվում են մասնաճյուղի ղեկավարների ստորագրությունների նմուշները,
5) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ նշանակելու մասին,
6) առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է մասնաճյուղի գրանցման (և (կամ) լիցենզավորման) պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,

7) սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված պահանջներին մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, բացառությամբ, եթե սույն կետով սահմանված միջնորդագրում կատարվել է նշագրում՝ մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը միջնորդագրում նշված ժամկետում համապատասխանեցնելու մասին:

53. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝ միջնորդագիրը ներկայացնում է համաձայն Հավելված 9-ի, որում ներառվում է նաև ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,
2) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն բացելու մասին,
3) ներկայացուցչության կանոնադրությունը,
4) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի, ընդ որում՝ ներկայացուցչության ղեկավարների ստորագրությունների նմուշները ներկայացվում են սույն ենթակետով նախատեսված տեղեկանքներում,
5) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչության ղեկավարներ նշանակելու մասին,
6) առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից տրամադրված պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով նա պարտավորվել է ապահովագրական ընկերության ներկայացուցչության գրանցման (և (կամ) լիցենզավորման) պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ), ինչպես նաև պարտավորագիր տված անձի՝ այդ տարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

54. Ապահովագրական ընկերությունը համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորելուց, արտոնագրելուց) հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ է ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ կցելով մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:

ԳԼՈՒԽ 10
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

55. Ապահովագրական ընկերությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության գործունեությունը, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Ընդ որում, մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ կառավարման իրավասու մարմնի որոշման մեջ անհրաժեշտ է հստակ նշել այն ժամկետը, որի ավարտից հետո մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը համարվում է վերսկսված կամ գործունեությունը վերսկսելուց առնվազն 20 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

56. Ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվությունը ստանալու համար ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցումը թույլատրելու մասին միջնորդագիր՝ ապահովագրական ընկերության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին,
3) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման հիմնավորումները,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ ապահովագրական ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները,
5) մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

57. Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեությունը ժամանակավոր դադարեցնել, եթե՝

1) փաստաթղթերում ներկայացվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են,
3) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով՝ ապահովադիրների կամ ապահովագրված անձանց կամ շահառուների հետագա բնականոն սպասարկումն ապահովված չէ,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ ապահովագրական ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և իրականացման ժամկետները անիրատեսական են:

58. Սույն կանոնակարգի 56-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլ տալ ժամանակավորապես դադարեցնել մասնաճյուղի գործունեությունը կամ թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ապահովագրական ընկերությանը:

59. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

60. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին ապահովագրական ընկերությանը չտեղեկացնելու դեպքում մասնաճյուղի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու թույլտվությունը համարվում է տրված:

61. Սույն կանոնակարգի 58-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 60-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը մասնաճյուղի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը:

62. Կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղի գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ապահովագրական ընկերության մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը:

63. Սույն կանոնակարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ապահովագրական ընկերության կողմից մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկի որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

64. Ապահովագրական ընկերությունը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերությունը ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու թույլտվության համար ապահովագրական ընկերության միջնորդագիրը՝ ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության իրավասու մարմնի որոշումը՝ ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեության ժամանակավոր դադարեցման մասին:

65. Սույն կանոնակարգի 64րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը նախագահի որոշմամբ թույլ է տալիս ժամանակավորապես դադարեցնել ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեությունը կամ թույլ չի տալիս, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ կեղծ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ապահովագրական ընկերությանը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերությանը:

66. Ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեության ժամանակավորապես դադարեցումը թույլատրելու որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում

ապահովագրական ընկերությունն այդ տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը տեղակայում է ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը:

ԳԼՈՒԽ 11
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

67. Մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման մասին միջնորդագիր՝ ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,
3) մասնաճյուղի գործունեության դադարեցման հիմնավորումները,
4) մասնաճյուղի ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ ապահովագրական ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները,
5) մասնաճյուղի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունման պահին մասնաճյուղի հաշվապահական հաշվեկշիռը:

68. Սույն կանոնակարգի 67-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլատրել դադարեցնել ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեությունը կամ որոշում է կայացնում թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ապահովագրական ընկերությանը:

69. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության դադարեցման միջնորդագրի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

70. Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ դադարեցնել մասնաճյուղի գործունեությունը սույն կանոնակարգի 57-րդ կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

71. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլ չտալու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին ապահովագրական ընկերությանը չտեղեկացնելու դեպքում ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության դադարեցման վերաբերյալ թույլտվությունը համարվում է տրված:

72. Սույն կանոնակարգի 68-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 71-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը տեղակայում է ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը:

73. Կենտրոնական բանկի թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 67-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա ներկայացված ժամկետում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) ապահովագրական ընկերության ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթ,
2) մասնաճյուղի գրանցման վկայականը:

74. Կենտրոնական բանկի ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 67-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա ներկայացված ժամկետում ապահովագրական ընկերության կողմից սույն կանոնակարգի 73-րդ կետով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Կենտրոնական բանկի որոշումը համարվում է ուժը կորցրած:

75. Եթե ապահովագրական ընկերության մասնաճյուղը վեց ամսվա ընթացքում չի իրականացրել ապահովագրական գործունեություն, Կենտրոնական բանկը որոշում է ընդունում ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին:

76. Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցման դեպքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչությունը գրանցումից հանելու մասին միջնորդագիր՝ ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք,
3) ներկայացուցչության գրանցման վկայականը:

77. Սույն կանոնակարգի 76-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլ տալ ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցումը կամ թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին տեղեկացնելով ապահովագրական ընկերությանը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ կեղծ:

78. Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության գործունեության դադարեցումը թույլ տալու մասին Կենտրոնական բանկի որոշումն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունն այդ տեղեկատվությունը հրապարակում է առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում, և այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը տեղակայում է ապահովագրական ընկերության ինտերնետային կայքում, իսկ ինտերնետային կայքի խափանված լինելու դեպքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի օրինակը:

79. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը այլ երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցումից հանելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ փաստը վկայող փաստաթուղթը: Սույն կետով նշված փաստաթուղթը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից համապատասխան գրառում կատարելու համար:

ԳԼՈՒԽ 12
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

80. Լիցենզիայի, գրանցման վկայականի օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում համապատասխան անձը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի, գրանցման վկայականի կրկնօրինակը ստանալու համար, ինչպես նաև լիցենզիայի, գրանցման վկայականի կորստի մասին Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակելու համար: Դիմումին կից ներկայացվում է նաև լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը (բացառությամբ կորստի, ոչնչացման դեպքի), լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

81. Կենտրոնական բանկը լիցենզիայի, գրանցման վկայականի կրկնօրինակը համապատասխան անձին տալիս է նրա կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

82. Կորած լիցենզիան, գրանցման վկայականը գտնելու դեպքում համապատասխան անձը գտնված լիցենզիան, գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

83. Լիցենզիայի, գրանցման, հաշվառման վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

84. Լիցենզիայի, գրանցման, հաշվառման վկայականի կրկնօրինակի կորստի, ոչնչացման, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի, գրանցման, հաշվառման վկայականի նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

85. Հաշվառման վկայականի կորստի կամ ոչնչացման կամ ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, տառերը ջնջվելու և այլն) դեպքում գործակալը դիմում է ներկայացնում հաշվառման վկայականը տրամադրած ապահովագրական ընկերություն, ինչպես նաև կորստի դեպքում նախօրոք հայտարարություն է տալիս զանգվածային լրատվության միջոցով: Ապահովագրական ընկերությունը կորած, ոչ պիտանի դարձած կամ ոչնչացած հաշվառման վկայականի կրկնօրինակը համապատասխան ապահովագրական գործակալին տալիս է՝ դիմումը և համապատասխան հայտարարությունը (վկայականի կորստի դեպքում) ներկայացնելու օրվան հաջորդող 3-օրյա ժամկետում: Կորած հաշվառման վկայականը գտնելու դեպքում ապահովագրական գործակալը գտնված հաշվառման վկայականը վերադարձնում է ապահովագրական ընկերություն, որն էլ օրենսդրությամբ սահմանված կարգով արխիվացնում է այն:

Գ Լ ՈՒ Խ 13
ԼԻՑԵՆԶԻԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

86. Օրենքով սահմանված հիմքերով ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական բրոքերային կազմակերպությունը կից գրությամբ լիցենզիան, իսկ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում՝ նաև օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման վկայականը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

87. Օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված տարածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում կից գրությամբ Կենտրոնական բանկ են վերադարձվում համապատասխան գրանցման վկայականները:

88. Ապահովագրական ընկերության լուծարային հաշվեկշիռը Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու մասին որոշումը կայացնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը կից գրությամբ ապահովագրական ընկերության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում գործող տարածքային ստորաբաժանումների գրանցման վկայականները վերադարձնում է Կենտրոնական բանկ:

89. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ապահովագրական ընկերության լուծարային հաշվեկշիռը հաստատելու, տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարելու, ապահովագրական գործակալին միջնորդների ռեգիստրից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման բողոքարկումը հիմք չէ սահմանված ժամկետում համապատասխան լիցենզիան, գրանցման, հաշվառման վկայականը չվերադարձնելու համար:

Բ Ա Ժ Ի Ն III
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Գ Լ ՈՒ Խ 14
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

90. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար համապատասխան ապահովագրական ընկերության միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի,
2) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցության ձեռք բերելու մասին,
3) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ, ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 15-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
6) իրավաբանական անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 25-ի և Հավելված 26-ի:

91. Եթե իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ են ներ-

կայացվում (միևնույն խմբում (միությունում) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ նշանակալից մասնակցի կամ փոխկապակցված անձի առկայության դեպքում սույն կետի 1-ին, 2-րդ ենթակետերով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացվում է նրանցից որևէ մեկի կողմից) սույն կանոնակարգի 90-րդ կետով ներկայացված փաստաթղթերը (բացառությամբ՝ 90-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի), ինչպես նաև՝

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

92. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից Կենտրոնական բանկ չեն ներկայացվում սույն կանոնակարգի 90-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ. Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

93. Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպության՝ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերման դեպքում Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 90-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 90-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների, եթե դրանք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել կազմակերպության գրավոր համաձայնությունը այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով կիրառելու համար:

94. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ապահովագրական ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն Հավելված 22-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 15-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 25-ի և Հավելված 26-ի:

95. Պետությունը նոր ստեղծվող կամ գործող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ապահովագրական ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն Հավելված 23-ի,
2) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

ԳԼՈՒԽ 15
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

96. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ապահովագրական ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի,
2) ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը,

3) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ անուղղակի նշանակալից մասնակցի դեպքում,
4) իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ, ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
5) իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց մասին տեղեկանք համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 25-ի և Հավելված 26-ի,
6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ ապահովագրական ընկերությունում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ:

97. Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպության՝ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռքբերման դեպքում Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 96-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 96-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող հաշվետվությունների, եթե դրանք արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ, և Կենտրոնական բանկ է ներկայացվել գրավոր համաձայնություն այդ փաստաթղթերը վերահսկողական նպատակներով օգտագործելու համար:

98. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կանոնակարգի 96-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 96-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերի: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ կամ Ա.Մ. Բեստ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

99. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ապահովագրական ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 22-ի,
2) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ ապահովագրական ընկերությունում ձեռք է բերում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ,
3) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 25-ի և Հավելված 26-ի:

100. Պետությունը նոր ստեղծվող կամ գործող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան ապահովագրական ընկերության միջնորդությամբ՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 95-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 16
ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

101. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում միաժամանակ մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար ներկայացվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ այդ ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

102. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցությունն ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության դիմումը:

103. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում կամ գործարքի իրականացումը հավաստող փաստաթղթերը չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

104. Եթե ապահովագրական ընկերությունը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող էր հանգեցնել ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա ապահովագրական ընկերությունը տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

105. Եթե ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 14-րդ և 15-րդ գլուխներով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

Բ Ա Ժ Ի Ն IV
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 17
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

106. Ապահովագրական ընկերությունները (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերը) հետևյալ հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկի վիճակագրության վարչություն են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ռեզիդենտների համար, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ ոչ ռեզիդենտների համար.

1) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,
2) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,
3) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձանց, ինչպես նաև ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների անունը, ազգանունը, պաշտոնը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 26-րդ, 35-րդ կետերով սահմանված դեպքերի),
4) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց, ինչպես նաև ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց անունը, ազգանունը ներառող ցուցակը (բացառությամբ սույն կանոնակարգի 26-րդ, 35-րդ կետերով սահմանված դեպքերի):

107. Եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերը) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 106-րդ կետի 1-ին ենթակետով սահման-

ված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները).

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

108. Եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի (միության) կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 106-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունը).

1) խմբի (միության) կառուցվածքը,
2) խմբի (միության) վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,

109. Սույն կանոնակարգի 106-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է.

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական վիճակի մասին և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները:
2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 106-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

110. Սույն կանոնակարգի 106-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված իրավաբանական անձը հանդիսանում է.

1) ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, և որի համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ունեցող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական վիճակի մասին և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները,
3) Կենտրոնական բանկի կողմից «Ա» կամ «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 106-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

111. Սույն կանոնակարգի 110-րդ կետում սահմանված դեպքերում Կենտրոնական բանկ է ներկայացվում այդ անձանց անվանումները ներառող ցուցակ:

112. Կենտրոնական բանկը կարող է պահանջել ապահովագրական ընկերությունից (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղից) սույն կանոնակարգի 106-րդ կետի 2-րդ ենթակետով, 107-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) սահմանված պարբերականությամբ ներկայացնել Կենտրոնական բանկ նաև ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով:

113. Եթե սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա հաշվետվությունները և տեղեկությունները հայերենով, ռուսերենով կամ անգլերենով տեղակայված են ինտերնետային կայքում, ապա հաշվետվությունների կամ տեղեկությունների փոխարեն Կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան ինտերնետային կայքի (տնային էջի) հասցեն մինչև տվյալ հաշվետվությունները կամ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը: Ընդ որում, սույն կանոնակարգով սահմանված պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները (տեղեկությունները) ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրելու դեպքում իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող հաշվետվությունների (տեղեկությունների) առկայությունն առնվազն մեկ տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ V
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 18
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

114. Ղեկավարները պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացած որակավորում, ինչպես նաև բավարարեն սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցվեն Կենտրոնական բանկում, բացառությամբ սույն գլխով սահմանված դեպքերի:

115. Թեկնածուն կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ մեկից ավելի ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայականներ ստանալու համար:

116. Սույն կանոնակարգով նախատեսված որակավորման վկայականներին հավասարեցվում են սույն կանոնակարգի 19-րդ գլխով նախատեսված որակավորումները, դիպլոմները կամ հավաստագրերը:

117. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան որակավորում ստացած են համարվում և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն նաև սույն կանոնակարգի Հավելված 19-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն 1 տարի աշխատած, գրանցման գործընթացում գտնվող այն անձինք, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և (կամ) զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:

118. Ապահովագրական ընկերության մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ՝ գլխամասի և մասնաճյուղի միջև իրական ժամանակի ռեժիմով (մասնաճյուղում կատարվող գործարքներն ակնթարթային արտացոլվում են տեղեկատվական բազայում և ապահովագրական ընկերության հաշվեկշռում) գործունեություն ծավալելու համար կապի առկայության դեպքում:

119. Սույն կանոնակարգով սահմանված ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի որակավորման պահանջները տարածվում են նաև ապահովագրական ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների, ինչպես նաև ապահովագրական ընկերության ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի և լուծարային կառավարչի վրա:

120. Սույն կանոնակարգով սահմանված ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի, ներքին աուդիտի, գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի մասնագիտական համապատասխանության, որակավորման և Կենտրոնական բանկում գրանցման պահանջները և ընթացակարգերը տարածվում են համապատասխանաբար Բյուրոյի գործադիր տնօրենի, ներքին աուդիտի, գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի վրա:

ԳԼՈՒԽ 19

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԴԻՊԼՈՄՆԵՐԸ ԿԱՄ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

121. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգով սահմանված որակավորման վկայական է տրամադրվում որոշակի պաշտոնում գրանցված այն ղեկավարին, ով ունի սույն կետի աղյուսակում նշված տվյալ պաշտոնին համապատասխան որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր.

Պաշտոն	Որակավորում, դիպլոմ կամ Հավաստագիր
1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավարներ, այդ թվում՝	
1) գործադիր տնօրեն, տնօրենության ղեկավար, տնօրենության անդամ, վարչության նախագահ, վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն, ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն	Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման Ֆ1-Ֆ9 մակարդակներ կամ էֆ-Առ-էմ (FRM) որակավորում կամ Սի-Այ-Այ (CII) որակավորում
2) ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման Ֆ1-Ֆ9 մակարդակներ կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ կամ Սի-Այ-էյ (CIA) որակավորում
4) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման Ֆ1-Ֆ9 մակարդակներ կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ

5) պատասխանատու ակտուար	Մեծ Բրիտանիայի ակտուարների ինստիտուտի կամ վերջինիս հետ երկկողմանի համաձայնագիր ունեցող այլ երկրների ակտուարների միության կողմից առաջարկվող հիմնական քննություններից առնվազն 2-ը հանձնելու վերաբերյալ հավաստագիր
2. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձ, այդ թվում՝	
1) գործադիր տնօրեն, վարչության նախագահ, վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման Ֆ1-Ֆ9 մակարդակներ կամ էֆ-Առ-էմ (FRM) որակավորում կամ Սի-Այ- Այ (CII) որակավորում
2) գլխավոր հաշվապահ	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման Ֆ1-Ֆ9 մակարդակներ կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման 2 մակարդակ

Գ Լ ՈՒ Խ 20
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

122. Կենտրոնական բանկի խորհրդի նիստում հարցազրույցի միջոցով որակավորման ստուգումն անցնում են ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամի պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները:

123. Հարցազրույցն (բացառությամբ՝ լրացուցիչ հարցազրույցի) իրականացվում է խորհրդի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման գործընթացում, որին խորհրդի անդամի մասնակցության համար ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի և ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի:

124. Կենտրոնական բանկն ապահովագրական ընկերության խորհրդի անդամների որակավորման ստուգման համար հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ թեկնածուին տեղեկացնում է հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:

125. Հարցազրույցի ժամանակ ստուգվում են թեկնածուի գիտելիքները սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

126. Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամի թեկնածուների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

127. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է խորհրդի անդամի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշում ընդունել առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:

128. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում նշված անձինք համարվում են համապատասխան տեսակի որակավորում ստացած:

129. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամի որակավորումը տրվում է մինչև տվյալ ապահովագրական ընկերությունում, օտարերկրյա ապահովագրական ընկերությունում նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:

130. Որակավորում ստացած ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահը և խորհրդի անդամը իրենց պաշտոնավարման ընթացքում Կենտրոնական բանկի կողմից կարող են որակավորման ստուգման նպատակով հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի Կենտրոնական բանկի խորհրդի նիստում:

131. Լրացուցիչ հարցազրույցը կարող է իրականացվել ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ, որի մասին ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը տեղեկացվում է առնվազն 30 օր առաջ:

132. Լրացուցիչ հարցազրույցն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

133. Լրացուցիչ հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակ-

ներում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

134. Խորհրդի անդամի գիտելիքների անհամապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում, ինչպես նաև սույն գլխով սահմանված կարգով լրացուցիչ հարցազրույցին անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում այդ անձինք համարվում են որակավորում չունեցող:

Գ Լ ՈՒ Խ 21
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

135. Ղեկավարի թեկնածուները՝ բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամների, որակավորման ստուգումն անցնում են քննության միջոցով:

136. Քննությունն անցկացվում է Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կամ Կենտրոնական բանկի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից: Կենտրոնական բանկի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից անցկացվելու դեպքում քննության թեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

137. Քննությանը հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակին նախորդող ամսվա 10-ը:

138. Թեկնածուները քննությանը մասնակցելու համար պետք է նախապես հերթագրվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում՝ մուտքագրելով հետևյալ տվյալները.

1) անուն, ազգանուն,
2) որակավորման տեսակ,
3) քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
4) հեռախոսահամարը,
5) անձնագրի տվյալները,
6) էլեկտրոնային փոստի հասցեն:

139. Թեկնածուները քննությանը մասնակցում են՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
3) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտը) կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք:

140. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:

141. Քննության համար առանձնացված սենյակում թեկնածուն նստում է համապատասխան համակարգչի մոտ՝ ըստ ցուցակի: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

142. Քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով:

143. Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

144. Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով նշվածներից միակ ճիշտ) պատասխան:

145. Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, և համարվում է բացասական արդյունք ապահոված:

146. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից՝ մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

Գ Լ ՈՒ Խ 22
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ

147. Թեկնածուները Կենտրոնական բանկում որակավորման ստուգումը անցնում են սույն կանոնակարգի Հավելված 38-ում ներկայացված աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում, «+» նշանը նշանակում է՝ տվյալ թեման վերաբերում է, «-» նշանը՝ չի վերաբերում: Հավելված 38-ի աղյուսակի 1-ին կետի 80-րդ ենթակետում նշված խնդիրները վերաբերում են նույն աղյուսակի 1-ին կետի 1-79.1-րդ ենթակետերում նշված թեմաներին, իսկ աղյուսակի 2-րդ կետի 5-րդ ենթակետում նշված խնդիրները վերաբերում են 2-րդ կետի 1-4-րդ ենթակետերում նշված թեմաներին:

148. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի Հավելված 38-ում սահմանված թեմաների ցանկի հիման վրա:

149. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ և ենթակա չեն հրապարակման: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:

150. Թեստերը և դրանցում պարունակվող հարցերի քանակը տարբերակվում են ըստ որակավորման հետևյալ տեսակների՝

Որակավորման տեսակ	Հարցերի քանակ
1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար, այդ թվում՝	
1) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, 2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրենության ղեկավար, տնօրենության անդամ, վարչության նախագահ, վարչության անդամ, 3) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ, 4) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ	100 հարց
5) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն 6) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	80 հարց
7) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուար	50 հարց
2. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձ, այդ թվում՝	
1) գործադիր տնօրեն, 2) վարչության նախագահ, 3) վարչության անդամ, 4) գործադիր տնօրենի տեղակալ, 5) գլխավոր հաշվապահ	100 հարց
6) ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ	40 հարց

151. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե՝ բացառությամբ պատասխանատու ակտուարի թեկնածուի, որին թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար հատկացվում է միջին հաշվով 3 րոպե:

152. Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում, Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության պետի թույլտվությամբ:

153. Թեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է 3-ից 4 պատասխան, որոնցից մեկն է միանշանակ ճիշտ:

154. Թեստի հարցի միանշանակ ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխան են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

Գ Լ ՈՒ Խ 23
ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

155. Թեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ.

1) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված:

2) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված:

156. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

157. Թեկնածուի՝ թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է հանձնաժողովը, որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

158. Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման քննության արդյունքները քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 24
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

159. Որակավորման վկայականները տրվում են ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրենի, նրա տեղակալի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) և անդամի պաշտոնների համար,
2) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի և ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար,
3) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուարի պաշտոնի համար,
4) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի համար,
5) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,
6) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի պաշտոնի համար,
7) ապահովագրական բրոքերային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) և անդամի պաշտոնների համար,
8) ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխավոր հաշվապահի պաշտոնի համար,
9) ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձի համար:

160. Սույն կանոնակարգի Հավելված 33-ով սահմանված որակավորման վկայականը թեկնածուին տրվում է էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով թեկնածուի կողմից քննության մասնակցության հերթագրման ժամանակ ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ քննությունը հանձնելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

161. Սույն կանոնակարգի Հավելված 33-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 117-րդ կետի պահանջները բավարարող ղեկավարին՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

162. Սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 121-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

163. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 160-րդ, 161-րդ, 162-րդ կետերով սահմանված ժամկետներում՝ էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով անձը ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

164. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից) հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

165. Թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով, բացառությամբ սույն կանոնակարգի 117-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ և սույն կանոնակարգի 121-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել է միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

ԳԼՈՒԽ 25
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

166. Սույն կանոնակարգի 159-րդ կետի 1-ին ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն:

167. Սույն կանոնակարգի 159-րդ կետի 2-րդ, 4-րդ ենթակետերով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխավոր հաշվապահ:

168. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխավոր հաշվապահը ի պաշտոնե կարող է լինել տվյալ ապահովագրական ընկերության տնօրենության (վարչության) անդամ՝ առանց տնօրենության (վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

ԳԼՈՒԽ 26
ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

169. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային կազմակերպության միջնորդությամբ որպես ղեկավար գրանցման ներկայացված անձը պետք է իրազեկ լինի ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեությունը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի գործարար ծրագրին, ինչպես նաև ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերին:

170. Անձը սույն կետով նախատեսված աղյուսակում նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար պետք է բացի սույն կանոնակարգի 169-րդ կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներից բավարարի մասնագիտական համապատասխանության չափանիշները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 171-րդ կետով նախատեսված դեպքերի՝

Պաշտոն	Մասնագիտական համապատասխանության չափանիշ
1. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավարներ, այդ թվում՝	
1) խորհրդի անդամ	ա. բարձրագույն կրթության առկայության դեպքում՝ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, բ. բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ
2) պատասխանատու ակտուար	ա. ակտուարական, վիճակագրական, մաթեմատիկական, ինժեներատնտեսագիտական կրթություն, որը կարող է հավաստվել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան դիպլոմով (վկայականով), և (կամ) առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
3) գործադիր տնօրեն, տնօրենության ղեկավար, տնօրենության անդամ, վարչության նախագահ, վարչության անդամ գործադիր տնօրենի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ ղեկավար պաշտոնում,
4) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ,
5) ներքին աուդիտի ղեկավար	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

6) ներքին աուդիտի անդամ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ընդ որում, տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու ներքին աուդիտի անդամի համար՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
7) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
8) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
2. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձ, այդ թվում՝	
1) գործադիր տնօրեն, վարչության նախագահ, վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ
2) գլխավոր հաշվապահ	ա. բարձրագույն կրթություն և բ. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

171. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 170-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և (կամ) բարձրագույն կրթություն, ապա ապահովագրական ընկերությունն իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոնում աշխատելու համար ղեկավարի թեկնածուի մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովի դրական եզրակացությամբ ղեկավարի թեկնածուն համարվում է մասնագիտական համապատասխանության չափանիշները բավարարող:

172. Սույն կանոնակարգի 170-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպությունում աշխատանքային փորձ է համարվում տվյալ ֆինանսական կազմակերպությունում մասնագիտական գործունեության հետ կապված աշխատանքային փորձը:

173. Սույն կանոնակարգի 170-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է ղեկավարների Կենտրոնական բանկում գրանցման պահին նախորդող 10 տարիներին՝ բացառությամբ խորհրդի անդամի համար նախատեսված աշխատանքային փորձի:

ԳԼՈՒԽ 27
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ԳՐԱՆՑՈՒՄԸ

174. Ղեկավարների գրանցումը իրականացվում է 2 ընթացակարգով՝ պարզ կամ բարդ: Ղեկավարների գրանցման ընթացակարգերի տեսակները, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված են սույն կանոնակարգի Հավելված 18-ով:

175. Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
2) թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 186-րդ կետով սահմանված դեպքերի:

176. Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով,
2) թեկնածուի որակավորման առկայության ստուգում:

177. Պարզ կամ բարդ ընթացակարգով անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերությունը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի և ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17,
2) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

178. Ապահովագրական ընկերությունները, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերը, ինչպես նաև ապահովագրական բրոքերային կազմակերպությունները պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

179. Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կամ նրանց կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ:

180. Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 181-183-րդ կետերի առկայության հիմնավորմամբ ընկերությանը գրավոր կամ բանավոր եղանակով չի ծանուցել անձին բարդ ընթացակարգով գրանցելու մասին, որի դեպքում գործում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

181. Եթե ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային կազմակերպության մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ Ընկերության մոտ Կենտրոնական բանկի կարծիքով, բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 178-րդ կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում ընկերության բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

182. Եթե ընկերության մասնաճյուղը, Կենտրոնական բանկի կարծիքով, հանդիսանում է ընկերության գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, ապա տվյալ մասնաճյուղի բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

183. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և (կամ) այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր ընկերության և (կամ) ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

184. Սույն կանոնակարգի 180-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային կազմակերպության համապատասխան ղեկավարի գրանցումն իրականացվում է բարդ ընթացակարգով այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել ապահովագրական ընկերությանը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին, ապահովագրական բրոքերային կազմակերպությանը համապատասխան ղեկավարին պարզ ընթացակարգով գրանցելու հնարավորության մասին:

185. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում ղեկավարի գրանցման օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 195-րդ կետով սահմանված 90-օրյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

186. Սույն կանոնակարգի 175-րդ կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

187. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 17-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում ընկերությունը դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին այլ ղեկավար պաշտոնում գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 17-ով սահմանված տեղեկանքը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն տեղեկանքի 1-ին, 2-րդ կետերի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

188. Ընկերությունը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և(կամ) տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

189. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 126-րդ կետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը:

190. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ որակավորման ստուգման և գրանցման ենթակա չէ, և ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով համապատասխան գրություն, որտեղ նշվում է կառավարման իրավասու մարմնի կողմից որոշման կայացման ամսաթիվը և փոփոխության իրականացման ամսաթիվը:

191. Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե.

1) անձը չի համապատասխանում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի կամ 90-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
3) անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցի» համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը:

ԳԼՈՒԽ 28
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

192. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից.

1) եթե ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,
2) եթե ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական բրոքերը դիմել են համապատասխան միջնորդությամբ,
3) եթե ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեությունը դադարեցվել է (ապահովագրական ընկերության տվյալ մասնաճյուղի ղեկավարների համար),
4) եթե խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,
5) ապահովագրական ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահի նշանակման պահից:

193. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական բրոքերը ղեկավարների կազմում փոփոխությունները տեղի ունենալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) Ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

194. Եթե ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերի ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար:

ԳԼՈՒԽ 29
ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

195. Ղեկավարի պաշտոնը կարող է զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարի կողմից և թափուր մնալ ոչ ավելի, քան 90 օր՝ սկսած ընկերության կողմից ղեկավարին պաշտոնից փաստացի ազատելու պահից:

196. Սույն կետի աղյուսակի համապատասխան պաշտոնների համար նշված ժամանակավոր պաշտոնակատարների վրա սույն կանոնակարգի 195-րդ կետով նշված 90-օրյա ժամկետը չի տարածվում: Ընդ որում, եթե սույն կետում նշված դեպքերում ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պաշտոնավարում է 90 օրից ավելի, ապա 90-օրյա ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ընկերությունը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին.

Պաշտոն	Ժամանակավոր պաշտոնակատար
1. Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն, վարչության նախագահ	Տվյալ ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ
2. Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահ	Տվյալ ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցված գլխավոր հաշվապահի տեղակալ
3. Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	Տվյալ ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցված ներքին աուդիտի անդամ
4. Ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն	Տվյալ ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, տնօրենության անդամ, վարչության անդամ, ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրեն
5. Ապահովագրական բրոքերի գործադիր տնօրեն, վարչության նախագահ	Տվյալ ապահովագրական բրոքերի գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, վարչության անդամ

197. Ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը կարող է չունենալ համապատասխան պաշտոնի համար նախատեսված որակավորում, բացառությամբ սույն կանոնակարգի 198-րդ և 199-րդ կետերով նախատեսված ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների:

198. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային կազմակերպության գործադիր տնօրենի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) ժամանակավոր պաշտոնակատար կարող են նշանակվել (նշված պարտականությունները կարող են կատարել) միայն տվյալ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալը կամ տնօրենության (վարչության) անդամը:

199. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակվել (նշված պարտականությունը կարող է կատարել) տվյալ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ունեցող ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական բրոքերի այլ աշխատակիցը:

200. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել ապահովագրական ընկերությունում այլ պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ՝ ներքին աուդիտի անդամների), ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

201. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել ապահովագրական ընկերությունում այլ պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

202. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

203. Սույն կանոնակարգի 195-րդ կետում նշված 90-օրյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում 90-օրյա ժամկետը:

Բ Ա Ժ Ի Ն VI
ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 30
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

204. Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղը պետք է ունենան՝

1) ապահովագրական ընկերությանը (իսկ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր ապահովագրական ընկերությանը) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող առանձնացված տարածք,
2) կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում ապահովադիրների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի պահպանման հիմնական վայրն է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն կազմակերպության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու բանկ, վարկային կազմակերպություն կամ դրանց տարածքային ստորաբաժանում: Ընդ որում, ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ապահովագրական ընկերության մասնաճյուղը կանխիկ դրամը պահպանության կարող են հանձնել բացառապես բանկին, վարկային կազմակերպությանը կամ դրանց տարածքային ստորաբաժանումներին: Դրամապահոցի բացակայության պարագայում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղը կարող են չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը և ապահովագրական ընկերությունում, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղում կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին և (կամ) պատին: Սույն ենթակետը չի տարածվում այն ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերի կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով,
3) շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի ընկերության ամբողջ տարածքում և ընկերության գլխամասի համար միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, իսկ մասնաճյուղերի համար՝ միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը կամ այլ համապատասխան կազմակերպությանը, ինչպես նաև ընկերության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինի պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչ ըստ տարածքի մակերեսի: Շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն բոլոր արտաքին դռներին ու պատուհաններին և միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Եթե ապահովագրական ընկերությունը և (կամ) մասնաճյուղերը գտնվում են ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայության կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգ ունեցող տարածքներում, ապա ապահովագրական ընկերության և (կամ) տարածքի շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է միացված լինի շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

4) ապահովագրական ընկերությունը և ապահովագրական ընկերության մասնաճյուղը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ: Մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղի գրանցվելուց հետո՝ մասնաճյուղի գրանցման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք ըստ սույն կանոնակարգի 118-րդ կետի, կարող են չունենալ գլխավոր հաշվապահ, համակարգչային ցանցը պետք է միացվի մասնաճյուղին վերջինիս գրանցման փաստաթղթերի ներկայացման պահին:

205. Նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունը համարվում է սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորությունը հավաստող փաստաթուղթ, որով պարտավորվել է ապահովագրական ընկերության պետական գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, ապահովագրական ընկերությունը սահմանված կարգով գրանցվելուց և լիցենզավորվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կենտրոնական բանկ է ներկայացնում տվյալ տարածքի նկատմամբ իր սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

206. Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունները, Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա, կնքել են միացման պայմանագիր, ապա միացող և պահպանվող ապահովագրական ընկերությունների գլխամասային գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության սույն գլխով սահմանված պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:

207. Ապահովագրական բրոքերի, ապահովագրական բրոքերի մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության համար սահմանվում են սույն կանոնակարգի 0-րդ կետով ներկայացված պահանջները, բացառությամբ սույն կանոնակարգի 204-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջների: Ընդ որում, սույն կանոնակարգի 204-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները չեն տարածվում այն ապահովագրական բրոքերի, ապահովագրական բրոքերի մասնաճյուղի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:

208. Ապահովագրական ընկերությունը, նրա մասնաճյուղը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը՝ սույն կանոնակարգի 204-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերով, իսկ ապահովագրական բրոքերը, ապահովագրական բրոքերի մասնաճյուղը՝ սույն կանոնակարգի 204-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կարող են ունենալ Բանկերս Բլանկետ Բոնդ (Bankers-Blanket-Bond (այսուհետ՝ BBB)) ապահովագրության պայմանագիր, որը ներառում է առնվազն հետևյալ ռիսկերը՝

1) ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,
2) ընկերության գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում ընկերության տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

209. Սույն կանոնակարգի 208-րդ կետում նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների մեկ տոկոսից: Ընդ որում, սույն կանոնակարգի 208-րդ կետում նշված BBB ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

Ստանդարտ և Փուրզ	«A-»
Մուդիզ	«A3»
Ա.Մ. Բեստ	«A-»
Ֆիտչ	«A-»:

210. Եթե ապահովագրական ընկերությունը, ապահովագրական բրոքերը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը օգտագործում են տեղեկատվական համակարգեր, ապա դրանք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգի» պահանջներին:

Բ Ա Ժ Ի Ն VII
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Գ Լ ՈՒ Խ 31
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

211. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները փոփոխությունները տեղի ունենալուց հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում.

1) սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները,
2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունները: Ընդ որում, սույն ենթակետում սահմանված կանոնադրությունների փոփոխությունները, լրացումները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 36-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:

212. Ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կանոնակարգով սահմանված կարգով:

213. Ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
3) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրության փոփոխությունը,
4) եթե կանոնադրության փոփոխությունը առաջացնում է լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է լիցենզիայի կամ գրանցման վկայականի վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև կից ներկայացվում է հին լիցենզիայի և (կամ) գրանցման վկայականի բնօրինակը և լիցենզիայի վերաձևակերպման համար՝ պետական տուրքի անդորրագիրը,
5) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է կանոնադրական կապիտալի ավելացման հետ, ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթուղթը:

214. Եթե ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության, ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետությունում տարածքային ստորաբաժանման կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված փաստաթղթերից բացի Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև՝

1) նոր առանձնացված տարածքի նկատմամբ ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը: Ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
2) սույն կանոնակարգի 213-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջնորդագրում նշվում է ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) հայտարարությունն այն մասին, որ ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ըն-

կերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի) տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված չափանիշներին, իսկ անհնարինության դեպքում պարտավորագիր առ այն, որ գրանցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կապահովվի դրանց համապատասխանությունը:

215. Եթե ապահովագրական ընկերության կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա բացի սույն կանոնակարգի 213-րդ կետում նշված փաստաթղթերից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն նաև ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթեր՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի:

216. Փոփոխությունները գրանցվում են, կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

217. Գրանցման վկայականի և (կամ) լիցենզիայի նոր օրինակ ապահովագրական ընկերությանը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղին տրամադրվում է կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 32
ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

218. Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը լիցենզիա ստանալուց հետո, իսկ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչությունը գրանցվելուց հետո սույն կետում նշված փոփոխությունները տեղի ունենալու դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փոփոխությունները.

1) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի նոր ընդունված կանոնակարգերը, Կենտրոնական բանկ ներկայացված կանոնակարգերի հետագա փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին կանոնակարգերը (ապահովագրական ընկերության գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը),
2) ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական ընկերության մասնաճյուղի՝ սույն կանոնակարգի գլուխ 30-ով սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ այդ փոփոխությունների վերաբերյալ գրություն, որը պարունակում է հայտարարություն առ այն, որ փոփոխված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված չափանիշներին,
3) ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության փոփոխությունները,
4) ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության ղեկավարների փոփոխության դեպքում՝ ներկայացուցչության ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,
5) ապահովագրական ընկերության խորհրդի նախագահի պաշտոնանկության դեպքում համապատասխան գրություն, որտեղ նշվում են կառավարման իրավասու մարմնի կողմից որոշման կայացման և փոփոխության իրականացման ամսաթվերը,
6) օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում օտարերկրյա ապահովագրական ընկերության գրանցման վայրի երկրի ապահովագրության վերահսկողության՝ Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի կողմից մշակված «Ապահովագրության հիմնարար սկզբունքներին» բավարարման վերաբերյալ փոփոխված տեղեկատվության հիմնավորող փաստաթուղթը:

219. Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ապահովագրական ընկերության մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարար ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է

ռազմավարության փոփոխության հիմնավորումը: Ընդ որում, ծրագրին կից աղյուսակներում փոփոխություն կարող է կատարվել միայն մինչև հունիս ամսվա վերջին օրը: Նշված ժամանակահատվածից հետո փոփոխություն կարող է կատարվել միայն մակրոտնտեսական միջավայրի էական տատանումների կամ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործունեության էական փոփոխությունների (օրինակ՝ Համախառն ներքին արդյունքի, գների, փոխարժեքի էական տատանումներ, իրականացվող ապահովագրության դասերի փոփոխություն) դեպքում:

220. Սույն կանոնակարգի Հավելված 17-ով սահմանված ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքի 2.3, 3.6, 3.8, 3.9, 4.1-րդ ենթակետերում, ինչպես նաև 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխությունները նույնպես ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ փոփոխություններն ապահովագրական ընկերությանը հայտնի դառնալուց հետո ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ԲԱԺԻՆ VIII
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 33
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

221. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքների կամ գործառնությունների իրականացման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու նպատակով ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Ներդրումային գործարքի իրականացման վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,
2) Ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ,
3) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքի կամ գործառնության իրականացման վերաբերյալ ապահովագրական ընկերության ծրագիրը, որը պետք է ներառի գործարքի կամ գործառնության իրականացման արդյունքում ապահովագրական ընկերության՝ հաջողության հասնելու հավանականության մասին տեղեկություններ, ծրագրում պետք է հիմնավորվի, որ նախատեսվող գործարքը համատեղելի է ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի հետ, և այն կնպաստի ֆինանսական շուկայում ապահովագրական ընկերության գործունեության զարգացմանը: Ընդ որում, ծրագիրը պետք է լինի իրատեսական և ծրագրում ներառված բոլոր կանխատեսումները պետք է հիմնավորված լինեն կոնկրետ հաշվարկներով,
4) Տվյալ անձի համաձայնությունն իր ֆինանսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու նպատակով ապահովագրական ընկերությանը տրամադրելու վերաբերյալ,
5) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ազդագրի (առևտրի ազդագրի) բացակայության դեպքում այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց կանոնադրական կապիտալում ընկերությունը ցանկանում է ձեռք բերել մասնակցություն, ինչպես նաև այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց կանոնադրական կապիտալում նախկինում ձեռք է բերել մասնակցություն, որի արդյունքում ի հայտ են եկել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերը, ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը (տեղեկությունները).

ա. իրավաբանական անձի կանոնադրությունը ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում, իսկ ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի համարը,

բ. իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար), ընդ որում, վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են անկախ աուդիտորական եզրակացությամբ:

222. Սույն կանոնակարգի 221-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) չեն ներկայացվում, եթե տվյալ իրավաբանական անձը հանդիսանում է.

1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 221-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը,
2) Կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություն՝ վերջինիս կողմից Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 221-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող տեղեկությունները վերահսկողական նպատակներով օգտագործելու վերաբերյալ գրավոր համաձայնության դեպքում:

223. Ապահովագրական ընկերությունը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում նախատեսվող գործարքի վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը կարող է ստանալ, եթե.

1) ներկայացված փաստաթղթերում չեն արտացոլվել անարժանահավատ կամ կեղծ տվյալներ.
2) նախնական համաձայնություն ստանալու վերաբերյալ դիմում Կենտրոնական բանկ ներկայացնելու պահին նախորդող մեկ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունը չի խախտել հիմնական տնտեսական նորմատիվները.
3) տվյալ գործարքը համատեղելի է ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի հետ.
4) տվյալ գործարքը կնպաստի ֆինանսական շուկայում ապահովագրական ընկերության գործունեության զարգացմանը.
5) առկա չեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերը:

224. Սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում գործարքը չիրականացնելու դեպքում այդ համաձայնությունը համարվում է չտրված:

ԲԱԺԻՆ IX
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 34
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

225. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ապահովագրական միջնորդի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը պետք է ունենա առնվազն 100 միլիոն դրամ ապահովագրական ծածկույթ (գումար) մեկ տարվա համար բոլոր ապահովագրական պատահարների համար՝ ապահովագրական բրոքերային կազմակերպության համար, 2 միլիոն դրամ՝ իրավաբանական անձ ապահովագրական գործակալի համար, 1 միլիոն դրամ՝ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր գործակալի համար: Ընդ որում, մասնագիտական պատասխանատվության պայմանագիրը չպետք է ունենա մեկ ապահովագրական պատահարի կամ մեկ անձի գծով ապահովագրական գումարի, ինչպես նաև աշխարհագրական սահմանափակում:

226. Սույն կանոնակարգի 225-րդ կետի դրույթները չեն տարածվում այն ապահովագրական գործակալների վրա, որոնց մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը ստանձնել է այն ապահովագրական ընկերությունը, ում անունից հանդես է գալիս ապահովագրական գործակալը և եթե պատասխանատվությունը ստանձնել է սույն կանոնակարգի 225-րդ կետով սահմանված պահանջներից ոչ նվազ պայմաններով:

227. Սույն կանոնակարգի 225-րդ կետում նշված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը կարող է փոխարինվել այլ անձի կողմից ոչ պակաս, քան նույն չափի և պայմաններով տրված երաշխիքի պայմանագրով:

ԳԼՈՒԽ 35
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԵԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

228. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված ապահովագրության մեկ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների տարեկան գումարը սահմանվում է 10 հազար Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ բոլոր ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների տարեկան գումարը սահմանվում է 500 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

ԲԱԺԻՆ X
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԳԼՈՒԽ 36
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

229. Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա ստանալու համար առևտրային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ընդ որում.

ա. լիցենզիա ստանալու միջնորդագիրը ներկայացվում է դիմող կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված կառավարման իրավասու մարմնի որոշմամբ վավերացված՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի,

բ. ապահովագրական բրոքերային կազմակերպության ղեկավարների գրանցման մասին միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 16-ի և ղեկավարի և նրա գործունեության մասին տեղեկանքը՝ համաձայն Հավելված 17-ի, ընդ որում՝ ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ներառվում են Հավելված 17-ում,

գ. որպես «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված ապահովագրական բրոքերային կազմակերպության գործունեության կանոնակարգերի նախագծեր ներկայացվում են առնվազն ապահովագրական բրոքերային կազմակերպության գործունեությունը կարգավորող այն բոլոր ներքին իրավական ակտերը, որոնց առկայությունը օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն պարտադիր է գործող ապահովագրական բրոքերային կազմակերպության համար լիցենզիա ստանալու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ,

դ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը, որում նշվում է, որ վերջինս ուժի մեջ է մտնում ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիան ստանալու պահից,

2) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից պատշաճ կարգով տրված լիազորագիրը,

3) սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված պահանջներին բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

230. Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական բրոքերային կազմակերպությանը լիցենզիան տրվում է մեկ օրինակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի:

ԳԼՈՒԽ 37
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

213. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական բրոքերային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի թույլտվությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ապահովագրական բրոքերային կազմակերպության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու թույլտվություն ստանալու միջնորդագիրը, որտեղ նշվում է նաև հայտարարություն այն մասին, որ ապահովագրական բրոքերի մասնաճյուղի գործունեության տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված չափանիշներին,

2) ապահովագրական բրոքերային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու համար,

3) մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

4) մասնաճյուղի կանոնադրությունը,

5) մասնաճյուղի ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանք համաձայն Հավելված 17-ի, ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ներառվում են Հավելված 17-ում,
6) ապահովագրական բրոքերային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,
7) միայն Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում՝ սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված պահանջները բավարարող առանձնացված տարածքի նկատմամբ ընկերության սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
8) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից պատշաճ կարգով նրան տրված լիազորագիրը:

232. Կենտրոնական բանկը որոշում է ընդունում ապահովագրական բրոքերային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծմանը թույլտվություն տալու մասին, եթե առկա չեն սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված մերժման հիմքերը:

233. Կենտրոնական բանկը մերժում է ապահովագրական բրոքերային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման թույլտվությունը, եթե՝

1) չեն ներկայացվել բոլոր պահանջվող փաստաթղթերը կամ ներկայացված փաստաթղթերը կամ տեղեկությունները չեն համապատասխանում օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պահանջներին, կամ ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, և (կամ)
2) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելու դեպքում Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով օտարերկրյա պետությունում ապահովագրական հատվածի վերահսկողության համար պատասխանատու մարմինը պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողություն չի իրականացնում տվյալ պետությունում գրանցված ապահովագրական բրոքերային կազմակերպության մասնաճյուղի գործունեության նկատմամբ, կամ տվյալ պետությունը Կենտրոնական բանկին հնարավորություն չի ընձեռում վերստուգել կամ պատշաճ վերահսկողություն իրականացնել ստեղծվելիք մասնաճյուղի նկատմամբ, և (կամ)
3) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում ապահովագրական բրոքերային կազմակերպությունը չի հիմնավորում տվյալ երկրում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու անհրաժեշտությունը կամ Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով՝ ծրագրավորում է շրջանառել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցներ կամ օժանդակել դրանց շրջանառմանը,
4) ապահովագրական բրոքերի ղեկավարները չեն բավարարում օրենքով և սույն կանոնակարգով նրանց նկատմամբ սահմանված պահանջներին:

234. Կենտրոնական բանկը, Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ տալիս է ապահովագրական բրոքերային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծելու թույլտվությունը կամ մերժում է միջնորդագիրը՝ այն Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից 30-օրյա ժամկետում: 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել է ոչ ավելի, քան 30 օրով՝ Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար:

235. Եթե նշված ժամկետում Կենտրոնական բանկը որոշում չի կայացնում ապահովագրական բրոքերային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության թույլտվության տրամադրման վերաբերյալ, ապա թույլտվությունը համարվում է տրված:

236. Ապահովագրական բրոքերը սույն գլխի համաձայն Հայաստանի Հանրապետությունում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու վերաբերյալ Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալուց հետո մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցված կանոնադրությունը:

237. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունը համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորելուց, արտոնագրելուց) հետո պարտավոր է տասնօրյա ժամկետում հաշվառել այն Կենտրոնական բանկում ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ:

2138. Կենտրոնական բանկը ապահովագրական բրոքերային կազմակերպության Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի և ներկայացուցչության հաշվառումից հետո հնգօրյա ժամկետում այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից ապահովագրական բրոքերային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

239. Ապահովագրական բրոքերի կողմից մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու վերաբերյալ Կենտրոնական բանկի թույլտվությունը Կենտրոնական բանկի որոշմամբ կարող է համարվել չտրված, եթե՝

1) հետագայում պարզվում է, որ Կենտրոնական բանկ ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, և/կամ,
2) իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնի կամ օտարերկրյա համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցված փաստաթղթերը տարբերվում են Կենտրոնական բանկի թույլտվությունը ստանալու համար ներկայացված փաստաթղթերից:

ԳԼՈՒԽ 38
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

240. Լիցենզիայի տրամադրումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական բրոքերը Կենտրոնական բանկի գրանցմանն է ներկայացնում ապահովագրական բրոքերի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցված ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները՝ փոփոխությունները տեղի ունենալուց հետո տասնօրյա ժամկետում: Այդ փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կանոնակարգով սահմանված կարգով:

241. Լիցենզիայի տրամադրումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական բրոքերը յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը (տեղեկությունները).

1) ապահովագրական բրոքերի գործունեության նոր ընդունված կանոնակարգերը, Կենտրոնական բանկ ներկայացված կանոնակարգերի հետագա փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին կանոնակարգերը,
2) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ապահովագրության պայմանագրում կատարված փոփոխությունները,
3) ապահովագրական բրոքերի փոփոխված կանոնադրությունը:

242. Ապահովագրական բրոքերը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու դեպքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկ՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության դադարեցումը իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնի կամ օտարերկրյա համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

ԲԱԺԻՆ XI
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԳԼՈՒԽ 39
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

243. Ապահովագրական գործակալների ռեգիստրում անձին հաշվառելու համար ապահովագրական ընկերությունը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղն անձի անունից Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

1) ապահովագրական գործակալի հաշվառման վերաբերյալ միջնորդագիրը համաձայն Հավելված 11-ի և գործակալի վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Հավելված 12-ի,
2) ապահովագրական ընկերության հետ կնքած գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի պատճեն,
3) սույն կանոնակարգի 225-րդ կետով սահմանված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար կնքված պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը, եթե ապահովագրական ընկերությունը չի ստանձնում գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումը:

244. Սույն կանոնակարգի 243-րդ կետում նշված ապահովագրական ընկերության հետ գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրում պետք է նշված լինեն հետևյալ տեղեկությունները

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված այն գործառնությունները, որոնք թույլատրված են գործակալին և ապահովագրության համապատասխան դասերը, որոնց գծով իրականացվելու են այդ գործառնությունները,
2) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնությունները գործակալին թույլատրված լինելու դեպքում՝ գործակալին ապահովագրավճարների հավաքագրման և հատուցումների փոխանցման իրականացման՝ ապահովագրական ընկերության կողմից թույլատրված չափերը,
3) ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը ստանձնելու դեպքում դրույթ սույն կանոնակարգով սահմանված չափերով ու պայմաններով համապատասխան պատասխանատվությունը ստանձնելու մասին:

245. Սույն կանոնակարգի 243-րդ կետով նախատեսված միջնորդագրին կից ներկայացվում են նաև ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգերը, որոնցով առնվազն սահմանված են ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կողմից ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձանց գիտելիքների ստուգման, նրանց մասնագիտական որակի բարձրացման մեխանիզմները, ներառյալ տեղեկություններ այն անձանց վերաբերյալ, որոնց կողմից կազմակերպված դասընթացների և/կամ քննությունների վրա է հիմնվում ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի կողմից ապահովագրական գործակալների գիտելիքների ստուգումը (նման դասընթացներ կամ քննություններ կազմակերպվելու դեպքում), ապահովագրական գործակալին հաշվառման վկայականի տրամադրման, հաշվառման վկայականում փոփոխությունների կատարման և ապահովագրական գործակալի հետ պայմանագրի դադարեցման դեպքում հաշվառման վկայականի վերադարձման գործընթացները: Ընդ որում, սույն կետով սահմանված կանոնակարգերն ապահովագրական գործակալի հաշվառման ժամանակ չեն ներկայացվում, եթե դրանք նախկինում արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ:

246. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 243-րդ կետով սահմանված միջնորդագիրը ստանալու պահից՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում ապահովագրական գործակալին ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու, հաշվառումը մերժելու կամ ապահովագրական գործակալների ռեգիստրում փոփոխություն կատարելու մասին: Ապահովագրական գործակալին ռեգիստրում հաշվառելու որոշման մեջ նշվում է գործակալի հաշվառման համարը:

247. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկի կողմից հաշվառման վկայականի տրամադրումն իրականացվում է ապահովագրական ընկերության միջոցով, որը պարտավոր է ապահովագրական գործակալին հաշվառելու մասին Կենտրոնական բանկի որոշումը ստանալու պահից՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն կանոնակարգի Հավելված 32-ով սահմանված ձևով կազմել և ապահովագրական գործակալին հանձնել հաշվառման վկայականը՝ Կենտրոնական բանկի որոշման մեջ նշված համարով:

248. Ապահովագրական գործակալի վերաբերյալ Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակված տվյալների, ինչպես նաև գործակալի հաշվառման վկայականում արտացոլված տվյալների փոփոխության դեպքում տվյալ ապահովագրական գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը համապատասխան փոփոխությունը ներկայացնում է Կենտրոնական բանկ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

249. Հաշվառման վկայականում փոփոխությունները կատարվում են ապահովագրական ընկերության կողմից սույն կանոնակարգի 248-րդ կետում նշված փոփոխություններ կատարելու մասին Կենտրոնական բանկի որոշումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, և հաշվառման վկայականի նոր օրինակը տրամադրվում է ապահովագրական գործակալին հաշվառման վկայականի հին օրինակը ապահովագրական ընկերություն վերադարձնելու դեպքում:

250. Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված ապահովագրական գործակալն այլ ապահովագրական ընկերության հետ գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքելու դեպքում (իրավաբանական անձ գործակալի դեպքում՝ գործակալի գործառույթների պատվիրակման թույլտվությունը ստանալուց հետո) տվյալ ապահովագրական ընկերությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում գործակալի տվյալների փոփոխության վերաբերյալ տեղեկացում՝ համաձայն Հավելված 11-ի և Հավելված 12-ի՝ կցելով ապահովագրական ընկերության հետ կնքած պայմանագիրը, ինչպես նաև սույն կանոնակարգի 225-րդ կետով սահմանված մասնագիտական

անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար կնքված պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը (եթե ապահովագրական ընկերությունը չի ստանձնում գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումը) և 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական գործակալին է տրամադրում Կենտրոնական բանկի սահմանած ձևով (Հավելված 32) իր անունից տրվող հաշվառման վկայականը՝ գործակալին ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու համար Կենտրոնական բանկի կողմից տրված հաշվառման համարով:

251. Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված գործակալի հետ կնքած պայմանագիրը դադարեցնելու դեպքում ապահովագրական ընկերությունը գործակալին միջնորդների ռեգիստրից հանելու կամ ռեգիստրում փոփոխություն կատարելու միջնորդագրում ներկայացնում է գործակալի հետ պայմանագիրը դադարեցնելու ամսաթիվը:

ԳԼՈՒԽ 40
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

252. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական գործակալի կողմից Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելիս կամ գործող մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում (որի ստեղծման համար Կենտրոնական բանկի թույլտվությունը չի ստացվել) ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելիս տվյալ գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունն ապահովագրական գործակալի անունից Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ապահովագրական գործակալի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու կամ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդագիրը,
2) ապահովագրական գործակալի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք մասնաճյուղ կամ ներկայացուցչություն բացելու կամ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու մասին,
3) մասնաճյուղի ղեկավարների ցանկը, որը ներառում է նաև նրանց վերաբերյալ տվյալներ, ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները,
4) եթե դիմումատուն հանդես է գալիս լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվում է նաև դիմումատուի կողմից պատշաճ կարգով նրան տրված լիազորագիրը:

253. Կենտրոնական բանկի նախագահը որոշում է ընդունում ապահովագրական գործակալի Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղ և (կամ) ներկայացուցչություն ստեղծմանը թույլտվություն տալու մասին, եթե առկա չեն սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված մերժման հիմքերը: Ընդ որում, Կենտրոնական բանկի թույլտվությունը համարվում է տրված ապահովագրական գործակալի այն մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար, որոնց ցանկը ներկայացվել է Կենտրոնական բանկ ապահովագրական գործակալի հաշվառման համար Կենտրոնական բանկ դիմելիս:

254. Կենտրոնական բանկի նախագահը մերժում է ապահովագրական գործակալի Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման թույլտվությունը, եթե

1) չեն ներկայացվել բոլոր պահանջվող փաստաթղթերը կամ ներկայացված փաստաթղթերը կամ տեղեկությունները չեն համապատասխանում օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պահանջներին, կամ ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ, և (կամ)
2) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով՝ օտարերկրյա պետությունում ապահովագրական հատվածի վերահսկողության համար պատասխանատու մարմինը պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողություն չի իրականացնում տվյալ պետությունում գրանցված ապահովագրական գործակալի մասնաճյուղի գործունեության նկատմամբ, կամ տվյալ պետությունը Կենտրոնական բանկին հնարավորություն չի ընձեռում վերստուգել կամ պատշաճ վերահսկողություն իրականացնել ստեղծվելիք մասնաճյուղի կամ ներկայացուցչության նկատմամբ, և (կամ)
3) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու դեպքում ապահովագրական գործակալը Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով ծրագրում է շրջանառել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցներ կամ օժանդակել դրանց շրջանառմանը:

255. Կենտրոնական բանկի նախագահը տալիս է ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծելու թույլտվությունը կամ մերժում է միջնորդագիրը՝ այն Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

256. Եթե նշված ժամկետում Կենտրոնական բանկը որոշում չի ընդունում ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման թույլտվության տրամադրման վերաբերյալ, ապա թույլտվությունը համարվում է տրված:

257. Ապահովագրական գործակալի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով մասնաճյուղ կամ ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորելուց, արտոնագրելուց) հետո տասնօրյա ժամկետում տվյալ գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ:

258. Ապահովագրական գործակալը Կենտրոնական բանկի թույլտվությունը ստանում է միայն այն մասնաճյուղերի ստեղծման համար, որոնց միջոցով իրականացնելու է ապահովագրական գործակալի գործունեություն, կամ միայն այն ներկայացուցչությունների ստեղծման համար, որոնք կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթներն իրականացնելու են նաև ապահովագրական գործակալության մասով:

259. Եթե ապահովագրական գործակալը ապահովագրական միջնորդային գործունեություն է իրականացնում մի քանի ապահովագրական ընկերության անունից, և սույն գլխի համաձայն յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի միևնույն տեղեկատվությունը, ապա այդ պահանջը յուրաքանչյուր ապահովագրական ընկերության մասով համարվում է կատարված, եթե նրանցից որևէ մեկը սույն կանոնակարգով սահմանված կարգով ներկայացրել է այդ տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 41
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

260. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում ապահովագրական ընկերությունները պարտավոր են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը հաշվառված գործակալներին տրամադրել Կենտրոնական բանկի որոշմամբ տրված համարով վկայական՝ համաձայն կանոնակարգի Հավելված 32-ի: Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելը Կենտրոնական բանկ կողմից տրված հաշվառման վկայականները:

261. Սույն կանոնակարգի 30-րդ կետն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 7-ից, իսկ մինչ այդ ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերային կազմակերպության ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

262. Մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելն ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորում ստացած անձը կարող է աշխատել որպես ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար մինչև որակավորման ժամկետի ավարտը:

263. Սույն կանոնակարգի 170-րդ կետի աղյուսակի 6-րդ պարբերության պահանջները չեն տարածվում մինչև սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելը գրանցված ղեկավարների վրա:

264. Ապահովագրական ընկերությունները, ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերը պարտավոր են բավարարել սույն կանոնակարգի 30-րդ գլխով սահմանված գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված պահանջներին սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ մինչ այդ պարտավոր են բավարարել հետևյալ պահանջները.

1) Ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղը պետք է ունենան.

ա. ապահովագրական ընկերությանը (իսկ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի դեպքում՝ հիմնադիր ապահովագրական ընկերությանը) սեփականության իրավունքով պատկանող, վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող առանձնացված տարածք,

բ. կանխիկ դրամով գործառնություններ կատարելու դեպքում ապահովադիրների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց (առանձնացված ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկե-

րության մասնաճյուղի կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից)՝ դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի պահպանման հիմնական վայրն է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու բանկ, վարկային կազմակերպություն կամ դրանց տարածքային ստորաբաժանում: Դրամապահոցի բացակայության պարագայում ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղը կարող են չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը և ապահովագրական ընկերությունում, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղում կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղում տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին: Սույն ենթակետը չի տարածվում այն ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղերի կամ ապահովագրական ընկերության մասնաճյուղի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:

գ. ապահովագրության վկայագրերի պահպանման համար առանձին պահոց,

դ. պահպանիչ-հակահրդեհային ազդարարման, անվտանգության ահազանգման համակարգ, որի էլեկտրասնուցումը կատարվում է տարբեր աղբյուրներից, որոնցից մեկը կարող է լինել տեղային (լոկալ): Սույն ենթակետը չի տարածվում ապահովագրական ընկերության մասնաճյուղի վրա:

2) Ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման ժամանակ նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունը համարվում է սույն կետի 1-ի ենթակետի «ա» պարբերությունով սահմանված պահանջը բավարարող, եթե համապատասխան առանձնացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը տրամադրել է պարտավորագիր, որով պարտավորվել է ապահովագրական ընկերության գրանցման և լիցենզավորման պահից այդ տարածքը նրան տրամադրել սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ): Ընդ որում, ենթավարձակալության դեպքում ներկայացվում է նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը:
3) Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունները, Կենտրոնական բանկի նախնական համաձայնության հիման վրա կնքել են միացման պայմանագիր, ապա միացող և պահպանվող ապահովագրական ընկերությունների գլխամասային և տարածքային ստորաբաժանումների միջև տարածքների առանձնացվածության սույն կետով սահմանված պահանջը պարտադիր չէ՝ միացման պայմանագիրը կնքելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:
4) Ապահովագրական բրոքերի, ապահովագրական բրոքերի մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության համար սահմանվում են սույն կետի 1-ին ենթակետով ներկայացված պահանջները՝ բացառությամբ այդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով նախատեսված պահանջների: Ընդ որում, սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության պահանջները չեն տարածվում այն ապահովագրական բրոքերի, ապահովագրական բրոքերի մասնաճյուղի վրա, որոնց կանոնադրությամբ սահմանված է, որ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:
5) Օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի, ինչպես նաև ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղի գործունեության տարածքը և տեխնիկական հագեցվածությունը պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի խորհրդի և օտարերկրյա վերահսկող մարմնի կողմից սահմանված տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջներից ամենախստին:
6) Եթե ապահովագրական ընկերությունը, ապահովագրական բրոքերը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը օգտագործում են տեղեկատվական համակարգեր, ապա դրանք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգի» պահանջներին:
7) Ապահովագրական ընկերությունը, նրա մասնաճյուղը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ապահովագրական բրոքերը կարող են սույն կետի 1-ին ենթակետի «բ», «գ», «դ» պարբերություններով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն կնքել ապահովագրության պայմանագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ պատահարները՝ ապահովագրական ընկերության, նրա մասնաճյուղի, օտարերկրյա ապահովագրական

ընկերության մասնաճյուղի, ապահովագրական բրոքերին սեփականության, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող առանձնացված տարածքում գտնվող գույքի, այդ թվում և կանխիկ դրամի, արժեթղթերի, ապահովագրության վկայագրերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի՝ հրդեհի, ավազակության, գողության, կողոպուտի հետևանքով կորուստը կամ վնասվածքը: Նշված ապահովագրական ռիսկերի գծով ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել ընկերության բոլոր ակտիվների 1 տոկոսից:

Ընդ որում, վերոնշյալ ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ «A-»
- Մուդիզ «A3»
- Ա.Մ. Բեստ «A-»
- Ֆիտչ «A-»:»:

265. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական ընկերությունները, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերը տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում ապահովագրական գործակալին հաշվառման վկայականի տրամադրման, հաշվառման վկայականում փոփոխությունների կատարման և ապահովագրական գործակալի հետ պայմանագրի դադարեցման դեպքում հաշվառման վկայականի վերադարձման կանոնակարգերը հաստատված կառավարման իրավասու մարմնի կողմից:

Հավելված 1

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊՈ

ԼԻՑԵՆԶԻԱ

ԹԻՎ XXXX
ԳՐԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ XXXX

ՈՉ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ (ԵՆԹԱԴԱՍԸ)

_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*

Լիցենզավորված ապահովագրական ընկերության լրիվ ֆիրմային անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____

Հավելված 2

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊԿ

ԼԻՑԵՆԶԻԱ

ԹԻՎ XXXX
ԳՐԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ XXXX

ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ (ԵՆԹԱԴԱՍԸ)

_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*

Լիցենզավորված ապահովագրական ընկերության լրիվ ֆիրմային անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____

Հավելված 3

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊՎ

ԼԻՑԵՆԶԻԱ

ԹԻՎ XXXX
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ XXXX

ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ (ԵՆԹԱԴԱՍԸ)

_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*
_____ *Տրված է՝__ _____ 20__ թ.*

Լիցենզավորված ապահովագրական ընկերության լրիվ ֆիրմային անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____

Հավելված 4

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՊՊԲ

ԼԻՑԵՆԶԻԱ

ԹԻՎ XXXX
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ XXXX

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

_____
_____
_____
_____
_____

Իրավաբանական անձի անվանումը՝

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ ----------

Տրված է՝__ _____ 20__ թ.

Հավելված 5

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Մենք (Ես) _____ ստեղծումը
(ապահովագրական ընկերության անվանումը և կազմակերպաիրավական ձևը)
նախաձեռնող ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել պետական գրանցման և
_____
(ոչ կյանքի, կյանքի ապահովագրության և վերաապահովագրության)
իրականացման լիցենզիա ստանալու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել _____ _____ ապահովագրական ընկերությունը (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը) և տրամադրել ստորև նշված ապահովագրության դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա.

□ ոչ կյանքի ապահովագրության

_____
(դասի անվանումը)
_____
_____
_____

□ կյանքի ապահովագրության

_____

(դասի անվանումը)

_____

_____

□ վերաապահովագրության

_____

(դասի անվանումը)

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք պետական գրանցման և լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ _____ էջ:

Ստորև ներկայացնում ենք ստեղծվող ապահովագրական ընկերության կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) _____:

Ներկայացնում ենք (եմ) նաև փոստային հասցեն _____:

Հավաստիացնում ենք (եմ), որ _____ տարածքը և

(կազմակերպության անվանումը)

տեխնիկական հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 3/01-ի 30-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

Պարտավորվում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական

(կազմակերպության անվանումը)

հագեցվածության չափանիշները լիցենզավորվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 3/01-ի 30-րդ գլխով սահմանված պահանջներին և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդորում, ենթավարձակալության դեպքում կներկայացվի նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

Մենք (ես)՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումում և դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության)
ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ).

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 6

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ) ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություն բացելու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) _____ ներկայացուցչությունը:

Ներկայացուցչություն բացելու հիմնավորումը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) ներկայացուցչության գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Առդիր՝ ____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____ _____

(հեռախոս)

«__» _____ 20__թ.

Հավելված 7

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(ապահովագրական ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում _____ բացելու մասին:

(մասնաճյուղ)

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ապահովագրական ընկերության _____ մասնաճյուղը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի կից ներկայացնում ենք ապահովագրական ընկերության մասնաճյուղի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ ____ էջ:

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական

(մասնաճյուղի անվանումը)

հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 3/01-ի 30-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

☐ Պարտավորվում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական

(մասնաճյուղի անվանումը)

հագեցվածության չափանիշները լիցենզավորվելուց հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 3/01-ի 30-րդ գլխով սահմանված պահանջներին, և Կենտրոնական բանկ կներկայացվեն մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

«___» _____ 20 թ.

Հավելված 8

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(ապահովագրական ընկերության լրիվ անվանումը)
որոշում է կայացրել _____ մասնաճյուղ բացելու մասին:
(մասնաճյուղի բացման պետությունը)

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ նախնական համաձայնություն ապահովագրական ընկերության _____ բացելու համար:
(մասնաճյուղը)

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական
(մասնաճյուղի անվանումը)
հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 3/01-ի 30-րդ գլխով սահմանված պահանջներին, կամ

☐ Պարտավորվում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական
(կազմակերպության անվանումը)
հագեցվածության չափանիշները գրանցվելուց (լիցենզավորվելուց) հետո _____ ժամկետում կհամապատասխանեցվեն Կանոնակարգ 3/01-ի 30-րդ գլխով սահմանված պահանջներին, և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև տարածքի սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ընդ որում, ենթավարձակալության դեպքում կներկայացվի նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք ապահովագրական ընկերության մասնաճյուղի բացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

_____

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը
_____

«___» _____ 20__թ.

Հավելված 9

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(ապահովագրական ընկերության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել _____ ներկայացուցչություն բացելու մասին:

(ներկայացուցչության բացման պետությունը)

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ նախնական համաձայնություն ապահովագրական ընկերության _____ բացելու համար:

(ներկայացուցչությունը)

Ներկայացուցչություն բացելու հիմնավորումը.

_____
_____
_____

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք ապահովագրական ընկերության ներկայացուցչության բացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝_____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

_____

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

«___» _____ 20__թ.

Հավելված 10

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(կազմակերպության լրիվ անվանումը, պետական գրանցման համարը)

որոշում է կայացրել ապահովագրական բրոքերային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար դիմելու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել ապահովագրական բրոքերային գործունեության՝ ստորև նշված բրոքերային գործառնությունների իրականացման լիցենզիա.

- □ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում.
- □ ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում.
- □ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ ընկերության թույլատրած չափերով.

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ _____ էջ:

Հավաստիացնում ենք, որ _____տարածքը և տեխնիկական

(կազմակերպության անվանումը)

հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 3/01-ի 30-րդ գլխով սահմանված պահանջներին:

Ստորև ներկայացնում ենք ստեղծվող ապահովագրական բրոքերային ընկերության կոնտակտային անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) _____:

Ներկայացնում ենք նաև փոստային հասցեն:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

_____

(կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____

(հեռախոս)

Հավելված 11

	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխություն վերաապահովագրողի մասնաբաժնում							
	181. Ապահովագրական հատուցումներ, այդ թվում՝							
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ապահովագրական հատուցումներ							
	182. Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով, այդ թվում՝							
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով							
	183. Տեխնիկական պահուստների փոփոխություն, այդ թվում							
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստների փոփոխություն							
	184. Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն, այդ թվում							
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն							

Տոմսին	185. Ապահովագրավճարներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ապահովագրավճարներ								
	186. Վերաապահովագրավճարներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի վերաապահովագրության գծով վերաապահովագրավճարներ								
	187. Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխություն								
	188. Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնում, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխություն վերաապահովագրողի մասնաբաժնում								
	189. Ապահովագրական հատուցումներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ապահովագրական հատուցումներ								
	190. Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով								
	191. Տեխնիկական պահուստների փոփոխություն, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստների փոփոխություն								
	192. Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն								
Կապիտալի հատուցման ապահովագրություն	193. Ապահովագրավճարներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ապահովագրավճարներ								
	194. Վերաապահովագրավճարներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի վերաապահովագրության գծով վերաապահովագրավճարներ								
	195. Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխություն								
	196. Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնում, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխություն վերաապահովագրողի մասնաբաժնում								
	197. Ապահովագրական հատուցումներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ապահովագրական հատուցումներ								
	198. Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով								
	199. Տեխնիկական պահուստների փոփոխություն, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստների փոփոխություն								
	200. Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն								
Ընդամենը	201. Ապահովագրավճարներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ապահովագրավճարներ								
	202. Վերաապահովագրավճարներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի վերաապահովագրության գծով վերաապահովագրավճարներ								
	203. Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխություն								
	204. Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնում, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի փոփոխություն վերաապահովագրողի մասնաբաժնում								
	205. Ապահովագրական հատուցումներ, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ապահովագրական հատուցումներ								
	206. Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով, այդ թվում								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով								
	207. Տեխնիկական պահուստների փոփոխություն, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստների փոփոխություն								
	208. Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն, այդ թվում՝								
	1) Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխություն								
	209. Այլ եկամուտներ ապահովագրության գծով								
	210. Այլ ծախսեր ապահովագրության գծով, այդ թվում՝								
	1) ապահովագրական գործակալներին տրվող միջնորդավճարների գծով զուտ ծախսեր								
	2) կարգավորման ծախսեր								
	211. Տոկոսային եկամուտներ, այդ թվում՝								
	1) տոկոսային եկամուտներ ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդների, նրանց տրամադրված փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով								
	2) տոկոսային եկամուտներ ՀՀ պետական և ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից								
	3) տոկոսային եկամուտներ ՀՀ ոչ պետական արժեթղթերից								
	4) տոկոսային եկամուտներ այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերից								
	212. Տոկոսային ծախսեր, այդ թվում՝								
	1) տոկոսային ծախսեր ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերի, փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց								
	213. Ոչ տոկոսային եկամուտներ								
	214. Ոչ տոկոսային ծախսեր, այդ թվում՝								
	1) ծախսեր աննմանակումի գծով, այդ թվում՝								
	ա. ուսուցման (ներառյալ՝ ուսուցման նպատակով գործուղման) ծախսեր								
	2) գովազդի գծով ծախսեր								
	3) Բյուրոյի նկատմամբ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսեր								
	215. Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ								
	216. Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումների վերադարձ								
	217. Շահույթ մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը								
	218. Շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո								
	219. Շահաբաժիններ								

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, գործունեության կարգավորման և վերահսկողության, լիցենզիայի գործողության կասեցման և ուժը կորցրած ճանաչելու, մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման ընթացակարգերը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, ծրագրային և անվտանգության պահանջները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի եւ վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-22-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 636-Ն որոշման 1-ին կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 195-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.09.2014 թ. (ՀՀԳՏ N23 (502)[1], 16.09.2014):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 17/01

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ԾՐԱԳՐԱՅԻՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ, ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ (այսուհետ՝ պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ) և/կամ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ Վճարահաշվարկային կազմակերպություն) լիցենզավորման, վճարահաշվարկային գործունեության կարգավորման, վճարահաշվարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության, վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիայի գործողության կասեցման և ուժը կորցրած ճանաչելու, վճարահաշվարկային կազմակերպությունների մասնաճյուղերի հաշվառման, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ընթացակարգերը, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, ծրագրային և անվտանգության պահանջները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող կամ գործող և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի վրա:

3. Սույն կանոնակարգը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, դրանց մասնաճյուղերի, ինչպես նաև այն անձանց վրա, որոնք Հայաստանի Հանրապետության օրենքների և միջազգային պայմանագրերի հիման վրա իրավունք ունեն, որպես ձեռնարկատիրական գործունեություն, երրորդ անձանց համար իրականացնել վճարումների ընդունում և կատարում՝ առանց բանկային հաշիվների բացման, և/կամ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ:

4. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգչային ցանցի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով:

5. Սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում Յունիկոդ տառատեսակով և «Փի Դի էֆ» ֆորմատով՝ բացառությամբ վճարահաշվարկային կազմակերպության տնտեսական ծրագրին կից ներկայացվող աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Վճարահաշվարկային կազմակերպության տնտեսական ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

6. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի

կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով՝ առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով, և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող մուտքի տվյալների(անուն եւ ծածկագիր) միջոցով:

7. Նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

8. Սույն կանոնակարգով սահմանված ոչ հայերեն փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ: Ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է հայերեն տարբերակին:

9. Վճարահաշվարկային կազմակերպությունը տեղեկացնում է Կենտրոնական բանկին իր կանոնադրությունում իրականացված փոփոխության վերաբերյալ տեղեկանքում նշվելով Արդարադատության նախարարության պետական ռեգիստրում գրանցված իր կանոնադրության վերջին փոփոխության ամսաթիվը:

10. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրերով (դիմումներով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրերում (դիմումներում) (բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված միջնորդագրերի ձևերի) միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական, և գիտակցում է, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

11. Ընդ որում, էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

Վճարահաշվարկային կազմակերպության անվանում	գծիկ	փաստաթղթի տեսակը	գծիկ	փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօ/աա/տտ ֆորմատով	կետ	Ընդլայնում
Օրինակ.								
ԱԲԳ	_	միջնորդագիր	_	կանոնադրական փոփոխություններ	_	250914	.	pdf

12. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումների) առկայության դեպքում Կենտրոնական բանկն այդ թերությունների մասին տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Համապատասխան դիմումը ներկայացված է համարվում ճշգրտված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, դիմումի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը:

13. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

14. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ պետք է կրկին ներկայացնի փոփոխված փաստաթուղթը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

15. Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

Գ Լ ՈՒ Խ 2
ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16. Սույն կանոնակարգի իմաստով՝

1) ***«Կենտրոնական բանկ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***Ղեկավար***՝ Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարներ են հանդիսանում կազմակերպության գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը,
3) ***Թեկնածու***՝ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավար անձ աշխատելու համար որակավորման ստուգման դիմած անձ,
4) ***«Անձնագրի տվյալներ»***՝ անձնագրի սերիան և անձնագրի համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,
5) ***«Հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը), հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը,
6) ***«Անձը հաստատող փաստաթղթի տվյալները»***՝ անձնագրի տվյալները և (կամ) հանրային ծառայությունների համարանիշը,
7) ***«Բարձրագույն կրթություն ունեցող անձ»***՝ անձ, ով ավարտել է Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ստացել է Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական,
8) ***Ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարներ***՝ անձինք, որոնք առանց համապատասխան պաշտոնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման, սույն կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում են սույն կանոնակարգի համաձայն գրանցման ենթակա ղեկավարի պարտականություններ,
9) ***Պատվիրակում (outsourcing)***՝ Օրենքի 19.1-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան գործառույթների իրականացում,
10) ***«Գործառնական օր» ծրագրային համակարգ***՝ իրենից ներկայացնում է ավտոմատ եղանակով հաղորդագրությունների մշակման, փոխանցումների իրականացման, հաշվառման և այլ գործառնությունների իրականացման տեխնիկածրագրային համալիր,
11) ***Ինկասացիոն ծառայություն***՝ «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
12) ***Վճարումների ընդունման տերմինալ***՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի ««Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին» թիվ 209-Ն որոշմամբ հաստատված «Ավտոմատ ինքնասպասարկման սարքերի միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ» կարգով սահմանված վճարումների ընդունման տերմինալներ,
13) Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքով կիրառվող նշանակությունը:

Գ Լ ՈՒ Խ 3
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

17. Վճարահաշվարկային ծառայություն մատուցելու լիցենզիա ստանալու համար կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ պահանջները և պայմանները.

1) որպես իրավաբանական անձ պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում,
2) չի կարող իրականացնել առևտրային, արտադրական և այլ տիպի գործունեություն՝ բացառությամբ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիայի հիման վրա արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի և փոստային կապի ծառայությունների մատուցման,
3) վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները պետք է համապատասխանեն սույն կանոնակարգի 0-րդ, 0-րդ կամ 0-րդ կետով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:
4) վճարահաշվարկային կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը պետք է ունենան սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքով իրենց պատկանող տարածք:
5) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպության գործունեության իրականացման վայրը պետք է համապատասխանի սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված պահանջներին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

6) վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է համապատասխանի սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված տեխնիկական հագեցվածության, ծրագրային, անվտանգության պահանջներին, և պետք է ապահովի իր կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների մատուցման համար սահմանված պայմանները և պահանջները,
7) վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերից մեկում բացված բանկային հաշվում Օրենքի 23-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը,
8) վճարահաշվարկային կազմակերպությունը (կանխիկ միջոցներով գործառնությունների իրականացման դեպքում) պետք է ունենա դրամապահոց (իր նախադրամապահոցով) կամ չհրկիզվող պահարանների սենյակ կամ ինկասացիոն կազմակերպության հետ կնքած ինկասացիոն ծառայությունների մատուցման պայմանագիր (տվյալ պայմանագրի առկայությունն անհրաժեշտ չէ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի համար) կամ տվյալ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից դրամափոխադրման ինքնուրույն իրականացման դեպքերում (Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված գումարի սահմանաչափով)՝ դրամափոխադրման իրականացման ընթացակարգը նկարագրող փաստաթուղթ,
9) այն դեպքում, երբ վճարահաշվարկային կազմակերպությունը (կանխիկ միջոցներով գործառնությունների իրականացման դեպքում) կնքել է ինկասացիոն ծառայությունների մատուցման պայմանագիր, ապա տվյալ պայմանագրի հետ մեկտեղ պետք է առկա լինի կնքված պայմանագիր որևէ բանկի հետ՝ դրամական միջոցները տվյալ բանկին կամ դրա տարածքային ստորաբաժանումներին պահպանման հանձնվելու վերաբերյալ: Ընդ որում, վճարահաշվարկային կազմակերպության կանխիկ դրամը պահպանության կարող է հանձնել բացառապես բանկին կամ դրա տարածքային ստորաբաժանումներին:
10) Վճարումների ընդունման տերմինալների միջոցով վճարների հավաքագրում իրականացնելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է ունենա դրամական (փողային) փոխանցումների ու վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիաները միաժամանակ:

18. Վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստանալու համար կազմակերպության հիմնադիրները կամ նրանց կողմից լիազորված անձը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն Հավելված 1-ի,
2) վճարահաշվարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կանոնադրությունը: Ընդ որում՝ կանոնադրությունը և/կամ դրա պատճենները ներկայացնելու պարտավորությունը համարվում է կատարված, եթե սույն կետի 1-ին ենթակետով նշված հայտում, հայտատուին վերաբերող (այսուհետ՝ լիցենզավորվող կազմակերպություն) տեղեկությունների շարքում նշվում է լիցենզավորվող կազմակերպության պետական գրանցման համարը,
3) վճարահաշվարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարներ նշանակելու մասին,
4) վճարահաշվարկային կազմակերպության մասնակիցների և վերջիններիս հետ փոխկապակցված անձանց մասին տեղեկանքներ՝ համաձայն Հավելված 2-ի, Հավելված 2.1-ի, Հավելված 2.2-ի և Հավելված 3-ի: Ընդ որում, փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն,
5) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը,
6) վճարահաշվարկային կազմակերպության աշխատանքի կանոնակարգը, որը կարող է տարբերվել՝ ըստ մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների տեսակների: Սույն կանոնակարգի իմաստով՝ վճարահաշվարկային կազմակերպության աշխատանքի կանոնակարգ է համարվում վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայով սահմանված վճարահաշվարկային կազմակերպության տեսակից ելնելով և վերջինիս կառավարման բարձրագույն մարմնի կողմից հաստատված հետևյալ փաստաթղթերի փաթեթը.

ա. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպության համար՝

ա) դրամական միջոցների ինկասացիայի իրականացման ընթացակարգը նկարագրող փաստաթուղթ,
բ) մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների տեսակները, դրանց իրականացման կարգն ու պայմանները, ժամկետները սահմանող փաստաթուղթ,
գ) առանց մասնաճյուղ ստեղծելու իր գտնվելու վայրից դուրս վճարումներ կատարելու կարգն ու պայմանները, ժամկետները սահմանող փաստաթուղթ,
դ) վճարման հետ կապված անճշտությունների առաջացման դեպքում հաճախորդների կողմից բողոքարկման ընթացակարգը, դիմումների ընդունման կարգն ու պայմանները, ժամկետները սահմանող փաստաթուղթ,

բ. Պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության համար՝

ա) պրոցեսինգի իրականացման կանոնները, կարգն ու պայմանները, ժամկետները, այն է՝ վճարահաշվարկային փաստաթղթերի և վճարային գործիքների ընդունման, մշակման, փոխանակման և հավաստագրման կարգն ու պայմանները սահմանող փաստաթուղթ,

բ) տեղեկատվության փոխանակման և մշակման ժամանակ կիրառվող անվտանգության ընթացակարգերը նկարագրող փաստաթուղթ,

գ) քլիրինգի իրականացման կանոնները, կարգն ու պայմանները սահմանող փաստաթուղթ:

7) վճարահաշվարկային կազմակերպության գործունեության տնտեսական ծրագիրը՝ համաձայն Հավելված 4-ի,

8) ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերից մեկում բանկային հաշվին առկա սույն կանոնակարգի 0-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված փաստացի միջոցների առկայության վերաբերյալ տեղեկանք,

9) վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն Հավելված 5-ի ՁԼ 2-ի,

10) սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը:

11) վճարահաշվարկային կազմակերպության (կանխիկ միջոցներով գործառնությունների իրականացման դեպքում) դրամապահոց (իր նախադրամապահոցով) կամ չհրկիզվող պահարանների սեղյակի առկայության մասին հայտարարագիր, կամ ինկասացիոն կազմակերպության հետ կնքած ինկասացիոն ծառայությունների մատուցման պայմանագիր և պայմանագիր որևէ բանկի հետ դրամական միջոցները տվյալ բանկին կամ դրա տարածքային ստորաբաժանումների պահպանմանը հանձնվելու վերաբերյալ, կամ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից դրամափոխադրման ինքնուրույն իրականացման դեպքերում (Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված գումարի սահմանաչափով)՝ դրամափոխադրման իրականացման ընթացակարգը նկարագրող փաստաթուղթ: Կազմակերպության կողմից 3 (երեք) մլն ՀՀ դրամը գերազանցող գումարի տեղափոխություն դեպքում ինկասացիոն կազմակերպության հետ կնքած ինկասացիոն ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը պարտադիր է:

19. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո քննում է դրանք և Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում լիցենզավորվող կազմակերպությանը Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու հայտի մերժման վերաբերյալ:

20. Եթե լիցենզավորվող վճարահաշվարկային կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են կամ անհրաժեշտ է որոշակի փաստեր պարզաբանել, ապա Կենտրոնական բանկը ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացմանը հաջորդող 30-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է լիցենզավորվող կազմակերպությանը, որը պարտավոր է տեղեկացմանը հաջորդող տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել շտկված և (կամ) բացակայող և (կամ) որոշակի փաստեր պարզաբանող փաստաթղթերը: Վերոնշյալ ժամկետի ընթացքում անհրաժեշտ շտկումների (փաստաթղթերի կամ պարզաբանումների) չներկայացման դեպքում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ մերժվում է Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորումը՝ Օրենքի 20.1 հոդվածի 1-ի մասի «բ» կետով սահմանված հիմքով:

21. Կազմակերպությունը լիցենզավորվում է, եթե բավարարվել են սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետերի պահանջները և բացակայում են Օրենքի հոդված 20.1-ով սահմանված հիմքերը:

22. Լիցենզավորման մասին որոշման ընդունման պահից եռօրյա ժամկետում Կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպությանը տալիս է լիցենզիա՝ համաձայն Հավելված 6-ի:

23. Կենտրոնական բանկը մերժում է լիցենզիա ստանալու հայտը՝ Օրենքի հոդված 20.1-ով սահմանված հիմքով:

24. Լիցենզիա ստանալու հայտը մերժելու դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում, որն ուղարկում է լիցենզավորվող կազմակերպությանը:

25. Լիցենզիայի հայտը մերժելու դեպքում լիցենզավորվող կազմակերպությունն իրավունք ունի լիցենզիա ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով:

Գ Լ ՈՒ Խ 4
ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

26. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գլխամասի և մասնաճյուղի տարածքը (գործունեության վայրը), որտեղ լիցենզիայով նախատեսված գործառնություններն իրականացվում են կանխիկ, կարող է գտնվել.

1) Առանձնացված շինության ներսում,
2) Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպության տարածքում (այդ տարածքի վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման համար կնքված պայմանագրով կամ սեփականություն իրավունքով ֆինանսական կազմակերպությանը պատկանող տարածք),
3) Գյուղական բնակավայրում գործող համայնքի ղեկավարի նստավայրի (այսուհետ՝ գյուղապետարան) շենքում,
4) Հեռահաղորդակցման օպերատորի տարածքում,
5) Այլ գերատեսչության կամ սույն կետում չնշված կազմակերպության տարածքում:

27. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գլխամասի և մասնաճյուղերի տարածքները (գործունեության վայրը) պետք է գտնվեն փակ տարածքում՝ բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված տարածքներում բացվող մասնաճյուղերի: Ընդ որում՝ սույն կանոնակարգի իմաստով փակ տարածք ասելով հասկանում ենք.

Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության տվյալ կառուցվածքային ստորաբաժանման (գլխամաս, մասնաճյուղ) տարածքը, որը պետք է առանձնացված լինի վերջիններիս հարող այլ տարածքներից: Ընդ որում.

ա) Գլխամասը հարակից տարածքներից պետք է առանձնացված լինի քար-բետոնե հիմքից պատերով, որոնք պետք է միանան քար-բետոնե շինության տվյալ հարկի առաստաղին,
բ) Մասնաճյուղը հարակից տարածքներից պետք է առանձնացված լինի առնվազն շինանյութից կառուցված պատերով և ունենա անմիջական տանիք/առաստաղ:

28. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների և դրանց մասնաճյուղերի տարածքները (կանխիկ միջոցներով գործառնությունների իրականացման դեպքում) պետք է ունենան.

1) գործառնական դրամարկղ (այսուհետ՝ դրամարկղ),
2) դրամապահոց (իր նախադրամապահոցով) կամ չհրկիզվող պահարանների սենյակ: Դրամապահոցը (չհրկիզվող պահարանների սենյակը) և դրամարկղը միասին կազմում են դրամարկղային հանգույցը, որը նախատեսված է կանխիկ դրամով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար,
3) հաճախորդների սպասարկման սրահ,
4) պահպանիչ-հակահրդեհային ազդարարման գործող համակարգ,
5) անվտանգության ազդարարման գործող համակարգ:

29. Դրամարկղը պետք է առանձնացված լինի հարակից տարածքներից: Այն պետք է ունենա առանձին կողպվող դռնով մուտք՝ պայմանով, որ տվյալ տարածք հնարավոր է մուտք գործել միայն տվյալ վճարահաշվարկային կազմակերպության ներսից և միայն հիշյալ դռնով: Դրամարկղի դիմային մասի պատը պետք է կառուցված լինի շինանյութից և ունենա առնվազն 1-1.2 մ բարձրություն, որից հետո սկսվում է ապակե մասը: Դրամարկղի դիմային ապակին պետք է տեղակայված լինի այնպես, որ բացառի հաճախորդի և գանձապահի անմիջական շփումը, ինչպես նաև ապահովի կանխիկ դրամը հաշվելու դիտողական հսկողություն՝ թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից (հաճախորդի հսկողությունը գանձապահի նկատմամբ և գանձապահի հսկողությունը հաճախորդի նկատմամբ):

30. Գյուղապետարանի շենքում մասնաճյուղի հաշվառման նպատակով սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով նշված տարածքի վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման համար կնքված պայմանագիր չի պահանջվում, եթե առկա է պայմանագիր գյուղապետարանի և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության միջև՝ տվյալ տարածքում վճարահաշվարկային ծառայությունների մատուցման վերաբերյալ: Մասնաճյուղի առաստաղը, պատերը և հատակը պետք է լինեն քար-բետոնե հիմքով:

31. Գյուղապետարանի շենքում բացվող մասնաճյուղի համար սույն կանոնակարգի 0-րդ կետի պահանջը կհամարվի բավարարված, եթե դրամարկղի դիմային մասն ունենա առնվազն 1-1.2 մ բարձրությամբ պատ, դիմային մասում սպասարկման սեղանն ունենա առնվազն 0.4-0.5 մ լայնություն, իսկ ապակե մասը կարող է բացակայել:

32. Շարժական բջջային կապի կամ ֆիքսված հեռախոսակապի օպերատորի (այսուհետ՝ հեռահաղորդակցման օպերատոր) շենքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության մասնաճյուղերի հաշվառման նպատակով սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-րդ ենթակետով նշված

տարածքի վարձակալության կամ անհատույց օգտագործման համար կնքված պայմանագիր չի պահանջվում, եթե ապահովվում են ստորև նշված բոլոր պահանջները.

1) կնքված է պայմանագիր դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության և հեռահաղորդակցման օպերատորի հետ՝ տվյալ տարածքում դրամական (փողային) փոխանցումների կատարման հետ կապված ծառայություններ մատուցելու վերաբերյալ,
2) մասնաճյուղի տարածքում կատարվում է տեսագրում, որն ապահովում է վճարումը կատարող անձի և գործարքի կատարման ընթացքի նկարահանումը: Ընդ որում՝ սույն ենթակետով նախատեսված տեսագրությունները հասանելի են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը, պահպանվում են առնվազն 90 օր և հասանելի են Կենտրոնական բանկի առաջին իսկ պահանջի դեպքում,
3) առկա է անվտանգության ազդարարման գործող համակարգ:

33. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված պահանջները պետք է ներառվեն հեռահաղորդակցման օպերատորի հետ կնքված պայմանագրում: Այն դեպքում, երբ սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ ենթակետով ներկայացված տեսագրումն իրականացվում է վճարահաշվարկային կազմակերպության կողմից, ապա սույն կետով նշված պայմանագրում սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները ներառելու դրույթը պարտադիր չէ:

34. Այն դեպքում, երբ հեռահաղորդակցման օպերատորի տարածքում գտնվող վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղում բացակայում է դրամապահոց (չհրկիզվող պահարանների սենյակ), ապա մասնաճյուղը հարակից տարածքներից պետք է առանձնացված լինի սույն կանոնակարգի 0-րդ կետով դրամարկղին ներկայացվող պահանջների համաձայն: Հեռահաղորդակցման օպերատորների տարածքում բացվող մասնաճյուղի համար սույն կանոնակարգի 0-րդ կետի պահանջը կիամարվի բավարարված, եթե այն հարակից տարածքներից լինի առանձնացված, ունենա առանձին ծառայողական մուտք, որը կարող է լինել ընդհանուր հեռահաղորդակցման օպերատորի աշխատակիցների համար: Դրամարկղի (մասնաճյուղի) դիմային մասը պետք է կառուցված լինի շինանյութից և ունենա առնվազն 1-1.2 մ բարձրությամբ պատ, իսկ ապակե մասը կարող է բացակայել:

35. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար դրամապահոցի կամ չհրկիզվող պահարանների սենյակի կամ դրամափոխադրման իրականացման ընթացակարգը նկարագրող փաստաթղթի առկայությունը պարտադիր չէ, եթե ինկասացիոն ծառայություն մատուցող անձի հետ կնքված են համապատասխան պայմանագրեր կանխիկ դրամի տեղափոխման վերաբերյալ: Վերը նշված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո անմիջապես կնքվում են նոր պայմանագրեր, և դրանք կամ դրանց ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերը 15-օրյա ժամկետում ներկայացվում են Կենտրոնական բանկ:

36. Դրամապահոցի բացակայության պարագայում վճարահաշվարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի մնացորդը յուրաքանչյուր օրվա վերջում չի գերազանցում Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված գումարը և տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարանում, որն ամրացված է դրամարկղի հատակին և/կամ պատին:

37. Կանխիկ դրամական միջոցները մինչև ինկասացիայի իրականացումը պետք է պահվեն դրամարկղում գտնվող չհրկիզվող պահարանում:

38. Չհրկիզվող պահարանների սենյակը պետք է ունենա մեկ կողպվող դուռ, իսկ մուտքը լինի միայն դրամարկղից: Չհրկիզվող պահարանների սենյակը պետք է առանձնացված լինի հարակից տարածքներից, պատերը լինեն քար-բետոնե հիմքով, արտաքին պատի պատուհանները (առկայության դեպքում)՝ ճաղապատված:

39. Դրամապահոցը կառուցվում է առանց պատուհանների, քար-բետոնե հիմքով և պետք է ունենա մեկ զրահապատ չհրկիզվող դուռ: Դրամապահոցի մուտքը պետք է լինի միայն դրամարկղից:

40. Դրամապահոցը չպետք է ունենա ընդհանուր պատ շենքի արտաքին և նույն շենքում տեղակայված այլ հաստատությունների պատերի հետ: Դրամապահոցը շենքի արտաքին կամ այլ հաստատությունների պատերին կից կառուցելու դեպքում դրանց միջև պետք է լինի դիտողական միջանցք, որը հնարավորություն կտա դիտելու և հսկելու դրամապահոցի պատերի ամբողջականությունը (հսկելու անվտանգությունը):

41. Եթե դրամապահոցի վերևում տեղակայված է այլ կազմակերպություն (կամ այն գտնվում է շենքի վերջին հարկում), ապա դրամապահոցն առաստաղից պետք է բաժանված լինի դիտողական միջանցքով, որը հնարավորություն կտա դիտելու և հսկելու առաստաղի ամբողջականությունը:

42. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության հաճախորդների սպասարկման սրահը պետք է գտնվի փակ տարածքում, ունենա առնվազն 4 (չորս) քառակուսի մետր տարածք՝ յուրաքանչյուր սպասարկման պատուհանի համար, առանձնացված լինի արտաքին միջավայրից և ապահովի հաճախորդի անվտանգությունը գործարքի ժամանակ: Հեռահաղորդակցման օպերատորի/գյուղապետարանի տարածքում բացվող մասնաճյուղերի համար սպասարկման սրահ է համարվում հեռահաղորդակցման օպերատորի սպասարկման կամ գյուղապետարանի սրահը և վերջիններիս չափերն առնվազն պետք է լինի 4 (չորս) քառակուսի մետր:

43. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գլխամասը/մասնաճյուղը պետք է ունենա շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր: Ընդ որում, կազմակերպության գլխամասի շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը, իսկ մասնաճյուղի շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը կամ այլ համապատասխան կազմակերպությանը, ինչպես նաև կազմակերպության գլխամասի և մասնաճյուղերի տարածքում պետք է տեղադրված լինեն պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներ՝ ըստ տարածքի մակերեսի: Գլխամասի/մասնաճյուղի շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգի աշխատանքը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի միջոցով՝ համապատասխան պայմանագրի հիման վրա:

44. Եթե Վճարահաշվարկային կազմակերպության գլխամասը/մասնաճյուղը գտնվում է ներքին շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայություն կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման կամ պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգ ունեցող տարածքներում, ապա սույն կանոնակարգի 0-րդ կետի պահանջը կհամարվի ապահովված, եթե դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության տարածքի շուրջօրյա ահազանգման և պահպանիչ-հակահրդեհային համակարգերը միացված են շուրջօրյա պահակային (անվտանգության) ծառայությանը կամ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգին և պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

45. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության գլխամասի և մասնաճյուղի տարածքում պետք է կատարվի տեսագրում, որն ապահովում է վճարում կատարող անձի և գործարքի կատարման ընթացքի նկարահանումը: Տեսագրությունները պետք է պահպանվեն առնվազն 90 օր և հասանելի լինեն Կենտրոնական բանկի առաջին իսկ պահանջի դեպքում:

46. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գլխամասի և դրանց մասնաճյուղերի համար անհրաժեշտ է հետևյալ տեխնիկական հագեցվածությունը՝

1) չհրկիզվող պահարան (եթե վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված է, որ կազմակերպությունը գործառնություններն իրականացնում է կանխիկ),
2) դրամանիշի իսկությունը ստուգող սարք (եթե վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված է, որ կազմակերպությունը գործառնություններն իրականացնում է կանխիկ),
3) վահանակ, որտեղ նշվում են լիցենզավորված անձի անվանումը, աշխատանքային օրերը և ժամերը,
4) կապի միջոց տվյալ մասնաճյուղի և իր գլխամասի միջև, որը թույլ կտա ապահովել մասնաճյուղում կատարվող գործարքների արտացոլումն ընդհանուր տեղեկատվական բազայում և կազմակերպության հաշվեկշռում,
5) տեխնիկածրագրային միջոցները (համակարգիչ, սերվեր և այլն) պետք է կապարակնքվեն, իսկ նշված տեխնիկածրագրային միջոցների համար՝ ծրագրային մակարդակով պետք է փակվեն հասանելիության հնարավորությունները արտաքին սարքավորումների/միջոցների (յու-էս-բի կրիչներ, կոշտ սկավառակներ, արտաքին հիշողության սարքեր և այլն) համար՝ բացառելով/սահմանափակելով անմիջապես աշխատակցի կողմից նշված սարքավորումներով/միջոցներով տեղեկատվության և ծրագրային ապահովման դուրսբերումը և/կամ տեղադրումը:

47. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության հաճախորդների սպասարկման սրահում, իսկ կանխիկով գործառնությունների կատարման դեպքում՝ դրամարկղի դիմային մասում, հաճախորդների համար տեսանելի տեղում, ընթեռնելի տառերով և թվերով պետք է փակցված լինեն Կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիայի պատճենը, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության անվանումը (վահանակի տեսքով) մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների տեսակները և սակագները, աշխատանքային օրերը և ժամերը, հեռախոսահամարը, սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերում սահմանված փոխարկման գործառնությունների իրականացման դեպքում՝ արտարժույթի փոխարկման փոխարժեքները:

48. Սահմանված պահանջներն ըստ կիրառելիության և ըստ սուբյեկտների ամփոփ տեսքով բերված են սույն կանոնակարգի Հավելված 11-ում, որը կրում է ուղեցուցային բնույթ:

49. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է առանց մասնաճյուղ ստեղծելու վճարումներ կատարել իր գտնվելու վայրից դուրս:

50. Սույն կարգի 0-րդ կետով սահմանված դեպքում դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը, իր գտնվելու վայրից դուրս վճարումներ (այսուհետ՝ հեռահար վճարումներ) կարող է կատարել առաքիչների միջոցով՝ նրանց հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:

51. Առաքիչների միջոցով հաճախորդներին հեռահար վճարումները պատշաճ կատարելու համար ողջ պատասխանատվությունը կրում է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը:

52. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը հաճախորդներին հեռահար վճարումներ իրականացնելու նպատակով յուրաքանչյուր առաքիչին յուրաքանչյուր անգամ միանվագ տրամադրում է ոչ ավելի, քան 2 մլն ՀՀ դրամ:

53. Սույն գլխի պահանջները չեն տարածվում կազմակերպության գլխամասից և մասնաճյուղերից դուրս տեղակայված ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումների վրա:

Գ Լ ՈՒ Խ 5
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

54. Վճարահաշվարկային կազմակերպությունն իր ընթացիկ կամ հիմնական գործառնությունների կատարումը, հաշվառումը և տվյալների պահպանումը ապահովում է «Գործառնական օր» ծրագրի միջոցով, որն առնվազն պետք է առկա լինի գլխամասային գրասենյակում:

55. Այն դեպքում, երբ Վճարահաշվարկային կազմակերպությունն ինքնուրույն է մշակել իր կողմից շահագործվող ծրագրային համակարգերը, ապա պետք է առկա լինեն՝

1) հստակ մշակված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,
2) համակարգի տեղեկատվական անվտանգությանը ներկայացվող պահանջները,
3) ծրագրային կոդի գտնվելու վայրը,
4) գործարկվող կիրառական ծրագրի ֆայլը/ֆայլերը,
5) թեստավորող խմբի անդամների ցուցակը, մասնագիտական որակավորումը, թեստավորման արձանագրությունը, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մյուս մասնակիցների ստորագրությունները,
6) այդ ծրագիրն օգտագործող ստորաբաժանումների աշխատակիցների՝ թեստավորման մասնակցությունը հավաստող փաստաթղթերը,
7) ծրագրային ապահովման օգտագործողների ուղեցույցը կամ այլ ուղղորդող գրքեր, փաստաթղթեր, ներդրման/տեղակայման ձեռնարկներ:

56. Վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է ունենա արխիվների պահպանման համար նախատեսված չհրկիզվող պահարան:

57. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից շահագործվող սերվերները, այդ թվում նաև քլիրինգի և պրոցեսինգի հետ ուղղակիորեն կապված սերվերները պետք է պահվեն և շահագործվեն հատուկ սերվերային սենյակում(ներում), որը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) ունենա առանձին մուտք՝ ավտոմատ փակվող և կողպվող դռնով,
2) ունենա հակահրդեհային համակարգ, շարժման տվիչներ, պատուհանների առկայության դեպքում՝ կոտրման տվիչներ և ճաղավանդակներ (երկրորդ հարկից ցածր գտնվող պատուհանով սենյակների դեպքում),
3) ունենա օդի ջերմաստիճանը կարգավորող համակարգ, օդափոխման համակարգ,
4) շուրջօրյա ռեժիմում իրականացվող տեսադիտում և տեսագրում: Ընդ որում՝ տեսահսկման համակարգը պետք է տեղադրված լինի սերվերային սենյակում և նկարահանի առնվազն Վճարահաշվարկային կազմակերպության սերվեր համակարգիչ(-ներ)ը, հարակից տարածքն այնպես, որ տեսանելի լինեն այդ համակարգիչ(-ներ)ին մոտեցող անձինք: Տվյալ նկարահանումները պետք է կատարվեն և արխիվացվեն լիցենզավորվող կազմակերպության կողմից և պահպանվեն առնվազն 90 օր:
5) ունենա պահուստային սերվեր կամ համակարգիչ, որի տեղեկատվությունը պետք է թարմացվի ամեն օր,
6) ունենա էլեկտրասնուցման պահուստային համակարգ (գեներատոր շարժիչ, արևային մարտկոց կամ այլ հավասարազոր համակարգ),
7) ունենա անխափան էլեկտրասնուցման սարքեր (յու-փի-էս), որոնց ինքնուրույն աշխատանքի ժամանակը պետք է թույլատրի իրականացնել անցումը էլեկտրասնուցման հիմնականից պահուստային տարբերակի՝ առանց տեղեկատվության կորստի,
8) բոլոր համակարգիչներում պետք է առկա լինի հակավիրուսային որևէ համակարգ, որի տվյալների հենքը պետք է թարմացվի հակավիրուսային համակարգի հրապարակված ամենավերջին տարբերակով,
9) եթե Վճարահաշվարկային կազմակերպության աշխատակիցները ունեն միջազգային համակարգչային ցանցից (ինտերնետ) օգտվելու հնարավորություն, ապա պետք է առկա լինեն միջցանցային էկրաններ (ֆայերվոլ)՝ համապատասխան կանոններով սահմանված, որոնք կկատարեն որոշակի տիպի տեղեկատվության հոսքի ֆիլտրում:

58. Վճարահաշվարկային կազմակերպության սերվերները, ցանցային սարքավորումները և աշխատակայանները, եթե առկա են, պետք է ապահովված լինեն անխափան էլեկտրասնուցման սարքերով, որոնց ավտոնոմ աշխատանքի ժամանակը պետք է թույլ տա իրականացնել անցումը հիմնականից պահուստային տարբերակի կամ ժամանակավոր դադարեցնել աշխատանքն առանց տեղեկատվության կորստի:

59. Վճարահաշվարկային կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը պետք է ունենան կիրառվող տեխնիկածրագրային ու անվտանգության ապահովման կանոնակարգման փաստաթղթեր և ապահովեն դրանցով սահմանված պահանջների կատարումը:

60. Վճարահաշվարկային կազմակերպությունը այլ կանոնակարգիչ փաստաթղթերի հետ մեկտեղ, պետք է ունենա նաև առնվազն հետևյալ փաստաթղթերը.

1) սերվերային սենյակներ մուտք գործելու կանոնները, որով առնվազն սահմանված կլինեն մուտքի իրավունք ունեցող անձանց իրավասությունները, պարտականությունները, մուտքի իրավունքի տրամադրման ընթացակարգերը,
2) սերվերների և ավտոմատացված համակարգերի պահուստավորման գործընթացը կանոնակարգող փաստաթուղթ, որով առնվազն հստակ կնկարագրվեն անձնակազմի գործողությունները և յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունների շրջանակները,
3) գործարար գործընթացների թեստավորման կանոնները:

61. Վճարահաշվարկային կազմակերպությունների տեխնիկածրագրային ապահովման և անվտանգության վերաբերյալ փաստաթղթերով պետք է սահմանված լինեն դրույթներ՝ վճարային գործառնությունների, իրադարձությունների, անձանց, փաստերի և գործընթացների հետ կապված տեղեկատվության (այսուհետ՝ տեղեկատվություն) անվտանգության հսկողության վերաբերյալ՝ անկախ դրանց ներկայացման ձևից, հետևյալ սկզբունքներով.

1) տեղեկատվության օգտագործողները պետք է միարժեքորեն նույնականացվեն՝ տեղեկատվությանը մուտքի իրավասություն ստանալու համար,
2) տեղեկատվության պաշտպանական հսկողությունը պետք է ապահովի տեղեկատվության տրամադրումը միայն նույնականացված օգտագործողներին,
3) պետք է առկա լինեն համապատասխան պաշտպանական մեխանիզմներ, որոնք կապահովեն տեղեկատվական գործընթացների անընդհատությունը՝ խափանումների և արտակարգ իրավիճակների դեպքում:

62. Տեղեկատվական անվտանգության գործունեության ոլորտը պետք է ընդգրկի Պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության տնօրինության տակ գտնվող տեղեկատվության ստացման, մշակման, պահպանման և տրամադրման գործընթացներում ներգրավված բոլոր միավորները: Դրանք են.

1) տեղեկատվության բոլոր օգտագործողները (կազմակերպության կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների անձնակազմերը, կազմակերպության ծառայություններից օգտվելու իրավասություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք),
2) տեխնիկական միջոցները, որոնք ընդգրկում են ինչպես բոլոր սարքավորումները, այնպես էլ շրջակա ենթակառուցվածքը, մասնավորապես.

ա. բոլոր համակարգիչները՝ ընդհանուր և հատուկ նպատակներով օգտագործվող՝ ներառյալ անձնական համակարգիչները, սերվերները, շարժական համակարգիչները,

բ. հարակից սարքավորումները,

գ. կապի միջոցները և սարքավորումները,

դ. լոկալ և արտաքին ցանցային սարքավորումները,

ե. շրջակա միջավայրի հսկողության համակարգերը, ներառյալ օդափոխման և այլ սառեցնող/տաքացնող սարքավորումները,

զ. ահազանգման և անվտանգության սարքավորումները,

է. կենսունակության ապահովման անհրաժեշտ միջոցները,

ը. կառույցները,

թ. ծրագրաապարատային այլ համակարգերը:

3) տեղեկատվական միջոցները.

ա. տվյալների շտեմարաններ (այդ թվում՝ էլեկտրոնային փոստարկղեր, էլեկտրոնային մատյաններ, արխիվային շտեմարաններ և այլն),

բ. էլեկտրոնային տվյալների ֆայլեր, ներառյալ կոշտ կրկնօրինակները (թղթային, միկրոժապավեն կամ այլ) և փոխանցման ընթացքում գտնվող տվյալները,

գ. տվյալների մշակման արդյունքում ստացված տեղեկատվություն՝ անկախ ներկայացման ձևից,

դ. թղթային կրիչների վրա գտնվող փաստաթղթեր (համակարգերի նկարագրեր և ձեռնարկներ, աշխատանքային պլաններ, պայմանագրեր, ուղեցույցներ, կարգեր և աշխատակարգեր):

4) ծրագրային ապահովումը, ներառյալ կազմակերպության կողմից մշակված և արտաքին աղբյուրներից ձեռք բերված համակարգային և կիրառական ծրագրերը, որոնք ներառում են՝

ա. էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգեր,

բ. օպերացիոն համակարգեր, համակարգային ծրագրեր,

գ. տվյալների շտեմարանների կառավարման համակարգեր,

դ. ցանցային համակարգային ծրագրային ապահովում,

ե. կապի միջոցների կառավարման ծրագրային ապահովում,

զ. հատուկ նշանակության ծրագրային ապահովում (հակավիրուսային համակարգեր, հսկող և ահազանգող ծրագրային ապահովում և այլն):

5) տեղեկատվության փոխանակման ուղիները.

ա. արտաքին համակարգչային ցանցերին միացումները,

բ. էլեկտրոնային փոստի ծառայություններ, արտաքին ցանցերի միջոցով տեղեկատվության փոխանցման այլ ծառայություններ,

գ. տեղեկատվության կրիչների (էլեկտրոնային, թղթային կամ այլ) շարժը,

դ. ֆիզիկական կապուղիները:

63. Տեղեկատվական անվտանգության միջոցառումները պետք է ուղղվեն տեղեկատվական գործընթացների և դրանցում ներգրավված տեղեկատվական միջոցների բարձր պաշտպանվածության ապահովմանը: Ցանկացած ձևով ներկայացված տեղեկատվության (էլեկտրոնային, թղթային, բանավոր և այլն) և տեղեկատվական տեխնոլոգիաների ֆիզիկական պաշտպանությանը ներկայացվող հիմնական պահանջներն են.

1) կազմակերպության կապը և կենսունակությունը ապահովող տարածքներ մուտքը թույլատրելի է միայն տվյալ համակարգի աշխատանքի համար պատասխանատու աշխատակիցներին: Այլ անձանց մուտքը կարող է իրականացվել միայն կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված փաստաթղթերի հիման վրա,
2) տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման, տվյալների շտեմարանների, արխիվային կրիչների, սերվերների տեղակայման սենյակները պետք է ապահովված լինեն ուժեղացված պաշտպանական միջոցներով,
3) աշխատանքի կանոնները պետք է մշակվեն և պահպանվեն տեղեկատվության արտաքին կրիչների հետ միասին (մագնիսային, լազերային և այլ տիպի)՝ սահմանափակելով նման կրիչների տեղափոխումը և կազմակերպության տարածքից դուրսբերումը:

64. Պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության կողմից շահագործվող ծրագրային ապահովումը պետք է ունենա նաև անհրաժեշտ փաստաթղթեր, որոնք ներառում են ծրագրի նկարագրությունը, օգտագործողի և (կամ) ադմինիստրատորի ձեռնարկը և այլ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ շահագործման ընթացքում:

65. Ծրագրային ապահովման փորձարկումների համար չեն կարող օգտագործվել գաղտնի տեղեկատվություն պարունակող տվյալներ: Բացառություն կարող են կազմել այն փոփոխությունները, որոնք կատարվում են ծրագրային սխալների վերացման նպատակով, սակայն այս գործընթացը պետք է կարգավորվի համապատասխան փաստաթղթերով:

66. Տեղեկատվական անվտանգության օբյեկտ պետք է հանդիսանա Պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության համակարգչային ցանցը՝ որպես ծրագրաապարատային համալիր:

67. Քլիրինգի և պրոցեսինգի հետ ուղղակիորեն կապված տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջները հետևյալն են.

1) նշված տեղեկատվությունը, որպես կանոն, պետք է պահպանվի գաղտնագրված տեսքով՝ օգտագործելով համակարգային ծրագրային ապահովման հնարավորությունները կամ դրանց բացակայության դեպքում՝ համապատասխան կիրառական ծրագրային միջոցները: Բացառություն կարող են կազմել այն դեպքերը, երբ տվյալների ծածկագրումը և վերծանումը զգալիորեն դանդաղեցնում են համակարգի աշխատանքը,
2) տվյալների շտեմարան մուտք գործելու յուրաքանչյուր դեպք պետք է գրանցվի համակարգային մատյանում, որը պետք է հասանելի լինի միայն տեղեկատվական անվտանգության պատասխանատուին և սերվերի (համակարգի) ադմինիստրատորին: Նշված մատյանները կարող են հասանելի լինել միայն ընթերցման համար,
3) պետք է արգելված լինի ծածկագրված տեղեկատվությունը առանց աշխատանքային անհրաժեշտության վերծանելը և պահպանելը վերծանված տեսքով, որևէ ձևով փոխանցելն այլ օգտագործողների կամ կատարել գործողություններ, որոնք կարող են բերել այդ տեղեկատվության պաշտպանվածության աստիճանի նվազեցմանը,
4) վճարահաշվարկային կազմակերպության կողմից պետք է մշակված լինեն և բոլոր օգտագործողների կողմից խստորեն պահպանվեն ուղղակիորեն քլիրինգի և պրոցեսինգի վերաբերյալ տեղեկատվության հետ աշխատանքի ընդհանուր կանոնները, օգտագործողների գրանցման և իրավասությունների տրամադրման կարգը:

68. Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստանալու օրվանից առավելագույնը վեցամսյա ժամկետում պարտավոր է բավարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված՝ «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգով սահմանված պահանջները:

Գ Լ ՈՒ Խ 6
ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ, ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

69. Կենտրոնական բանկն՝ ի դեմս լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանման, վարում է իր կողմից տրամադրված լիցենզիաների գրանցամատյանը (ձևը սահմանվում է՝ համաձայն Հավելված 12-ի), որը բաց է համընդհանուր ծանոթացման համար, և որում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

1) Լիցենզավորված անձի անվանումը,
2) Լիցենզիայի տեսակը և համարը,
3) Լիցենզիան տրամադրելու մասին որոշման ամսաթիվը և համարը,
4) Լիցենզիայի տրման ամսաթիվը,
5) Լիցենզավորված անձի գտնվելու վայրը,
6) Վճարահաշվարկային գործունեության իրականացման վայրը,
7) տեղեկություններ՝ լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիայի գործողության կասեցման և ուժը կորցրած ճանաչելու մասին,
8) տեղեկություններ՝ տրամադրված կոդի և այդ կոդի անվավեր ճանաչելու հիմքերի մասին,
9) տեղեկություններ՝ մասնաճյուղի անվանման, գտնվելու վայրի, հաշվառման վկայականի համարի, հաշվառման համարի, հաշվառման ամսաթվի, գործունեության դադարեցման մասին:

Գ Լ ՈՒ Խ 7
ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

70. Լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչացնելու կամ կորելու դեպքում՝ վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու և կորստի մասին Կենտրոնական բանկի կայքում հրապարակելու համար: Դիմումին կցվում է լիցենզիայի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում), լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը, եթե օրենքով նախատեսված է տուրքի վճարում:

71. Կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպությանը տրամադրում է կորած, ոչ պիտանի դարձած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը՝ դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում:

72. Կորած լիցենզիան գտնելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը գտնված լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

73. Լիցենզիայի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

74. Լիցենզիայի կրկնօրինակի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի նոր կրկնօրինակը տրամադրվում է սույն գլխով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 8
ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

75. Վճարահաշվարկային կազմակերպության գտնվելու վայրի, գործունեության վայրի, անվանման փոփոխման կամ վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի տեսակի փոփոխման դեպքում Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է այդ փոփոխությունները Օրենքով սահմանված կարգով հաստատվելու օրվանից 15-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

ա) Վերաձևակերպման վերաբերյալ դիմում,

բ) Համապատասխան փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթեր,

գ) Վճարահաշվարկային կազմակերպությանը տրամադրված լիցենզիայի բնօրինակը,

դ) Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

76. Լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է Վճարահաշվարկային կազմակերպության կողմից սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտք լինելու օրվանից մեկամսյա ժամկետում:

77. Լիցենզիայի վերաձևակերպման հայտերը Կենտրոնական բանկի կողմից մերժվում են Օրենքի 20.1 հոդվածի 1-ին մասի ա), բ) և դ) կետերով նախատեսված դեպքերում:

Գ Լ ՈՒ Խ 9
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

78. Վճարահաշվարկային կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկ գրանցման/հաշվառման ներկայացնել ստորև նշված փոփոխությունները՝ այդ փոփոխությունները կազմակերպու-

թյան կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում.

1) Վճարահաշվարկային կազմակերպության, նրա մասնաճյուղի գտնվելու վայրի և/կամ գործունեության վայրի և/կամ Վճարահաշվարկային կազմակերպության ֆիրմային անվանման փոփոխությունները,
2) ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները:

79. Վճարահաշվարկային կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկին տեղեկացնել Վճարահաշվարկային կազմակերպության կողմից նոր ներքին իրավական ակտերի ընդունման կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխության դեպքում՝ նոր ընդունված ներքին իրավական ակտերը կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող ներքին իրավական ակտերը (վճարահաշվարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը): Վճարահաշվարկային կազմակերպությունները Կենտրոնական բանկին տեղեկացնում են նշված փոփոխությունների վերաբերյալ՝ կազմակերպության կառավարման իրավասու մարմնի կողմից դրանք հաստատելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Գ Լ ՈՒ Խ 10
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

80. Անձին որպես ղեկավար գրանցելու, ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցելու համար Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 5-ի Ձև 1-ի և ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ սույն կանոնակարգի Հավելված 5-ի Ձև 2-ի համաձայն,
2) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարների նշանակման կամ պաշտոնից ազատելու և ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ,
3) այն դեպքում, երբ սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին վճարահաշվարկային կազմակերպությունն ունի ներդիրով գրանցված ղեկավար, ապա ներկայացվում է նաև կազմակերպության մոտ առկա ներդիրի բնօրինակը:

81. Վճարահաշվարկային կազմակերպությունը, ղեկավարների կազմում փոփոխություններ կատարելու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում նոր նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուներին, որոնք պետք է ունենան սույն կանոնակարգի գլուխ 18-ի համաձայն ստացած որակավորման վկայական:

Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի գրանցման համար առաջարկվող թեկնածուի հետ անցկացվում է հարցազրույց Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի նիստում: Գրանցման պահին Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը պետք է իրազեկ լինի Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև տվյալ կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերին: Բացի այդ, գրանցման պահին գործադիր տնօրենը/գործադիր տնօրենի տեղակալը պետք է ունենա բարձրագույն կրթություն և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ ղեկավար պաշտոնում, իսկ գլխավոր հաշվապահը պետք է ունենա բարձրագույն կրթություն և առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 2 տարին՝ մասնագիտական աշխատանքային փորձ:

82. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված աշխատանքային փորձ և (կամ) բարձրագույն կրթություն, ապա Վճարահաշվարկային կազմակերպությունն իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար անձի մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ:

83. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ, սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում:

84. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի պաշտոն(ներ)ը կարող է (են) զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարների կողմից և թափուր մնալ ոչ ավելի քան երեք ամիս՝ սկսած Վճարահաշվարկային կազմակերպության կողմից ղեկավարին պաշտոնից փաստացի ազատելու պահից:

85. Նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնին նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնին նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

86. Վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի պաշտոնը կարող է զբաղեցվել միայն համապատասխան որակավորում ունեցող ժամանակավոր պաշտոնակատարների կողմից:

87. Սույն կանոնակարգի 0-րդ կետով նշված եռամսյա ժամկետը չի տարածվում սույն կետի աղյուսակի համապատասխան պաշտոնների համար նշված ժամանակավոր պաշտոնակատարների վրա: Ընդ որում, եթե սույն կետում նշված դեպքերում ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պաշտոնավարում է երեք ամսից ավելի, ապա եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Պաշտոն	Ժամանակավոր պաշտոնակատար
Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրեն	Որպես տվյալ վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալ կամ գլխավոր հաշվապահ (գործադիր տնօրենի/գործադիր տնօրենի տեղակալի որակավորում ունեցող) գրանցված անձը
Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալ	Որպես տվյալ վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ (գործադիր տնօրենի/գործադիր տնօրենի տեղակալի որակավորում ունեցող) գրանցված անձը
Վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ	Որպես տվյալ վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրեն (գլխավոր հաշվապահի որակավորում ունեցող) կամ գործադիր տնօրենի տեղակալ (գլխավոր հաշվապահի որակավորում ունեցող) գրանցված անձը

88. Եթե ղեկավարը, որը նախկինում գրանցվել է Կենտրոնական բանկում, հետագայում դիմում է ղեկավար պաշտոնում գրանցվելու համար (նույն կազմակերպությունում կամ մեկ այլ Վճարահաշվարկային կազմակերպությունում), ապա նա հրավիրվում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի նիստին, եթե Կենտրոնական բանկը դա անհրաժեշտ է համարում: Ընդ որում՝ սույն կանոնակարգի Հավելված 5-ի 2-րդ կետով սահմանված տեղեկանքը Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն միջնորդագրի 1-ին կետի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

89. Կազմակերպությունը նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող է չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

90. Վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ, եթե տվյալ մասնաճյուղի և գլխամասի միջև առկա է կապ, որը հնարավորություն է տալիս գործունեությունը ծավալել իրական ժամանակի ռեժիմով, այսինքն՝ ապահովում է մասնաճյուղում կատարվող գործարքների արտացոլումն ընդհանուր տեղեկատվական բազայում և կազմակերպության հաշվեկշռում տվյալ աշխատանքային օրվա ընթացքում:

91. Անձին որպես կազմակերպության ղեկավար գրանցելը Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ մերժվում է, եթե.

1) ղեկավարների թեկնածուները չեն բավարարում սույն կանոնակարգի 0-րդ կետի պահանջները,

2) սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը կեղծ կամ թերի են ներկայացված:

92. Եթե Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից 3 տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավար:

93. Սույն կանոնակարգի 0-րդ կետի համաձայն՝ կազմակերպությանը Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիա տրամադրելիս կազմակերպության ղեկավարների վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի հիման վրա Կենտրոնական բանկը միաժամանակ գրանցում է Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարին սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված չափանիշների բավարարման դեպքում: Ընդ որում, Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի փոփոխության դեպքում նոր ղեկավարն աշխատելու իրավունք է ստանում սույն գլխի համաձայն՝ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից, հաշվի առնելով ժամանակավոր պաշտոնակատարի վերաբերյալ սույն կանոնակարգով սահմանված պայմանները:

94. Վճարահաշվարկային կազմակերպությունը իր հաշվապահական հաշվառման իրականացման գործընթացը կարող է հանձնել հաշվապահական հաշվառում իրականացնող կազմակերպությանը (ընկերությանը)՝ կնքելով համապատասխան պատվիրակման պայմանագիր: Ընդ որում, պատվիրակման ծա-

ռայություններ մատուցող կազմակերպության համապատասխան աշխատակիցը, որը պետք է վարի վճարահաշվարկային կազմակերպության հաշվապահական հաշվառումը՝ պետք է ունենա սույն կանոնակարգի 0-րդ կետի աղյուսակի 2-րդ կետի որակավորումներից, դիպլոմներից կամ հավաստագրերից առնվազն մեկը:

95. Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկին տեղեկացնել սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված պայմանագրի կնքման կամ այն լուծելու վերաբերյալ՝ համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 11
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

96. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը հանվում է գրանցումից, եթե.

1) որակավորման վկայականի ժամկետը լրացել է, կամ ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,
2) կազմակերպությունը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
3) ի հայտ են եկել Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը:

97. Կազմակերպությունն իր ղեկավարներին աշխատանքից ազատելու դեպքում, համապատասխան փոփոխությունները տեղի ունենալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է դիմել Կենտրոնական բանկ՝ ղեկավարին գրանցումից հանելու միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով),
2) իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ՝ թեկնածուի առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ 12
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ, ԿԱՄ ԱՆՎԱՆՄԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

98. Վճարահաշվարկային կազմակերպությունը կարող է գործունեություն իրականացնել միայն իր գլխամասի և Կենտրոնական բանկում հաշվառված մասնաճյուղերի տարածքում՝ բացառությամբ սույն կարգի 0-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև տեղադրված վճարումների ընդունման տերմինալներով, որի միջոցով գործարքների կատարումն իրականացվում է ավտոմատ՝ հաճախորդի կողմից մուտքագրված անմիջական հրահանգների համաձայն:

99. Մասնաճյուղերի բացման դեպքում Վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է դրանք Կենտրոնական բանկ ներկայացնի հաշվառման:

100. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից տեղադրված (կազմակերպության համակարգին միացված) վճարումների ընդունման տերմինալների հաշվառումը կատարվում է Կենտրոնական բանկ համապատասխան հաշվետվության ներկայացման միջոցով:

101. Վճարահաշվարկային կազմակերպությունը, իր մասնաճյուղերի գտնվելու կամ գործունեության վայրի կամ անվանման փոփոխման, ինչպես նաև նոր մասնաճյուղերի բացման դեպքում պարտավոր է այդ մասին որոշումը ներկայացնել Կենտրոնական բանկ հաշվառման ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) մասնաճյուղ բացելու դիմում՝ համաձայն Հավելված 8-ի կամ գտնվելու կամ գործունեության վայրի կամ անվանման փոփոխման դիմում՝ համաձայն Հավելված 9-ի,
2) կազմակերպության կառավարման իրավասու մարմնի համապատասխան որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք,
3) գրավոր հայտարարություն՝ նախկինում ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին,
4) համապատասխան փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթեր,
5) սույն կանոնակարգի 0-րդ կետի 10-րդ և 11-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը: Գյուղապետարանի շենքում կամ հեռահաղորդակցման օպերատորի տարածքում բացվող մասնաճյուղերի դեպքում՝ սույն կանոնակարգի 0-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը չեն ներկայացվում, որի փոխարեն, համապատասխանաբար, ներկայացվում են սույն կանոնակարգի 0-րդ կետում կամ 0-րդ կետում սահմանված պայմանագրերի պատճենները:

102. Օտարերկրյա պետությունում մասնաճյուղ ստեղծելիս Վճարահաշվարկային կազմակերպությունը ստանում է Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-4-րդ ենթակետերում սահմանված փաստաթղթերը, իսկ համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց կամ համապատասխան գործունեություն իրականացնող կազմակերպության հետ գործակալության կամ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված նման այլ պայմանագիր կնքելուց) հետո հաշվառվում է Կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման, պայմանագրի կնքման) փաստը հավաստող փաստաթղթերը:

103. Անհրաժեշտության դեպքում, Կենտրոնական բանկի պահանջով Վճարահաշվարկային կազմակերպությունը ներկայացնում է օտարերկրյա պետության վճարահաշվարկային ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

104. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 0-րդ կամ 0-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից մեկամսյա ժամկետում հաշվառում է փոփոխությունները կամ մերժում է հաշվառումը:

105. Կենտրոնական բանկը մերժում է դիմումը, եթե առկա են Օրենքի 20.1 հոդվածում նախատեսված հիմքերը: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում գրանցումը չմերժելու կամ նշված ժամկետը կասեցնելու մասին Վճարահաշվարկային կազմակերպությանը չտեղեկացնելու դեպքում փոփոխությունները համարվում են գրանցված:

106. Կենտրոնական բանկը հաշվառում է մասնաճյուղը և տալիս է հաշվառման վկայական՝ համաձայն Հավելված 7-ի, իսկ մերժելու դեպքում Վճարահաշվարկային կազմակերպությանը ուղարկվում է Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշում:

Գ Լ ՈՒ Խ 13
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

107. Վճարահաշվարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված աշխատանքի կանոնակարգում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու դեպքում Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը և աշխատանքի կանոնակարգում իրականացված լրացումները և/կամ փոփոխություններ՝ այդ փոփոխությունները կազմակերպության կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կենտրոնական բանկ՝ համաձայնեցման:

108. Աշխատանքի կանոնակարգում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացման համար Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1) կազմակերպության աշխատանքի կանոնակարգում լրացումների և/կամ փոփոխությունների իրականացման համար դիմում՝ կազմակերպության կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) կազմակերպության կառավարման մարմնի որոշումը՝ աշխատանքի կանոնակարգում լրացումների և (կամ) փոփոխությունների իրականացման վերաբերյալ,
3) աշխատանքի կանոնակարգի համապատասխան փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթեր և փոփոխման անհրաժեշտության հիմնավորումը:

109. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված աշխատանքային կանոնակարգում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր համաձայնությունը կամ մերժում է համաձայնության տրամադրումը: Որոշակի փաստեր պարզելու նպատակով տասնհինգօրյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել մինչև 1 ամիս ժամկետով:

110. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ժամկետում դիմումը չմերժելու կամ կասեցնելու մասին Վճարահաշվարկային կազմակերպությանը չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված: Կենտրոնական բանկը մերժում է համաձայնության տրամադրումը, եթե լրացումները և/կամ փոփոխությունները հակասում են Օրենքին կամ այլ օրենքներին, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերին, սույն կանոնակարգի դրույթներին:

111. Վճարահաշվարկային կազմակերպության կառավարման մարմնի կողմից հաստատված աշխատանքային կանոնակարգում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու՝ Կենտրոնական բանկի կողմից տրված համաձայնության դեպքում կազմակերպության անհատական գործին կցվում են սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

112. Կենտրոնական բանկը մերժում է աշխատանքային կանոնակարգում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու մասին համաձայնության տրամադրումը, եթե առկա են սույն կանոնակարգի

0-րդ կետով սահմանված հիմքերը: Այս դեպքում Կենտրոնական բանկը մերժման հիմքերի մասին գրությամբ տեղեկացնում է Վճարահաշվարկային կազմակերպությանը:

Գ Լ ՈՒ Խ 14
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

113. Ղեկավարների թեկնածուները պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացած որակավորում, ինչպես նաև բավարարեն սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցվեն Կենտրոնական բանկում:

114. Սույն կանոնակարգով նախատեսված որակավորման վկայականներին հավասարեցվում են սույն կանոնակարգի 0-րդ և/կամ 0-րդ կետերով նախատեսված որակավորումները, դիպլոմները կամ հավաստագրերը:

115. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները բավարարում են որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, եթե՝

1) բավարարում են սույն կանոնակարգի 0-րդ, 0-րդ, 0-րդ և/կամ 0-րդ կետերի պահանջները:

2) առկա է սույն կանոնակարգի 0-րդ և/կամ 0-րդ կետերով սահմանված որակավորման վկայական /ները:

116. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով որակավորման վկայական է տրամադրվում որոշակի պաշտոնում գրանցված այն ղեկավարին, որն ունի սույն կետի աղյուսակում նշված տվյալ պաշտոնին համապատասխան որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր.

1. Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալ պաշտոնների համար	Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակները կամ էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները
2. Վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ	էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները, կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակները, կամ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող՝ հաշվապահի որակավորման վկայական:

117. Այն դեպքում, երբ ղեկավարի թեկնածուն ստացել է սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված որակավորման վկայական և գրանցվել է Կենտրոնական բանկում որպես Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրեն կամ գործադիր տնօրենի տեղակալ պաշտոնների համար, ապա Վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի պաշտոնում գրանցվելու համար նա պետք է նաև ունենա 0-րդ կետի աղյուսակի 2-րդ կետում նշված որակավորումներից, դիպլոմներից կամ հավաստագրերից առնվազն մեկը: Ընդ որում, այս դեպքում տրամադրվում է ՀՀ կենտրոնական բանկի մեկ որակավորման վկայական:

118. Ղեկավարների այն թեկնածուները, որոնք վերջին 10 տարիների ընթացքում առնվազն մեկ տարի աշխատել են սույն կանոնակարգի Հավելված 3.1-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և ստանձնել են համանման պարտականություններ և/կամ նմանատիպ պաշտոններ, համարվում են Կենտրոնական բանկի մասնագիտական որակավորում ունեցող անձ, որի հիման վրա տրամադրվում է անժամկետ որակավորման վկայական:

119. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

Գ Լ ՈՒ Խ 15
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

120. Ղեկավարների թեկնածուների (այսուհետ՝ թեկնածուներ) որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումն անցկացվում է գրավոր քննության (այսուհետ՝ քննություն) միջոցով, որն անցկացվում է Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության կողմից (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կամ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից:

121. Կենտրոնական բանկի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից անցկացվելու դեպքում քննության թեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

122. Քննությանը հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակի առաջին ամսվան նախորդող ամսվա 10-ը:

123. Քննությանը մասնակցելու համար թեկնածուները պետք է նախապես հերթագրվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում՝ մուտքագրելով հետևյալ տվյալները՝

1) անուն, ազգանուն,
2) որակավորման տեսակ,
3) քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
4) հեռախոսահամար,
5) անձնագրի տվյալները,
6) էլեկտրոնային փոստի (առկայության դեպքում) հասցեն:

124. Թեկնածուները քննությանը մասնակցում են քննության օրը՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
3) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտը) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը:

125. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:

126. Թեկնածուն մուտք գործելով քննության անցկացման սենյակ՝ ըստ ցուցակի հրավիրվում է համապատասխան համակարգչի մոտ: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

127. Քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով:

128. Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

129. Քննության սկիզբը հայտարարվելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից առավելագույնս ճիշտ) պատասխան:

130. Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:

131. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից. մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

ԳԼՈՒԽ 16
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ

132. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը մշակվում է Կենտրոնական բանկի կողմից և որը կազմվում է նախապես հրապարակված թեմաների ցանկի (Հավելված 14) հիման վրա:

133. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները, հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ և ենթակա չեն հրապարակման: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:

134. Թեստերը կազմվում են ստուգելու համար թեկնածուի իմացությունը կազմակերպության գործունեության, լիցենզավորման, գործունեության կարգավորման ու վերահսկողության, հաշվապահական հաշվառման, հարկային օրենսդրության, ընդհանուր տնտեսագիտության ոլորտներում:

135. Հայերեն լեզվին չտիրապետող թեկնածուների քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում, Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Հայոց լեզվին չտիրապետող ղեկավարների թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության պետի թույլտվությամբ:

136. Թեստը պարունակում է 30 հարց: Թեստին պատասխանելու համար տրվում է 45 րոպե:

137. Թեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

138. Թեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը, ինչպես նաև հարցին չպատասխանելը՝ զրո միավոր:

ԳԼՈՒԽ 17
ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

139. Թեստերի պատասխանների գնահատումն ու ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ.

1) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված,
2) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված, և նրան տրվում է որակավորման վկայական:

140. Թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը, որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

141. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

142. Թեկնածուները կարող են բողոքարկել անցկացված քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն Հավելված 13-ի կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 18
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

143. Սույն կանոնակարգի Հավելված 10-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է քննության դրական արդյունք ապահոված թեկնածուներին՝ էլեկտրոնային եղանակով՝ ուղարկվելով այն թեկնածուի կողմից քննության մասնակցության հերթագրման ժամանակ ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին, քննությունը հանձնելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

144. Սույն կանոնակարգի Հավելված 10.1-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 0-րդ կամ 0-րդ կետերի պահանջները բավարարող ղեկավարի թեկնածուին՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

145. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից) տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

146. Որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 5 (հինգ) տարի ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը, և սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ:

147. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված անձանց տրված որակավորման վկայականը, սույն կանոնակարգի 0-րդ կետի հիմքով ուժը կորցրած ճանաչելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, անձը պարտավոր է որակավորման վկայականը վերադարձնել Կենտրոնական բանկ:

148. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետերով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

149. Որակավորված անձինք որակավորման վկայականը կորցնելու դեպքում կարող են այդ մասին գրավոր հայտնել Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով գրավոր դիմում: Դիմում ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորված անձին տրվում է որակավորման նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրմամբ, իսկ կորցրած վկայականը համարվում է ուժը կորցրած:

150. Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալի, տնօրենության (վարչության) անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի որակավորման վկայական ունեցող անձը կարող է աշխատել որպես Վճարահաշվարկային կազմակեր-

պության գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ առանց Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայական ստանալու: Բանկի ու օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ունեցող անձը կարող է աշխատել որպես Վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ առանց Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայական ստանալու:

ԳԼՈՒԽ 19
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

151. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները կարող են իրականացնել հայկական դրամով և (կամ) արտարժույթով ֆիզիկական և իրավաբանական անձանցից և (կամ) անձանց ուղղված վճարումների ընդունումը և/կամ կատարումը՝ առանց բանկային հաշիվների, այն է՝

1) վճարողներից հայկական դրամով կամ արտարժույթով դրամական միջոցներ (կանխիկ կամ անկանխիկ) և շահառուների օգտին վճարում կատարելու կարգադրության ընդունում և կատարման ապահովում, այդ թվում՝ հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա պայմանագրի կողմ հանդիսացող անձից դրամական միջոցներ և որոշակի ցանկով սահմանված շահառուների օգտին վճարում կատարելու կարգադրության ընդունում և կատարում,
2) շահառու հանդիսացող հաճախորդներին ուղղված հայկական դրամով կամ արտարժույթով դրամական միջոցների/վճարումների ընդունում կամ կատարում (կանխիկ կամ անկանխիկ), այդ թվում՝ հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա պայմանագրի կողմ հանդիսացող շահառուի օգտին վճարումների հավաքագրում (օրինակ՝ կոմունալ վճարումների, բյուջեին ուղղված վճարումների ընդունում):

152. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ծառայությունների կատարումը կարող է իրականացվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության մասնաճյուղային ցանցի, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու իրավասություն ունեցող այլ կազմակերպության կամ դրամական (փողային) փոխանցումների համակարգերի միջոցով, ինչպես նաև սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ծառայությունների կատարում՝ վճարումների ընդունման տերմինալների միջոցով, միայն հայկական դրամով:

153. Արտարժույթով միջոցների փոխանցումների իրականացման դեպքում վճարման ենթակա գումարների ընդունումը վճարողներից, և/կամ վճարման ենթակա գումարների տրամադրումը շահառուներին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից իրականացվում են հետևյալ կանոնների համաձայն.

1) Միջոցների փոխանցման վճարող հանդիսացող հաճախորդից արտարժույթով փոխանցում կատարելու կարգադրությունն ընդունելիս, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը փոխանցվող գումարը հաճախորդից ընդունում է (հաճախորդի կողմից վճարվում է) կարգադրությունում նշված արտարժույթով, իսկ հաճախորդի ցանկության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ տվյալ դրամական (փողային) փոխանցումների համակարգի կանոններով, փոխանցվող գումարը կարող է ընդունվել (վճարվել) ՀՀ դրամով՝ կազմակերպության կողմից սահմանված փոխարժեքով,
2) Միջոցների փոխանցման շահառու հանդիսացող հաճախորդին արտարժույթով վճարում կատարելու կարգադրությունը ստանալիս, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը վճարվող գումարը հաճախորդին տրամադրում է կարգադրությունում նշված արտարժույթով, իսկ շահառուի ցանկության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ տվյալ դրամական (փողային) փոխանցումների համակարգի կանոններով, վճարվող գումարը կարող է տրամադրվել ՀՀ դրամով՝ կազմակերպության կողմից սահմանված փոխարժեքով:

154. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը պարտավոր է հաճախորդին տրամադրել մատուցված յուրաքանչյուր ծառայության կատարման վերաբերյալ անդորրագիր՝ բացառությամբ հաճախորդի կողմից անդորրագիրը իր կողմից չստանալու վերաբերյալ հստակ կամարտահայտության դեպքում:

155. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերում սահմանված փոխարկման գործառնությունների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվող անդորրագրում, ինչպես նաև հաճախորդի կողմից ներկայացված դրամական փոխանցման կատարման (դրամական փոխանցման ստացման) կարգադրությունում փոխանցման արժույթով գումարը նշելուց բացի, պետք է նշված լինեն փոխարժեքը և հաճախորդից ընդունված (հաճախորդին տրամադրված) գումարը ՀՀ դրամով:

156. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը իրավասու չէ պարտադրել իր հաճախորդին կատարել կամ ընդունել վճարումը ՀՀ դրամով, եթե միջոցների փոխանցումը կատարվում է արտարժույթով: Դրամական (փողային) փոխանցման հետ կապված ծառայության միջնորդավճարները պետք է կատարվեն միայն ՀՀ դրամով:

157. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է իրականացնել սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված գործառնությունները, եթե հաճախորդների համար տեսանելի տեղում տեղադրել է հայտարարություն, որ փոխանցվող կամ վճարվող գումարը կարող է ընդունվել կամ վճարվել ՀՀ դրամով՝ միայն հաճախորդի ցանկության դեպքում:

158. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված գործառնություններից տարբերվող այլ փոխարկման գործառնությունները դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը կարող է իրականացնել միայն համապատասխան լիցենզիայի (արտարժույթի դիլերային առուվաճառքի կամ արտարժույթի առուվաճառքի) առկայության դեպքում:

159. ՀՀ դրամով փոխանցումների իրականացման դեպքում վճարման ենթակա գումարների ընդունումը վճարողներից և վճարման ենթակա գումարների տրամադրումը շահառուներին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության կողմից իրականացվում են միայն ՀՀ դրամով:

160. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը պարտավոր է հաճախորդներին ապահովել պիտանի (ոչ հնամաշ) Հայաստանի Հանրապետության դրամանիշերով:

161. Վճարահաշվարկային ծառայությունների մատուցման համար հիմք են հանդիսանում համապատասխան փաստաթղթերով (վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոնակարգով, դրամական (փողային) փոխանցումների համակարգերի կանոններով, պայմանագրերով) սահմանված գրավոր կարգադրությունները (թղթային, էլեկտրոնային):

162. Աշխատանքի ընթացքում Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության աշխատակիցները պարտավոր են ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և կրել լուսանկարով այցեքարտ, որտեղ պետք է նշված լինեն լիցենզավորված անձի անվանումը, աշխատակցի անունը, ազգանունը:

163. Աշխատանքային ժամերի ընթացքում Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության դրամարկղում չեն կարող գտնվել այլ անձինք, որոնք չեն հանդիսանում տվյալ կազմակերպության աշխատակից:

164. Վճարահաշվարկային կազմակերպությունը սույն կանոնակարգի Հավելված 2-ի և Հավելված 3-ի, ինչպես նաև Հավելված 5-ի Ձև 2-ով սահմանված տեղեկանքի 2.3-րդ, 3.6-րդ, 3.8-3.9-րդ, 4.1-րդ կետերով կամ 5-9-րդ կետերով սահմանված տեղեկությունների փոփոխության դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է այդ փոփոխությունները. ընդ որում, նշված միջնորդագրով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:

Գ Լ ՈՒ Խ 20
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

165. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողությունը կասեցվում է Օրենքի 27-րդ հոդվածի առաջին մասի «դ» կետի և 7-րդ մասի հիման վրա:

166. Այն դեպքում, երբ լիցենզիան կասեցվում է Օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա, Վճարահաշվարկային կազմակերպության դիմումը քննարկվում է այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Այն ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում չքննարկվելու դեպքում դիմումը համարվում է բավարարված, իսկ լիցենզիայի գործողությունը կասեցված՝ Վճարահաշվարկային կազմակերպության կողմից նշված ժամկետով:

167. Լիցենզիայի գործողության կասեցման մասին Վճարահաշվարկային կազմակերպության դիմումի հիման վրա Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցումը վերացված է համարվում Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից:

168. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից Կենտրոնական բանկ ներկայացված լիցենզիայի գործողության կասեցման դիմումի մեջ նշված առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 12 ամիսը:

169. Լիցենզիայի գործողության կասեցման մասին Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար Վճարահաշվարկային կազմակերպությունն իր դիմումին կից Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցման գործընթացը հիմնավորող և պարզաբանող տեղեկություններ՝ կազմված ամփոփ տեղեկանքի ձևով, որը պետք է ներառի.

1) Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցման պատճառները տնտեսագիտական հիմնավորմամբ,
2) Վճարահաշվարկային կազմակերպության կողմից լիցենզիայի գործողության կասեցման մասին որոշման ընդունման պահին Վճարահաշվարկային կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը,
3) այլ տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության կամ Կենտրոնական բանկի պահանջի:

170. Լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ Վճարահաշվարկային կազմակերպության դիմումը կարող է մերժվել, եթե լիցենզիայի գործողության կասեցումը կհանգեցնի ֆինանսական համակարգի ապակայունացմանը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

171. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցումը վերացված է համարվում Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված՝ կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից:

172. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում տեղեկատվություն՝

1) կազմակերպության կողմից լիցենզիայի գործողության կասեցման մասին որոշման ընդունման պահին կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի վերաբերյալ,

2) այլ տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության կամ Կենտրոնական բանկի պահանջի:

173. Լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից լիցենզավորված անձը ժամանակավորապես զրկվում է վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իր բոլոր իրավունքներից՝ միաժամանակ շարունակելով կատարել իր ստանձնած բոլոր պարտավորությունները:

174. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը նշված որոշումը հրապարակվում է առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում:

ԳԼՈՒԽ 21
ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

175. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում Օրենքի 27-րդ հոդվածի առաջին մասի «ե» կետի և 7-րդ մասի հիման վրա:

176. Այն դեպքում, երբ լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում Օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա, Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումին կից լիցենզավորված կազմակերպությունը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հայտարարագիր՝ պարտատերեր չունենալու վերաբերյալ: Պարտատերերի առկայության կամ Կենտրոնական բանկի ստուգման արդյունքում դրանց հայտնաբերման դեպքում Վճարահաշվարկային կազմակերպության կողմից պարտատերերի պահանջները բավարարելու անհնարինության պարագայում Կենտրոնական բանկի կողմից նախաձեռնվում է պարտատերերի պահանջների բավարարման գործընթաց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի համաձայն:

177. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին Վճարահաշվարկային կազմակերպության դիմումը կարող է մերժվել, եթե լիցենզիայի գործողության ուժը կորցնելը կհանգեցնի ֆինանսական համակարգի ապակայունացմանը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

178. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում տեղեկատվություն

1) կազմակերպության կողմից լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունման պահին կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի վերաբերյալ,

2) այլ տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության կամ Կենտրոնական բանկի պահանջով:

179. Օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու գործընթաց նախաձեռնելիս Կենտրոնական բանկ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում կազմակերպության՝ դրամական (փողային) փոխանցումների գծով պարտատերերի ի հայտ բերման ուղղությամբ: Վերջիններիս առկայության դեպքում պարտավորությունների մարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով:

180. Լիցենզիայի գործողությունն ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից լիցենզավորված անձը զրկվում է վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իր բոլոր իրավունքներից՝ միաժամանակ շարունակելով կատարել իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված ընթացակարգի համաձայն:

181. Կենտրոնական բանկի խորհուրդն ուժը կորցրած է ճանաչում վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան նաև վճարահաշվարկային կազմակերպության լուծարման դեպքում:

ԳԼՈՒԽ 22
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

182. Հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորությունները կատարելու համար անբավարար միջոցներ ունենալու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունն այդ մասին 1 (մեկ) օրվա ընթացքում ծանուցում է Կենտրոնական բանկին:

183. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված ծանուցումը ստանալուց հետո Կենտրոնական բանկի խորհուրդը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում Վճարահաշվարկային կազմակերպության բանկային հաշիվներով գործառնությունները կասեցնելու վերաբերյալ:

184. Հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորությունները կատարելու համար անբավարար միջոցներ ունենալու փաստը Կենտրոնական բանկի կողմից բացահայտվելու դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում Վճարահաշվարկային կազմակերպության բանկային հաշիվներով գործառնությունները կասեցնելու վերաբերյալ:

185. Վճարահաշվարկային կազմակերպության բանկային հաշիվներով գործառնությունները կասեցնելու մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 օրվա ընթացքում, Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սահմանված ձևի հաշվետվություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) պարտատերերի ցուցակը, որում պետք է նշված լինեն նրանց անունները (անձնագրի տվյալները) կամ անվանումները, բնակության (գտնվելու) վայրը, պարտավորությունների չափը՝ ըստ արժույթների և տեսակների: Այդ ցուցակում պետք է ներառվեն նաև այն պարտատերերի վերաբերյալ տեղեկություններ, որոնց նկատմամբ պարտավորությունների կատարման ժամկետը չի լրացել,
2) պարտավորությունների կատարումն ապահովելու անհնարինության պատճառը/պատճառները:

186. Հաճախորդ պարտատերերի նկատմամբ պարտավորություններն ամբողջությամբ կատարելուց հետո Վճարահաշվարկային կազմակերպությունը եռօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

187. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված հաշվետվությունը վերլուծելուց հետո անհրաժեշտության դեպքում մեկօրյա ժամկետում տեղում ստուգում կատարելու միջոցով հետևում է պարտավորությունների մարման գործընթացի կազմակերպմանը:

ԳԼՈՒԽ 23
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

188. Սույն կանոնակարգի 6-րդ կետը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 7-ից, իսկ մինչ այդ Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների կամ դրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ միջբանկային համակարգչային ցանցի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը «Փի Դի էֆ» ֆորմատով:

189. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները, որոնք պաշտոնավարել են Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ներդիրների հիման վրա, համարվում են գրանցված ներդիրի տրամադրման օրվանից: Ղեկավարների փոփոխության դեպքում ներդիրը համարվում է ուժը կորցրած, փոփոխությունը գրանցվում է նոր կարգի համաձայն՝ ՀՀ ԿԲ նախագահի որոշմամբ: Եթե ներդիրում ընդգրկված անձանցից որևէ մեկը շարունակում է պաշտոնավարել, փոփոխության գրանցման որոշման մեջ ներառվում է դրույթ՝ վերջինիս պաշտոնավարումը շարունակելու վերաբերյալ:

190. Այն Վճարահաշվարկային կազմակերպությունները, որոնք ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացել են դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների և/կամ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների գործունեության լիցենզիա, ապա լիցենզիայի վերաձևակերպման դեպքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվում է նոր լիցենզիա սույն կանոնակարգի Հավելված 6-ի համաձայն:

191. Վճարահաշվարկային կազմակերպությունը, վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղը, վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը պարտավոր են բավարարել սույն կանոնակարգի 0-րդ կետի «բ» ենթակետի, 42-րդ, 43-րդ և 162-րդ կետերով սահմանված պահանջները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Լիցենզիան (տրվել է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
«__»_____ 20__ թ.
թիվ _____ որոշմամբ

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ_____

Սույն լիցենզիան տրվում է _____
(իրավաբանական անձի անվանումը)

_____
(վճարահաշվարկային կազմակերպության (լիցենզիայի) տեսակ)

Գործունեության վայրը _____

Գրանցման վայրը _____

Պետական գրանցման համարը _____

Լիցենզիան տրված է անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

Հավելված 7

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 7

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ **ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ** Ք. ԵՐԵՎԱՆ	Հաշվառված է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի _____ թվականի թիվ _____ որոշմամբ **ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____** Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է _____ վճարահաշվարկային կազմակերպության _____ մասնաճյուղին: Գործունեության վայր _____ *(վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղի հասցեն)* Հաշվառման համարը _____ Հաշվառման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ «__» _____ 20__ թ.

Հավելված 8

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 8

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(վճարահաշվարկային կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետությունում _____
(մասնաճյուղի անվանումը)
անվանմամբ մասնաճյուղ բացելու մասին:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրել բացել և հաշվառել վճարահաշվարկային կազմակերպության _____ մասնաճյուղը:
(մասնաճյուղի անվանումը)

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղ բացելու և հաշվառելու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կից՝ —- էջ:

☐ Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը և տեխնիկական հագեցվածության
(մասնաճյուղի անվանումը)
չափանիշները համապատասխանեցված են սույն Կանոնակարգի 4-րդ և 5-րդ գլխով սահմանված պահանջներին:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումում և դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը
_____

«__» _____ 20__ թ.

Հավելված 9

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 9

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Խնդրում եմ թույլատրել փոփոխել _____
(գլխամասի, մասնաճյուղի հին գործունեության իրականացման վայրը, փոստային հինդեքսը)

իրականացվող գործունեության վայրը՝ տեղափոխելով այն _____
(գլխամասի, մասնաճյուղի նոր գործունեության իրականացման վայրը)

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝
_____
_____
_____
_____
_____
_____

Ղեկավար՝ _____

«__» _____ 20__ թ.

Վճարահաշվարկային ծառայություն մատուցելու լիցենզիա թիվ _____

Տրված՝ «__» _____ 20__ թ.

Հավելված 10

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 10

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՎԿԱՅԱԿԱՆ N

Սույն վկայականը տրվում է

_____-ին _____
(անուն, ազգանուն) *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

Վճարահաշվարկային կազմակերպության՝
□ դրամական (փողային) փոխանցում իրականացնող
□ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսին և քլիրինգ իրականացնող

_____ պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:
պաշտոնի կամ պաշտոնների անվանումը

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև «__» _____ 20__ թ.

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ՝ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 10.1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 10.1

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՎԿԱՅԱԿԱՆ N

Սույն վկայականը տրվում է

_____-ին _____
(անուն, ազգանուն) *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

Վճարահաշվարկային կազմակերպության՝
□ դրամական (փողային) փոխանցում իրականացնող
□ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսին և քլիրինգ իրականացնող

_____ պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ՝ _____

«__» _____ 20__ թ.

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող միջազգային որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում են վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ միջազգային որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրն այլևս վկայագրի տրման հիմք չէ:

Սույն վկայականն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում 2 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում է Կենտրոնական բանկ:

Հավելված 11

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 11

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

Պահանջներ	Գլխամասային գրասենյակի համար	Մասնաճյուղերի համար		
		այլ տարածքներում	հեռահաղորդակցման օպերատորի տարածքում	գյուղապետարանի շենքում
1	2	3	4	5
1. Տարածքային պահանջներ				
1.1. սեփական կամ վարձակալված տարածք /վավերացված պայմանագիր/	+	+	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
1.1.1. պայմանագիր ծառայությունների մատուցման մասին			+	+
1.2. փակ տարածքի առկայության պահանջ	+	+	-	-
1.3. այլ հարակից տարածքներից առանձնացված լինելու պահանջ	+	+	+ առնվազն ըստ 3.2 կետի պահանջի	+ առնվազն ըստ 3.2 կետի պահանջի
1.4. դրամարկղ	+	+	+	+
1.5. դրամապահոցի (չհրկիզվող պահարանների սենյակ) առկայություն	ոչ պարտադիր, եթե ապահովվում է 5.1 կետը	ոչ պարտադիր, եթե ապահովվում է 5.1 կետը	ոչ պարտադիր, եթե ապահովվում է 5.1 կետը	ոչ պարտադիր, եթե ապահովվում է 5.1 կետը
1.6. հաճախորդների սպասարկման սրահ	+	+	+	+
1.7. կազմակերպության պատերը պետք է լինեն քար-բետոնե հիմքով	+	+ դրամապահոց/ չհրկիզվող պահարանների սենյակ	ոչ պարտադիր	+
1.8. կազմակերպության արտաքին պատի պատուհանները պետք է լինեն վանդակաճաղ				+
2. Դրամապահոցին (չհրկիզվող պահարանների սենյակին) ներկայացվող պահանջներ (առկայության դեպքում)				
2.1. չհրկիզվող պահարանների սենյակի պատուհանները պետք է լինեն վանդակաճաղ	+	+	+	ոչ պարտադիր
2.2. ունենա երկաթյա դուռ	+	+	+	ոչ պարտադիր
2.3. չհրկիզվող պահարանների սենյակը լինի առանձնացված	+	+	+	+
2.4. պատերը պետք է լինեն քար-բետոնե հիմքով	+	+	+	+
2.5. դրամապահոցի սենյակի պատուհանների բացակայության պահանջ	+	+	+	+
2.6. դրամապահոցն ընդհանուր պատ այլ հաստատությունների կամ դրսի հետ չպետք է ունենա	+	+	+	+
3. Դրամարկղին ներկայացվող պահանջներ				
3.1. չհրկիզվող պահարանը ամրացված լինի հատակին կամ պատին	+	+	+	+
3.2. դրամարկղը պետք է առանձնացված լինի հարակից տարածքներից	+	+	+	+
3.3. պետք է ունենա առանձին մուտք	+	+	+	+
3.4. դրամարկղի մուտքը պետք է ունենա կողպվող դուռ	+	+	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
3.5. դրամարկղի դիմային մասը պետք է ունենա առնվազն 1-1.2 մ բարձրություն	+	+	+	+
3.6. դրամարկղի դիմային մասի սպասարկման սեղանը պետք է ունենա առնվազն 0.4-0.5 մ լայնություն	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	+
3.7. դրամարկղի դիմային մասում ապակե մասի առկայություն	+	+	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
4. Անվտանգության պահանջներ				
4.1. անվտանգության համակարգ	+	+	+	+
4.2. պաշտպանիչ-հակահրդեհային համակարգ	+	+	+	+
4.3. կրակմարիչներ	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	+
4.4. գործարքի նկարահանում և պահպանում 90օր	+	+	+	+

5. Ինկասացիայի վերաբերյալ պահանջներ				
5.1. միջոցները ինկասացվում են ինկասացման մասին պայմանագրի համաձայն	+	+	+	+
5.2. առավելագույն օրական մնացորդը դրամարկղում մինչև 3 մլն դրամ	+	+	+	
5.3. առավելագույն օրական մնացորդը դրամարկղում մինչև 2 մլն դրամ				+
6. Տեխնիկական պահանջներ				
6.1. չհրկիզվող պահարան	+	+	+	+
6.2. կապ գլխամասի հետ		+	+	+
6.3. գործառնությունների արտացոլում ընդհանուր տվյալների բազայում		+	+	+
6.4. առանց իրավասության արտաքին միջոցներով ծրագրերի բեռնում կատարելու և տեղեկատվության դուրսբերման բացառում	+	+	+	+
6.5. դրամանիշերի իսկությունը ստուգող սարք (միայն կանխիկ գործարքների կատարման դեպքում)	+	+	+	+
7. Այլ պահանջներ				
7.1. կազմակերպության անվանման վահանակ	+	+	+	+
7.2. փակցված լինի ծառայությունների տեսակները և սակագները	+	+	+	+
7.3. կազմակերպության գլխամասային գրասենյակի, մասնաճյուղի հեռախոսահամարները	+	+	+	+
7.4. լիցենզիայի պատճենը	+	+	+	+

Հավելված 12

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 12

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյան

Ձեռնարկ դադարեցրած վերջնական վճարի ամսաթիվը	Լիցենզիայի վերաձևակերպման ամսաթիվը	Լիցենզիայի վերաձևակերպման դադարեցման ամսաթիվը	Լիցենզիայի վերացման ամսաթիվը	Գործ. դադարեցման ամսաթիվը	Գործ. վերսկսման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի դադարեցման մասին որոշման ընդունման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի դադարեցման հիմքերը	Լիցենզիայի գործողության ժամկետի դադարեցման մասին որոշման համարը	Լիցենզիայի գործողության ժամկետի վերսկսման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի վերսկսման հիմքերը	Լիցենզիայի գործողության ժամկետի վերսկսման մասին որոշման համարը	Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հիմքերը	Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման մասին որոշման համարը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը	Լիցենզիայի համարը

Հավելված 13

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 13

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ԴԻՄՈՒՄ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Ես _____ _____ ,
(անուն, ազգանուն) *(հանրային ծառայությունների համարանիշը և անձնագրի տվյալները)*
_____ թվականին մասնակցել եմ _____ պաշտոնի համար
(քննության անցկացման օր/ամիս/տարի) *(որակավորման տեսակը)*
նախատեսված որակավորման ստուգման քննությանը:
_____
_____
_____
(բողոքարկման պատճառ հանդիսացած խնդրահարույց հարցի նկարագրությունը)

Դիմող՝ _____
_____
(հեռախոսահամար, էլ. փոստի հասցե)
_____
(ստորագրություն)

«__» _____ 20__ թ.

Հավելված 14

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 195-Ն որոշմամբ

Հավելված 14

«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

I. ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Բանկային ավանդի բնորոշումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի,
2. Բանկային հաշիվների բնորոշումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի,
3. Կանխիկ և անկանխիկ հաշվարկները՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի,
4. Վճարահաշվարկային համակարգ, վճարահաշվարկային փաստաթուղթ, վճարային գործիք, վճարահաշվարկային ծառայություն, միջոցների փոխանցում, վճարային քարտեր, էլեկտրոնային փող հասկացությունները՝ ըստ

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

5. Հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի բնորոշումը՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

6. Վճարահաշվարկային ծառայություններ մատուցող անձ, վճարահաշվարկային կազմակերպություն, վճարահաշվարկային համակարգի օպերատոր հասկացությունների սահմանումները՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

7. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունները;

8. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման կարգը,

9. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների պարտավորությունները երաշխավորող միջոցները և դրանց դեպոնացման և օգտագործման կարգը,

10. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, անվտանգության և ծրագրային պահանջները,

11. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզիայի վերաձևակերպման ընթացակարգը,

12. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության մեջ լրացումների կամ փոփոխությունների գրանցման կարգը,

13. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացման և հաշվառման կարգը,

14. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները,

15. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպություններում ստուգումների իրականացման կարգը,

16. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և պահանջվող այլ տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը և ժամկետները,

17. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության, մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվության հրապարակումը,

18. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից վճարահաշվարկային ծառայությունների հաշվառման տարրերը,

19. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեությանը վերաբերող փաստաթղթերի պահպանումը,

20. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազորված մարմինը և հաշվետվություն տրամադրող անձինք,

21. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տեղեկացման ենթակա գործարքները,

22. Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կազմը՝ ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

23. Վճարունակ թղթադրամներ և մետաղադրամներ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի,

24. Վճարահաշվարկային համակարգերում հնարավոր ռիսկերի տեսակները, դրանց տարբերություններն ու առանձնահատկությունները,

25. Գործառնական ժամ հասկացությունը՝ համաձայն «Վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

26. Հաճախորդների սպասարկման մերժման հիմքերը:

II. ՎՃԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊՐՈՑԵՍԻՆԳ ԵՎ ՔԼԻՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Բանկային հաշիվները՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի,

2. Կանխիկ և անկանխիկ հաշվարկները՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի,

3. Վճարահաշվարկային համակարգ, վճարահաշվարկային փաստաթուղթ, վճարային գործիք, վճարահաշվարկային ծառայություն, միջոցների փոխանցում, վճարային քարտեր, էլեկտրոնային փող հասկացությունները՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

4. Քլիրինգ, պրոցեսինգ, վերջնահաշվարկ և զուտացում հասկացությունները՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

5. Հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերը՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

6. Վճարահաշվարկային ծառայություններ մատուցող անձ, վճարահաշվարկային կազմակերպություն, վճարահաշվարկային համակարգի օպերատոր հասկացությունները՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

7. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունները,

8. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման կարգը,

9. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների կանոնադրական կապիտալը և դրա չափը,

10. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների գործունեությանը ներկայացվող տեխնիկածրագրային պահանջները,

11. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզիայի վերաձևակերպումը,

12. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների գործունեության մեջ լրացումների կամ փոփոխությունների գրանցման կարգը,

13. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացման և հաշվառման կարգը,

14. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները,

15. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններում ստուգումների իրականացման կարգը,

16. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և պահանջվող այլ տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը և ժամկետները,

17. Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության, մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվության հրապարակումը,

18. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազորված մարմինը և հաշվետվություն տրամադրող անձինք,

19. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տեղեկացման ենթակա գործարքները,

20. Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կազմը՝ ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

21. Վճարահաշվարկային համակարգերում հնարավոր ռիսկերի տեսակները, դրանց տարբերություններն ու առանձնահատկությունները,

22. Քլիրինգային հաշվարկների տեսակները,

23. Վերջնահաշվարկի երաշխավորման միջոցները,

24. Համախառն և զուտ հաշվարկները, դրանց տարբերություններն ու առավելությունները,

25. Հավաստագրում (ավտորիզացիա) և նույնականացում (պերսոնալիզացիա) հասկացությունների բնորոշումը,

26. Գործարքների կնքման և հաշվարկների իրականացման ժամկետները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ֆոնդի կառավարիչների և ներդրումային ֆոնդի պահառուների ղեկավարների և պատասխանատու աշխատակիցների գրանցման գործընթացները և օպտիմալացնել այդ գործընթացները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ 61-րդ հոդվածի 4-րդ մասը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 88-րդ հոդվածի 3-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը հաստատելու մասին» թիվ 115-Ն որոշմամբ հաստատված ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը (այսուհետ՝ Կանոնակարգ) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հուլիսի 2014 թ., N 196-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հուլիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.09.2014 թ. (ՀՀԳՏ N23 (502)[1], 16.09.2014):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 196-Ն որոշմամբ

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/05

Բ Ա Ժ Ի Ն Ⅰ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող ներդրումային ֆոնդի (այսուհետ՝ ֆոնդ) կառավարիչների ղեկավարների և ֆոնդի կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց, ինչպես նաև ֆոնդի պահառուի ղեկավարների և աշխատակիցների որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշների ստուգման և գրանցման կարգը, մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը, ինչպես նաև կարգավորում է այդ հարցերի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված այլ հարաբերություններ:

2. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ տեղեկանքները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով, առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերն ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքի տվյալների (անվան և ծածկագրի) միջոցով:

3. Նոր ստեղծվող կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում, ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի էֆ» ֆորմատով:

4. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում, հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

5. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրերով (դիմումներով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Ընդ որում, սույն կետում նշված միջնորդագրերը (դիմումները) էլեկտրոնային եղանակով Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում դրանք պետք է ներկայացվեն «Փի-Դի-էֆ» ֆորմատով, իսկ ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Դիմող ընկերության անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ֆայլի ընդլայնումը

օրինակ՝

ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Կանոնադր. փոփոխ.	_	250913	.	pdf

6. Սույն կանոնակարգով սահմանված կառավարչի գործադիր տնօրենի որակավորման պահանջները և ընթացակարգերը տարածվում են նաև կառավարչի լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների, ինչպես նաև կառավարչի ադմինիստրացիայի ղեկավարի և լուծարային կառավարչի վրա:

7. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 1-ին և 66-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված հետևյալ անձինք, ինչպես նաև ֆոնդի պահառուի ղեկավարը և աշխատակիցը պետք է ունենան սույն կանոնակարգով սահմանված կարգով ստացված որակավորում.

1) ֆոնդի կառավարչի խորհրդի նախագահը և անդամները, գործադիր տնօրենը (գործադիր մարմնի ղեկավարը) և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, ֆոնդի կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի տնօրենը (այսուհետ՝ մասնաճյուղի տնօրեն),
2) օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի խորհրդի նախագահը և անդամները, գործադիր տնօրենը (գործադիր մարմնի ղեկավարը) և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,
3) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձը,
4) ֆոնդի պահառուի ղեկավարը և աշխատակիցը:

8. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հետևյալ անձանց վրա չի տարածվում սույն կանոնակարգով սահմանված որակավորում ունենալու պահանջը.

1) ֆոնդի կառավարչի կամ օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտի, վարչության, բաժնի, խմբի կամ այլ միավորի) ղեկավարները,
2) ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի ներկայացուցչության ղեկավարը:

9. Սույն կանոնակարգով նախատեսված որակավորման վկայականներին հավասարեցվում են սույն կանոնակարգի 3-րդ գլխով նախատեսված որակավորումները, դիպլոմները կամ հավաստագրերը:

10. Սույն կանոնակարգի 0-րդ կետը չի տարածվում կամավոր և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող հետևյալ ֆիզիկական անձանց և պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավարի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի վրա, որոնք գրանցվելու համար պետք է բավարարեն սույն կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշները.

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
Պաշտոն	Չափանիշ
1) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում	1. բարձրագույն կրթություն, 2. ակտիվների կառավարման առնվազն 3 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 1 տարվա փորձ և Սի-էֆ-էյ (CFA) առնվազն 1 փուլը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում	1. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 3 տարվա փորձ կամ ակտիվների կառավարման առնվազն 1 տարվա փորձ և Սի-էֆ-էյ-ի (CFA) առնվազն 1 փուլը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ 2. 1) բարձրագույն կրթություն, 2) էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ (ACCA, CPI) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական

2. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
1) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում	1. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 5 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 2 տարվա փորձ և ՍԻ-ԷՖ-ԷՅ-ի (CFA) առնվազն երկու փուլն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում	1. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 5 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 2 տարվա փորձ և ՍԻ-ԷՖ-ԷՅ-ի (CFA) առնվազն երկու փուլն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական կամ 2. 1) բարձրագույն կրթություն, 2) ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ, ՍԻ-ՓԻ-ԷՅ (ACCA, CPI) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական
3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավար	
1) ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, 3. միջազգային աուդիտորական որակավորման (ՍԻ-ԱՅ-ԷՅ) փուլերից առնվազն մեկն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները 4. Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական

11. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից տրամադրված համապատասխան որակավորումը ստացած են համարվում և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն նաև սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում աշխատած, գրանցման գործընթացում գտնվող այն անձինք, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և (կամ) զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:

12. Թեկնածուն կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ մեկից ավելի ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայականներ ստանալու համար:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***Կենտրոնական բանկ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) ***որակավորվող անձ***՝ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված որևէ պաշտոնի համար որակավորում ստացած անձ,
3) ***հանձնաժողով***՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
4) ***թեկնածու***՝ անձ, որը դիմում է որակավորման ստուգում անցնելու համար,
5) ***ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար***՝ անձ, որն առանց տվյալ ղեկավարի պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները:
6) ***հանրային ծառայությունների համարանիշ***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
7) ***անձնագրի տվյալներ***՝ անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի համարը:
8) ***«Բարձրագույն կրթություն ունեցող անձ»***՝ անձ, որն ավարտել է Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն կամ ստացել է Հայաս-

տանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող ֆինանսական ոլորտի մասնագիտական որակավորման վկայական:

14. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԴԻՊԼՈՄՆԵՐԸ ԿԱՄ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

15. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով որակավորման վկայական է տրամադրվում որոշակի պաշտոնում գրանցված այն ղեկավարին, որն ունի սույն կետի աղյուսակում նշված, տվյալ պաշտոնին համապատասխան որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր.

Պաշտոն	Որակավորում, դիպլոմ կամ հավաստագիր
1. Ֆոնդի (բացառությամբ՝ կամավոր կենսաթոշակային ֆոնդի և պարտադիր կենսաթոշակային ֆոնդի) կառավարչի ղեկավարներ և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
1) Ֆոնդի կառավարչի ղեկավար, այդ թվում՝	
ա. գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավար, գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) որակավորում կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
բ. ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) որակավորում կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
գ. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները կամ CIA որակավորում կամ CFA որակավորման 2 մակարդակ
դ. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում կամ CFA որակավորման 2 մակարդակ
ե. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ, կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ	ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակներ որակավորման առնվազն մեկ փուլ կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավարներ	
1) գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2) ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
3) Ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում
4) ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-Է3 (CIA) որակավորում
5) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	Է3-ՍԻ-ՍԻ-Է3 (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ կամ ՍԻ-ԷՖ-Է3 (CFA) որակավորման 2 մակարդակ

3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավարներ	
1) գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2) ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
3) ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման բոլոր մակարդակները կամ ՍԻ-Ա3-ԷՅ (CIA) որակավորում
4) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
4. Ֆոնդի պահառուի ղեկավար և աշխատակից	
1) ֆոնդի պահառուի ղեկավար	ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) կամ ԷՖ-ԱՌ-ԷՄ (FRM) կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ
2) ֆոնդի պահառուի աշխատակից	ՍԻ-ԷՖ-ԷՅ (CFA) որակավորման առնվազն մեկ փուլ կամ ԷՅ-ՍԻ-ՍԻ-ԷՅ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ

ԳԼՈՒԽ 4
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Կենտրոնական բանկի խորհրդի նիստում հարցազրույցի միջոցով որակավորման ստուգումն անցնում են կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամի պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները:

17. Հարցազրույցն (բացառությամբ՝ լրացուցիչ հարցազրույցի) իրականացվում է խորհրդի անդամի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման գործընթացում, որին խորհրդի անդամի մասնակցության համար կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում միջնորդագիր և տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի համապատասխանաբար Հավելված 7-ի և համաձայն Հավելված 1-ի:

18. Կենտրոնական բանկը կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամների որակավորման ստուգման համար հարցազրույցի անցկացման օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ թեկնածուին տեղեկացնում է հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ:

19. Հարցազրույցի ժամանակ ստուգվում են թեկնածուի գիտելիքները սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

20. Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում կառավարչի խորհրդի անդամի թեկնածուների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

21. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշում ընդունել նաև առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:

22. Խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում նշված անձը համարվում է խորհրդի անդամի որակավորում ստացած:

23. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամի որակավորումը տրվում է մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:

24. Որակավորում ստացած կառավարչի, օտարերկրյա կառավարչի խորհրդի նախագահը և խորհրդի անդամը իրենց պաշտոնավարման ընթացքում Կենտրոնական բանկի կողմից կարող են որակավորման ստուգման նպատակով հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի Կենտրոնական բանկի խորհրդի նիստում:

25. Լրացուցիչ հարցազրույցը կարող է իրականացվել ոչ հաճախ, քան երեք տարին մեկ անգամ, որի մասին կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը տեղեկացվում է առնվազն 30 օր առաջ:

26. Լրացուցիչ հարցազրույցն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում:

27. Լրացուցիչ հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է որոշում՝ սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված՝ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամներին վերաբերող թեմաների շրջանակներում կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամների գիտելիքների համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

28. Խորհրդի անդամի գիտելիքների անհամապատասխանության վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման դեպքում, ինչպես նաև սույն գլխով սահմանված կարգով լրացուցիչ հարցազրույցին անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում այդ անձինք համարվում են որակավորում չունեցող:

ԳԼՈՒԽ 5
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Որակավորման ստուգում անցնելու նպատակով քննություն հանձնում են ստորև նշված պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները՝

1) կառավարչի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, մասնաճյուղի տնօրենը,
2) օտարերկրյա կառավարչի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, մասնաճյուղի տնօրենը,
3) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձը,
4) ֆոնդի պահառուի ղեկավարը և աշխատակիցը:

30. Քննությունն անցկացվում է Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կամ Կենտրոնական բանկի որոշմամբ՝ այլ կազմակերպության կողմից: Ընդ որում, Կենտրոնական բանկի որոշմամբ քննություններն այլ կազմակերպությունների կողմից:

29. անցկացվելու դեպքում քննության թեստերի կազմման, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման, քննություններին մասնակցելու համար թեկնածուների հերթագրման, փաստաթղթերի ընդունման, քննությունների անցկացման, քննության արդյունքների ամփոփման, բողոքարկման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը սահմանվում է տվյալ կազմակերպության կողմից՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ:

31. Քննությանը հերթագրվելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում են քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ մինչև տվյալ եռամսյակին նախորդող ամսվա 10-ը:

32. Թեկնածուները քննությանը մասնակցելու համար պետք է նախապես հերթագրվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում մուտքագրելով հետևյալ տվյալները

1) անուն, ազգանուն,
2) որակավորման տեսակ,
3) քննությանը մասնակցելու ամիս, օր, ժամ՝ ըստ հրապարակված ցանկի (ցանկության դեպքում),
4) հեռախոսահամար,
5) անձնագրի տվյալները,
6) էլեկտրոնային փոստի հասցեն:

33. Թեկնածուները քննությանը մասնակցում են՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարման անդորրագիրը:
3) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտը) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը:

34. Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:

35. Քննության համար առանձնացված սենյակում թեկնածուն նստում է համապատասխան համակարգչի մոտ՝ ըստ ցուցակի:

36. Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

37. Քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով:

38. Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:

39. Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից միանշանակ ճիշտ) պատասխան:

40. Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչ սարքերի), ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:

41. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից. մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

ԳԼՈՒԽ 6
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ

42. Թեկնածուները Կենտրոնական բանկում որակավորման ստուգումը անցնում են սույն կանոնակարգի Հավելված 6-ում ներկայացված աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում, «V» նշանը նշանակում է՝ տվյալ թեման վերաբերում է, «-» նշանը՝ չի վերաբերում:

43. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է սույն կանոնակարգի Հավելված 6-ում սահմանված թեմաների ցանկի հիման վրա:

44. Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ և ենթակա չեն հրապարակման: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:

45. Թեսթերը և դրանցում պարունակվող հարցերի քանակը տարբերակվում են ըստ որակավորման հետևյալ տեսակների.

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԸ	ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿ
1. Ֆոնդի կառավարչի (օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի) ղեկավար, այդ թվում՝	
1.1. ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, 1.2. ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, 1.3. ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար, ներքին աուդիտի անդամ	100 հարց
2.4. ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	80 հարց
2. Ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ	80 հարց
3. Ֆոնդի պահառուի ղեկավար և աշխատակից	80 հարց

46. Թեսթի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին հատկացվում է միջին հաշվով 1,5 րոպե:

47. Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության անցկացման ընթացքում թույլատրվում է թարգմանչի մասնակցությունը, ընդ որում՝ Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակցի ներկայությունը պարտադիր է: Հայոց լեզվին չտիրապետող թեկնածուների քննության տևողությունը կարող է երկարաձգվել՝ Կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության պետի թույլտվությամբ:

48. Թեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է 3-ից 4 պատասխան, որոնցից մեկն է միանշանակ ճիշտ և լիարժեք:

49. Թեստի հարցի միանշանակ ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

ԳԼՈՒԽ 7
ԹԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

50. Թեստերի հարցերի գնահատումը կատարվում է հետևյալ կերպ.

1) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված, և նրան տրվում է որակավորման վկայական:
2) թեկնածուի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված,

51. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են դիմել մասնակցելու քննությանը՝ համապատասխան որակավորման վկայական ստանալու համար:

52. Թեկնածուի՝ թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Հանձնաժողովը, որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

53. Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 8
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

54. Որակավորման վկայականը տրվում է՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի) և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
2) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի գլխավոր հաշվապահի և գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնների համար,
3) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավարի և անդամների պաշտոնների համար,
4) ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրենի համար,
5) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի պաշտոնի համար,
6) ֆոնդի պահառուի ղեկավարի և աշխատակցի պաշտոնների համար:

55. Սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է.

1) քննության դրական արդյունք ապահոված թեկնածուներին՝ էլեկտրոնային եղանակով, ուղարկելով թեկնածուի կողմից քննության մասնակցության հերթագրման ժամանակ ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին, քննությունը հանձնելու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում:
2) սույն կանոնակարգի 0-րդ կետի պահանջները բավարարող ղեկավարի թեկնածուին, սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարի թեկնածուին Կենտրոնական բանկում գրանցվելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

56. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու դեպքում կամ էլեկտրոնային փոստի խափանման դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով թեկնածուն ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

57. Որակավորվող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից) տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

58. Թեկնածուների որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 3 տարի ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ և սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են միջազգային որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի կանոնները:

ԳԼՈՒԽ 9
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎՈՂ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

59. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել նաև ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն, ֆոնդի կա-

ռավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, ֆոնդի պահառուի ղեկավար կամ աշխատակից:

60. Ֆոնդի կառավարչի կամ օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահը ի պաշտոնե կարող է լինել տվյալ ֆոնդի կառավարչի կամ օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր մարմնի (տնօրինության, վարչության) անդամ՝ առանց գործադիր մարմնի (տնօրինության, վարչության) անդամի որակավորման վկայական ստանալու:

61. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նշված պաշտոնների համար որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել ֆոնդի կառավարչի մասնաճյուղի, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ:

ԳԼՈՒԽ 10
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

62. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի, ինչպես նաև պահառուի միջնորդությամբ որպես ղեկավար գրանցման ներկայացված անձը պետք է իրազեկ լինի, համապատասխանաբար, կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի գործունեությունը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի գործարար ծրագրին, ինչպես նաև համապատասխանաբար կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերին:

63. Անձը ստորև նշված որևէ պաշտոնում աշխատելու նպատակով գրանցվելու համար սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներից բացի պետք է բավարարի նաև սույն կետով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված դեպքերի.

Պաշտոն	Մասնագիտական համապատասխանության չափանիշ
1. Ֆոնդի (բացառությամբ՝ կամավոր կենսաթոշակային ֆոնդի և պարտադիր կենսաթոշակային ֆոնդի) կառավարչի ղեկավարներ և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
1) Ֆոնդի կառավարչի ղեկավար, այդ թվում՝	
ա. խորհրդի անդամ	1. բարձրագույն կրթության առկայության դեպքում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, 2. բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ
բ. գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	1. բարձրագույն կրթություն և 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում
գ. ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ
դ. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարը	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ՝ աուդիտի ոլորտում
ե. ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամը, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամը	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ընդ որում՝ տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու ներքին աուդիտի անդամի համար՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
զ. գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	1. բարձրագույն կրթություն և 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ	1. բարձրագույն կրթություն
2. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավարներ, այդ թվում	
1) խորհրդի նախագահ, անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին ղեկավար պաշտոնում

2) գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին ղեկավար պաշտոնում
3) ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ
4) ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
5) ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ընդ որում՝ տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու ներքին աուդիտի անդամի համար՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
6) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավարներ, այդ թվում՝	
1) խորհրդի նախագահ, անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին՝ ղեկավար պաշտոնում
2) գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրեն (գործադիր մարմնի ղեկավար), գործադիր մարմնի անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն երկու տարին ղեկավար պաշտոնում
3) ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրեն	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ
4) ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամ, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ընդ որում, տեղեկատվական համակարգերի համար պատասխանատու ներքին աուդիտի անդամի համար՝ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
5) գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ և գլխավոր հաշվապահի տեղակալ	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
4. Ֆոնդի պահառուի ղեկավար և աշխատակից	
1) ֆոնդի պահառուի ղեկավար	1. բարձրագույն կրթություն, 2. առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ
2) Ֆոնդի պահառուի աշխատակից	1. բարձրագույն կրթություն

64. Եթե ղեկավարի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետերով նախատեսված աշխատանքային փորձ և (կամ) բարձրագույն կրթություն, ապա կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում աշխատելու համար ղեկավարի թեկնածուի մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և (կամ) այլ հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովի դրական եզրակացությամբ, ղեկավարի թեկնածուն համարվում է համապատասխանության չափանիշները բավարարող:

65. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպությունում աշխատանքային փորձ է համարվում տվյալ ֆինանսական կազմակերպությունում մասնագիտական գործունեության հետ կապված աշխատանքային փորձը:

66. Սույն կանոնակարգի 0-րդ և 0-րդ կետում նշված աշխատանքային փորձը վերաբերում է ղեկավարների Կենտրոնական բանկում գրանցման պահին նախորդող 10 տարիներին, բացառությամբ խորհրդի անդամի համար նախատեսված աշխատանքային փորձի:

ԳԼՈՒԽ 11
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ) ԳՐԱՆՑՈՒՄԸ

67. Ղեկավարների և պատասխանատու անձանց գրանցումը իրականացվում է 2 ընթացակարգով պարզ կամ բարդ: Ղեկավարների գրանցման ընթացակարգերը, ըստ զբաղեցրած պաշտոնների, սահմանված է սույն կանոնակարգի Հավելված 2-ով:

68. Բարդ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
2) թեկնածուի հետ բանավոր հարցազրույցի անցկացում՝ վերջինիս կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, կոլեգիալ կառավարման մարմնում արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության և այլ հմտությունների ստուգման նպատակով՝ սույն գլխով սահմանված կարգով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված դեպքերի:

69. Պարզ ընթացակարգով ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերի ներկայացման միջոցով,
2) թեկնածուի որակավորման առկայության ստուգում:

70. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կամ պահառուն Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի և տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի:
2) Կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին:

71. Կառավարիչները, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղերը և պահառուն պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որտեղ առնվազն պետք է նկարագրվեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

72. Բարդ ընթացակարգով գրանցվող ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ:

73. Պարզ ընթացակարգերով գրանցվող ղեկավարները գրանցված են համարվում Կենտրոնական բանկ փաստաթղթերը մուտքագրվելու պահից օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից՝ առանց Կենտրոնական բանկի որոշման, եթե Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 0-րդ, 0-րդ, 0-րդ կետերի առկայության հիմնավորմամբ գրավոր կամ բանավոր եղանակով չի ծանուցվել անձին բարդ ընթացակարգով գրանցելու մասին, որի դեպքում գործում են բարդ ընթացակարգով գրանցման ընթացակարգերը:

74. Եթե կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի մոտ առկա է կամ հնարավոր է ֆինանսական վիճակի վատթարացում, կամ Կենտրոնական բանկի կարծիքով բավարար մակարդակով պահպանված չեն կորպորատիվ կառավարման սկզբունքները, կամ սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված ներքին կանոնակարգը չի պարունակում պահանջվող բոլոր մեխանիզմները և/կամ դրանք իրականում չեն կիրառվում, ապա այդպիսի դեպքերում բոլոր ղեկավարները կարող են հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

75. Եթե կառավարչի մասնաճյուղը, Կենտրոնական բանկի կարծիքով, հանդիսանում է ընկերության գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, ապա տվյալ մասնաճյուղի ղեկավարը կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

76. Եթե ղեկավարի թեկնածուի վերաբերյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման և (կամ) այլ պատասխանատու ստորաբաժանման կարծիքով առկա են ռիսկեր ընկերության և (կամ) ֆինանսական համակարգի կայունության, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի համբավի վերաբերյալ, ապա տվյալ թեկնածուն կարող է հրավիրվել գրանցման բարդ ընթացակարգով:

77. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի համապատասխան ղեկավարի (ղեկավարների) գրանցումն իրականացվում է բարդ ընթացակարգով այնքան ժամանակ, քանի դեռ Կենտրոնական բանկը գրավոր կամ բանավոր ծանուցման միջոցով չի տեղեկացրել կառավարչին, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղին կամ պահառուին համապատասխան ղեկավարին (ղեկավարներին) պարզ ընթացակարգով գրանցելու հնարավորության մասին:

78. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում, օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել եռամսյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

79. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված բարդ ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները բանավոր հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

80. Եթե անձին որպես ղեկավար գրանցելու համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել սույն կանոնակարգի Հավելված 1-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կամ պահառուն դիմում է Կենտրոնական բանկ նույն անձին այլ ղեկավար պաշտոնում գրանցելու միջնորդությամբ, ապա սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված տեղեկանքը սույն գլխով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն տեղեկանքի 1-ին և 2-րդ կետի բոլոր դաշտերը, 3.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 3.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

81. Կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կամ պահառուն նախկինում ղեկավարների գրանցման համար օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկ ներկայացրած բոլոր փաստաթղթերը և/կամ տեղեկությունները կարող են չներկայացնել՝ հղում տալով նախկինում ներկայացված միջնորդագրի ամսաթվին, եթե նախկինում ներկայացված տեղեկատվությունը չի փոփոխվել:

82. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի անդամների գրանցման ժամանակ հիմք է ընդունվում սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը:

83. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի խորհրդի նախագահ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ որակավորման ստուգման և գրանցման ենթակա չէ, և կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով համապատասխան գրություն, որտեղ նշվում է իրավասու մարմնի կայացման ամսաթիվը և փոփոխության իրականացման ամսաթիվը:

84. Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե.

1) առկա են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները,
2) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 12
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

85. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից

1) եթե ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից,
2) եթե կառավարչի կամ օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գործունեությունը դադարեցվել է (տվյալ մասնաճյուղի ղեկավարի համար),
3) եթե կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կամ պահառուն դիմել են համապատասխան միջնորդությամբ,
4) եթե խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,
5) կառավարչի լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների գրանցման պահից:

86. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար կառավարիչը, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը կամ պահառուն ղեկավարների կազմում փոփոխություններ տեղի ունենալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

87. Եթե կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կամ պահառուի ղեկավարը զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար:

ԳԼՈՒԽ 13
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

88. Ֆոնդի կառավարչի ղեկավարների պաշտոնները կարող են զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարների կողմից և թափուր մնալ ոչ ավելի քան 3 ամիս՝ սկսած ֆոնդի կառավարչի կողմից ղեկավարին պաշտոնից փաստացի ազատելու պահից:

89. Սույն կետի աղյուսակի համապատասխան պաշտոնների համար նշված ժամանակավոր պաշտոնակատարների վրա սույն կանոնակարգի 0-րդ կետով նշված եռամսյա ժամկետը չի տարածվում: Ընդ որում, եթե սույն կետում նշված դեպքերում ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը պաշտոնավարում է երեք ամսից ավելի, ապա եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ֆոնդի կառավարչի պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

ՊԱՇՏՈՆ	ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
1. Ֆոնդի կառավարչի գործադիր մարմնի ղեկավար (գործադիր տնօրեն)	Տվյալ ֆոնդի կառավարչի գրանցված գործադիր տնօրենի տեղակալ, գործադիր մարմնի անդամ
2. Ֆոնդի կառավարչի գլխավոր հաշվապահ	Տվյալ ֆոնդի կառավարչի գրանցված գլխավոր հաշվապահի տեղակալ
3. Ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար	Տվյալ ֆոնդի կառավարչի գրանցված ներքին աուդիտի անդամ

90. Ֆոնդի կառավարչի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը կարող է չունենալ համապատասխան ղեկավարի պաշտոնի համար նախատեսված որակավորում՝ բացառությամբ սույն կանոնակարգի 0-րդ, 0-րդ կետերով նախատեսված ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարների:

91. Ֆոնդի կառավարչի գործադիր մարմնի ղեկավարի (գործադիր տնօրենի) ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել միայն տվյալ ֆոնդի կառավարչի գործադիր տնօրենի տեղակալը կամ գործադիր մարմնի անդամը:

92. Ֆոնդի կառավարչի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել միայն տվյալ ֆոնդի կառավարչի գլխավոր հաշվապահի տեղակալը կամ գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ունեցող այլ աշխատակիցը:

93. Ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել ֆոնդի կառավարչի այլ պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ գրանցված ներքին աուդիտի անդամի), ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

94. Ներքին աուդիտի անդամի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել ֆոնդի կառավարչի այլ պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

95. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված եռամսյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար, այսինքն՝ միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում եռամսյա ժամկետը:

96. Ֆոնդի կառավարչի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

ԳԼՈՒԽ 14
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

97. Սույն կանոնակարգի 0-րդ կետն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 7-ից, իսկ մինչ այդ կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, ընդ որում՝ ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի էֆ» ֆորմատով:

98. Մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելը կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորում ստացած անձը կարող է աշխատել որպես կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար մինչև որակավորման ժամկետի ավարտը:

99. Սույն կանոնակարգի 0-րդ կետի աղյուսակի 1-ին կետի 1-ին ենթակետի «ե», 2-րդ կետի «ե» և 3-րդ կետի «դ» պարբերությունների պահանջները չեն տարածվում մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելը գրանցված ղեկավարների վրա:

Հավելված 1

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի Հավելվածի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարների (որակավորվող անձի) վերաբերյալ տեղեկություններ

Խնդրում ենք սույն միջնորդագրում նշված անձին գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես ղեկավար և կից ներկայացնում ենք նրա վերաբերյալ տեղեկությունները:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը
☐ Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները (այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար Դուք պետք է հանդիսանաք: Ընդ որում՝ սույն միջնորդագրում «ղեկավար» հասկացությունը ներառում է նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց, ֆոնդի պահառուի աշխատակցի և ապահովագրական բրոքերների պատասխանատու անձանց:)
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում) *(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)*
1.2. Ֆինանսական կազմակերպության տեսակ ○ բանկ ○ օտարերկրյա բանկի մասնաճյուղ ○ վարկային կազմակերպություն ○ ապահովագրական ընկերություն ○ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ ○ ապահովագրական բրոքեր ○ ներդրումային ընկերություն ○ օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ ○ կարգավորվող շուկայի օպերատոր ○ Կենտրոնական դեպոզիտարիա ○ ֆոնդի կառավարիչ ○ օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ ○ Բյուրո ○ վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 կետում նշված կազմակերպությունում ○ տնօրենների (դիտորդ) խորհրդի նախագահ (խորհրդի նախագահ) ○ տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), ○ գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրենության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) ○ գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ ○ տնօրենության (վարչության, գործադիր մարմնի) անդամ ○ գլխավոր հաշվապահ ○ գլխավոր հաշվապահի տեղակալ ○ ներքին աուդիտի ղեկավար ○ ներքին աուդիտի անդամ ○ բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար) ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահի (ղեկավարի) տեղակալ ○ վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի անդամ ○ մասնաճյուղի կառավարիչ (տնօրեն) ○ մասնաճյուղի գործադիր տնօրեն ○ մասնաճյուղի գործադիր տնօրենի տեղակալ ○ մասնաճյուղի գլխավոր հաշվապահ ○ օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ

- ○ օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
- ○ օպերատորի վերահսկող ծառայության անդամ
- ○ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձ
- ○ պատասխանատու ակտուար
- ○ ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ
- ○ ֆոնդի պահառուի ղեկավար
- ○ ֆոնդի պահառուի աշխատակից
- ○ բանկի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից

2.2. Նշեք՝
- ○ Բանկի ներքին դիտարկումների ստորաբաժանման և պաշտոնի անվանումը, եթե հանդիսանում եք այդ ստորաբաժանման աշխատակից, կամ
- ○ Կիրառելի չէ, եթե չեք հանդիսանում ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:

2.3. Նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1. Անուն, ազգանուն, հայրանուն

3.2. Սեռ՝
- ○ արական
- ○ իգական

3.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4. Ծննդավայր

3.5. Քաղաքացիություն

3.6. Նշեք՝
- ○ Անձնագրի տվյալները
- ○ Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
- ○ Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.7. Նշեք՝
- ○ հանրային ծառայության համարանիշը
- ○ կիրառելի չէ

3.8. Նշեք՝
- ○ Հաշվառման վայր
- ○ Փաստացի բնակության վայր

3.9. Նշեք հեռախոսահամար
- ○ բջջային
- ○ աշխատանքային
- ○ տնային

3.10. Էլեկտրոնային փոստի հասցե

3.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանը

Անուն, ազգանուն, հայրանուն

Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Սովորելու ժամանակաշրջանը (--թ-ից մինչև --թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

4.2. Ի՞նչ լեզուների եք տիրապետում

հայերեն

անգլերեն

ռուսերեն

այլ (նշել լեզուն)

4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները, ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները անկախ դրանց աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակեր-պության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսա-համար	Պաշտոնը	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք,եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից. վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշ-խատել են ֆինանսական համակարգում: Եթե այդպիսի անձը բացակայում է, ապա նշեք «Կիրառելի չէ» տարբերակը:

Անունը, ազգանունը	Աշխատանքի վայրը, դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն

- Կիրառելի չէ

5. Ղեկավարների (որակավորվող անձանց) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար
- Ոչ
- Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.4. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ

5.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով
- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1. Նշեք՝

- այն ֆինանսական կազմակերպությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող ընկերությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2. Նշեք՝

- այն ֆինանսական կազմակերպությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող ընկերությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն կամ.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա
- Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում

6.3. Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները կամ նշեք «Կիրառելի չէ» տարբերակը, եթե նման փոխկապակցված անձ չկա:

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները)

Անուն, ազգանուն	Ժամանակահատված (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Անձնագրի տվյալները	Փոխկա-պակցվա-ծության ձև	Աշխա-տանքի վայր	Պաշտոն	Հեռա-խոսա-համար

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

7.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- Ոչ
- Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- ○ Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկատվություն

8.1. Նշեք՝

- ○ Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց)

Անուն, ազգանուն	Անձնագրի համար	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայր	Հեռախոսահամար (բջջային և այլն)

- ○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2. Նշեք՝

- ○ Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար

- ○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

- ○ Ոչ
- ○ Այո, ներկայացնել մանրամասները

10. Այլ փաստաթղթեր

10.1. Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.
Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 39-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթին

- ○ Այո
- ○ Ոչ

11. Հավաստիացնում եմ, որ.

1) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,
2) բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և իրավական ակտերով սահմանված հիմքերը:

Ամսաթիվ (օր/ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

Հավելված 2

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի Հավելվածի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

N	Ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ	Ընթացակարգը
1.	**Ֆոնդի կառավարիչ, այդ թվում՝**	**Ընթացակարգը**
1)	Դիտորդ խորհրդի նախագահ	Բ
2)	Դիտորդ խորհրդի անդամներ	Բ
3)	Գործադիր տնօրեն	Բ
4)	Գործադիր մարմնի անդամներ	Բ
5)	Գործադիր տնօրենի տեղակալ	Բ
6)	Գլխավոր հաշվապահ	Բ
7)	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Բ
8)	Ներքին աուդիտի ղեկավար	Բ
9)	Ներքին աուդիտի անդամներ	Պ
10)	Մասնաճյուղի տնօրեն	Պ
11)	Ֆոնդի կառավարչի կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ	Պ
2.	**Ֆոնդի պահառու**	
1)	Ղեկավար	Բ
2)	Աշխատակից	Պ

Հավելված 3
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի Հավելվածի

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկ

1. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
2. Միջազգային հաշվարկների բանկ (Bank of International Settlements)
3. Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (Black Sea Trade and Development Bank)
4. Կարիբյան զարգացման բանկ (Caribbean Development Bank)
5. Կենտրոնական Ամերիկայի տնտեսական ինտեգրման բանկ (Central American Bank of Economic Integration)
6. Լատինական Ամերիկայի զարգացման բանկ (Corporation Andina de Fomento)
7. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
8. Եվրոպական հանձնաժողով (European Commission)
9. Եվրոպական ներդրումային բանկ (European Investment Bank)
10. Ներամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
11. Միջազգային արժութային հիմնադրամ (International Monetary Fund)
12. Իսլամական զարգացման բանկ (Islamic Development Bank)
13. Սկանդինավյան զարգացման հիմնադրամ (Nordic Development Fund)
14. Սկանդինավյան ներդրումային բանկ (Nordic Investment Bank)
15. Նավթ արտահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ (OPEC Fund for International Development)
16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Co-operation and Development)
17. Նավթանյութեր արտահանող երկրների կազմակերպություն (Organization of Petroleum-Exporting Countries)
18. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)
    1) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
    2) Միջազգային զարգացման ասոցիացիա (International Development Association)
    3) Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
    4) Բազմազգ ներդրումների երաշխավորման գործակալություն (Multinational Investment Guarantee Agency)
    5) Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (International Centre for Settlement of Investment Disputes)
19. Վերակառուցման բանկ (Kreditanstalt für Wiederaufbau (KfW))
20. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների ֆինանսական կազմակերպություններ:

Հավելված 4

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի Հավելվածի

ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՎԿԱՅԱԿԱՆ N

Սույն վկայականը տրվում է

_____-ին _____
(անուն, ազգանուն) *(անձը հաստատող փաստաթղթի տվյալներ)*

_____
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև «__» _____ 20__ թ.

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ՝ _____

«__» _____ 20__ թ.

Հավելված 5

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի Հավելվածի

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

